

84


9032


R-34 Римский, И.

Гуманитарн.


19/07/56 21/01/61 1a. 204.

26









ԱՆՐԻ ԲԱՐԲԵՆԻՍՍ

84

F-34

ԱՄՀ-94.3. Տ. 1961 թ.

ԴԱՅԻ ՃԱՆԵՐ

ՍՊԻՏԱԿ ՏԵՐՐՈՐԸ
ԲԱԼԿԱՆՆԵՐՈՒՄ

249
ՀՕ.Հ.Հ.

ՈՒԽՍԵՐԵՆԻՑ ԹԱՐԳՄ. Հ. ՍԱՌԻԿՅԱՆ

A 21456



«ԶԱԿԿԱՆԻԳԱ»

ՔԻՑԼԻՍ - 1928

АНРИ БАРБЮС

ПАЛАЧИ

«ЗАКНИГА»


ՏԵՂՄԱՆ ՊՈԼԻԳՐԱՖԴՐՈՑԻ, ԱԿԱԿԻ ՇԵՐԵԲԵԼԻՒ ՓՈԼՈՑ, № 3.
ԳԼԱՎԱԼԻՏ 1671.

Տիրագ 2000.

ՊԱՌԻԵ ԼԱՄԻԴԻՆ ՅԵՎ ԼԵՌՆ ԲԵՐՆՈՇԵՑԻՆ


ԵՄ ՆՎԵՐՈՒՄ ԳԻՐՔՍ ՃՆՈՐՉԱԿԱԼՈՒԹՅԱՆ, ՀԱՐԳԱՆՔԻ ՅԵՎ ԲԱՐԵ-
ԿԱՄԱԿԱՆ ԶԳԱՅՄՈՒՆՔՈՎ:

ԳԻՐՔՍ ՆՈՒՅՆՔԱՆ ՆՐԱՆՑ Ե ՊԱՏԿԱՆՈՒՄ, ՎՈՐՔԱՆ ՅԵՎ ԻՆՉ:
ԱՅՍՏԵՂ ՊԱՏՄԱԾԸ ՄԵՆՔ ՄԻԱՍԻՆ ԵՆՔ ԱՊՐԵԼ:



[

ՅԵՎՐՈՊԱՅԻ ԴԺՈԽՔՈՒՄ



I. ՄԵՐ «ՄԻՍՍԻԱՆ»

Մանր պատասխանառության զգացումով եմ զի-
ջում զանազան տեղերից արտահայտած ցանկություն-
ներին և գրի անցնում իմ կատարած քննության ար-
դյունքը Բալկանյան յերկրներում տիրող սպիտակ տեր-
րորի մասին։ Յես և իմ ընկերներն այնտեղից սպա-
ռիչ փաստական տվյալներ ենք բերել։ Մեր յիշեան
բերած փաստերը մեզնից յեռանդուն կոչ են պահան-
ջում հանրային խղճին։ Նա չի կարող տեսնել Հին
Աշխարհի մի խոշոր մասը համակած անսանձ բարբա-
րոսությունը և անտարբեր մնալ։

Յես իրավունք ունեմ նախորոք հայտարարելու, վոր
մեր առաջադրած նպատակն սկզբից մինչև վերջ մի-
անգամայն բարեխիղճ ու անաչառ կերպով ենք կատա-
րել. մենք վհչ կանխակալ մտքեր, վհչ կուսակցական
նախապաշարմունքներ ենք ունեցել, վորոնք կարողա-
նային ազդել քննության որյեկտիվ և անաչառ բնույ-
թի վրա։

Ի հարկե, յերբեք, և վհչ մի պայմանով յես չեմ
հրաժարվի իմ քաղաքական համոզմունքներից։ Յես
հեղափոխական եմ և ինտերնացիոնալիստ։ Քսաներորդ
դարի առաջին քառորդի պատմական դեպքերի դիտո-
ղությունն ու նրանց հետ շիվելն իմ համոզմունքներն

ավելի խորացրին ու ամբացրին ինձնում։ Բայց այդ չի եյականը, և վոչ ել տեղն ե խոսել այն խոր պատճառների մասին, վորոնք տիրող պետական կազմի հանդեպ ինձ հանդուգն ոպազզիցիոներ դարձրին։ Անհատական համոզմունքը չպիտի խանգարե, վոր յես փաստերը հաստատեմ։ Կրկնում եմ՝ Յելրոպայի հարավ-արեելքում կատարած իմ ամբողջ ճանապարհորդության ընթացքում յես կամովին հրաժարվել եմ իմ հեղափոխական մտքերը յերևան բերելուց։ Յես այնտեղ կուսակցության անդամ չեմ յեղել, այլ լոկ կողմնակի դիտող, վոր նպատակ ե ունեցել որյեկտիվ կերպով տեղն ու տեղն ուսումնասիրել կոնկրետ փաստերը, վոր այնուհետեւ պատմե իր դիտածն ու յեղբակացությունները։

* * *

Կարճ կերպով հիշեցնեմ, թե ինչ պայմաններում ձեռնարկեցինք մեր «քննությանը»։

Արևմտյան ու կենտրոնական Յելրոպայի հասարակաց կարծիքի մի զգալի մասը խորապես վրդովված էր կատարված բռնությունների և անգթությունների լուրերից։

Մարդիկ սարսափած հայտարարում եյին մասսայական ձերբակալությունների, վուտիկանական տանձանքի, անհայտացումների ու սպանությունների մասին, վորոնց պատասխանատվությունն ընկնում էր Ռումինիայի, Հարավ-Ալավիայի և Բուլղարիայի կառավարությունների վրա։ Այս միջնադարյան անգթություն-

ների պատմությունը, գուցե հիշեն ընթերցողները, յերկու բողոք առաջ բերեց՝ ստորագրված Ֆրանսիայի, Անգլիայի, Գերմանիայի և Ավստրիայի հասարակական դործիչների մի ստվար մասի կողմից: Բայց վորովհետև հերքումներ լույս տեսան, մենք վճռեցինք տեղն ու տեղն ստուգել, թե այդ ծանր մեղադրանքը վհրքան և հիմնավորված: Դրա համար մենք, այսինքն՝ Բրյուսասելի փաստարան Պաուլա Լամին, լուսաշխի Խնտերնացիոնալի գեներալ քարտուղար պրոֆեսոր Լեոն Վերնոշեն և յս, մեր բարոյական պարտը համարեցինք այցելել Ռումինիա և հարեան յերկրները: Պետք ե ասեմ, վոր յուրատեսակ քննիչներ լինելով, մենք մեր գալունպատակը մեկն բացեցինք և չնայելով, վոր մեր պահանջները բավական հանդուզն եյին, այնուամենայնիվ ոտարերիրացիների միջամտությունը ներքին գործերին թույլատրելի համարվեց:

Բայց և այնպես «դատելու իրավունքի» հարցը Ռումինիայում սկզբունքային մեծ վեճեր առաջ բերեց: Այդ վեճերի ժամանակ յերեան յեկան յերկու իրարխիստ հակառակ հոսանքներ: Բանվորները, վորոնց հետ յս շարունակ շփվում եյի, ինտելիգենցիայի մի մասը և ձախ լրագրողները մեր գործին առանց կանխակալ նախապաշարմունքի և կատարյալ համակրանքով եյին վերաբերվում:

Էսկ մամուլի մյուս մասը, ազգայնական և պահպանողական փոքրամասնությունը ժխտում եր և՝ ըստ ինձ հասած լրագրական առաջբերումների՝ այժմ ել ժխտում ե ոտարերկրացիների «ազգային գործերին» խառնվելու իրավունքը:

Այսպես որինակ՝ պ. Գովան մոտերքումս դրում եր «Indreptare»-ում. «Մեզ ձանձրացրին քննիչների այդ խմբակները, վորոնք 7 տարի շարունակ հանուն ինչ վոր հասարակականության գալիս ու դրաղվում են Ռումինիայի կենսական խնդիրներով...»

Այս վերաստուգիչների առաջ բերած այն գիտակցությունը, թե գու խնամակալության տակ ես, մեզ համար առնվազն անհաճո յե... Սեփական արժանիքի տարրական զգացումը մեզ չի թույլ տալիս ընդունել, վոր մեզ վրա վորպես ստոր յերկը վրա նայեն, վորի վրա կարող են թափվել ամեն տեսակ դիլետանտներ... մեր յերկրում մենք անձեռնմխելի յենք»... վերջացնում ե նա:

Իմ առաջն ե ազգայնական և ռեակցիոն թերթերում հրատարակած «Բուխարեստի ինտելիգենցիայի բողոքը». Նրանում վորոշ շրջանների զայրույթն ե արտահայտված բոլոր քննությունների, հատկապես իմ քննության դեմ: Այս պասկվիլն ստորագրողները գտնում են, վոր մեր «ներխուժումը» դեմ ե մի «անկախ պետության արժանիքին»:

Անհաշտ փոքրամասության այս տեսակետին համամիտ եր նաև ոռւմինական կառավարությունը. ըստ յերեվոյթին՝ նախարարների ինձ ցույց տված վայելուչ ընդունելությունը քաղաքագիտական կորրեկտությամբ պիտի բացատրել: Սակայն իմ համառությունը պարզ կերպով գրգռում եր նրանց — ինչպես հաղորդում ե «Պաշտոնական լրագիրը», արտաքին գործոց նախարար պ. Դուկան, վորպես պատասխան պարլամենտում իմ գալու առթիվ նրան արած հարցապնդումին — ասել ե,

թե հաշվի յե առնում պ. Բարբյուսի «գրական անունը և նրա ցանկությունը՝ ճշմարտությունը պարզելուա։ «Բայց, — վերջացրել ենա ծափերի տակ, — յես կամննում եմ, վոր այսորվանից ամենքն իմանան, թե կառավարությունը վոչ մի դեպքում թշնամական քնություններ չի թույլ տա՝ ում կողմից ել նրանք ներենչված լինեն։ Շարունակենք. «Ռումինական լրագրողների ընկերությունն» իր շարքերից վտարել եռումինական «Մարդկային իրավունքների լիգայի» քարտուղար պ. Կոստածորուին՝ ինձ ցույց տված պաշտպանության համար։ «Ռումինական գրողների ընկերությունը» մի բանաձեռ եռ ընդունել, ուր ասված ե. «Պ. Բարբյուսի այցն անտեղի յե, իսկ ոտարների միջամտությունը Ռումինիայի ներքին քաղաքական գործերին՝ վտանգավոր։ Ընկերությունը ցավ է հայտնում, վոր Բարբյուսի վարմունքի պատճառով նրա գալը չի կարող ընդունել վորպիս կուլտուրական յերեսույթ։»

Վրաս տեղում եյին ուրիշ հանդի մանություններ, քննադատական նկատողություններ և մեղադրանքներ ևա։ Դրանց դեռ կդառնամ։ Յես նախ կամննում եմ առանձնացնել և մի անգամ ևս լուսարաննել հիմնական խնդիրը, վորովհետեւ դրա մասին յես շատ եմ գրել, նույնիսկ ոռումինական մամուլում, և, կարելի յե ասել, շատ եմ խոսել — ինտերվյույի ձևով։

Յես կտրականապես առարկում եմ այն կարծիքի դեմ, թե ոտարերկրացուն չպիտի թույլ տալ ուսումնասիրել վորեն պիտության արդարադատությունը, վոստիկանական կազմակերպությունը, նույնիսկ զինվորական գործերն ու քաղաքականությունը։ Սա սին

ու յերեխայական հայացք ե, և մեր որերում չի կարելի նման կազուիստիկայով լուրջ կերպով զբաղվել:

Ըսդունում ենք, վոր ուսարների կատարած հետազոտումը կարող ե վտանգավոր ու վիրավորական լինել, յեթե վտանգ ե սպառնում ազգային պաշտպանության խնդիրներին և պետական գաղտնիքներին:

Մակայն մեզ հետաքրքրողն ինչն եր. — զինվորական ոկուպացիայի հետ կապված գեղքերը, դատարանի և վոստիկանության արարքն ու վարքագիծը, բանտարկյալներին ցույց տված վերաբերմունքը, ծեծն ու սպանությունները: Այս բոլորը հասարակական բնույթի խընդիրներ են, ընդհանուր հետաքրքրության ռուարկա: Գրողն ու պատմագիրը վոչ միայն կարող են, այլ և պիտի զբաղվեն այդ խնդիրներով: Հենց դրա համար ել աշխարհի մեծ թերթերը նման խնդիրները լայն կերպով հրատարակելու պարտականությունն ու իրավունքը իրենց ծրագրի մեջ են առել, և իրագործում են: Ոտարազգի թղթակիցները, գոնե թեորիապես, ազատ են լայն ինֆորմացիա տալու իրենց խմբագրություններին:

Միթե հանուն պ. Գոգայի և ուրիշների ինչ վոր խղճուկ ազգամոլական թեորիաների պիտի նորից վերանայենք՝ մամուլի և թղթակցությունների միջազգային ազատության խնդիրը:

Ցեթե մարդ իրավունք ունի դեպքերն ամբողջովին կամ մասնակի կերպով ուսումնասիրել ու գնահատական տալ, կարելի՞ յէ միթե խլել նրանից այդ իրավունքը հենց միայն նրա համար, վոր նա ցանկացել ե այդ դեպքերն ուսումնասիրել տեղն ու տեղը, վորպեսզի կարողանա

նրանց մասին ավելի ճիշտ ու բարեխիղճ դատողություններ անել:

Միթե հեռվից հեռու և տեղում կատարած դատողության մեջ հիմնական տարրերությունն այն չե, թու՝ յերկրորդն ավելի կշիռ ու արժեք ունի, քան առաջինը: Յես կուգեցի, վոր պ. Գոգան և նոմանները պատասխանելին այս հարցին:

Բայց յես շատ լավ եմ հասկանում, վոր նրանք, վորոնք կաշվից դուրս են գալիս՝ հարցը կազուիստիկ կերպով լայնացնելով հասցնել մինչև ազգային գերիշխանության, ինձ ավելի շատ մեղադրում են նրանում, վոր չեմ ցանկանում ուղարկել ակադեմիկան կառավարությանը հաճելի գնահատական տալ: Ամենից շատ սա յե նրանց վիրավորել: և յեթե յես ասեյի: — «Ծումինիայում ամեն ինչ գեղի լավ ե գնում», — նրանք յերբեք նորին մեծությանը և ազգային ինքնասիրությունը վիրավորելու մասին աղմուկ բարձրացնելու ցանկություն չեյին ունենաւ: Պարզ խոսենք. — մեր հակառակորդները մեր քննելու իրավունքը չե, վոր ժխտում են, այլ միայն՝ քննադատելու: Բայց մեկը մյուսի հետ կապված ե անմիջապես:

Յերբ պարզվեց, թե յես մտադիր չեմ չափազանց ակնհայտնի ապօրինությունները թաքցնել և հանցավորներին ծածկել, սկսեցին ամբաստանել ինձ, թե յեկել եմ Բալկանները՝ նախորոք ամեն ինչ սեացնելու վորոշումով: Յերբեմն նույնիսկ ինձ վորպես «Մոսկվայի ագենտ» եյին ներկայացնում: Ազգայնամոլ թերթերն այդ ուղղությամբ մի քանի ծաղրանկարներ ել տվին, իսկ հակասեմբառական ուսանողները թերթիկներ եյին տարածում, վորտեղ ասված եր, թե յես մի մսասակար

հրեա յեմ, յեկել եմ Ռումինիան սեացնելու համաշխարհային հասարակական կարծիքի առաջ:

Յես հրեա չեմ և չեմ ել կարծում, թե այստեղ ծագումը վորեն նշանակություն կարող ե ունենալ: Կյանքում յերբեք Մոսկվայից չեմ ստացել վնչ հրամաններ, վնչ ել հանձնարարություններ:

Սակայն այս պասկվիլն անպատճախան թողնելով, կասեմ միայն, վոր ամենուրեք կատարած իմ անձնական դիտողություններից և ժողոված վկաների ցուցմունքներից պարզ կերպով յերեան են յեկել ճիշտ և ուշալ փաստեր: Իմ յեղրակացություններն անմիջականորեն բղխում են փաստերից և նույնքան հիմնավոր են, վորքան՝ այդ փաստերը: Յեթե ցանկանում են ինձ քննադատել կամ հետո վիճել, թող հերքեն իմ քննության փաստական մասը, փոխանակ դիմելու այն հնացած թեորիային, վոր արգելում և մեկին՝ իր հայրենիքի սահմանից դեսը նայել: Ասենք՝ այդ փաստերի անսասաննելի լինելն ինքնին բավական ե, վորպեսզի ծիծաղելի գառնան կանխակալ թշնամության մասին յեղած ասելուները:


Ավելի հեռու յեմ գնում և հայտարարում, որ բալկանյան յերկրներում գոյություն ունեցող իմ նկարագրած սպիտակ տերրորի պատկերը յերբեք չի կարող «արաւակորել» այդ յերկրները:

Յես յերբեք առիթ չեմ բաց թողել՝ իմ հիացմունքը, հարգանքն ու բարեկամությունն արտահայտելու ռումին, բուլղար և մյուս ժողովուրդներին, վորոնց մեջ յեղել եմ: Այս բոլոր յերկրներում իմ ամբողջ հոգով յեղել եմ բանվորների, գյուղացիների և ուսանող յերի-

տասարդության և ընդհանրապես ազնիվ քաղաքացիների հետ. նրանց հետ շարումակ շփվել և խոր հիշողություններ եմ պահել: Թողնելով Ռումինիան, յես «Fascia» թիրթում Ռումինիային վողջույն եմ ուղղել: Յեվ իմ այդ դիմումի վոչ մի բառը յերբեք չեմ փոխի:

Կրկնում եմ՝ այդ ազնիվ ժողովուրդները բնավ մասնակից չեն այն վոճրագործություններին, վորոնց մեղքն ընկնում ե դրանց ստրկացնող կառավարությունների վրա: Ռումինիայի և բալկանյան մյուս յերկրների կառավարությունները միայն դիպլոմատների աչքում են լրենց ժողովրդի ներկայացուցիչ հանդիսանում: Յեթե հիմա յել պ. Բրատիանուն և պ. Յանկովը Ռումինիայի և Բուլղարիայի դիկտատորներ են համարվում, ծիծաղ և առաջացնում հենց միայն այն միտքը, թե նրանք այդ յերկրներն են մարմնացնում: Պարլամենտական խաղերի միջոցով իշխանություն գրաված այս մարդիկ, ինչպես նաև նրանց պաշտոնյաները, հանդինում են հայտարարել: — «Ազգը — այդ յես եմ. բնազատելով իմ կամ ոգնականներիս արարքը, դուք վիրավորում եք իմ յերկիրը»:

Թող դրանք հանգստանան. մայրաքաղաքում բույն դրած պարագիտ իշխանությունների արարքների համար ժողովուրդը պատասխանատու չե: Առանձնապես սա բալկանյան կառավարություններին ե վերաբերում, վորոնք իշխանության են անցել սրիկայությամբ, պետական հեղաշրջումների ու ահարեկումների միջոցով: Բայց սա ընդհանուր ե այն բոլոր կառավարությունների համար, վորոնք չեն կարող ասել, թե իրենք ժողովրդի ցանկությունների արտահայտիչներն են: Սա



ՀԱՅՈՒ 1956

ճիշտ և նաև ֆրանսիական կառավարության նկատմամբ, վորի մոլորությունների ու սխալների համար վոչ վոք իրավունք չունի մեղադրելու ֆրանսիային։ Սակայն բավական չե միայն խոստովանել, թե քաղաքացին իր կառավարության արարքների համար պատասխանատու չե. լայն պիտի հասկանալ սեփական քաղաքացիական իրավունքները և ասել, — աշխարհի բոլոր հարստանարվածները ներքուստ համերաշխ են. նրանց վիճակը հիմնովին բարելավել կարելի յե միայն այդ համերաշխությունը կազմակերպելով, հրապարակայնության և միության միջոցով։

Յենթարկվել քաղցրակեղու պաշտոնական առաքյալներին, թե՝ «թող ձեր բողոքն արտասահման չհասնի», նշանակում ե հրաժարվել մարդկության մեծագույն շահերից։ Բուխարեստում մենք հարաբերության մեջ մտանք ֆրանսիական դեսպանատան հետ, ուր դեսպանի բացակայության պատճառով մեզ ընդունեց գործերի հավատարմատար պ. Ժապին, այնուհետև ոռոմինական արտաքին գործոց նախարար պ. Դուկաի և ներքին գործոց պետական քարտուղարի ողնական, բայց փաստորեն ներքին գործոց նախարար պ. Տատարեսկովի հետ։ Մի քանի անգամ զրույց ունեցանք III զորաբանակի հրամանատար գեներալ Ռուդեանուի հետ։ Արդեն առիթ եմ ունեցել ասելու, վոր բարձր պաշտոնյությունը դեպի մեզ սիրալիք եր։ Նրանք խոստանում եյին ըստ ամենայնի աջակցել մեզ և նույնիսկ հնարավորություն տալ մոտենալու պաշտոնական գործերին ու փաստաթղթերին, վոր շատ կդյուրացներ մեր անհլիքը։ Բայց իշխանավորների վերաբերմունքը

դեպի մեզ շուտով փոխվեց։ Այս փոփոխության սկիզբը կապված է այն խանդավառ հրապարակական ցույցի հետ Բուխարեստի փողոցներում, վոր իմ գալստյան առթիվ կազմվեց կիրակի որը։ Սա սիրտ տվավ սե-հարյուրյակայիններին։

Մենք լուրջ հիմք ունենք յենթագրելու, վոր նույնիսկ կառավարությունը բարյացակամ եր վերաբեր-վում դրանց։ Բացի դրանից, սիգուրանցան (պահորդական բաժինը) անմասն չեր հակասեմիտ ուսանող-ների սարքած աննշան ցույցերին, նույնիսկ այն սուտ լուրեր տարածելուն, թե մեր անկոչ այցն անհաճո յե ամբողջ Ռումինիային։ Սա հակասում եր ճշմարտությանը։ Մեզ ուղարկած կամ հասցեագրված նամակ-ներն ու հեռագրերը բռնվում եյին։ Մենք տեսնում եյինք, թե ինչ յեռանդով մեզ համար թշնամական մթնոլորտ եր ստեղծվում Բուլղարիա ուղարկված կեղծ ինֆորմացիայի միջոցով։ Ռումինիայից այդտեղ պիտի զնայինք։

Մենք ուղևորվեցինք Բեսարաբիա և ներկա յեղանք թաթարունարյան ապստամբների զինվորական դատին։ Խոսակցություն ունեցանք պաշտպանների, վկաների ու դատավորների հետ։ Դրանից հետո մենք հանդիպել ու զրույց ենք ունեցել բազմաթիվ քաղաքական գործիչների և լրագրողների հետ—«Lupta», լրագրի գլխավոր խմբագիր Կոստանդին Միլիեյի, «Facla», «Adeverul», «Dimineantza» և այլ թերթերի խմբագրությունների հետ, ամենաակտիվ «Նախկին ռումինական ֆրոնտովիկների միության», ռումինական «Մարդու իրավունքների լիգայի» քարտուղար պ. Կոս-

տա-Ֆորուի հետ։ Մենք լինում եյինք ինտելիգենցիայի, գրականագետների, գրաստարանների, գիտնականների շրջանում։ Հանդիպում եյինք բազմաթիվ կուլտուրական ու խելացի մարդկանց և առիթներ եյինք ստանում բարձր գնահատելու այս հասարակության մտավոր և գեղարվեստական բարձր կուլտուրան։ Ձրանսիրական գաղափարների հմայքը Ռումինիայում գերազանցորեն նկատելի յի։ Չնայած արևելյան եքսպրեսով անցած հազարավոր կիլոմետրներին, միջավայրի փոփոխությունը բնավ նկատելի չե։ Բուխարեստ և Կոստանդնուպոլիս – սրանք այն յեվրոպական կենտրոններն են, ուր ֆրանսերենն ամենից շատ ես լսում։

Մենք հավասարապես տեսնվում եյինք զանազան ուղղությունների ու կուսակցությունների ներկայացուցիչների հետ։ Կանվանեմ գյուղացիական կուսակցության առաջնորդներին – բժ. Լուսու, պ. Ստերե և Վերգելիս Մաջեարու։

Լինում եյինք նաև բանվորների շրջանում։ Չնայելով ինձ ուղղած դիմումներին, յես հրապարակային յելույթներից հրաժարվեցի։ Տարածել եյին, իբր թե յես Բուխարեստում յելույթ եմ ունեցել. դա ճիշտ չեր։ Յես և ընկերներս, վորոնցից մեկը շատ հեռու յեր քաղաքականությունից, մի անգամ այցելեցինք ունիտար պրոֆմիությունների աշխատավորներին։ Այդպես եմ վարվել նաև Բուխարեստում, ուր այցելեցի ծառայողների, բանվորների և ուսանողների միություններին։

Այս գեռ բոլորը չե։ Ճանապարհորդությանս այս թոռոցիկ տեսության մեջ յես կփորձեմ նշել իմ մեծ և վորոշ մեթոդով տարած քննության հիմնական ուղ-

դությունները և կարգավորելու ամենորյա տպավորությունները։ Ամեն բան իր տեղում կարելի յելավ տեսնել, հետքը չկորցնել և թափանցել գաղտնիքների խորքը։ Կասկածելի փաստերի գուշակությունների ու ապացույցների աստիճանական կուտակումը ճիշտ պատկերն ետալիս։ Զը նայելով մեր տեսակետների համոզմունքների տարբերությանը, յերեքս ել միատեսակ տպավորությունն ենք ստացել, և յես պնդում եմ; Վոր յուրաքանչյուր բարեխիղճ վկա՝ հետեւելով իր խղճի ու գիտակցության ձայնին, չի կարող այլ յեզրակացության գալ։

Զեմ կարծում, թե այստեղ կարիք լինի հիշելու, թե ինչ լրացուցիչ տեղեկություններ ենք ստացել և ում հետ ենք տեսնվել մյուս բալկանյան յերկրներում — Բուլղարիայում։ Հարավ-Սլավիայում և Տաճկաստանում, այլ և Վենգրիայում ու Ավստրիայում, ուր յեղել ենք, վորպեսզի մեր տպավորություններն ստուգենք ու լրացնենք։ Ամենուրեք մենք համեմատաբար քիչ ժամանակ ենք գործ դրել — առավելագույն հանդիպումների և բանակցությունների համար — ինչպես պաշտոնական շրջանների, այնպես ել ինտելիգենցիայի և բանվորների հետ։

Սոֆիայում մեզ աջողվեց նյութեր գտնել և տեղեկություններ ստանալ ֆրանսիական ներկայացուցչից, արտաքին գործոց նախարարության գլխավոր քարտուղարից։ «Մակեդոնական գաղթականներին ոգնող կոմիտեյի» ղեկավարներից և «Մակեդոնական հեղափոխական կազմակերպությունների» ներկայացուցիչներից։ Այս բոլոր յիրկրներում, բացի փաստաբաններից,

դատավորներից և քննիչներից, մենք հարցուփորձի յենք յինթարկել հենց տուժողներին, նրանց մերձավորներին, գաղթականներին և բանտարկությունից ու մահվան սպառնալիքից փախածներին (զլխավորապես Տաճկաստան և Հարավ-Սլավիա), Մենք կապ հաստատեցինք բոլոր մեծ թերթերի հետ. նրանց խմբագիրները գալիս եյին մեզ մոտ: Նույնն եր թելզրադում և թուղապեշտում: Իմ ճամբորդության վերջին որը — Վիեննայում, յիս խախտեցի իմ՝ յերբեք յելույթ չունենալու խոստումը: Մկրում յիս դուրս չեյի գալիս՝ չուզենալով առիթ տալ մեղադրելու, վոր իրը թե՛ թեկուզ անուղղակի կերպով, բայց և այնպես մասնակցում եմ քաղաքական պրոպագանդային:

Սակայն իմ յերկու զեկուցումն ել — իստելիգենցիայի համար ժողովրդական տանը և ՄՈՊՌ-ի կազմած ժողովում, խոսել եմ միջազգային համերաշխության մասին և բանվորներին մյուս յերկրների բանվորների վողջույնն եմ հաղորդել:

Բայց մեր ճամբորդության մասին զեկուցումն սկսելուց առաջ, մենք — Պառլա Լամին, Լեռն Վերնոշեն և յիս — ուզում ենք արժանին հատուցել Անրի Տորբեսի, Մարսել Վիյարի, Ալբերտ Ֆուլնյեյի, Դանիել Ռենուի և Պլինյեյի մեծ ծառայություններին: Հափըշտակված նույն դրդապատճառներով, վորով և մենք, նրանք մոտերքումս այցելեցին բալկանյան յերկրները: Նրանց տաղանդը, աղդեցությունն ու արիությունը բալկանյան դեպքերի մասին արևմուտքի ժողովուրդների աչքերը բաց արին:

II. ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԲԱՐՁՐ ՊԻՏԻ ԱՂԱՂԱԿԵԼ

Փաստական նյութի հետ մանրազնին կերպով ծառոթանալուց հետո մենք յերեքս ել մի յեզրակացության յեկանք — այն ամենում, վոր ասվել ե Բալկանյան պետությունների տերրորական արարքների մասին, չափազանցության նշույլ չկա: Յեթև մեկը հարցնի. — «Ճիշտ ե արդյոք», պիտի պատասխանել. — «Ճիշտ վոր՝ ավելի վատ ե»:

Հաճախ տեսնում ես, թե ինչպես միջին քաղքենին կեղծավորաբար ձգտում ե ա priori մեղմացնել այժմեյության խիստ վողքերգական գծերը:

«Ե՞ն, մի կհավատա, վոր մեր որերում...» սովորաբար այսպես են թողթովում միջակ ու սահմանափակ մարդիկ: Նպատակ չունենալով քաղաքական այս կարճատեսության պատճառները բացատրել, դրազվենք ճշտած փաստերով, անհերքելի թվանշաններով և ապա մեր հերթին գոչենք. «Բալկաններում հրեշտավոր վոճիրներ են տեղի ունենում. վոչ մի սովետական չի կարելի արդարացնել այս կազմակերպված ահոելի սպանդանոցը»:

Յես կուզեյի բոլոր մանրամասություններից մի ընդհանուր պատկեր տալ՝ նրա ճշտությունը բազմաթիվ առացույցներով վավերացնելով. բայց իմ հաշվետվու-

թյունը խիստ մեծածավալ ու ձանձրալի կդառնա՝ չնայելով նրանում յեղած տվյալների սասանեցուցիչ ընույթին։ Այս պատճառով փոխանակ ձնշիչ ու ձանձրալի կերպով թվելու անհերքելի փաստերը, վորոնք բալկանյան արյունոտ ենցիկլոպեդիան են կազմում, յես կպատմեմ միայն ամենից եականները։

ԲԱԼԿԱՆՅԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ

Հակառակ տարածված լեգենդայի, բալկանյան ժողովուրդներն աշխատասեր, արի ու խաղաղասեր են։ Տաճկական կայսրության նախկին գավառները շրջելիս՝ մենք շարունակ շփվել ենք բանվորների ու գյուղացիների հետ, վորոնք լավագույն տպավորությունն են թողել մեզ վրա։ Աշխարհի ամենալավ մարդիկը բեսարացիք, բուլղարներն ու տաճիկներն են։ Բուխարեստի, Բելգրադի, Զագրեբի, Սոֆիայի և Բուղապեշտի ինտելլիգենցիայի շրջանում մենք հանդիպել ենք այնպիսի աշքի ընկնող մարդկանց, վորոնք իրենց կուլտուրական մակարդակով վոչ միայն ցած չեն արևմուտքի ինտելլիգենտից, այլ և հաճախ նրանից ել բարձր են։

Այս բոլոր յերկրների տնտեսական վիճակը միատեսակ անկայուն է. — Համարյա բոլոր գյուղերը կարիքի մեջ են, գյուղական տնտեսությունն ընկած։

Ռումինիայի պես գյուղատնտեսական յերկրում 1924—25 տնտեսական տարում ցանքսերի մակարդակը 8 միլիոն հեկտար եր, այսինքն 2 միլիոն հեկտարով պակաս նախորդ տարվանից և համարյա կեսը՝ նախապատերազմյան ցանքսերի մակարդակի։

Գյուղական տնտեսությունը զուրկ է շրջանառության միջոցներից։ Աղգային և մյուս բանկերը խիստ պակասեցրել են գյուղացիության փոխառվությունը։ Այդ փոխ տրվող գումարի տոկոսները 30-ի, նույնիսկ 40-ի յեն հասնում։ Գրագիտությունը Ռումինիայում շատ ստոր աստիճանի վրա յե։ Գլխովին անգրագետները 70, մի քանի զավառներում նույնիսկ 90 տոկոս են կազմում, կանանց մեջ 98-ի յել ե հասնում։ Ռումինական գյուղական ուսուցիչն ստանում ե ամսական 190 ֆրանկ։ Հին Ռումինիայում ուսուցիչն ստանում ե մոտ մեկ դոլար կենսաթոշակ, իսկ Բեսարաբիայում՝ մոտ կես դոլար։

Ռումինիայի տնտեսական ճգնաժամը մի շարք պատճառներ ունի. դրանցից առաջինը հանքերի և թշնամի պետությունների նախկին հպատակների ձեռնարկությունների ազգայնացումը և պետական հիմնարկությունների ինքնամատակարարման անցնելն ե։ Բոլոր այս հաստատությունները, վորոնք մի ժամանակ առավելական յեկամուտ եյին տալիս, փաստորեն գտնվում են դեկավար ոլիգարխիայի ձեռքում։

Սրան պիտի ավելացնել նաև՝ մի շարք միջոցներ, վորոնք նախկին բոյարական ֆեոդալիզմը դարձրել են կապիտալիստական ֆեոդալիզմ, մի շարք համաձայնագրեր ազգային բանկի հետ, ընդհանուր հարկերի բարձրացումը, կապիտալը հարկից ազատելը և պատերազմական, սպեկուլյացիայի դեմ գոյություն ունեցող որենքի վերացումն, բնակարանային վարձի չը կարգավորված լինելը։ Պատկերն ավելի խտացնում են՝ ընդհանուր քաղաքական կուրսը, վոչ-ռումին ցեղերի դեմ հալածանքը,

և բանվորների՝ գյուղացիների ու մանր բուրժուազիայի դաժան ճնշումը:

Բուլղարիան նույնպես յերկրագործական յերկիր և նրա ազգաբնակության $\frac{4}{5}$ -ը գյուղացիներ են: Այստեղ կիրառվող գլխավորապես ավանդական յերկրագործական գործիքներն են: 49 հեկտար հողին մի յերկաթե գութան և ընկնում: Յերկրի ամբողջ մակարդակի մեկ յերրորդը հատկացրած և ծխախոտի կուլտուրային: Գյուղացիության համար ծխախոտի մշակությունը մյուս կուլտուրաներից բնավ ավելի ձեռնատու չե. բայց յեթե նա այդպիսի չտփերի յե հասել, այդ միայն նրա համար, վոր պակաս գործիքներ ու ծախսեր և պահանջում, և բայց գրանից, գյուղացիության վզին և փաթաթել ձեռնարկատերների հզոր միությունը: Ծխախոտը յերկրագործին լավ ոգուտ եր տալիս Ստամբուլյակու ժամանակ, վորն ամեն միջոց գործ եր դնում յերկրից դուրս վտարելու սպեկուլյանտներին ու միջնորդներին և խրախուսել կոռպակերացիան:

Բայց յերբ Զինվորական Լիգան հզոր ծխախոտագործական ֆիրմաների գրամական աջակցությամբ իշխանությունը կորղեց գյուղացիական կուսակցության ձեռքից, կապիտալիստները նորից դրության տերերը դարձան: Փորձի համար՝ ահա մի քանի թվեր Լեռնային Զումայիայի շրջանից.—1923 թվին գյուղացին իր ծխախոտը վաճառելով տեղական կոռպակերատիվի միջոցով, մի կիլոյի համար ստանում եր 110—130 լիվ, առետրականներն ել վճարում եյին 45—70 լիվ: Ներկայումս առետրականը, շուկայի միակ տերը, ծխախոտի

կիլոն գնում և 25 լեվով, իսկ ծխախոտագործական բանվորների աշխատավարձն իջել և 15 — 30% -ով:

Բուղարական արդյունագործությունը պատերազմի սկզբից վողքերգական վիճակ և ապրում: Խոշոր ծխախոտագործական ֆիրմաները հսկայական վաստակ են ստանում (1923 թ. 2 միլիարդ լեվ, վոր 10 միլիոն լեվ հարկի տակ եր դրվել):

Սպեկուլացիան և վաշխառությունը զարգացել են մեծ չափով: Սրա հետ միաժամանակ միջին արդյունագործությունը և առևտրական ձեռնարկությունները մի թշվաս գոյություն են քաշ տալիս, յերկաթուղիների ապրանքատարությունը յերկու անգամ կրճատվել է. ածուխի քանակը նույնպես: Սրա հետևանքով առաջ են գալիս մասսայական սնանկություններ, խուճապ և յերկյուղ՝ ապագայի հանդեպ:

Մթերավաճառներն առևտուր չունեն. կուշտ չուտելն ընդհանուր յերնույթ և դարձել: Մասնավոր պարտքը վաշխառուներին համնում և 15 միլիարդ լեվի, վորի տոկոսները 7 միլիարդի յեն հավասար: 28,169 բուլղար պատերազմական հաշմանդանություններ ստանում են ամսական մոտ 0,8 դոլար կենսաթոշակ. իսկ՝ այսպես կոչված «խաղաղության հաշմանդամները», այսինքն ժողովրդական խոռվությունները ճնշելու ժամանակ վիրավորված զինվորներն ու սպաները՝ 4 անգամ ավելի:

Ամիս ամսի վրա ներմուծումն աճում, իսկ արտածումն ընկնում եւ: Նախահաշիվը մնասով և փակվում, իսկ յեկամուտների կեսը գնում և ծածկելու փոխառությունների տոկոսները և դորքի ու վոստիկանության պահպանության ծախսերը:

Այս փոքրիկ քերկրում գործազուրկ վորակյալ բանվորների թիվը 100,000 է. 7—8000 անգործ ծառայողներ կան, 500,000 ել ապրուստի ամեն տեսակ միջոցներից զուրկ աշխատավորներ։ Կառավարող շրջանների փույթը չի այդ։ *)

Հարավ-Սլավիան, ուր բազմաթիվ գործարաններ են փակվել և 200,000 գործազուրկներ կան, վոչ մի կերպ չի կարողանում գյուղատնտեսական ճգնաժամից ազատվել։

Վերջին տարում գյուղատնտեսական մթերքների գներն ընկել են. — հացը 400 դինարից դարձել և 260 և յեգիպտացորենը՝ 200-ից 110. Մի զույգ յեղը մի տարի առաջ արժեքը 12,000 դինար, իսկ այժմ՝ 5000. Լավ հողի արագանը (հողի չափ, ծ. թ.) 1924 թ. արժեքը 25,000 դինար, իսկ այժմ՝ 10,000-ից ավելի չարժե. Գների անկումն առաջ և դալիս, բացի տնտեսական պատճառներից, նաև խոշոր առևտրականների սպեկուլյացիայի շնորհիվ. Սա յերեսում և հենց միայն նրանից, վոր չնայելով հացահատիկների գների ընկնե-

*) Ահա 1926 թվի մի քանի տվյալներ ծխախոտագործների շրջանում նկատված գործազրկության եյուսաենդիլում 1500 բանվորից 1200 գործազուրկ եյին. Դուանցւում 3000-ից՝ 2800-ը. Ֆիլիպպոպում 8000-ից՝ 7000-ը. Ստանիմակում 3000-ից՝ 2500-ը և այլն. իսկ աշխատավարձն իջեցրած և 500/օ-ով, Սրան ավելացնենք, վորովներ և մշակվում՝ խողն արտահանել Անգլիա՝ քաղցած բուլղար ժողովրդի համար միանգամայն կորսատքեր պայմաններով. Նման գործառքի միտք ունի ոռոմինական կառավարությունը, վոր հովանավորում և բանկիրներին՝ ի ֆլամ գյուղական ազգաբնակության, վորը՝ մի քանի գավառներում 2—3 որը մի անգամ և ուսում («Adeverul», 1926 թիվ, մայիս):

լուն, թելգրադում հացն արժեք $4\frac{1}{2}$ դինար (2 ֆրանկից ավելի):

Հնթացիկ տարում Հարավ-Սլավիայի նախահաշվից, տնտեսելու նպատակով, հանված են ժողովրդական տնտեսության նախարարության պահպանության ծախսերը. այն ինչ՝ ողանավեր ու զրահակիրներ գնելու համար զինվորական նախարարին տրամադրած գումարներն ավելացված են, այլ և ավելացրել են վրանգելյան վարձկանների ոռճիկները:

Բուրարեստում և Բելգրադում նկատված արդյունագործական վերելքը գլխավորապես ոտար գրամատերերներն են պահում և արհեստականորեն ստեղծած ապահով վիճակի տպավորություն և ստացվում: «Հաղթած» յերկրների այս մայրաքաղաքներում աչքի յե ընկնում. սպեկուլյանտների նոր պալատների և բանվորական ռայոնների խղճուկ ու հին բնակարանների միջև յեղած կոնտրաստը, հակապատկերը *):

*) Վենգրիայի ընդհանուր դրությունը ևս նույն պատկերն են ներկայացնում: Այն յերկրում, ուր ազգայնակության $70^0/0$ -ը զյուղացիներ են, տնտեսական կյանքը կատարելապես կանգ և առել. բատրակի աշխատավարձը արդյունաբերական բանվորի աշխատավարձի հազիվ մեկ յերրորդն է կազմում. $23,000$ մետալիստներ անգործ են. ուժից վեր հարկերի պատճառով մթերքի սպառումը նախապատերազմյանից 2 անգամ պակասել է: Այսպես և վոչ միայն դավառներում, ուր բնակչության թիվը ընկեր հասել է 8 միլիոնի, այլ և Բուդապեշտում: Սրա հետևանքով աճել են յերեխաների մահացությունը և թոքախարը: Վենգրիան տուբերկուլյոզից մեռնողների թվով Յելգրովայում առաջնության մրցանակ ունի: Վերջին տարում այդտեղ մեռնողների թիվը ավելացել է $50^0/0$ -ով, իսկ Բուդապեշտում՝ $60^0/0$ -ով:

Բուխարեստի հարուստ արվարձանում, նոր պալատներով զարդարված լայն ու սավերախիտ փողոցում, «Հաղթության» հաղթական կամարն եւ Հեռվից նա գեղեցիկ ու փառահեղ եւ, սակայն մոտիկից յերեսում եւ, վոր կառուցված եւ գիպսից, ճեղքվածքներ եւ տվել, թերվել—ինչպես ցուցահանդեսից մնացած գեղորացիա։ Այս հուշարձանն այս յերկըի խակական դրության խորհրդանշանն եւ—արտաքին փայլի և ներքին փառումի միացումն։

ՊԱՐԱՁԻՏ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բոլոր բալկանյան յերկրների ընդհանուր վողրերգությունն այն եւ վոր պարագիտ կառավարությունների իշխանության տակ են։ Այս կառավարությունները ժողովուրդների կամքը չեն արտահայտում, այլ արհեստական միջոցներով են իշխանություն պահպանում, վոստիկանական և զինվորական ու դատական տերրորի միջոցով, արդարացնելով այն առածը թե՝ «ով փայտը վերցրեց, նա յել կապրալ եւ»։

Ավելի ճիշտ կլիներ ասել, թե բալկանյան կառավարությունները միայն իրենք իրենց են ներկայացնում։ Փաստորեն քաղաքական կուսակցությունները սրանց համար ապահովել են միայն մի քանի աղքայնական շրջանակների և արտոնյալ բուրժուազիայի պաշտպանությունը *):

*) Դժբախտաբար չպիտի կարողանամ առանձին զլուխ նվիրել այն կաշառներին, վորոնք գոյություն ունեն բալկանյան յերկրների պարագիտ կառավարությունների բոլոր աստիճաններում։ Բավական

Ռումինական թագավոր Ֆերդինանդ Հոհենցոլերնը առանձին համակրանք չի վայելում: Նա ողակավորված և կամարիլիայով և գտնվում է կառավարության ազդեցության աակ: Միապետության այլասերումը Ռումինիային հասցրեց այնպիսին, վոր թագավորը շրջապատող խմբակի ձեռքին կույր գործիք դարձավ:

Միապետի այսպիսի գրությունն ընդհանուր և բոլոր յերկրների համար և արձագանք ե գտնում գերման յունկերների հետեւյալ ցինիկ յերգում: «Թող թագավորը բացարձակ միապետ լինի, միայն թե մեր ցանկությունները կատարի»:

Ասենք Ֆերդինանդն այնքան ել ուրիշների ցանկությունների հասարակ կատարողը չե: Նա կառավարող խմբակի շատ ակտիվ գործակիցն ե: Ազատամիտ կուսակցությունը քաղաքական կոմբինացիաների շնորհիվ իշխանության վլուխ անցավ և իր ձեռքումն և պահում կամակատար պարլամենտը: Դիկտատուրան կառավարությանը հնարավորություն տվավ պարլամենտական մեծամասնություն շահել: Ամենահիմնավորված ու անհերքելի բողոքներն անգամ վերջանում են նրանով, վոր ձայների ճնշող մեծամասնությամբ վստահության քվեյե տրվում կառավարությանը:

Բավական է միայն մի փոքր ծանոթանալ Ռումինիայի ներքին դրության հետ և իսկույն կպարզվի, վոր ազատամիտ կուսակցությունը չի մարմնացնում իր

և ասել, վոր Հարավ - Ալավիայում վերջերս հրատարակած կաշառների գեղքերն անարգանքի սյունին գամեցին նախարարներին և նրանցից մեկի վորդուն:

մեջ վհչ յերկրի ձգտումները, վհչ ել նրա կենդանի ուժերը: «Ցարանիստների» կամ գյուղացիական կուսակցությունը հսկայական աղղեցություն ունի Ռումինիայում:

Բացի այս կուսակցությունից, գոյություն ունեն նաև գեներալ Ավերեսկույի «Ժողովրդական» և տրանսիլվանյան «ազգային» կուսակցությունները:

Ազատամիտ կուսակցությունն իր ուղած ժամանակ խաղ ե սարքում ոպազողիցիայի հետ: Այս խաղը վոչ մի եական փոփոխություն չի բերում, և հասարակաց կարծիքը բավարարվում է մի քանի անձնավորությունների փոփոխությամբ: Ռումինական բոլոր զեկավար կուսակցությունները միենույն ձտումներն ունեն, և նրանցից վոչ մեկը սերտ կապ չունի ազգաբնակության հետ: Վերջին հաշվով առանց բացառության բոլոր ռումինական կուսակցությունները շատ կամ քիչ չափով ռումինական ոլիգարխիայի կամակատարները և վարչաձևի հենակետն են. այն վարչաձևի, վորն ըստ Ռոտառ Բառերի «ամենաֆեռողալական վարչաձևն է Յեվրոպայում»: Գյուղացիական կուսակցությունը բացառություն չի կազմում: Նա կարող է կառավարության գլուխ անցնել միայն իր ծրագիրը տիրող դասակարգերի պահանջներին հարմարեցնելով:

Նույն ընդհանուր նկատառումները վերաբերում են նաև բուլղարական պարլամենտում տեղի ունեցող պայքարին, այն տարբերությամբ միայն, վոր բուլղարական կառավարությանը գեռ աջողվում է հակա-ռազմական:

Բայց Բուլղարիայում, ինչպես նաև Ռումինիայում, Հարավ-Սլավայում և Հունաստանում, տիրող դասակար-

գերն իրենց տրամադրության տակ՝ պարլամենտական միջներից բացի՝ ուրիշ միջոցներ ևս ունեն։ Այդ միջոցները կիրառվում են ընտրական մեքենայությունների համար։ Կասկած չկա, վոր յեթե բալկանյան կառավարություններն ընտրությունների վրա ճնշում գործ չդնեն։ մեծ փոխոխություններ տեղի կունենան։ Իսկ ներկա պայմաններում նրանք վախենալու բան չունեն։

Բալկանյան ընտրությունները կատարվում են ժամկարմների ու ֆաշիստների անմիջական ճնշման տակ։ Առանց քաշվելու միջամտում են նաև իշխանությունները։

Ռումինական իրականությունից մի քանի փաստեր բերենք։ Վոլոնտեիրովկայում (Բեսարաբիա) ընտրությունների ժամանակ պրեֆեկտն ընտրողներին վախեցնելու համար հայտարարեց, թե կառավարության գիմքվեարկողները պիտի Ռումինիայից հեռանան։

Շարոյում ժանդարմներն ուղղողեցիայի ներկայացուցիչներին արգելում եյին մտնել ընտրական շենքը։ Այս ձևով իշխանությունները թույլ չտվին գյուղացիներին՝ վորմեկ կերպ մասնակցել ընտրություններին։ Շարոյի 8000 բնակիչներից միայն 811 հոգի ընկան ընտրական ցուցակները։ Պատուշոյի 6000 բնակիչներից միայն 66-ը ցուցակ ընկան, իսկ ուրիշ տեղերում 5000-10,000 հոգուց 30-100 հոգի հազիվ։

Թաթարբունարի 14,000 բնակիչներից ցուցակ ընկան միայն 1,112 հոգի։ Իշխանություններն այս թիվը ել շատ համարեցին, և հուլիսի 26 ին այս ցուցակներն անհայտացան, սրանց փոխարինեցին նորերը, միայն՝ 400 ընտրողներով։ Թաթարբունարցիներին պաշտօնյաներն սպառնում եյին բեկանել ընտրությունները, յեթե կա-

սավարության թեկնածուները չանցնեն: Ընտրությունների հետևանքներն առահօղելու համար՝ Թաթարբունարի հին քաղաքային ծառայողները հեռացվեցին և նրանց 24 ժամում փոխարինեցին ավելի վստահելիները: Պրեֆեկտն անձամբ աշքի յեր անցրել ցուցակները և շատ անուններ ջնջել:

Գյուղացիական կուսակցության անդամ Ստերեն, վոր Բեսարարիայի ամենաժողովրդական մարդկանցից մեկն և և ոպպողիցիայի անդամ, պատմում եր վերջին ընտրական կամպանիայի ժամանակ իր կրած տանջանքի և այն բռնությունների մասին, վորոնց յենթարկվել են ինքը և բավական մեծ պաշտոն ունեցող մարդիկ, ինչպես որինակ՝ Խալիպպան: Ոպպողիցիայի անդամներին նախընտրական ժողով գումարելն արգելված և յեղել:

Հայանի ոռոմին, պատմության պրոֆեսոր և պատգամավոր Իորդի հայտարարություններում մի ամբողջ մեղադրական ակտ կարելի յե գտնել ոռոմին կառավարության գործադրած այն ցինիկ միջոցների մասին, վորոնք գործադրվում եյին՝ ընտրողներին ուղած ուղղությունը տալու համար:

Իորդի այս վկայությունն առանձնապես արժեքավոր ե, վորովհետև ուրիշ գեպքում նա իրեն ռոռոմինական պատվիճ բավական անաջող պաշտպան և ներկայացրել: Բոլոր բալկանյան յերկրներում ազատ ձայնովության թեորիայում գոյություն ունեցող այս խախտումները կենցաղային յերեւույթի բնույթ են կրում և միայն Բալկաններով չեն սահմանափակվում:

Վենգերական սահմանադրության մեջ, վորի կազմելուն մասնակցել ե նաև Թրանսխան, ընդհանուր ընտ-

բական իրավունք զոյություն չունի։ Տարբական կը թության վկայական չներկայացնող քաղաքացիները հանվում են ընտրական ցուցակներից։ Ճիշտ և, Վենդիայում անգրագիտները շատ են, բայց մյուս կողմից ել իշխանությունների ճարպիկ խաղերի շնորհիվ գրագետ քաղաքացիներից շատերն են քվեազուրկ դառնում։ Բայց գրանից, ընտրություններն այնտեղ բաց են, և ընտրողն իր թերթիկը տալիս և առանց կնքելու։

Միանգամայն հասկանալի յե, վոր այսպիսի պայմաններում իշխանությունների կամ տերերի ազգեցությունն ըստ ամենայնի պիտի յերեան գա և պարզ ե, թե ինչո՞ւ կառավարական կուսակցությունն այնտեղ 170 ձայնի մեծամասնություն ունի։

Բուլղարիայում օանկովի և զինվորական նախարար վոլկովի (սրանք անբաժան են) կառավարությունն ավելի չի արմատացած, քան Բրատիանույի կառավարությունն Ռումինիայում։ Օանկովից առաջ իշխանության վլուխ անցած Ստամբուլիյսկունախարարությունն ավելի մեծ թափ ուներ։

Ալեքսանդր Ստամբուլիյսկին, գյուղացիական առաջնորդ, վորին Ալավերդի - Վասիլեսի զինվորական բանդիստները 1923 թ. կառը-կառը անելով սպանեցին, բավական փայլուն և որիգինալ գեմք եր։ Նրա կառավարությունն ինքն իրեն «գյուղացիական» եր անվանում։ Բայց նա, իր հերթին, անձնիշխան եր և կարելի յե ասել՝ բռնությունների և ճնշումների շրջանը Բուլղարիայում Ստամբուլիյսկուց և սկսվում, նրա «նարնջազույն զվարդիայից», վոստիկանապետ Պրուդկինից և նրա ամբողջ անպատճախանատու միջավայրից։ Բայց

չի կարելի չասել, վոր նա ժողովրդական սուր հոտառություն ուներ:

Ստամբոլիյսկու կարինետը մի շարք բարենորոգումներ մտցրեց, վորոնցից հիշատակելի յեն պարտադիր աշխատանքը, ժողովրդական լուսավորությունը զարգացնելու միջոցները, հողային բարենորոգումները, զյուղատնտեսական բանկը: Նա նահապետական վարչաձևի նման մի բան մշակեց և մասամբ ել իրագործեց: Նրա մտքերը զուրկ չեյին համարձակությունից, բայց վարոշ չափով նեղ ու սահմանափակ եյին (որինակ՝ նա իշխանությունից հեռացրեց բոլոր ինտելիգենտներին): Ցանկով ոգտվեց Ստամբոլիյսկու՝ բանվորների նկատմամբ ունեցած սխալներից ու բանություններից (վերջինս չկարողացավ բանվորներին ու գյուղացիներին միացնել) և սպայության, բուրժուազիայի, կապիտալիստների ու ինտելիգենցիայի դեպի նա տածած անհամակիր վերաբերմունքից, ու կես ժամվա ընթացքում (1923 թ. հուլիսի 9-ի առ 3 — 3½ ժամին) տապալեց հին կառավարությունն ու նորը կազմեց:

Հասարակաց կարծիքը սպահանջում եր, վոր Ցանկով յերկիրը պարլամենտի ոգնությամբ կառավարի: Կաշառների, սպառնալիքի և բանությունների միջոցով Ցանկովը կարողացավ բոլոր կուսակցությունների բլոկ կազմել բացի գյուղացիական և կոմմունիստական կուսակցություններից:

Պարլամենտական միծամասնություն ստեղծելով, Ցանկով սկսեց կիրառել մի դիվային ծրագիր — բոլոր անհապանդ կուսակցությունների կողմնակիցների ֆիզիքական վոչնչացումն, այսինքն ամրող ոպազողիցիայի՝

այս բառի լայն մտքով։ Փաստերը, թվերը և ժամանակագրությունը հաստատում են, վոր այդ բանը նրան աջողվեց։ Անհրաժեշտ ե ընդգծել այն ստրկական պատրաստականությունը, վոր այդ ժամանակ հանդիս բերին կեղծավորաբար իրենց ոպպողիցինն, մանավանդ սոցիալիստական, անվանող կուսակցությունները։ Սոցիալիստական «առաջնորդ» Պաստուխովի լրագիր «Եպոխան» փառաբանում եր հունիսի 9-ը, վորպես «տաճկական բռնապետությունից ել վատթար բռնապետությունից ազատվելու որ»։ 15 որ հետո պետական հեղաշրջումից, վոր կառավարական կուսակցությունը իտալական ֆաշիստներին հետեւելով՝ «հեղափոխություն» անունով մկրտեց, միացյալ սոցիալիստական կուսակցությունների կենտրոնական կոմիտեն շնորհավորում եր սպայությանը՝ հեղաշրջման գործում նրա խաղացած վճռական դերի համար։ Սա մեծագույն ստորոտիւն եր, սակայն սոցիալիստները կարող եյին արդարանալ ասելով, թե դրանով վերջ տրվեց դեպի սոցիալիստներն ունեցած թշնամական ուժիմին, և թե իրենք ընազ չեյին սպասի, վոր ծանկովի վոճրագործությունները հարյուրապատիկ կգերազանցեն Ստամբուլիյսկու վոճրագործություններին։ Սա հանցանքը մեղմացնող հանգամանք կլիներ։ Սակայն սոցիալիստները հետագայում ել չծառացան ծանկով-Վոլկովի սպիտակ բռնապետության դեմ, իսկ սրանց պաշտոնական որգան «Նարոդ»-ը 1923 թ. սեպտեմբերի 15-ին գրում եր. «Ճիշտ ե, սոցիալիստները մասնակցել են ագրարական շարժումը և սեպտեմբերյան ապստամբու-

թյունը ճնշելու գործին. սրանից բղխող պատասխանատվությունից մենք չենք խուսափում»:

Սոցիալիստ կաղասսովը մի վորոշ ժամանակ ծանկովի կարինհոտի անդամ երև և միայն դրա համար վերջերս հեռացվեց կուսակցությունից:

Անկասկած Բորիս թագավորի և ծանկով - Վոլկովի կառավարության մեջ վորոշ անհամաձայնություն ու լարված վիճակ գոյություն ունի: Բայց, ինչպես յերեվում ե, թագավորը կյանքում կիրառել չի կարողանում այն հայացքները, վոր վերագրում են նրան: Նրան բավարարում ե և այն, վոր քաղաքական նկատառություններով տված մահավճաները չի հաստատում, սակայն հենց ինքն ել տսում ե, թե դա լոկ խարուսիկ փափկանկատություն ե, վորովհետև կառավարությունը բնավ չի քաշվի մարդասպաններ ուղարկել այն մարդկանց մոտ, վորոնց ինքը կուզեր ներումն շնորհել:

Իսկ հոգեւորականությունը, նորերս բուզզարական սինողը մի ընդարձակ հովվական թուղթ ուղարկեց բուզզարական քրիստոնյաներին. — «Հանուն քրիստոնեական դթասրտության կոչ ենք անում բուզզար ժողովրդին -- ոգնել իշխանություններին՝ կարգը վերականգնելու»: Յերբ լավ գիտես, թէ ինչ ե թաքնված այդ «կարգը վերականգնելու» բառերի տակ, այդ դեպքում յեկեղեցու դերը հրեշավոր ե դառնում:

Մեր ասածների մեծ մասը վերաբերում ե նաև Պաշտի կառավարությանը՝ Հարավ-Սլավիայում: Ոպպողիցիայի դեմ պայքարի գործում նա յել ե բռնության ու ճնշումների ոգնությանը դիմում: Ժամանակագրական կարգով՝ արավ-Սլավիան առաջինն եր, վոր ոպպո-

զիցիոն կուսակցություններն անլեզար հայտարարեց և պետական ֆաշիզմը հիմնեց:

Բելգրադի կենտրոնական «Գլավնյաչա» բանտը՝ Հարավ-Սլավիայի Բաստիլիան, դեռ տաճիկների որոք գոյություն ուներ: Որբենովիչների և Գեոդալական ուժիմի ժամանակ նրանում տառապող բանտարկվածների հառաջանքն եր ողը թնդացնում: 1903 թ. մայիսի 29-ից Կարա Գեորգիիչների տոնմը գրավում ե Կոնակը, Խշանության ղեկը գտնվում ե արմատականների ձեռքում, վորոնց հալածում եյին Միլան և Ալեքսանդր թագավորները, իսկ բանտը շարունակում ե իր նախկին դերը խաղալ արդարության և ազատության կողմնակիցների նկատմամբ: Հարավ-Սլավիան ժողովուրդների ֆեղերացիա չե, այլ միայն նախկին Սերբիան՝ պատերազմից հետո տիրած հողերի հաշվին լայնացած: Նրա կառավարությունը հարատե պատերազմական զրության մեջ ե բանվորների, գյուղացիների և ազգային փոքրամասնությունների հետ:

Պաշիչի կարինետն ամրացավ, յերբ նրա մեջ մտավ խրուտական կուսակցության առաջնորդ Ռադիչը: Սա հաշտվեց Պաշիչի հետ և այսպիսով իր վրա առավ բանվոր դասին հալածելու և Ալբանիայի ու Սալոնիկի նկատմամբ ունեցած իմպերիալիստական վոտնձգությունների պատասխանատվությունը:

Ռադիչն առանց ամաչելու ամբողջ կուսակցության, նույնիսկ ամրող ժողովրդի բախտը կապեց իր կարի-յերայի հետ: Խնչպես հաղորդում ե «L'Agence des Balkans» թերթը, Ռադիչը հայտարարել ե. «Նրանք, վորոնք կցանկանային կարինետ կազմել՝ առանց իմ՝

մասնակցության, պիտի գիտենան, վոր այդ գեղքում խրոատները չեյին մտնիլ Հարավ-Սլավիայի կազմի մեջ»:

Այսպիսի կառավարության ձեռնարկած բարենորոգումները փքուն, և միայն ձեռքում իշխանություն պահելու նպատակով կիրաված բաներ են: Բուլղարիայի և Ռումինիայի հողալին ռեֆորմները, վորոնց համար այդ կառավարություններն այնքան հարայ-հրոց հանցին, միայն և միայն խարերայություններ են:

Բեսարաբիայի և Տրանսիլվանիայի խոշոր կալվածները բաժանելուց գյուղացիք վոչինչ չշահեցին: Հողամասերը աճուրդով ծախվեցին կամ դրանցով առատ վարձատրվեցին ժանդարմները, վոստիկաններն ու պաշտոնյանները: Մտամբոլիյսկու այնքան լայն բարենորոգումները հետագայում Ցանկովի կարինետի ուղղումներով բոլորովին աղավաղվեցին:

ԱՆԱՐԴԱՐ ՈՐԵՆՔ

Բալկանյան բոլոր յերկրներում, ինչպես նաև Վենգրիայում, գոյություն ունի պետության ապահովության որենք: Թէ Ռումինիայում, թէ Բուլղարիայում, թէ Հարավ-Սլավիայում և թէ Վեներիայում, այդ որենքը միևնույն ձևն ունի:

Այդ որենքները կառավարություններին հնարավորություն են տալիս հետապնդել ու կոտորել այն քաղաքացիներին, վորոնք համամիտ չեն տիրող կուսակցության հետ:

Յեթե մինը «կործանիչ» մտքեր ե արտահայտել կամ վորոշ գույնի լրագրներ և կարդում, կազ ե պահանում արտաս. հմանյան կազմակերւ լությունների հետ,

գատախաղության տեսակետից վորևե քննադատական նկատողություններ ե անում, դրանով այնպիսի հանցանք ե գործում, վորի համար ամենախիստ պատիժը պիտի կրի: Մարսել Վիլյարն իրավացի կերպով նկատում ե, թե բոլղարական որենքի 20-րդ հոդվածը պարլամենտի կառավարական մեծամասնությանը լիակատար իշխանություն ե վերապահում փոքրամասության նկատմամբ. մի բան, վոր բոլորովին դիմ ե ժամանակակից իրավունքին ու հավասարությանը: Այդ որենքները բացարձակ ծաղր ու վոտնձգություն են՝ մարդկային իրավունքի նկատմամբ: Դա կամայականություն ե՝ իրավունքի բնագավառում, դա որինականացրած ապորինություն ե:

Այս հատուկ որենքներով մարդկանց դատապարտում են հենց միայն նրա համար, վոր գտնվել են վորևե սահմանադիր վայրում, մահվան դատապարտում նրա համար, վոր թաքցրել ե վոստիկանությունից հետապնդվածի՝ յերբեմն նույնիսկ առանց իմանալու, թե նա հետապնդում ե, կամ յեթե վերջինիս հանցանքը դեռ հաստատված ել չե *):

Ամեն մի իրավաբան կամ առողջամիտ մարդ զար-

*) Նշենք նաև՝ թեկուզ ապացուցելու համար այդ տարրորինակ սկզբունքների վարակիչ լինելը, վոր վերջերս նոտոնիայում մի խումբ գյուղացիներ 3 և 4 տարվա տաժանակիր աշխատանքների դատապարտվեցին. նրանց մեղադրեցին դեկտեմբերյան ապստամբների նկատմամբ ունեցած «բարյացակամ վերաբերմունք» ունենալու համար: Դյուլացի Ռեյզանը 3 ա. տաժանակիր աշխատանքի դատապարտվեց, վորովինետե «նրան տեսել եյին ոտարերկրացու հետ զրուցելիս»:

մանքով կկարդա այս հոչակավոր որենքները, վորոնց զորությամբ կարելի յե մահվան դատապարտել վտանգավոր ճանաչված պրոպագանդայի համար, կամ վորոնք ծնողներին պարտավորեցնում են վոստիկաննության ձեռքը մատնել իրենց զավակներին:

Բոլոր բալկանյան ու ակցիոն պետությունները վերջին հաշվով պատերազմական դրության մեջ են իրենց ժողուվորդների հետ: Դատերի, դատավճիռների, մենակ կամ մասսայական սպանությունների միջոցով նրանք ազատագրական գաղափարների ֆիզիքական վոչնչացումն են իրագործում:

Ռումինական հարավ - սլավյան և հունական կառավարություններն այդ անում են՝ ոգտվելով ոկուպացիայից և նոր յիրկրամասեր իրենց հպատակեցնելուց: Բուլղարիան հայտնի թե անուղղակի կերպով ժողովը դական հուզումներն ե պատրվակ բռնում: բայց բոլոր բալկանյան կառավարություններն ել մաթեմաթիքական ճշտությամբ են իրագործում վոչնչացնելու ծրագիրը:

III. ՎՈՉՆՉԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ժողովրդական մասսաներին ստրկացնելու, հարստահարելու համար բոլոր բալկանյան պետություններն ել միատեսակ մեթոդներ և միատեսակ կազմակերպություններ են կիրառում։ Այդ նպատակին հասցնող ամենահատու զենքը և ամենահուժկու հաստատությունը հանդիսանում են զորքն ու զինվորական միությունները։ Դժվար ե յերեակայել մի այլ յերկիր, ուր զինվորական նշանազգեստը և ուսաղիրներն ավելի ազդեցիկ և սպայությունն ավելի անզատասխանատու լինեն, քան Բալկաններում։

Բալկանյան մայրաքաղաքների ամենացավալի առանձնահատկությունը զինվորականության չափազանց մեծ տեսակարար կշիռն է։ Սրա արտացոլումը բազմաթիվ զինվորական հուշարձաններն ու կառուցվածքներն են։

Բուխարեստի զինվորական ժողովարանը իր շքեղ ճարտար արվեստով նսեմացնում ե քաղաքի մյուս բոլոր շենքերը, նույնիսկ պալատներն ու նոր բանկերը։

Բելգրադի զինվորական դպրոցը շենք չե, այլ մի ամբողջ թաղամաս։ Հարավ - Սլավիայի տարեկան բյուջեն հասնում ե 12 միլիարդ զինարի, իսկ միայն զինվորական պետքերին հատկացված ե 2,700 միլիոն՝ չհաշված այն մեկ միլիարդը, վոր գործադրվում ե Ֆրանսիայի

ձեռքով կատարվող սպառազինման վրա: Բուլղարիայում 5,700 միլիոն պետական յեկամուտից 2,300 միլիոնը ծախսվում է զորքի և վոստիկանության վրա:

Հունաստանում 8.471 միլիոն դրախմի պետական ծախսի 2.272 միլիոնը գինվորական նախարարությանն և տրվում:

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ՎՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Պաշտոնական միլիտարիզմին — զորքին զուգընթաց գոյություն ունեն՝ կիսապաշտոնական միլիտարիզմ և նախկին սպաների լիգաները: Նրանք բոլոր բարկանյան յերկրներում կան:

Սերբական «Սև ձեռք» - ին փոխարինած «Սպիտակ ձեռք»-ը իր մատն ունի մոտիկ անցյալի բոլոր քաղաքական դեպքերում: Բուլղարիայում գոյություն ունի 14 հոգուց կազմված Զինվորական կոնվենտ — Զինվորական Լիգայի Գերագույն կոմիտե, վոր կրծատ ձեռվ «Եսկադրոն» և կոչվում: Բացի դրանից «Զեկա» և գոյություն ունի — բաղկացած միության 5 սպա անդամներից: Սրան զուգընթաց գոյություն ունի նաև «Կուբրատ» գաղտնի միությունը:

Ամենուրեք ահռելի ույժ և նաև վոստիկանությունը:

Ռումինական սիգուրանցան (պահնորդական բաժինը) իր տրամադրության տակ միլիոնավոր դրամական միջոցներ ու լրագրներ ունի. ամեն տեղ նա աչք ու ականջ, անձնվեր մարդիկ ու վարձկան ագենտներ ունի: Պահնորդական բաժինը մի պետություն է՝ պետության մեջ: Բալկանյան ժանդարմների թիմն անսահման մեջ՝ աղդաբեկության համեմատությամբ, Ռումինիայում

45,000 ժանդարմ կա, իսկ Հարավ-Ռավիայում 60,000: Նրանք փոքրիկ խմբակներով տեղավորված են զյուղերում և համոզված իրենց անպատճախանատու լինելում՝ կաշառներ են վերցնում, բանություններ, գողություններ և այլ հանցանքներ գործում: Խոշոր կալվածները բաժանելու յուրատեսակ «պրոլետարական» որենքը ժանդարմներին հողով առան վարձատրելու հնարավորություն և տալիս:

ՄԱԿԵԴՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՏ

Հակառակորդներին հետապնդելու և վոչնչացնելու ամենասարսափելի միջոցներից մինը բուլղարական կառավարության ձեռքում յեղած հոչակավոր Մակեդոնական Կոմիտետն եւ վոր առանձնապես պիտի ընդգծել: Նրա խոկական անունն և «Հեղափոխական Մարմին Ներքին Մակեդոնիայի» (Հ.Մ.Ն.Մ.) ։ Փորձենք համառոտակի տալ այս մարմինի բնույթն ու գիրքը: Խնչպես հայտնի յեղաղաղ դաշնագրերի շնորհիվ Մակեդոնիան բաժանվեց 3 մասի: Նրա հողերի 0,4 մասն անցավ Հունաստանին, կեսը՝ Հարավ-Ռավիային և միայն 0,1՝ Բուլղարիային:

Հ. Մ. Ն. Մ. իրեն նպատակ եւ գրել՝ իրագործել Մակեդոնիայի քաղաքական ավտոնոմիան:

Հ. Մ. Ն. Մ. ամեն առիթի հանդիսավոր կերպով հայտարարում եւ, և նրա ներկայացուցիչներից մինն ել Սոֆիայում ինձ եր ասում տաքացած, թե այդ մարմինը ամենայեռանդուն կերպով պիտի պաշտպանի իր անկախությունը և թե «Կենտրոնական Կոմիտետը» վհաջ մի կառավարության ու վհաջ մի կուսակցության թույլ չի տա, վոր իրեն գործիք դարձնի պարձնի այնպիսի նպատակների

հասնելու, վորոնք խորթ են Մակեդոնիայի ազատության շարժման գաղափարին:

Կարելի յե հավատալ այս հանդիսավոր հայտարարությանը: Հեղափոխական մարմինը հիմնվել է Մակեդոնիայում 1893 թվին Գոցե Դելչևի, Պերա Տոշևի, Դամիան Գրակի, դ-ր Խրիստո-Թաթարչևի, Պետրո Պոպ-Արսովի և Գիորչե Պետրովի ձեռքով: Բացի Պետրո Պոպ-Արսովից, վոր հեռացավ քաղաքականությունից և դ-ր Խրիստո-Թաթարչևից, վոր վախենալով, թե կարող ե սպանվել Վոլկովի մակեդոնական ազենտների կողմից, յերեք տարի առաջ վախավ արտասահման, մնացած բոլոր առաջնորդներն ել սպանվեցին: (Պետրովին սպանեցին Ալեքսանդրովը ու Պրոտոգերովը 1921 թվի հունիսին Սոֆիայում): Մակեդոնական շարժման ղեկավարներ Սանդանսկին, Դիմո Հաջի Դիմովը, Կանթարջիկը, Բուխնովը, Զառլեկը և Պանիցան նույնպես սպանվեցին բուլղարական կառավարության վարձկանների ձեռքով:

Նույնիսկ Ալեքսանդրովը, վոր ամրող 17 տարի բուլղարական թագավորի ու կառավարության հլուծառան եր յեղել սպանվեց 1924 թվի ոգոստոսի 30-ին Յանկովի կառավարության ձեռքով, Պրոտոգերով գեներալի աջակցությամբ:

Ճիշտ վոր՝ Հ. Մ. Ն. Մ. մինչև 1905 թիվը մասսայական հեղափոխական մարմին եր: 1903 թվի ապստամբությունը ճնշելուց հետո, յերբ 20,000 զինված մակեդոնացիներ 3 ամիս շարունակ մարտնչում եյին 300,000 տաճիկ զինվորների գեմ, այս կաղմակերպությունը 2 թեր բաժանվեց.—աջ փոքրամասնականներն (ավտոնոմիստներ) ընդունեցին բուլղարական կառավա-

րության ծրագիրը. այն և՝ Մակեդոնիայի միացումը Բուլղարիային. ձախ մեծամասնականները (Փեդերալիստներ) շարունակեցին իրենց պայքարը հանուն մակեդոնական ժողովրդի անկախության և նրա մասնակցության՝ բալկանյան ֆեդերացիայում:

Ներկայումս Հ. Մ. Ն. Մ. անունը կրող կազմակերպությունը մի «ավտոնոմ» մարմին ե. նրա գործունեցության ասպարեզը Մակեդոնիայի այն մասն ե, վոր գտնվում ե Բուլղարիայի իշխանության տակ: Այս մարմինն իր պահպանողական բնույթը կորցրել ե. Նրա տռաջնորդները շատ մոտ են կտնգնած Յանկովի*) կառավարությանը: Նրանք իրենց գործունեյությունը համաձայնեցրել են Զինվորական Լիգայի ու վրանգելյանների գործունեյությանը և 1923 թվի սեպտեմբերին բուլղար բանվորների և գյուղացիների կոտորածներում ակտիվ մասնակցություն ցույց տվին:

1924 թվին սեպտեմբերի 12—30 նրանք 160 մակեդոնացի հեղափոխական են սպանել, վորոնց թվում բանվորների և գյուղացիների պատգամավոր և Հ. Մ. Ն. Մ.-ի հիմնադրի բարեկամ Խ. Դիմովին, նախկին պատգամավոր Դելչիկին, Կոնթարջիկին, Բուխովին, Ստ. Հաջիկին, լրագրող Իովլիովին, փաստաբան Կովաչկին և ուրիշներին: 1925 թվի առաջին 5 ամսում Պետրիչի շրջանում նրանք սպանել են 100 գյուղացի՝ Սանդանսկու և Պանիցայի խմբերից, նրանց ձեռքով սպանվեցին՝ Միլանում 1924 թ. Զառուկը և 1925 թ. Վեննայում Պանիցան: 1925 թ. ապրիլի 16-ին մայը յեկեղեցում

*) Ներկայումս Լյաղչի:

տեղի ունեցած պայթյունից հետո նրանք մասնակցեցին բուլղար ու մակեդոնացի գյուղացիների և ինտելիգենցիայի ջարդին:

Այս մարմինը Ցանկով՝ Կուկովի գինվորական նախարարության և վոստիկանության մի Փիլիալ բաժինն է. Նա Հարավ-Ալավիայի և Հունաստանի գերիշխանության տակ գտնվող մակեդոնացիներից վոչ մի կողմնակից չունի: Ցանկովի արտասահմանյան վարձկաններն ել են իրենց ավառնոմիատներ անվանում:

Իրենց «Ժողովրդական Ֆեդերատիվ Կուսակցություն» անվանող ձախ մակեդոնացիների և աջերի միջ պառակտում առաջացավ: Վերջիններս «Սահմանադիր Ակումբներ» անունն ընդունեցին:

Պրագայում, Դասկալովի պրոցեսի ժամանակ, իր տված ցուցմունքներում Որովք արտահայտեց մակեդոնական տարրեր խմբավորումների բնորոշ նշանները: 1924 թ. հրովարտակը՝ Փեդերալիստ տենդենցիներով, թվում եր, թե ժամանակավորապես միացրեց Ալեքսանդրովին, Պրոտոգերովին և Զառլեին: Բայց այս միությունը զանազան ինտերիգների շնորհիվ լուծվեց, և զեներալ Պրոտոգերովը, Ալեքսանդրովի և Զառլեի սպանությունից հետո, մնաց միակ զեկավար Հ. Մ. Ն. Մ. և վերջնականորեն «ավտոնոմիատ» դարձավ: Պետրիչում տեղի ունեցած վերջին հունա-բուլղարական ցավալի միջադեպի ժամանակ, յերբ նորից մակեդոնական արյուն թափվեց, Մակեդոնական Կոմիտետի արարքները պարզ ցույց տվին մակեդոնական «ավտոնոմիատների» և «Փեդերալիստների» բոնած դիրքը: Յուրաքանչյուր անաշառ դիտողի համար պարզ եր, վոր Մակեդոնական Կոմիտետը

սովիտակ տերրորի հլու կամակատարն եւ Դրանից վոչ պակաս պարզ ե, վոր պահպանողական իմպերիալիզմը բոլորովին դեմ և Մակեդոնիայի ազատությանը ձգտող ամեն տեսակ ցանկություններին, իրավացի յեր Լեռեղը, վոր պնդում եր, թե «ավտոնոմ» Հ. Մ. Ն. Մ. դադարել ե հեղափոխական լինելուց և կորուրդյան արքաների ձեռքում հասարակ զենք ե դարձել:

ՖԱՇԻՍՏՆԵՐՆ ՈՒ ԿՈԶԱԿՆԵՐԸ

Քնայած իր բոլոր բողոքներին և «չեղոք» լինելու հավաստիացումներին, ոռումինական կառավարությունն, անկասկած, նպաստում ե հակասեմիտական-ֆաշիստական-ուսանողության և պրովոկատորների առաջ գալուն ու զարգանալուն: Այն ժամանակ, յերբ ոռումին իշխանությունները հետապնդում են «անկախ ուսանողներին» — լուծելով նրանց կազմակերպություններն ու արգելելով թերթերը, թույլատրում են ուսանողների հակասեմիտ պրոպագանդան*): Այսպիսով հակասեմիտական

*) Նորեքս հատուկ արքայական հրամանով փակված «Անկախ Ուսանողության Միության» հպատակողների մեջ կործանող վոչինչ չկա: Այդ միության հպատակները համառոտակի առաջ ե բերում փակված «Համալսարանական կյանք» շաբաթաթերթը. — «Ուսանողության» մեջ հարգանքի շուտափույթ վերականգնումն դեպի որինականությունն ու կարծիքների ազատությունը համալսարանում և դրանից դուրս, և նրանց միախմբումը՝ համալսարանի աշխատակիցների նյութական դրությունը և գիտական պարապմունքները բարելավելու նպատակով: Միությունն այս խնդիրների սահմաններից յերբեք գուրս չի յեկել: Սկզբում հիմնված միայն 60 անդամներով, կարճ ժամանակում նա ոռումինական ամենաուժեղ համալսարանական կազմակերպությունը դարձավ:

կուսակցությունը, վոր Բուխարեստում յերբեք կողմնակիցներ չուներ (նրա նախկին տեղը Յասան եր, ուր նրա ղեկավար Կուգան համալսարանի ամբիոնից պարզ կերպով պողոցների կոչ եր անում), լիբերալների աջակցությամբ հաստատվեց մայրաքաղաքում։ Հակասեմիտներն իրենց տրամադրության տակ հինգ թերթ ունեն, փողոցներում ազատ կերպով պլակատներ են փակցնում և ցույցեր են կազմակերպում՝ առանց արգելքի վորեն մեկի կողմից։

Յերբ մի յերեկո նրանք մոտեցան իմ հյուրանոցին և փրփուրը բերնին սկսեցին աղաղակել՝ նպատակ ունենալով պատժել ինձ «աղջային ինքնուրույնության դեմ ունեցած վոտնձգությունների» պատճառով, ինձ հավատացրին, թե նրանք շրջապատված եյին պահնորդ լամփնի ագենտներով, վորոնց գլխավոր նպատակն եր հոգալ, վոր ամբոխից վոչ վոք նրանց ցույցը չխանգարե։

Նույն այս ջահելները յուրատեսակ հասկանալով «Ռումինիայի պատիվը», Փրանսիական «Մարդու իրավունքների լիգայի» քարտուղարին թույլ չտվին Բուխարեստում ճառ արտասահներ։

Յերբ կառավարության ձեռքերը կապված են լինում, իշխանությունները վորոշ զիջումների գնով կիրասակում միջոցներ են գտնում*):

*.) Ներկայումս նրանք ավելի յեն անպատկառացել։ 1926 թ. փեարվարին ռումին ռւսանողության մեջ հակասեմիտական նոր բոնկում առաջացավ — համալսարանում ու փողոցներում պողոցմային ցույցերով, հրեական խանութները կողոպտելով, բռնություններով։ Վոստիկանությունն այս զգելի անկարգություններին ավելի խրախուսում, քան խանգարում եր, Զինվորական դատարանը

Հակասեմիտական ագիտացիան մի՝ ամենից քիչ մոլեւանդ և բնավ ցեղական ատելության հակում չունեցող ժողովրդի մեջ, անկասկած, արհեստական բնույթ և կրում և կառավարության ազենտների ձեռքով կիրառվում:

Վրանգելյան բանակի զինվորների մի մասը և նախկին սպաները նույնակես գործիք են բալկանյան կառավարությունների ձեռքում: Բելգրադի փողոցներում կարելի յե հանդիպել կողակ սպաների՝ իրենց տարագով, վորոնք միայն մի բանի յեն սպասում, — թույլ տալ վոր հեղափոխությունը Բալկաններում ջարդուփշուր անեն:

Դրանք Ռուսաստանում վոչինչ չկարողացան անել: Վանդերվելդեն Բալկաններում կատարած իր պտույտից հետո նկատել եր, վոր հազարավոր վրանգելյաններ վողովել են Բուլղարիան: Ասում են, վոր դրանց թիվը այստեղ 40,000 է. և այս թիվը անհավանական չեւ:

Բուլղարիան Վրանգելի զորքերին աալաստան ե տվել ֆրանսիայի խնդրով: Սրանք պաշտոնական ներկայա-

հրեա ուսանող Ֆ. Կլեյնին չորս ամյա ազատազրկման դատապարտեց, մեղադրելով, թե նա գլխավորում ե հրեա ուսանողների մի կազմակերպություն, վոր ստեղծված ե դեմ կենալու քրիստոնյա ուսանողության բանություններին՝ հրեա ուսանողության նկատմամբ: Պատիժը կիրառվեց համաձայն քրեյական որենսգրքի 213 հոդ. հանցավոր խմբակցությունների մասին: Փարիզում հրատարակող ոռոմինական Romania Muncitoare թերթն այս անլուր դատավճուի մասին հայտարարում եր, թե Ռումինիայի քրիստոնյա ուսանողները (այսինքն Քաջիստները, վորոնք հրեա ուսանողներին վստիկանության ոգնությամբ ծեծեւ կողոպաելու հարկադրել եյին:

ցուցիչ ունեն — Պերայեր, վոր նստած և Սոֆիայի ոռւսական դեսպանատանը։ Մտամբոլիյսկին զրանց այնքան ել լավ չեր պահում, բայց նրանց վճռական դերը 1923 թ. հեղաշրջման գործում նրանց վիճակը բարելավեց. 1925 թ. սեպտեմբերի «Ռուսական ազգային միության» համագումարում զեներալ Վրանցելի և նախկին սեծ իշխան Նիկոլայ Նիկոլայեիչի ներկայացուցիչ զեներալ Միլիերը հայտնեց, թե Բուլղարիայում կա մի սեղմ կազմակերպություն՝ բաղկացած 8000 վրանգելյան զինվորներից, 4,600 Դոնի կողակներից։ Բոլոր ռուս գաղթակաները գտնվում են ռուս միապետականների և վրանգելյանների ձեռքում, վորոնք աքսորի սպառնալիքով նրանց հարկի տակ են դրել մեծ իշխանի ոգտին ու հետապնդում են վոչ-մոնարխիստ եմիգրանտներին։ Ռուսական կոմիտետի նախագահը ռուսական դեսպանի դեր և կատարում և ղեկավարում ամբողջ ռուսական գաղութը։

Գաղաքացիական կովում մասնագետացած վրանգելյաններն «ատում են բուլղար գյուղացուն, բայց սիրում են կառավարությունը»։ Նրանք բուլղար վերին և

արտասահման անցնել) հասարակության հենակետը, ապավենն են, իսկ սրանց զոհերը — «չարամիտներ»։ Մյուս կողմից գործադրու արձած և իրենց «քրիստոնեական պահանջները» ներկայացրած «քրիստոնյա ուսանողները» միջնորդեցին լուսավորության նախարար Անգելեսկույի առաջ՝ վտարել համալսարանից, լրաբանությայից, ուսանողական ճաշարանից կոմմունիստներին համակրանք տածող ուսանողներին։ Ռումինական համալսարանների գլխավոր Անգելեսկույն պատասխանել եր. «Նենգամիտ ուսանողների ցուցակը տվեր, սիզուրանցան համալսարանի իշխանությունների հետ համաձայնության գալով, միջոցներ ձեռք կանի»։

վարին սպաների հետ միասին ընդհանուր միություններ են կազմել. ունեն իրենց հատուկ հիմնարկությունները՝ ներկայումս ել յերազում են մեծ դինվորական դպրոց ունենալու մասին:

Փերնիկեյի հանքահորերի 6000 բանվորներից 2000-ը վերցրել են վրանգելյաններից՝ կառավարության ճնշման տակ:

Ապստամբությունները ճնշելու հաշվետվությունները կարդալիս՝ ակնհայտնի յե դառնում այն հսկա գերը, վոր՝ աղքատիկ Բուլղարիայում և Հարավ Ալավիայում տաքուկ կերպով բուն գրած պարագիտների և հականեղափխականների այս խուլիգանական խմբերն են խաղում, վորպես ստրկացման և իմպերիալիստական քաղաքականության զենք՝ յերկու կառավարության ձեռքում: Այս բանդաները լույսայն իրագործում են նրանց բոլոր չար մտքերը՝ նույնիսկ այն դեպքում, յերբ այդ մտքերը հակասում են իրար:

Վրանգելյան խմբերը 1924 թ. խուժեցին Ալբանիա, տապալեցին գյուղացիական մասսաների վրա հենված ֆան նոլի կառավարությունը և իշխանությունը հանձնեցին Ահմեդ Զագուին, վոր վերականգնեց ֆեոդալ բիյերի տիրապետությունը և Ալբանիայի արտաքին քաղաքականությունը ստորադրեց սերբական թագավորական տոհմի և Խտալիայի քաղաքականությանը: Այս վարձկան մարդասպաններին բնավ չի հետաքրքրում այն հանձնարարությունների նպատակը, վոր տրվում է իրենց, միայն թե՝ իրենց աշխատանքը վարձարպի և ուղղված լինի ժողովրդի դեմ: Նրանցից մեկը, իր տրյունարբու յեղբայրակիցներից ավելի սնափառը,

խոստովանել եւ տիկին Աննա Քարիմային, թե վրան-
գելցանները յերազում են «վերականգնել Ռուսաստանը
և կցել նրան բալկանյան դավառները»։ Թեկուղ և ամե-
նահամեստ ձեւի իսկական դեմոկրատիա ստեղծելու ամեն
տեսակ փորձ խորտակվում եւ բոլոր այս հականեղա-
փոխական միջոցների և մարմինների ճնշման տակ։

ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՊԱՇՏՈԱՆՎԵԼ ՁԻ ԿԱՐՈՂ

Այս քաղաքական կովում ժողովուրդն անլուր թշվա-
ռություն եւ ապրում։ Ամբողջ պետական մեքենան գործի
յեւ գրված՝ միայն նրան լոեցնելու և անտրտունջ հնա-
զանդության մեջ պահելու համար։ Նա իրավունք չունի
ամենափոքր շարժում անդամ անելու՝ իր շահերը պաշտ-
պանելու, դասակարգային միացման գործում իր որհ-
նական պահանջներն իրականացնելու նպատակով։ Բան-
վորական արհեստակցական միությունների իրավունքը
Բալկաններում փաստորեն վերացված եւ Յեթե նույնիսկ
թղթի վրա յել դեռ գոյություն ունի, փաստորեն
զրոյի յեւ հավասարեցրած։

Բանվորական համագումարները սովորաբար ցըռում,
իսկ մասնակցողներին բանտարկում են։ Թույլատրվում
են միայն բանվորական կազմակերպությունների խղճուկի
պարողիաներ, վորոնք կուրորեն հնազանդվում են տի-
րող վարչաձեկին ու ծառայում կառավարությանը, այն ել
աշխատավոր մասսաներին խաքելու և համաշխարհային
հասարակական կարծիքի համար։ Բուխարեստում, այն
շենքի մուտքի մոտ, ուր բանվորական միությունների
ժողովներն են տեղի ունենում, միշտ վոստիկանական
տեսուչ կա, վոր ստուգում եւ միութենական տոմսերը։

Ամեն տեսակ հրապարակային ցույց արգելված է: Բուխարիատում և Բելգրադում իմ գալու առթիվ կայացած ինչ-վոր պրոլետարական ցույցերը բացառություն եյին կազմում և թույլ եյին տրված առանձին նկատառումներով: Կասկածում եմ, վոր նրանք յերբեմիցե նորից թույլ տրվեն: Թեկուզ զուտ պրոֆեսիոնալ բնույթի պրոլետարական կազմակերպություն ստեղծելու յուրաքանչյուր փորձ գաժանորեն հետապնդվում և արագ կերպով լուծարքի յե յենթարկվում: Բուլղարական արհմիությունները բանվոր դասակարգի համար կուլտուրայի ու առաջադիմության հզոր զենքեր եյին: Ներկայումս բոլոր անկախ բանվորական մարմինները, նույնիսկ այնպիսինները, վորոնք իրենց գործունեյությունը սահմանափակել են զուտ-պրոֆեսիոնալ խնդիրներով, ամենուրեք իրենց շենքերից վտարված ու փակված են: Ամենացայտուն որինակ կարող ե համարվել բուլղարական բանվորական «Ազատություն» կոոպերատիվի լուծարքը, վոր 68,000 անդամ, 140 բաժանմունք և 400 ծառայող ուներ: Նրա դրամական միջոցներն ու ստայվածքը բռնագրավեցին:

Այս գաժան միջոցը յերկու նպատակ ուներ.—նախ վոչնչացնել մի խոշոր մարմին, վորի մեջ հանդես եր գալիս բանվոր դասակարգի դասակարգային համերաշխությունը, յերկրորդ՝ մասնավոր առետրականներին աղատել վտանգավոր մրցակցից:

Մոտ որերս Բուխարեստում առանց առիթի բանտարկվեցին արհմիության խորհրդի 17 անդամները:

Բուլղարական անկախ պրոֆեսիոնալ խորհուրդների միությունը, վոր 35,000 անդամ ունի, լուծված ե:

Հարեան վենդրիայում կոշկակարների և խառատների միությունները փակվել են՝ գործադուլի հետևանքով։ Այստեղ, ինչպես և Ռումինիայում ու Բուլղարիայում, միայն այնպիսի արհմիություններ են թույլատըրված, վորոնք հլու հնազանդ են գոյություն ունեցող պետական կազմին։ Ուրիշ տեղերում հանդուրժելի յեն միայն այն դեմոկրատական և սոցիալիստական կուսակցությունները, վորոնք գործով ցույց են տվել իրենց հաճոյակատարությունը։

Բելգրադում ունիտար արհմիության գեղեցիկ շենքը բռնագրավված և վաճառված և մասնավոր առևտրականի՝ այն ժամանակ, յերբ Հարավ-Սլավիայում անգործների թիվը 250,000-ի յե հասնում, հարկերը հասնում են՝ բանվորի աշխատավարձի՝ $60^{\circ}/_0$ -ին, ծառայողի՝ $50^{\circ}/_0$ -ին (իրերի գրավ դնելը յեկամուտ և հաշվում): Բյուրոկրատական ապարատը կլանում և բյուջեյի կեսը, վերացված և ապահովագրում՝ ծերության դեպքում Բուլղարիայում ձեռնարկությունների $90^{\circ}/_0$ -ում 8 ժամվա բանվորական որ գոյություն չունի։

Կյանքն այնտեղ նախապատերազմյանից 40 անգամ թանգ ե, այնինչ՝ աշխատավարձն ավելացել և միայն 15 անգամ, ծառայողների ոռնիկը՝ 10 անգամ, իսկ կենսաթոշակը՝ միայն 5 անգամ։

ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ ԼՈՒՌ ԵՆ

Ռումինիայում, Հարավ-Սլավիայում և Բուլղարիայում ազատության ամենափորիկ արտահայտությունն անգամ նախամտածված կերպով ճնշվում, վոչնչացվում ե։ Այս հանգամանքը այդ յերկրները դարձրել ե գերեզ-

մանային ու ահասարսուռ լոռության վայրեր, ուր ամենքը գիտեն, թե բավական և միայն փորձել գլուխ բարձրացնել և այդ գլուխն իսկույն տեղից կթռչի:

Քաղաքի ու գյուղի բոլոր ակտիվ տարրերը վոչընչացված կամ վաղ թե ուշ վոչնչացվելու յեն: Այս ընդհանուր ջախջախված, փշրված կացությունը պատահական այցելուի վրա կարող և կարգի ու հանգստության տպավորություն թողնել, սակայն դա գերեզմանի հանգիստ եւ:

Փորձանքից ճողովրածները լավ են հասկանում, վոր իրենց կյանքը մի չնչին ու անզգույշ շարժման դեպքում՝ դատարկ խոռքից և կախված:

Բուլղարիան, Ռումինիան, Հարավ-Սլավիան և Հունաստանը մեռնում են սպիտակ տերրորի սղմիչի տակ:

IV. ԽԱԶՎԱԾ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ

Ընդհանրացումներից և վերացական դատողություններից այժմ անցնենք կոնկրետ փաստերի, Մանրամասն ծանոթանանք տանջանքների, սպանությունների և սրանց զոհերի հետ ու աշխատենք գրանց ի մի գումարել:

ՆՐԱՆՔ ՇԱՏ ՇԱՏ ԵՆ

Բայց վերը հաշվեսութեան փորձեցի վիճակագրական կարգով սխատեմավորել սպիտակ տերրորի բոլոր հայտնի փաստերը: Իմ այդ աշխատանքը բացեր շատ ունի — առանձնակի փաստերը բազմաթիվ են, նրանց ընդհանուր քանակը շատ մեծ: Ցանկովի իշխանության գլուխ անցնելու որից բուլղարական կառավարական տերրորի զոհերի թիվը վոմանք մոտավորապես 18,000 (սպանված) են հաշվում: Այս թիվը (հաղորդողը կարծեմ Վանդերվելեն ե), համարյա նույններ, ինչ վոր հաստատում են ինձ հանդիպած վստահելի և հեղինակավոր անձինք: Մի բարձրաստիճան անկախ գործիչ, վոր հրաշքով դեռ ապրում ե Սոֆիայում, ինձ հավատացնում եր, վոր հեղաշրջման որից (1923 թ. հունիս) մինչև մայր տաճարի պայթյունը (1925 թ. ապրիլ) Բուլղարիայում կատարվել են 15,000 սպանու-

թյումներ, իսկ պայթյունից հետո՝ նորից 5,000։ Հստանդղիական բանվորական կուսակցության կանանց հանձնաժողովի անցյալ տարվա սեպտեմբեր 10-ին տված զեկուցման՝ գյուղացիական կուսակցության կողմնակիցներից սպանվել կամ անհայտացել են 20,000 հոգի։

«The New Leader»-ը (Անգլիա) մի տարի առաջ գրում եր. «Մենք ուղղակի անհավանական տեղեկություններ ենք ստացել։ Բուլղարիայում միայն ապրիլ ամսում 150 քաղաքական սպանություն և կատարվել։»

Սմերիկական լրագրող Շարլ Մուր գրում եր. «Մայր յեկեղեցում կատարված պայթյունից 6 որ հետո (22 ապրիլի) բանտերում կային 30,000 մարդ, կրկին բանտարկվել են 4,000 հոգի։»

Բորիս թագավորը հրապարակով հազարավոր զոհերի մասին եր խոսում, 8անկովը — հարյուրավոր սպանված ուսուցիչների մասին, իսկ բուլղարական արտաքին գործոց նախարարը հայտնում եր Սոֆիայի անդիմական ներկայացուցիչ Երոկինին, վոր միայն սեպտեմբեր ամսին սպանվել են 5,000 հոգի. սակայն՝ պաշտոնական թվերը իրականից շատ են հեռու։

Բուլղարական կառավարության լրագրական լակոնական հայտարարություններն՝ առանց կոմենտարիաների և մանրամասների՝ գյուրահավատ ընթերցողին մտածել են տալիս, թե բերնե բերան անցնող սոսկալի թվերը չափազանցրած են։ Բուլղարական արտաքին գործոց նախարարության գլխավոր քարտուղար Կիսիմովը հավատացնում եր ինձ, թե սպանված հեղափոխականների թիվը, հեղաշրջման որից 3,500 հո-

գուց ավելի չեւ, թեպետ այս թվի հեղինակը բուլղարական կառավարության աշքի ընկնող ներկայացուցիչ եւ, սակայն տարորինակ եւ, վոր այս թիվը Սոֆիայի ֆրանսիական դեսպանության անդամներից մեկին չափազանցրած եր թվում։

Այս պարոնը, վոր ինձ ընդունեց ֆրանսիական գեապանատանը, դեսպանի բացակայությամբ, վորը Ժընե եր մեկնել՝ «ժողովո բղների խաղաղ յեղրայրակցության» կազմակերպչական գործերով, միակ մարդն եր, վորից լսեցի, թէ Ստամբուլիյսկու անկման որից սկսած զոհերի թիվը 2,500 — 3,000-ից ավելի չի յեղել։

Կառավարության «ամենագործունյա» անդամներից մեկը, գեներալ Վոլկովը, բուլղարական սլարլամենտում հայտարարեց, թէ ապրիլի 16-ի պայմանից հետո 25 հեղափոխական ե սպանված։ Վորքմն բացահայտ ցինիզմ կա այս բառերում։ Նախարարապետ պատղամավոր Մալինովը, վոր պատմեց ինձ Վոլկովի այս յևլութի մասին, ավելացրեց, թէ ապրիլի 16-ից հետո մահապատժի յենթարկված 121 քաղաքական հանցավորների աղքականները իր առաջ միջնորդություն են հարուցել, և թե՛ այդ դեռ զոհերի լրիվ թիվը չեւ։

Բուլղարական կառավարական որդան «Դեմոկրատական Սգովոր»-ի նոյեմբեր 16-ի համարում զետեղված ե հետեւյալ տեղեկությունը. — Հոկտեմբեր ամսում սպանություն՝ 46 (9 կին), ինքնասպանություն՝ 24 (9 կին), ծանր վիրավոր՝ 15, գտնված դիակ՝ 2, մահացու վիրավորներ՝ 35 (5 կին), ինքնասպանության փորձ՝ 4 (2 կին), ընդամենը — 135, առ այս պիտի ասենք, վոր պաշտոնական տեղեկատվի «գտնված

զիակ» բառերը պիտի հասկանալ «կառավարության հրամանով սպանված»-ներ։

Ահա մի քանի քաղվածքներ զինվորական նախարարի գաղտնի հրամանից. այդ քաղվածքներն իսպառ կցրեն այն բոլորի մտապատրանքը, վորոնք դեռ նվազագույն հավատ ունեն կառավարության կամ Վոլկովի հաղորդագրությունների նկատմամբ։

«Զինվորական նախարարի գաղտնի հրաման։

Գյուղացիական միությունների և կոմմունիստների գեմ պայքարի բոլոր միջոցները համաձայնեցրած պահելու համար, բոլոր քաղաքապահ զորքերն ու զինվորական մասերը պիտի կապ պահպանեն կառավարական կուսակցության տեղական կոմիտեների հետ։

Կոմմունիստների նկատմամբ առանձնապես խիստ պիտի լինելու Ամենից առաջ պիտի վոչնչացնել կոմմունիստական գաղափարների ավելի ընդունակ ու վճռական ինտելիգենտներին. խիստ արագ կերպով պիտի կազմել այդպիսիների ցուցակը, վորպեսզի հարկավոր քոպեյին կարելի լինի վոչնչացնել բոլոր մեղավոր թեանմեղ ղեկավարներին։ Ամենուրեք, ուր հուզումներ տեղի կունենան, անխնա կերպով վոչնչացնել բոլոր բանտարկյալներին, դավադիրներին, նրանց համախոհներին ու թաքնվածներին։ Ճիշտ այսպես վարվել նաև նրանց ընտանիքների հետ, վորից հետո նրանց տներն այրել։

Յեթե ապստամբները կամ անլեզալ մարդիկ թաքնվեն վորեւե շենքում, այդ դեպքում՝ ույժերի խնայողության համար, վոչ թե գրոհի դիմել, այլ շենքն այ-

րել: Զինվորական մասերը պիտի հրդեհաշեջ խողովակներ ունենան՝ այդ տները նավթելու համար:

Բոլոր բանտարկյալները 24 ժ. ընթացքում պիտի դատվին ու մահապատժի յինթարկվեն: Ապստամբները մահապատժիմները պիտի կրենց իրենց կողմանակիցների աչքի առաջ: Մարդարարությունը չհաղանդվողն անմիջապիս պիտի գնդակահարվի: Այս հրամանից վորևե բան հրապարակողը նույնպես մահապատժի յե յենթակա»:

Նշենք, վոր այս հրամանը տրված ե մայր յեկեղեցում կատարված պայթյունից առաջ:

Հրամանատարական կազմի՝ բնակչությանն ուղղած դիմումի մեջ (1924 թ., ոգոստոս) ընդգծած եր, թե բուլղարական զորքին հրամարված ե կրակ բանալ առանց նախազգուշացնելու: Կանոնավոր զորքի կողմից սա անորինակ ստորագրուն եւ:

ՍԱՐՍԱՓԻ ՑԵՐԿԻՐԸ

Հանուն կարգը վերականգնելու և կարմիր տերրորի դեմ՝ պայքարի խարերայ սկան լողունգի, դավադրություններն ու մոացածին խառնակությունները պատըրվակ բռնած՝ գյուղերում պատժիչ եքսպերիցիաների, քաղաքներում՝ դարանամուտ զորամասերի միջոցով, «որինական» ու ապօրինի մահապատիմներով, ամբողջ աշխարհի աչքերի առաջ մարդկանց մասսայական վաշընչացումն ե կատարվում:

Առանձնակի ու խմբերով ընկել ու ընկնում են նախկին նախարարներ, պատգամավորներ, հեղափոխականներ, սպաներ, քահանաներ, իրավաբաններ, բժիշկներ, ծառայողներ: Նրանց անուններն ու հասակը և

նրանց վերջին բողեների սոսկալի մանրամասները զրի յին առնված ու կմնան հետնորդների համար:

Մի քանի որինակներ հիշենք. առաջին հերթին՝ սպանությունը պատգամավոր Պետկո Պետրովի, վոր համեմատում են Մատտեոտի սպանության հետ:

Պետկովը հանդինություն ունեցավ մերկացնել բուլղար Փաշխատների սուտն ու վոճարագործությունները: Ամրիոնից նա ցույց տվավ վոստիկանության ձեռքով գաղանաբար սպանված նախկին պատգամավոր Ստոկի արյունկոլու շապիկը: Մրանից հետո Պիտկովս սկսեց սպանական նամակներ ստանալ, վոչ վոք չեր կասկածում, վոր նրա սպանությունն որերի հարց ե:

Նա սպանվեց լիյտենանտ Ռադկի ձեռքով, պարլամենտից դուրս գալիս: Նրա դագաղին հետեւ մ ելին յերեք դժբախտ կանայք — մայրը, վոր ծունկ չոքեց, յերբ սգերթը վորդու սպանման տեղը հոսավ, այլ և բարձրաստիճան դահիճների յերկու այլ զոհերի — Գեննադիկի և Ստամբուլիյսկու այրիները:

Քաղաքագլուխ Դաշինն որը ցերեկով սպանվեց կառավարական ազինտների ձեռքով: Կոմմունիստական պատգամավոր Հաջի Դիմովը նույն ճակատագիրն ունեցավ: Փաստաբան և պատգամավոր Ստրաշիմիրովս ել փողոցում սպանվեց՝ կոմմունիստի պաշտպանելու համար: Նույն ձեռք սպանվեց նաև վերջին ազատ մնացած կոմմունիստական պատգամավորներ — Պետրինին, Կոստովի 6-ին:

Մայր յեկեղեցում տեղի ունեցած պայթյունից հետո՝ բանտի ճանապարհին սպանվեցին գյուղացիական կուսակցության պատգամավորներ — Պետրինին, Կոստով-

սկին, լրագրող Գրանչարովը և մի շարք զյուղացիական ու բանվորական գործիչներ:

Սպանվեցին — ծիախոտագործների արհմիության քարտուղար Ստեֆան Քիրաջներ և արհմիությունների խորհրդի քարտուղար Ժեկո Դիմիտրովը, փոխադրողների միության կենտրոնական կոմիտետի անդամ Վասիլի Գեորգիեր, Վառնա քաղաքի արհմիությունների խորհրդի քարտուղար Գենա Պետրովը, բանկային ծառայողների կենտրոնական կոմիտետի անդամներ՝ Նիկոլայ Գրամովսկին ու Խվան Մանդեր և բժշկասանիատրական աշխատակիցների միության կենտրոնական կոմիտետի անդամներ — բժիշկներ՝ Յարվուլանով և Վասիլի Խվանովը. առ այդ Գենա Պետրովը սպանվեց հեղաշրջման տարելիցին՝ 1925 թ. հունիսի 9-ին։ Նախկին նախարարի յեղբայր Վասիլի Ստամբոլիյսկին սպանվեց Թաթար-Բաղարջիկի բանտում։ Սպանելուց տուած սրտաչքերը հանեցին։

Զինվորի շինել հագած սպաները, վորոնք վորապես պահակներ ուղեկցում եյին բժիշկ Սպաս - Դուռարինովին՝ Պլովդիվից Սոֆիա տանող դնացքում սվիններով ծակոտել են նրա ձեռքը, պարանոցն ու մեջքը, վորից հետո հրացանազարկ անելով, դիակը գնացքից դուրս են նետել։ Վիդեինի շրջանում Թոդոր Տիտորենկովին կապեցին ավտոմոբիլի յիտեկից։ Նրանից միայն այլանդակված դիակ եր մնացել։ Ռուսսում պրեֆեկտուրայի բաժանմունքը կանչված Ալեքսանդր Աթանասովին, Հայդեն Կիրովին և ուրիշներին ազենտները հանկարծակի շրջապատեցին ու ատրճանակի հարվածներով կոտորեցին։ Պաշտոնական լրագրութերը հաղորդեցին, թե՝

իրր այդ մարդիկ ոռւմը են ձգել վոստիկանների վրա ու զինված դիմադրության ժամանակ ել սպանվել են։ Վասիլի Մուլետարովը, Լամբի Կանդեր, կառավարության համար անհաճո ելի ուրիշ 40 քաղաքացիներ սպանվեցին Սոֆիայում, 6-րդ զնդի սեղանատանը։ Յենյու Մարկովսկին թունավորվեց Շումինի հիվանդանոցում։

Թվածներից բացի մի քանի հայտնի դեպքեր ել հիշեմ։ Փողոցում սպանված են — Ն. Գենադիեև, Մարին Պոպովը, Գորան Պետկովը, Ստոյան Կալացովը, Իորդան Վլիշեգրադսկին, Կոստա Իլիևը, Կոստա Յենչեևը, Բորիս Հաջի Սոտիրովը (շները դիակի մասերը հողից հանել են), Ասսեն Հաջի Վասիլեև, Գոչո Պանկովը և այլն։ Բանտերում կամ վոստիկանական թաղամասերում սպանվել են — Նեղել, Զո Գեորգիեև, Անգել Գրոզկովը, Իվան Փարվանովը, Վալկո Գարվանսկին, Կամեն Պետրովը, Ալեքսանդր Հաջի Պետրովը, Իվան Դիմիտրովը, Վասիլի Վելիչկովը, Յանկո Հայդուկովը, Խրիստո Բոժիչկին, Անգել Վրիսոկովը, Դիմիտրի Կոնդովը և այլն։ Բանտը տանելիս կամ բանտից բանտ տեղափոխելիս սպանվել են Յոնյու Մատովը, Իվան Կոժուխարովը, Կանչո Զամովը, Գեորգի Դամիանովը, Պետկովը և այլն։

Սրանք են այն առաջին պատահած անունները, վորշտապ կերպով հանել եմ առաջս թափած թղթերի կույտից։

Այժմ մի քանի որինակ ել մասսայական սպանություններից թվենք։

Այդ սպանությունները կատարվել են գլխավորապես Բուլղարիայում — Ստամբուլիսկու կառավարության անկումից հետո, այնուհետև 1923 թ. սեպտեմբերի գյու-

ղացիական ապստամբության ժամանակ (5000 զոհ), տաճարի պայթյունից հետո (5000), Ռումինիայում, նոր գավառների գրավումից հետո (միայն Բևսարարիայում սպանված են 18,000 գյուղացիներ): Մի բոլղարացի գաղթական, վոր իր հայրենիքի գաղանացած թշնամիների իրավասության սահմաններից դուրս եր դտնվում, ապստամբ գյուղացիների կրած դատապատժի մասին կոստանդնուպոլիսում ինձ հետեւյալը պատմեց. «Յերբ յես Բուրգաս յեկա, մենք կատարվող ապօրինություններին դիմադրելու համար կոմիտետ կաղմակերպեցինք: Տեղեկություն ստացվեց, վոր պատրաստվում են բոլորին կոտորել. կոմիտետը լուծվեց, անդամները թափանցին խաղողի այգիներում: Մի զորամաս յեկավ, այգին շրջապատեց ու գնդակի կապեց. Յեկիմ Վալչեր և Կրում Աֆանասովը — սպանվեցին, յերկու լնկերներ կարողացան փախչել, նրանցից մեկը — իվան Ռաշեր, վոտից վիրավորվել եր. վճռեց Բուրգասում ել բժշկվել, բայց հայրը կառավարության ահից վորդուն իշխանությունների ձեռքը մատնեց. նրան հենց փողոցում ել հրացանազարկ արին:

Մյուս լնկերն ուտելու բան դտնելու համար գնաց հարևան գյուղը, այստեղ ել բռնվեց: Դա Պասկալ Նենովն եր: Գիտենալով, վոր նենովն իր մորը շատ է սիրում, վոստիկանությունը վերջինիս բանտարկեց և ամբողջ գիշեր տանջեց վորդու աչքերի առաջ:

Այս ձեռվ նրանից ամեն բան, ինչ ուզում եյին՝ իմացան: Այսուամենայնիվ վոստիկանությունը գտավ, վոր նենովի տված տեղեկություններն այնքան ել հետաքրքիր չեն և մորը խաչեց՝ վոտներն ու ձեռքերը

հատակին մեխելով։ Պառավի՝ ծեծից այլանդակված զիսակն այսքան ուռավ, վոր հագուստի ծվենները մասի մեջ մտան։ Նենովին, վոր ներկա յեր մոր սպանությանը, ձեռք ու վոտքը կապած թաղամասի վոստիկանատան նկուղը ձգեցին, այնտեղ ել խելագարվեց։ Հաջորդ որը նրան պահնորդական բաժնում հրացանադարկ արին։

Բուլղարական գնդապետ Կուզմանովը, վոր ծնողների աչքի առաջ մի քանի յերիտասարդ եր գնդակահարել, պահանջում եր, վոր ծերունիներն իր ձեռքը համբուրեն։ Այն գյուղերում, ուր նա վոտք եր գնում, շները մի քանի որ շարունակ դիակներ եյին կրծոտում։ մի քանի տեղ ել մարդկանց կապոտելով բեռնատար ավտոմոբիլներին, մեքենան եյին բան զցում։

Ֆերդինանդով քաղաքում կոտորեցին բոլոր վիրավորներին, — 15 տարեկան յերկու հիվանդապահ աղջիկների և 2 բժշկի, վորոնք վիրավորներ եյին խնամում։ Հետո յել կոտորեցին ապստամբների ընտանիքներին պատկանող 22 յերեխայի։ Կոտորեցին նույնիսկ նրանց, վորոնց անձնատուր լինելիս խոստացել եյին խնայել։

Մոտ որերս դատում եյին ռումինական լեյտենանտ Մորարեսկուին։ Այս սպայի կարյերան անհավատալի դաժանությամբ կատարած սպանությունների մի ամբողջ շարք եւ նա վայրագություններ եր կատարել Բեսսարաբիայում՝ ոկուպացիայի 2 տարիներում։ ՎՀկաները հրեշտակոր գազանություններ հանդես բերին։ Յերբ բարեկամները հանդիպելիս հարցնում եյին. «Ի՞նչպես եք»։ Նա պատասխանում էր. «Եատ լավ, կոտորում եմ»։ Նա հրացանադարկ արագ Ռումինիա վերադարձած և նրա

խոստումներին հավատացած բոլոր գաղթականներին, հետո յել դիակները կողոպտեց: Նա հրամայում եր կոտորել ճանապարհին բոլոր հանդիպողներին և հայհոյում եր զինվորներին, յեթե վերջիններս վորեն մեկին կենդանի եյին թողնում: Յեթե հանդիպող գեղջկումու գրկին յերեխա յեր լինում, վերջինիս իր ձեռքով եր սպանում: Գյուղացիներին սպանելուց առաջ հարկադրում եր պարել: Միայն նրա զոհերի գերեզմանները Դնեստրի ափին ահազին տարածություն են կտագմում: Իր ծանոթների բժշկին շատ դիակներ եր ուղարկում՝ լարորատորական փորձերի համար, բժշկին այդ մասին հայտնում եր դեռ մահապատժից առաջ: Յեկ այս անպիտանն ու գեգեներատը վոչ միայն արդարացավ, այլ և շնորհավորություններ ստացավ, իսկ գեներալ Եպյուրը դատարանում հայտարարեց, թե Մորարեսկուն ազգային հերոս եւ Ռումինական հայտնի գրող Պանախտ Բատրատին մամուլի մեջ խայտառակեց Մորարեսկուին իր գաղանությունների համար, բայց ասում են, վերջերս այդ չարագործը մեծ պաշտոն ստացավ քաղաքական պրոպագանդայի գծով*):

*) Զին. Լիգայի հիմսադիրներից ու առաջնորդներից մեկը — Սլավեյկո-Վասիլյեր, վոր Բուլղարիան արյունով ներկեց, զրում եր. «Սպաների մասնակցությունը յերկրի քաղաքական և հասարակական կյանքին չափաղանց հարկավոր եւ Հայրենիքի սիլով կըթված ու պարագի և դեպի բարոյականությունն ունեցած հարգանքի դիտակցությամբ լցված սպայությունը կարող է առողջացնել մեր քաղաքական կյանքը: 1923 թ. հունիսի 9-ի հեղաշրջման ժամանակ Սլավեյկո-Վասիլյերը Թաթար - Պազարջիկի շրջանի հրամանատարն եր: Նրա հրամանով սպանվեց Ստամբուլիսկին: 1923 թ.

«ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ»

Բայց ժողովուրդը խոտի պես հնձել չի կարելի: Բալկանյան կառավարություններն այս հանգամանքը հաշվի առնելով, մասսայական սպանությունների և մահապատիժներին զուգընթաց անվերջ քաղաքական դատեր են կազմում: Բուլղարիայի մասսայական քաղաքական սպանությունների ստատիստիկան, վոր կազմել են պաշտոնական լրագրները 1925 թ. մայիսից—ոգոստոս, հետեւյալ թվերն են տալիս. — 81 դատ. 3,557 մեղադրվող, վորոնցից 600 հոգի դատի յին տրված մահապատիժ սպանացող հոդվածներով: Բուլղարիայում 300 հոգի կախաղանի և 4,000 հոգի դատի յին սպասում: Ապրիլյան պայմանագրից հետո 1,000 հոգուց ավելի տաժանակիր աշխատանքի յին դատապարտվել:

Բուլղարական և ռումինական քննիչ իշխանությունների համար՝ մեղադրական ակտը հիմնավորելու և դատախազությանը նյութ մատակարարելու ամենասիրելի դեմքը տանջանքի յինթարկելու եւ:

«Ճարանիստական» կամ գյուղացիական կուսակցության առաջնորդ Նիկոլայ Լուպուն, Ռումինիայի ականավոր քաղաքական գործիչներից մեկը, 1923 թ. դատի ժամանակ հայտարարեց. «Սիգուրանցան (պահնորդական բաժինը) մի բանդա յե, վոր վոչ մի բանի առաջ կանգ չի առնում: Նրա ագենտներն առնվում են մեր

սեպտեմբերին նա հրամանատար եր Ֆիլիպպովում, նրա վրա յե ընկում 50 բանտարկյալների սպանության և Թաթար-Պաղար-Ջիկի ճանապարհին կոտորված հարյուրավոր բանվորների, գյուղացիների և ուսանողների արյան պատասխանատվությունը:

յերկրի թափթփուկներից ու տականքներից։ Նախարար յեղածս ժամանակ սիգուրանցան հետևում եր ինձ և ամենաստոր կերպով աշխատում եր շանտաժի յենթարկել ինձ։

Կոստա-Ֆորուն, վոր ամեն ջանք գործ դրավ՝ յեղբական հասարակական կարծիքը խոր քնից արթնացնելու, 70 դեպք և առաջ բերում, յերր մեղադրյալներին տանջանքներով հարկադրել են ցուցմունք տալ։ Սիգուրանցան նույն միջոցները կիրառում ենակ կանանց ու աղջիկների նկատմամբ։ Կանանց տանջում են իրենց ամուսինների ներկայությամբ, իսկ տղամարդկանց՝ իրենց կանանց աչքի առաջ։

Վոստիկանական կամիսարները, սիգուրանցայի ազենտները, սպանները, հաճախ նույնիսկ դատական քննիչներն իրենց զոհերին ֆիզիքական ցավ պատճառելու նպատակով տանջանքի կատարելության հասցրած միջոցներ են կիրառում։ Հաճախ և պատահում, յերր այդ տանջանքներին ներկա գտնվող բժիշկը մահը կանխելու նպատակով հարկադրված և լինում կանգնեցնել այդ միջոցների կիրառումը։ Սկզբում ծեծում են մինչեւ գիտակցությունը կորցնելը, հետո ուշքի յեն բերում ու նորից ծեծում։

Ծեծում են կառւչուկապատ յերկաթե ձողով՝ մինչեւ ականջներից արյուն դուրս գալը, յեռացրած ջուր են լցնում ականջը, քաշում, պոկոտում են ատամներն ու յեղունգները։ Անութներում յեփած տաք ձու յեն դնում, վոր անբուժելի այրվածքներ և պատճառում։ Բելգրադի կենտրոնական վոստիկանատանը բուխարին են կոխում նրան, ումնից ցուցմունք կորզել են ուզում։

Մի կնոջ վորովայնի ստորին մասը սպիտակելու չափ շիկացրած յերկաթաձող եյին անցրել, կեզվի տակ ասեղներ են խոթում, յեղունքների տակ շիկացրած գնդասեղներ են անցնում: Հատուկ մեքենա կա, վոր գլուխն այնպես և սեղմում, վոր գանգատուփը ճաքում ե: Շումնում առանձին տեսակի հիպնոսացնող միջոցներ ու եկամուտիզացիա յեն կիրառում: «Մասնագետներն» այս վերջին միջոցներին նրանց են յենթարկում, ում ուղղում են հարկադրել, վոր խոսի:

Այս ճիշտաղների ձեռքին շատերն են մեռել: Բանտի հիվանդանոցում մենք տեսանք մեկին, վորի վոտները տանջանքի այս գործիքներից շուռ եյին յեկել ու յետաճման յենթարկվել: Յես միայն պատահաբար աչքի ընկած սաղիզմի որինակներն եմ առաջ բերում:

Այս տանջանքներից յուրաքանչյուրի համար ստուգած ու անհերքելի ապացույցներ կան: Մի բանտարկյալ չկա, վոր այս բաներից չխոսի: Վառնայի վոստիկանական քննիչի կամերայում հառաչանքները խեղդելու համար յերեք ավտոմոբիլային մոտոր են բան դցում: Ականատեսներից մեկը պատմում եր մեզ մետալստ բանվոր Գեորգի Ստեֆանովի մասին, վորի կըրծուկը ջարդել եյին. նա վոչ ուտում, վոչ քնում եր: Պատմում եր նաև ծառայող Ռադիվովի մասին, վորին ծեծել ու այնպիսի այրվածքներ եյին պատճառել, վոր վոտքի վրա մնալ չեր կարողանում: Բանտարկյալներից մոկին այնպես եյին այլանդակել, վոր բանտային ընկերը նրան չճանաչեց: Ռումինական «Dimineata» լրագիրը 1925 թ. մայիսին գրում եր կոմմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեյի քննության

մասին. «Գետնին ու նստարանների վրա պառկած են տասնյակ մեղադրյալներ՝ կիսառշագնաց վիճակում, սառը կոմպրենեները գլխներին ու կրծքերին։ Շատերը խփվում են հատակին՝ փրփուրը շրթունքներին։ Վոչ վոք իրավունք չունի ոգնության գալ»։

«Ժընկի Լրագրի» աշխատակից Շապյուիզան, վոր բնավ հեղափոխական չե, այլ միայն, յեթե կարելի յե այսպես կոչել, կիսով չափ հեղափոխական՝ վորքան նա կարգին մարդ ե և անտեղի տանջանքներից վրդովվող, վառ գույներով ե նկարագրել այն տանջանքը, վորին ոռոմինական կոմմունիստները յենթարկվել են բանտում։ Լրագրող և չափազանց չափավոր քաղաքական հայացքների տեր, բայց սիրտ ունեցող Կոստանդին Միլեն խորին վրդովմունքով եր նկարագրում այսպես կոչված «գորտը» — տանջանքի մի տեսակ, յերբ զոհին կապում են ընդլայնական (ուսումնական) առանցքին, պտտում և կրկին իջեցնում են։ Տանջանքի մի այլ գործիք «գրբաց» ե կոչվում։ Դա յերկաթե ձեռնոց ե, վոր մատներն այնպես ե սեղմում, վոր վուկորները ճաքճքում են։ Տանջանքը շարունակվում ե մինչև հանցավորի «խոստովանելլը»։

«Այս ինչին ծեծել են» դարձվածքն այստեղ, Բալկաններում, այնքան հաճախ ե լսվում, վոր իր սրությունը կորցրել ե։

Յերբ միենույն բանի մասին շարունակ լսում ես, ըմբռնելու կարողությունդ ել ե բժանում. փորձեցեք, սակայն պատկերացնել, թե ինչպես վոստիկանական մոայլ շենքերում մի քանի գազան կտրած անպիտաներ ընկնելով անզեն ու կապված մարդկանց վրա, Ակում

են նրանց հատուկ գործիքներով, մորթում, տրորում, հոշոտում են և իրենց անուժացած զոհերի վողբերից ավելի ևս գաղաղած, նրանց համար նորանոր տանջանքներ են հնարում:

Շատ բանտարկյալներ, չդիմանալով Բրատիանուի կամ Ցանկովի կառավարության «խաղաղասեր ու դեմոկրատիկ» ռեժիմին, պատուհանից ցած են նետվել։ Պատահական անցորդները տեսել են նրանց դիակները դուրս քաշված յեղունգներով ու ծեծից կապտած կամ սևացած յերեսներով։ Սակայն պատուհաններն ել յերկաթե վանդակներով են պատել, վորպեսզի զոհերը չկարողանան իրենց տանջանքին մեկեն վերջ տալ։ Դրա վոխարեն դեպքեր ել են յիղել, ինչպես որինակ ճարտարագետ Գիշեի Սոֆիայի բանտում մեռած կնոջ դեպքը՝ յերբ պաշտոնական «ինքնասպանություն» բառի տակ ինչ - վոր ուրիշ բան ե թագնված յեղել։

Ամեն բան չի կարելի պատմել, ուստի կանգ չառնենք Բալկաններում տիրող բոլոր աղաղակող բարբարոսությունների, նահատակների արյունով ներկված քաղաքական պրոցեսների վրա։ Կասկած չկա, վոր Սոֆիայի տաճարի պայթյունի ամբողջ պրոցեսը գոյություն ունեցող իրավունքի տեսակետից մի շարք անորինությունների վրա յե կառուցած։ — վերցնենք թեկուզ Բուլղարիայում պաշարողական դրություն հայտարարելու մասին տված դեկրետը։ Զե՞ վոր ձեւականորեն որենքները յետաղարձ ույժ չունեն։

Թաթար - Բունարի գործին նվիրված գլխում յես կաշխատեմ ապացուցել, վոր այդ գործը յենթակա չեր զինվորական դատի. սա բոլոր փաստաբանների համար

պարզ և նույն գործի նախնական քննության ժամանակ տանջանքի յեն յենթարկվել վոչ միայն մեղադըրվողները, այլ և վկաները:

ՄԱՍՍԱՑԱԿԱՆ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հարյուրավոր ու հաղարավոր դեպքերում նույնիսկ արդարագատության դիմելն ավելորդ և համարվում:

Բուլղարական պատգամավորական պալատի նիստում հայտարարվեց, թե՝ «ներկա նախարարության ժամանակ կամայականություններն ու անդատաստան սպանություններն ավելի հաճախակի յեն կատարվել, քան Ստամբուլիյսկու որով»։ Մի քանի մարդասպաններ բացարձակ անպատիժ մնալու դրություն ունեն։ Յերբ մարդաշատ փողոցում պատգամավոր թուգոր Ստրաշիմիրովի գլուխը ջարդեցին, վոստիկանությունը խանգարեց և թույլ չտվավ, վոր ամբոխը ձերրակալի մարդասպանին։

Նույն ձեռվ վոստիկանությունը ձերրակալեց, բայց իսկույն ել ազատ արձակեց Պետկո Պետկովին սպանողին, պատճառաբանելով, թե դա վոստիկանական ագենտ ե, վոր իսկական մարդասպանին եր հետապնդում։ Բոլորը գիտեն, թե ով ե սպանել Պանչե Միխայլովին և 2—3 հազար ուրիշ մարդկանց, բայց վոչ վոք նրանց ձեռք չի տալիս։ Ամենին հայտնի փաստերի մասին յերբեմն հրատարակվող պաշտոնական հաղորդագրություններում լակոնական ձեռվ գրվում ե. «Անհայտ

անձինք սպանել են այս ինչին»։ Դրանով ել հարցը փակվում է^{*}։

Պաշտոնական մարդասպաններին արգելք չեն նույն-իսկ պետության սահմանները։ Պանիցան սպանվեց Վեն-նայում, Զառլուկ՝ Միլանում, յերկու դեպքում ել այդ քաղաքների բուլղարական դեսպանատների աջակցությամբ։ Դասկալովն սպանվեց Պրագայում, և այն։

Հարավ-Սլավիայում ձերբակալվեց վոմ Դունգարսկի, վորը խոստովանեց, թե հանձնարարություն ուներ սպա-նելու արտասահմանի եմիգրացիայի առաջնորդներին։ Իր ասելով, նա արդեն սպանել եր ներման որենքի ու-ժով Բուլղարիա վերադարձած շատ եմիգրանտների։

Մամուլում լույս տեսավ վոմ Ստանչկի նամակը՝ ուղղած մի բուլղար ծառայողի—Ստոիլովին։ Այդ նամա-կում խոսվում ե սպանության զանազան ծրագրների, մեծ դրամական միջոցների ու լիազորությունների մասին, վորոնք առատորեն շնորհված են նամակի հեղինակին։ Նամակը մերկացնում ե վոչ միայն իր հեղինակի հոգե-րանությունը, այլ և իրենց պետական մարդիկ անվա-նող անձանց արտասահմանյան մեքենայությունները։

Այդ նամակը Հռոմի բուլղարական դեսպան Ռադեկի վոչ պակաս հետաքրքիր նամակի հետ միասին տպված է և. Մոսի «Ի՞նչ ե կատարվում Բուլղարիայում» գըր-քույկում։ Իրենց զոհերի արյունով ներկված այս ավա-ղակներն ազատ զբոսնում են աշխարհի մեծ փողոց-ներում։

*.) Բուլղարական արմատական կուսակցության որգան «Ռադեկալար» 1926 թ. հունվարին գրում եր. «2½ տարվա ընթացքում

Զինվորական նշանազգեստով այս պլոտիքեսիոնալ մարդասապանները, վորոնք ապրում են հարկ տվողների հաշվին, բարկանավի վրա 2000 բանվոր ու գյուղացի սպանեցին Լոմա Պալանակում։ Թաթար - Բունարում միայն մեկ որվա ընթացքում այրվեցին 69 տուն, յեկեղեցու բակում սպանվեցին 89, և փողոցներում հրացանազարկ յեղան 200 գյուղացիներ։ 1924 թ. սեպտեմբերին պահնորդական բաժնի պետ Յուզարեսկուի հրամանով հարյուրավոր բեսսարացի գյուղացիներ չորս չորս կապուտվեցին ու ջրախեղդ յեղան։

Մի քանի ամսից հետո այդ միենույն բանը նորից կրկնվեց։ Տեղ-տեղ ծառայողները վոչնչով չեն տարբերվել ժանդարմներից ու բանտային ծառայողներից։ Բուլղարական պարլամենտի նիստում Կոստուրկովը հայտարարեց, թե Բելոգրադչիկի պրեֆեկտը դատապարտված է վորպես քրեյական հանցավոր։ Թարգու Մուրեշում հրատարակող ուռմինական «Vilag» լրագիրը փակվեց պրեֆեկտ Վիկտոր Մայորի դրամաշորթությունները հրապարակ բերելու համար։ այդ պրեֆեկտը կողոպտել եր 280 գյուղացու։ Մի կոոպերատիվի նախագահ գլուխն իր ավագակությունների համար յեղած բողոքներից ազատեց նրանով, վոր իրեն գեմ յենողներին մատնեց, ասելով, թե նրանք կոմմունիստներ են, ու սպանել տվագի Կոլարովը, մեկն այն մարդկանցից, վորոնց յետեկից բուլղարական իշխանություններն առանձին հաճույքով եյին ընկել, վորը, սակայն, աջողեցրեց Ռու-

դեռ չի արձանագրվել գոնե մի գեպք, վոր թեկուզ մի հատիկ վոստիկանական ազենս հանցավոր ճանաչված և դատի տրված լիներ»։

սաստան անցնել, վոստիկանից (նախկին սոցիալիստ) լսելով մի մահապատժի մասին, պատմում եր. — «Յոթ հոգի իրար կապված, կենդանի պատ եյին ներկայացնում: Հրաման տրվեց — չկախել, այլ կտրտել:

Ո՞վքեր եյին գրանք:

Դրանցից մեկը բանտարկվել եր վորդու թաղումից վերադառնալիս, յերկրորդն՝ իր փոքրիկ այգու մուտքի տուաջ, յերրորդը՝ վարսակ տեղափոխելիս:

Նախկին սոցիալ-դեմոկրատն այդ գիտեր, բայց կատարում եր իր պարտքը՝ կառավարության կարգադրության համաձայն:

Խուլ հարվածներ տեղացին, սրերը ցցվեցին մարմիններում, մանրելով վոսկորները, ծոծրակները. լսվեց վոսկորների խշխշոցը: Չոհերը վայր թափվեցին. մթնում կարելի յեր նշանաբեր, թե նրանք փոսում ինչպես են շարժվում: Բահերը խրվում են հողի մեջ, թռչում են հողակւշտերը: Թափվող հոգի աղմուկի միջից փոսից լսվում ե սրտակտոր հառաչանք — «յես դես կենդանի՛ յեմ»:

ԲԱՆՏԱՐԿՑԱԼՆԵՐԻ ՏԱՌԱՊԱՆՔԸ

Անկարելի յե նկարագրել այն տանջանքը, վորին յենթակա յեն Բուլղարիայի, Ռումինիայի, Հարավ-Սլավիայի բանտարկյաները: Ռումինիայում հատուկ կենտրոնական քաղաքական բանտ կա՝ Դոֆտանա անունով: Նա ամբողջապես առանձնարաններից ե բաղկացած:

Մահճակալներն ամրացրած են պատերին: Ցերեկն այդ մահճակալները բարձրացնում են, վորի հետևանքով բանդարկյաները ստիպված են ամբողջ որը վոտքի վրա

անցկացնել: Մնունդը զզվելի յե, «մհնակյացները» քաղցած են մնում: Բանտը մի բաժին ևս ունի՝ վոր կոչվում ե «Հ»՝ դա տանջարանն եւ: Հարյուրավոր ու հաղարավոր բանվորներ ու գյուղացիներ են անցել այդ բաժնով: Այստեղ բոլոր բանտարկյալների ձեռք ու վոտքը շղթայված են. նրանք շարաթը յերեք անգամ միայն հաց ու ջուր են ստանում: Բետոնով ծածկված այս քարե տոպրակներն ընկած բանտարկյալներն սպասում են մահին, վոր աղատի նրանց տառապանքից ու միջատներից: Նրանք շարժվել անկարող են. ստիպված են կանգնած քնիլ: Մա ուղղահայաց դադաղ եւ: Ամենափոքր սխալի համար անգամ կտրցեր են ուղարկում, վորտեղ նա պիտի նստի ցեմենտի հատակին, ջրի մեջ՝ ձեռք ու վոտքը շղթայած: Մարդկային վերաբերմունք պահանջողները հաշվի յեն առնվում: Նրանց դատապարտում են մեկ, յերկու, հինգ տարվա բերդարգելության և անվերջ մի բանտից մյուսն են տեղափոխում: Վոչ մի բանտում մի շարաթից ավելի չեն մնում և միշտ մեկուսացած են՝ ձեռք ու վոտքը շղթայած, առանց սպիտակեղենի, ցընցոտիներում: Այսպես ճամբորդում են նրանք ամբողջ Ռումինիայում:

Դոֆտանում, ինչպես ասացի, «Հ» բաժանմունք կա, ուր «անկարգապահ» բանտարկյալներն են նետվում:

Այստեղ խուցերը $1\frac{1}{2} \times 3$ մետր են, առանց ոդի, մահճակալի, սեղանի, աթոռի, առանց սանիտարական կահավորման: Լվացվելու ջուր չկա, ամիսներով սպիտակեղեն չի տրվում: Զզվելի և խղճուկ և սնունդը (200 բանտարկյալին 30 կիլոգրամ արգանակ :

Կերակուրն այսպես և սլատրաստվում. — չմաքրած կարտոֆելը դույլն են դցում, յեփում, և բերնե բերան լցնում կեղտոտ ջրով (այս ջրից մարմինն ուռչում ե, բանտարկյալները հիվանդանում են նեփրիտով): Թոքախտավլորներն ու սիֆիլիտիկները խմում են ընդհանուր կաթսայից: Ձեռնակապերն այնքան ծանր են, վորձեռքերն սկսում են նկատելի կերպով ուռչել: Փայտի հարվածները սովորական յերեւույթ են դարձել: Կրունկներին փայտով այնքան են խփում, վորվոտքերն այլևս պետք գալ չեն կարողանում. բանտարկյալներն իրավունք չունեն ոգնելու խուցը վերադարձող ծեծված ընկերներին: Այսպիսի ոեժիմի միայն մի քանի ամիս կարելի յե դիմանալ: Այստեղից գուրս են գալիս հոգեպես հիվանդ, ընկնավոր, բայց ավելի հաճախ մեռնում են: «Հ»-ի 53 բանտարկյալներից 6 ամսում ապրել են միայն 12 հոգի: 1923 թ. գորնանը Դոֆտանում մեռել են 38 մարդ, վորից 36 «Կ» լամբնում:

Հիվանդների վրա վոչ մի ուշադրություն չեն դարձնում և թողնում են, վոր մեռնի: որինակ՝ թոքախտավլոր իւլանուշի դեպքը ժիշյավում: Բժիշկ կա, բայց յերբեք հիվանդներին չինայում: Նա լավականանում է հիվանդների ազգականներից կաշառներ վերցնելով՝ վորպեսզի հիվանդին սանատորիա փոխադրե: Յես մի աղքատ կին տեսա, վորից բժիշկը 10,000 լեյ եր ուզում՝ մարդուն հիվանդանոց փոխադրելու, բայց կինը փող չուներ:

Բանտի կանոններով Դոֆտանի բանտարկյալներն այնտեղ 6 ամսից ավել չպիտի մնան: Բայց բանտարկյալներ կան, վորոնք 5 տարի յե, նստած են ռպացի-

Փիստական» կամ «սինդիկալիստական» պրոպագանդայի համար:

Գլխավոր բանտային վարչության պետ Զերնատը բանտարկյալների համար պարտադիր աշխատանք եր մտցրել՝ վաստակ ստանալու նպատակով։ Նրանց աշխատեցնում են ծեծով։ Քանի աշխատանքը չի վերջացել, զինվորները բանտարկյալներին սվիններով արգելում են ջուր խմելու կամ բնական պետքերի գնալ։ Զարմանալի չե, վոր բանտարկյալները յերբեմն ինքնասպանության փորձ են անում։

Սակայն սննդաղուց հայտարարելուց բացի՝ ուրիշ միջոց չունեն։

Պատմեցին թե ինչպես բանտարկյալներից մեկը փորձել ե ինքնասպան վիճել յոդի լուծույթով։

«Բունտեր» ել են լինում — մտացածին կամ իշխանության ու բանտապետի կողմից սարքած։

Մի լուսնուա, հիվանդությունը բռնած ժամին պատհարար ընկնում ե բանտապետի վրա։ Խսկույն լուր ե տարածվում, թե հիվանդը փորձել ե նրան սպանել ու սկսվում ե պատիժը։

Գերմանացիք Բուխարեստի ոկուլացիայի ժամանակ Ժիլյավի ամրոցը բանտի վերածեցին։ Դա կենդանի մարդկանց գերեզման եր։ Տասը մեար գետնի տակ խոր փորված բանտն ամբողջովին բետոնից ե։ Նրա ոհժիմն առանձին դաժանությամբ ե աչքի ընկնում։ «Ուղղվողներին» ամբողջ 10 որ պահում են ցեմենտի տոպրակներում, ուր շարժվելն անկարելի յե։

Ռումինիայի ամենամեծ բանտը, Վակարեշտի բանտն ե։ Նա կառուցված է 2000 հողու համար, բայց ներ-

կայում այնտեղ 3000 բանտարկյալ կա։ Ուղղվողները փակլած են 2 մետր մակարդակ ունեցող կարցերներում, ուր նրանք միայն կանգնել կարող են։

Մյուս բալկանյան յերկրներում ևս բանտային ռեժիմը նույնն է, ինչ վոր Ռումինիայում։ Նկարագրել այդ ռեժիմը, նշանակում ե կրկնել մեր նկարագիրը։ Տարբերությունը միայն հատուկ անունների մեջ ե։

Պաշտպանվելու իրավունք ասած բանը գոյություն չունի։ Բուլղարիայում փաստաբաններն իրավունք չունեն իրենց պաշտպանյաների հետ առանձին խոսելու։ Խոսակցության ժամանակ միշտ մի պաշտոնյա յե ներկա լինում։

Բանտից փախած բուլղարները, վորոնք կարողացել ելին Տաճկաստան անցնել, մեզ պատմում եյին, թե ինչպես եյին հարցաքննում իրենց։ Քննություն կատարողը յերբեմն մի հասարակ յենթասպա կամ պահնորդային ելինում։ Բանտարկյաները յերկար սպասում են նախնական հարցաքննության։ Ինչպես հայտնի յե, իվանուշը բանտարկեց առանց պատճառի, միայն նրա համար, վոր պլեքիսցիտի կողմնակից եր Բեսսարաբիայում։ Նա չորս ու կես ամիս նախնական կալանք կրեց և մեռավ թոքախտից։ Հաճախ կալանավորները քննության ուղարիմիք քանի տարի յեն սպասում։

Ռումին փաստաբան Բուժորը, վոր մեկուսացման եր յենթարկված և լսողության կենտրոնից զրկվել եր, խելագարվեց։

Բուլղար Ասեն Վազգարովը խելագարվեց, վորովհետեւ տանջելու համար գլուխը սեղմել եյին մի առանձին տեսակի մեքենայով։ Նրան ազատեցին, յերբ արդեն

հիվանդ եր: Նա կացնով սպանեց կնոջն ու յերեխային, ինքն ել կախվեց:

Հիմա փաստեր կան, վոր լրագրող Խերբստին յերկու նախկին սպաների և մեկ ժուրնալիստի հետ միասին կենդանի այրել են Սոֆիայի պահուղական վոստիկանության գլխավոր վարչության կենտրոնական վառարանում: Խերբստը կառավարության նկատմամբ միշտ ոպողիցիայում եր և իր «Վիկ» թերթում մի հոդված եր գետեղել, վորը խավերին դյուր չեր յեկել:

Բուխարեստում ցմահ բանտարգելության յինթակա Մաքս Գոլդշտեյնը սննդադուլ հայտարարեց, վորովհետեւ խեղճի կյանքը լոկ տանջանքների շարան եր: Միայն ազգականների պաղատանքին զիջելով, քառասուներորդ որը համաձայնեց վերջ տալ սննդադուլին, սակայն դրանից հետո յել բանտապետը հրամայեց վոչինչ չտալ: 10 որից հետո նա մեռավի: Դոփտանում նման հրաման տրվեց 27 բանտարկյալների նկատմամբ, վորոնք սկըզբում սննդադուլ հայտարարեցին, հետո ընդհատեցին: Յերբ այս մասին լրագրներում հայտարարվեց, 27 բանտարկյալները ամբողջ 3 շաբաթ մնունդ չեյին ստացել: Հին Ռումինիայում և Տրանսիլվանիայում բանվորների մասսայական բանտարկություններ տեղի ունեցան, վորովհետև վերջիններս բողոքել եյին Մաքս Գոլդշտեյնի սպանության դեմ:

Վորպեսզի դահիճների կատաղությունը սանձեն, բանտարկյալներին մնում և միայն կամավոր տանջանքը — սննդադուլը:

Այդ տանջանքների հետզհետե աճող սարսափի ամենամանրամասն նկարագիրներ կան. տանջանք, վոր

հանձն են առնում հուսահատության դուռը հասած մարդիկ։ Մննդագուշի առաջին որերում կամքի գերմարդ-կային ույժ և պետք։ *)

Ռումինիայի ժիլյավի բանտում մի քանի բանտարկյաներ այնպես անխնա եյին ծեծվել վոր արյունը շուրթերից եր դուրս գցվել։ Հստ տեղեկադրի՝ միայն

*) Յես ժողոված ունեմ կամովին այս աանջանքին յենթարկված շատ մարդկանց տողավորությունները Մննդագուշի սկզբում, բնականորեն քաղցի զգացմունք և առաջ գալիս, վոր ավելի այն ժամերին և սրվում, յերբ ստամոքսը սովորաբար սնունդ և ընդունելը Դիշերները լի յեն լինում կոչմարներով։ Քաղցածն իր առաջ լի սկուղներ և տեսնում։ Այս հայուցինացիայից, սկուղների այս շարանից գլուխը գիշեր-ցերեկ պտույտ և զալիս Հենց ար ժամանակ ել կամքը պիտի կարողանա հակարական լարվածության դիմանաւլ Զորբորդ որից սարսափելի թուլություն և գտլիս, վոչ մի այլ ցանկություն զոյություն չունի, շարունակ ուղում ես պառկեր։ Վոչ մի պահանջ, վոչ մի ձգուում և վեց թե յոթերորդ որից հետո քունք ել և կորչում։

Քաղցածներից մեկը հենց յերկրորդ որից անզգայացավ, պահանելով մաքերթ թարմությունը։ Զորս որից հետո ընդհանուր թուլություն ու ըթացումն սկսվեց։ «Յես չեյի կարողանում վո՞զ գրել վոչ կարդալ», ասում եր նա հետագայում։ Մնացին միայն պայքարի դգացումը, և խուլ ու համը կամք։ Ութերորդից մինչեւ տասնուշորսերորդ որը—ուշագնացություն ու զառանցանք։ Ում մասին պատմում եմ, ջուր խմում եր միայն գործադուլի առաջին ութ որում, այնուհետեւ այդ ել թողեց, շուտով ծարագ ել չզգաց։ Մինչեւ իսկ հականերգործելու ընդունակությունը կորավ։ Նա անտարբեր մնաց նույնիսկ այն ժամանակ, յերբ իր յեղբոր ազատության մասին լսեց։ Դրա համար ել նա մննդագուլ եր սկսել։

Մննդագուլից հետո նորմալ վիճակի դառնալը դժվար և տան-ջալից։

Միշտ անհագ քաղց զգալով, կիսակենդան բանտարկյան ուսում

1925թ. մայիսին, այդ բանտի 70կալանավորներ սննդագուլ են արել 1840որ *).

Յես մեծ խնամքով մի թղթի կտոր եմ պահում. — Ռումին քաղաքական բանտարկյալներն, ինչպես՝ չգիտեմ, իմանալով իմ գալը, կարողացել ելին ինձ նամակ ուղարկել: Նրանց մեղադրում են միայն հանցավոր համոզմունքի համար: Այդ ել բավական եր, վոր, ինչպես ասվեց, կասկածելին, թե դրանք կառավարության թշնամիներին համակրում են: Այս սրտաճմլիկ նամակներից բերենք մի քանի տող:

«Դագանակներով ու խորագանով ծեծում են մինչև մեր արյունլվիկ լինելը, մազներս պոճոկում են, գըլխներս պատերին են խփում մինչև ուշաթափություն, վոտքի տակ են տալիս, սակայն այս բոլորը վոչինչ են այն բոլորի հանդեպ, վոր մենք իրապես կրել ենք պահնորդական բաժնում: Մեզ կապուտում են այսպես, վոր մեր կզակը կպչում ե ծնկներին, իսկ ձեռքերս խաշածե՝ կոճներին. և վորպեսզի չաղաղակենք, բերաններս փակում են, դահիճները կանգնում են մեր կոկորդին: Այսպես շարունակվում ե որեր, շարաթներ: Յերր գիտակցություններս կորցնում ենք, մեզ ուշքի յին բերում՝ նորից մինչև անզգայություն ծեծելու համար:

Ե՞ առանց համ զգալու Ակսվում և մի այլ տեսակի ստամոքսի խանդարում սարսափելի ցավերով:

Մարդ յերկար ժամանակ հիվանդ ե՝ և ավելի լուրջ, քան սննդագուլի ժամանակ:

*) Կյուժայի 85 քաղաքական բանտարկյալներ վատ վարմունքի պատճառով 1925թ. մարտի 8-ից սննդագուլ հայտարարեցին. Դրանցից յերկուսը — Ալեքսանդր Բալինը և իոն Սյուրորը իրենց յերակը կտրեցին:

Ամուսիններին տանջում են իրենց կանանց, — ծնողներին —յերեխանների առաջ, վորպեսզի յերկուակն ել որինակ ցույց տան։ Մի քանիսներիս խուցերը տանջարանին կից են. մենք շարունակ լսում ենք մեր հարևանների ձայները, խրխորցն ու աղաղակը»։

«ՓԱԽՁԵԼ ՓՈՐՁԵԼԻՍ»

Նույնիսկ Ռումինիայում, մահապատիժ գոյություն չունի (դառն հեգնանք) և Բուլղարիայում, ուր Բորիս թագավորը քաղաքական գործերի համար մահապատիժ չի ստորագրում, հակառակորդներից ու ոպողիցիոներներից իսպառ ազատվելու շատ ուրիշ միջոցներ կան։ Այդ միջոցներից մինն ել «փախչել փորձելիս» սպանելն եւ Ռենքը թույլ ե տալիս բանտարկյալին սպանել՝ փախչել փորձելիս։ Այսպիսի մի վողբերգական ֆարս կատարվեց, Ստամբոլիյսկու սպանության ժամանակ։ Կապիտան Խարլակովի գլխավորությամբ մի զինված ջոկատ, վորին մակեղոնական մի յերկրորդ ջոկատ ևս միացել եր, Պտամբոլիյսկուն ձերբակալեց ու տարագ։ Դաշտում կանգ առան ու ստիպեցին, վոր բանտարկյալը փորի իր գերեզմանը։ Այնուհետև նրան այլանդակեցին, դանակով մարմնի զանազան մասերը՝ քիթը, ձեռքերը կտրտեցին, աչքերը հանեցին, կաշին քերթեցին, հետո միայն սպանեցին։ Սրանից կապիտան Խարլակովը արձանագրություն կազմեց, վորից յերեվում ե, թե Ստամբոլիյսկին սպանվել ե «փախչել փորձելիս»։

Այժմ առաջ բերենք Ռումինիայի համար մի տիպիկ որինակ։

Պլատկովկա քաղաքում 13 գյուղացիներ ձերրակալվեցին։ Կասկածում եյին, թէ դրանք մասնակից են թաթար-բունարյան ապստամբությանը։ Դուրս ըերին դաշտ և «փախչել փորձելիս» սարգեցին, այսինքն հրամայեցին փախչել. իրենք յետևներից ընկան ու մեջքից խփեցին։ Համոզված լինելով, թե նրանք արդեն մեռած են, ժանդարմոնները կանչեցին հիվանդանոցի ծառայող Պիրպեղարուին՝ մահն ստուգելու։ Յերկուաը դեռ շնչում եյին։ Սրանց ել սպանեցին. վորից հետո այս արարքին վկա չունենալու համար Պիրպեղարուին հրացանազարկ արին։

Լեռնտե Ֆիլիպեսկոն, վոր տեսնդում եր, հրացանազարկ յեղավ թիկնապահ սպա Բրատուի ձեռքով, վոր խփեց նրան ճակատ առ ճակատ՝ «փախչել փորձելիս»։ Խնձ պատմող վկան ավելացրեց, թե Բրատուն նրա վրա կրակեց յերկու մետր տարածությունից։

— Պահակներով տարվող հարյուրավոր մարդիկ են հրացանազարկ յեղեւ—ասաց ոռումինական պարլամենտում պատգամավոր Դումբրավավա քահանան, կույտկույտ մարդիկ են գտնվել՝ մեջք-մեջքի կապուտած, ջարդած վոտներով ու ձեռքերով։ Այստեղ փախչելու փորձով արդարանալու հնարավորություն անգամ չկա։

Քանի՞ քանի՞ անգամ ե արձանագրության «փախչել փորձելիս» դարձվածը որինական ույժ տվել ստոր սպանություններին։ Դա նույնիսկ առած ե դարձել։ Ռումինիայում կարճ կերպով ասում են՝ «մեկին արձանագրել» կամ «բեսսարաբյան սիստեմ»՝ և ամենքը հասկանում են դրա իմաստը։

«ԱՆՀԵՏ ԿՈՐԱԾՆԵՐ»

Մեռածներ կան: Տեսնողներ են յեղել,—նրանց դիակները ծածկում են գյուղ ու դաշտ, լողում են ջրերում, փտում անապատներում, կախկաված են ծառերից, ածխացած լնկած են խրճիթների ավերակներում, կենտկենտ ու խմբերով թափթփված են քաղաքների փողոցներում:

Բայց կան անհետ կորածներ—այնպիսի մեռածներ, վորոնց դեռ յերկար սպասում են. — «Հարյուրավոր կանայք, — ասում եր բուլղարական արմատական կուսակցության ասացնորդ Կոստուրկովը, ինձ մոտ են գալիս գանգատվելու, թե իրենց մարդիկը չկան, ձերքակալվելուց հետո նրանք անհայտացել են»:

Ընթերցողները յերեկի հիշում են պատերազմի ժամանակ այն բազմաթիվ ընտանիքների վողբերգական ապրումները, վորոնք լսում եյին իրենց թանգագին եակի «անհայտ կորչելը»: «Գուցե նրանք դեռ կենդանի յեն և մի տեղ տանջվում են», յերկյուղն ու հույսն իրար են խառնվում: Բայց ժամանակն անցնում, նրանք ել հույսն ե մարում:

Բալկանյան անհամար ընտանիքներ այս խուլ ու տեսական մաշիչ անհանգստության զգացումն են ապրում: Նրանցից շատերը դեռ համառորեն շարունակում են ինչ-վոր բանի վրա հույս դնել:

Սոֆիայում հանդիպեցի մի յերիտասարդ կնոջ, վորշարունակում եր խոր հավատալ, թե ամիսներ առաջ բացակայած ամուսինը դեռ տուն ե վերադառնալու: Ամենքը դիտեն, վոր այդ մարդու այլանդակված դիակն

ով գիտե, վոր փոսումն ե քայքայվում. բայց վոչ վոք սիրտ չի անում այդ մասին բան ասել կնոջը: Ասենք՝ նա չի յել հավատա: Այն համառ մտքերից, թե իր ամուսինը կենդանի յե, այս կնոջ բանականությունը պղտորվեց, և խոր հավատացած իր մտքերին, նա ծիծաղում, կատակներ եր անում՝ մարդու բացակայության առթիվ:

ՀԱԶԱՐՆԵՐԻ ՊԱՏԱԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Բալկանյան յերկրներում ծնողներն իրենց զավակների հանցանքն համար պատասխանատու յեն: Մոտ որերումս 25 հոգի ձերբակալվեցին, վորոնք հանցավոր եյին նրանով, վոր արտասահման փախած բուլղարական գյուղացիական միության անդամների ընտանիքների թվին եյին պատկանում: Ազգականների սկզբանքային մասնակցության վրզովեցուցիչ թեորիան շատ ընդարձակ կերպով ե կիրառվում: Հետապնդում և կոտորում են նաև փաստաբաններին՝ պաշտպաններու և բժիշկներին՝ ոգնություն ցույց տալու համար*):

Ընդգծենք նաև, վոր ըստ ներկա կառավարության մշակած որենսգրքի, հարազատներին չմատնելլ նույնպես հանցանք ե նկատվում: Պետության ապահովության համար բուլղարական ժողովի միաձայն (Կոստուրկովի մի ձայնը դեմ) ընդունված որենքի մի հոգվածն ասում ե. «Իշխանություններին զգուշացնողներն պատժից ազատվում են»:

*.) Ենս նկատի ունեմ Թողոր Ստրաժիմիրովին, վոր սպանվեց կառավարությանն ատելի մի քանի մեղաղբյանների պաշտպաններու համար: Բուրգասում՝ Պալեի, Պլեմբայում՝ Կլիբարովի, Դումանովի և Կանտարաջեկի վրա ոսմբեր նետեցին:

V. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԴԵՄ

Բալկաններում, հատկապես Բուլղարիայում, բացարձակ կերպով արգելված ե զինվորականների, դատարանի և վոստիկանության ձեռքով ընկած զոհերի ծնողներին ու յերեխաններին վորևե ոգնություն ցույց տալը, Սպիտակ տերրորի զոհերին ոգնելը «խռովարարներին թափնել» ե նշանակում և հանցանք ե համարվում:

Միջազգային լուսաշխի միությունը և պատերազմի նախկին մասնակիցների միջազգային կազմակերպությունը՝ Բալկանները գնալիս, մեղ մի փոքրիկ գումար տվին: Այդ գումարն ըստ պատկանելույն հանձնելու համար մենք ստիպված ենք ծայրահեղ բարդ ու զարտուղի ճանապարհների դիմելու: Ահեց վոչ մի մարմին սիրո չի անում այս մարդկային տարրական համերաշխության արտահայտությանը մասնակցել: Ծայրահեղ չքավոր բուլղար ընտանիքների համար, վորոնց կերպակրողները մեռած են, ամերիկացիք ժողովեցին ու Վեննա ուղարկեցին 9000 դոլար: Բայց մինչև որս հնար չեղավ այդ գումարն ըստ պատկանելույն՝ հանձնելու: Ցեթե այդ բանն արգել իշխանությունների միջոցով, կարելի յեր հավատացած լինել, վոր այդ դրամներն ուրիշ նպատակի կերթային: Յանկո՞մ ոգնություն ցույց տալու փորձի առթիվ ամենացինիկ ու խիստ հայտարարություն արավ

սարսափահար պարլամենտում։ Անդիական կանանց պատգամավորության ուղարկած փողերը բռնագրավվեցին։ Զեխական պատգամավորությունը, վոր յեկել եր ովնություն ցույց տալու վորբացած ընտանիքներին, արտաքսվեց։ Նույն նպատակով Վեննայից և Բագելից դուրս յեկած պատգամավորներին վիզա չտրվեց։ Գեներալ Բերնհեմի հեղինակալոր վկայության համաձայն սերբիական իշխանությունները նույնն են արել Զերնագորիայում։

ԿԱՆԱՆՑ ՅԵԿ ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ԴԵՄ

Դառնանք սպանությունների խնդրին։ Հասակն ու սեռն ուշադրության չեն առնվում։ Մոտիկ անցյալում Գերմանիայում մի գրքույկ լույս տեսալ՝ նվիրված բալկանյան ժողովուրդների մասսայական տառապանքից կանանց ու յերեխաններին ընկած բաժնին։ Բուլղարիային վերաբերող մասից քաղվածքներ անենք։ «Սվիշտովի շրջանի Ալեքսանդրովո գյուղում հայրը, մայրը պապը, աղջիկը, փեսան և 4—12 տարեկան չորս յերեխանները, մի խոսքով ամբողջ ընտանիքը հողոտվեց ու մորթոտվեց»։ Նման դեպքերի շարքը յերկար կլիներ։

Ցանկովի իշխանության գլուխ անցնելուց ճիշտ յերկու տարի հետո ուսուցչուհի Աննի Մայմունկովան բանտից տարվեց Սոֆիայի գերեզմանատունը, ուր խեղձին բռնաբարեցին ու գլխատեցին։ Զերբակալելուց հետո նրան այնպես եյին ծեծաշարդ արել, վոր ընկերուհիները բանտում չկարողացան ճանաչել։

Ուրիշ կանայք սրախողինող յեղան (որ. 60 տարեկան Անկա Դիմիտրովան, վոր հրաժարվել եր վորդու

թագատոցը մատնել). շատերին կախեցին, ուրիշները մեռան յերկարատև ու աննկարագրելի կատարելագործության հասցրած տանջանքներից:

Ուսանողուհի Զոյա Դրագոյչեան վաղուց եր մահվան դատապարտված: Վոստիկանատամնը նրան բռնաբարեցին. նա հղացավ, հիմա սպասում են ազատվելուն, վոր սպանեն:

Ռումինիայում մի խումբ վոստիկանների և մի քանի վաշտ զինվորների ներկայությամբ մերկացրին ու ճիպուններով ծեծեցին 17 տարեկան ուսանողուհի Ռոզա Ելլերտին և 18 տարեկան Տուրա Միրսկայային: Ուսուցչուհի Մարգարիտա Ռոշին մոր և յերկու յերեխանների հետ միասին ձերբակալեցին: Մորը բրածեծ արին դըստեր աչքերի առաջ:

Պառավին ազատեցին, նա կախվեց: Նրա աղջիկը բանտումն եր, բայց թույլ տվին, վոր ներկա լինի մոր թաղմանը: Թաղումից վերադառնալուց հետո նա ուշաթափվեց, այդ ժամանակ ել վոստիկանները նրան բռնաբարեցին:

Մի անգամ Սոֆիայի շրջակայքում Թաթար-Պազար-ջիկի շրջանից 17 տարեկան մի ուսանողուհու դիակ գտան. հագուստին մի թղթի կտոր եր կպած՝ հետեւյալ մակագրով. «Հայրենիքի դավաճան: Անցնրդ, թքիր ու անցիր»:

Կապիտան Կրոտնեի կինն իր ծծի յերեխայի հետ միասին սպանվեց անկողնում. նրա դիակը գտան փողոցում. պատճառը—մարդու համակրանքը գյուղացիական կազմակերպությանը.

Թելովո յերկաթուղակայանի մոտերքում, ուր 1923 թվին 26 մարդ եր սպանվել մորթոտած մարդու, կնոջ և 6 տարեկան յերեխաների դիակներ գտան։ Անցորդների առաջ այնպիսի սարսափելի տեսարան բացվեց, վոր շատերն անզգայացան։

Սոֆիայում ձերբակալեցին Բորիմեչկովի 14 տարեկան տղային և տանջեցին, վոր տեղեկություններ ստանան սեպտեմբերյան խռովությունների ժամանակ սպանված հոր մասին։ Տղան վոչինչ չհաղորդեց, նրան սպանեցին։ Եմիգրանտի կին՝ բանվորուհի Դիմիտրովան ձերբակալվեց ապրիլի 16-ին։ Վոչ վոք չհանդպնեց ոգնել նրա 12 և 8 տարեկան յերեխաներին։ Նրանք մեռան սովոր, մայրը խելագարվեց։

Սակայն անկարելի յե գիրքը լցնել անուններով ու դեպքեր թվելով՝ պիտի գաղարեցնել թվումները, կըրճատել այս ցուցակները։ Թող մի փոքր ել թույլ յերեվան մարդասպանների այս կազմակերպության արարքները։ Այնուամենայնիվ, թեկուզ անցողակի, պիտի պատմել, թե Բալկաններում մարդկանց կյանքն ու մահը իրենց ձեռքում պահող խելագար ոհակցիոններներն ինչ անխնա կատաղությամբ են հաշիվ տեսնում յերիտասարդության հետ։

ԿՈՒԿ ՑԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Բուլղարական կսմսոմոլն սկզբում մի մեծ և լայն ճյուղավորված կազմակերպություն եր, բայց հետո փակվեց, նրա անդամներն սկսեցին մեկը մյուսի յետեվից անհայտանալ։ Կոմսոմոլի նախկին անդամներին հետապնդում, բանտերում մաշում, սպանում են։ Հաճախ

կոտորում են նաև սրանց ծնողներին։ Մի քանի կոմսոմոլական մարմինների բոլոր անդամները կոտորված են, դպրոցներից ու գիմնազիաներից շատ աշակերտներ են արտաքսված։ Սոֆիայի հարյուրավոր ուսանողներ բանտերում են։ Բերկովիցում և Սոֆիայում դատախազը մահապատիժ եր պահանջում տասնվեց տարեկան աշակերտների և աշակերտուհիների համար։

Լուծված են այն բոլոր մարմինները, վորոնք իրենց չեն տրամադրում կառավարությանը։ Նույն վիճակին յենթարկվեցին նույնիսկ սպորտային խմբակները։

Դպրոցական տեսուչ Պենչեր գերմանական «Մարդու իրավունքների լիգա» գրքույկում դրում է, թե իր տղան, տարրական դպրոցի յերկրորդ դասատան աշակերտ, պատմում եր, թե ինչպես դպրոցում «սիրում եյին կոմմունիստ խաղալ»։ Աշակերտներից մեկը ներկայացնում եր կախաղան հանված ֆրիդմանին, յերկրորդը՝ մահապատժի դատապարտված կոմմունիստ Պյոտր Ամբաջիկին, յերրորդը՝ պատդամավոր և գյուղացիական առաջնորդ Պետրինիին, վորին սպանեցին, այրեցին, ապա «իր բացակայությամբ» դատեցին ու մահվան տվին, չորրորդը՝ սպանված կոմմունիստ Դրինկովին։

Մնացած աշակերտները վստիկաններ եյին դառնում. — Նրանք հետապնդում, բանտարկում և դատապարտվածներին մահապատժի եյին յենթարկում։ Մի անգամ այս մանկական խաղի մեջ հրապարակական մահապատժի ժամանակ ֆրիդմանին ներկայացնող յերեխային իրոք կախեցին. նա մեռավ։

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՑԵՎ ԻՆՏԵԼԻԳԵՆՑԻԱՅԻ ԴԵՄ

Առանձին զլուխ պիտի նվիրել՝ նկարագրելու բալկանյան պետությունների հալածանքը ուսուցիչների և ինստիտուտների համար մամր։ Այս տեսակետից տարբեր յերկրների կառավարությունները փոխադարձարար իրար պաշտպանում են։ Ռումինիան Բուլղարիայի ձեռքն և մատոնում բուլղար եմիգրանտներին, թեսպիտ Տատարիսկուն իմ ներկայությամբ իր զայրույթն եր հայտնում «Բուլղարիայում թափված արյան գետերի առթիվ» (Այս խոսքերում նույնքան անկեղծություն կա, վորքան Պաշտչի նորերս արած հայտարարության մեջ թե՝ «իմ յերկրում չկան՝ վոչ հեղաշրջումներ, վոչ մահապատիժներ – ինչպես Բուլղարիայում, Հունաստանում, Ալբանիայում և Ռումինիայում»)։

Ուսուցիչներն ու պրոֆեսորներն «ավագակներ» են հայտարարված։ Նրանց հետապնդում են։ Արտաքսված ուսուցիչներն առանձնապես շատ են Սովիայում և Բուխարեստում, ինչպես նաև Բելգրադում և Բուլղարիայում։ Լուսավորության նախարար Յանկովս իր վերջին «գրպրոցական սեփորմով» 820 տարրական դպրոցի ուսուցիչ և 2958 միջին և բարձրագույն դպրոցի դաստու և պրոֆեսոր փողոց նետեց։ Բուլղարիայում փակեցին 4 գիմնազիա, 7 միջին և 2 բարձրագույն մանկավարժական դպրոցներ։

Լուծված ե բուլղարական ուսուցչական միությունը, վոր 3500 անդամ ունի։ Այս միության գլխին անվերջ հարվածներ տեղացին և նրա բոլոր գործիչներն, սկսած ժարտուղար Լամբի Կանդեից, սպանված են։

Ուսուցիչ Գեղրդի Մալինովին Սլավովիցում մաս-մաս արին։ Ուսուցչական միության հիմնադիր Վալեն Իվանովի յեղունդները քաղեցին, կուրծքը ծակեցին և դիակը սրբնթաց ավտոմոբիլից փողոց նետեցին։

Բախտավոր եյին, ովքեր կարողացան ինքնասպանությամբ ազատվել դահիճների սաղիզմից։ Այսպես վարվեց աղնակվ Անաստաս Գենչևը, վոր ծայրահեղության հասած, բանտում լնքն իրեն մորթեց պատառաքաղով։

ՄԱՄՈՒԼԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

«Գեներալների և պրոֆեսորների» կառավարության իշխանության տակ մամուլի ազատությունն արհմիությունների ազատությունից ավելի չե։ Հարևան Ռումինիայում Տատարեսկուն դառնալով պարլամենտին ասաց, վոր յուրաքանչյուր վոստիկան իրավունք ունի դրավել սահմանած կարգի դեմ հոդված տպող թերթը։ Վախենալով՝ մի գուցե գրաքննությունն այնուամենայնիվ վորեն բան անցկացնի, բուլղարական թերթերի արտասահման ուղարկելն արգելված ե։ Մի ականավոր արտասահմանացի ասում եր. «Բուլղարական պաշտոնական թերթերում վոչ մի ճշմարիտ խոսք չկա»։

Ցես իմ ձեռքում ունեմ բուլղարական լրագրների և պարբերականների մի ցուցակ՝ 36 ականավոր լրագրուների, իմբագիրների և գլխավոր աշխատակիցների անուններով, վորոնք սպանված են առանց քննության ու դատի։

Բանաստեղծ Գեռ Միլելը իր մի պոեմայի համար դատի տրվեց, բայց արդարացավ. սակայն հետո հա-

մարձակություն ունեցավ անզլիական բանվորական կուսակցության թարգմանը դառնալ և սրա համար գաղանաբար հոշոտվեց ու սպանվեց: Ցանկովի ագենտները լավ են յուրացրել այն կանոնը, թե՝ «զլիքին պիտի խփել»: Հանուն այս կառավարական սկզբունքի՝ ինտելիգենցիան վոչնչանում և — սպանված են հարյուրավոր ուսուցիչներ, քառասունից ավելի պատգամավորներ ու նախկին նախարարներ, սպաներ, ճարտարապետներ, բժիշկներ, քահանաներ և այլն:

Յերբ գյուղացիական թերթերից մեկը կտրական կերպով հերքեց այն տեղեկությունը, թե գյուղացիական և կոմմունիստական կուսակցության մեջ համաձայնություն ե կայացել, վոստիկանությունը թերթի բոլոր համարները գրավեց, վորովհետեւ այդ հերքումը խորտակում եր խստությունների ամրողջ պլանը: «Լարված երևան» (Կոտրած գրիչ) անունով մի ժողովածու լույս տեսավ, վոր բողոքում եր մամուլի ազատությունը վոչնչացնելու գեմ: Հայտնի գրող Անտոն Ստրաշիմիրովը ջերմ կերպով պաշտպանեց մամուլի ազատությունը: Սա Սոֆիայի ինտելիգենցիայի ականավոր ներկայացուցիչներից մինն ե. նա իր ունեցածը բաժանեց Վոլկովի զոհերի վորբերին և աղքատներին: Հայտնի լրագրող և պատգամավոր Պետկո Պետկովի իր սպանությունից կես ժամ առաջ «Կոտրած գրչի» համար մի կոչ եր գրել՝ վորպես պաշտպանություն մամուլի ազատության, վոր «մյուս բոլոր ազատությունների հիմքն ե»:

Վենգրիայի Նեպշավայում յերկու սոցիալիստական լրագրությունների խմբագիրների տանից դուրս բերին ու Դու-

նարում խեղիեցին։ Նրանց մասին հոգված գրող վենդիքտական լրագրող Դեղի Դեր Անդրեական 28 ամսով փակվեց համակենտրոնացման ճամբարում։ Նրան հիմայի հետապնդում էն, վորովետև իր աչքով տեսած գաղանությունների ու վոճրագործությունների մասին փորձել եր արտասահմանում մի գիրք լույս ընծայել։

Մյուս կողմից արտասահմանյան թերթերը կաշառելու բաղմաթիվ փաստեր կան մեր ձեռքում, առ այդ՝ անհրաժեշտ գրամական միջոցներ առնվում եյին գաղտնի ֆոնդերից։ Մեզ մոտ գոյություն ունեն վոչ մի վստահություն ու հարգանք չվայելող մամուլի բյուրոներ, վորոնք տեղեկություններ տպելու համար դրամ ևն վերցնում ու տալիս։

Ցեթե Բալկաններում, և նույնիսկ Սոֆիայում, գեռ մնացել են անկախ գրողներ ու գրական ընկերություններ, դրանք ել խոճուկ գոյություն են քարշ տալիս և ապրում են միայն տիրող կառավարությանը հաճոյանալու շնորհիվ։ Այդ հաճոյացումը մեղմ արտահայտված՝ կոչվում ե «քաղաքական չեղոքություն»։ Զի կարելի չենշանել, վոր սումինական գրողների միության ազդեցիկ անդամներից մեկը, Բոմուշոս Վոյնեսկուն, սիգուրանցիայի գլխավոր վարչության պետն եւ

ԱՅՍ ԲՈԼՈՐԸ ԿՐԿՆՎՈՒՄ Ե

Ցես աշխատեցի միայն թոռուցիկ տեսություն տալ ըալկանյան յերկրներում կազմակերպված ժողովրդական հարստահարությունների մասին, այն ել ուրուագծելով միայն մի քանի բնորոշ փաստեր և ընդհանուր գծեր։ Անհրաժեշտ ե ասել, վոր խոսքը վերաբերում ե

վոչ միայն անցյալին, այլ և մի ամբողջ քաղաքական սխտեմի, վոր մինչև որս ել շարունակվում եւ:

Մի քանի մեծ դավադրություններից հետո, վորոնք վերջացան այնպես, ինչպես սովորաբար տրիբունալ-ներն ու վոստիկանությունն ավարտում են նման գործերը, ներկայումս նոր դավադրություններ են պատրաստվում: Բուլղարիայում յեղածս ժամանակ յես Սոփիայի ֆրանսերեն թերթերում իր լակոնականությամբ սարսափելի մի հաշիվ կարդացի «Սոփիայի չեկայի» գործի մասին: Բացի արդեն վերջացած Թաթարունարի դատավարությունից, մի նոր դատավարություն ել պատրաստվում եւ Գալացում հայտնաբերած «զավադրության» մասին: Ծումբնիայում յեղածս մամանակայս գործով մոտ հիսուն հոգի արդեն ձերբակալվել ելին: *)

Բալկանյան յերկրներում դեմոկրատիայի մնացորդների անընդհատ վոչնչացումը շարունակվում եւ: Մի լավատեղյակ մարդ ինձ ասաց. «Բուլղարիայում դեռ 20,000 մարդ կա, վորոնք յերազում են ազատության, հավասարության և սոցիալական արդարության մասին: Կառավարությունը տակավին ունի արմատախիլ անելու բան»:

Բուլղարիայում նոր բանտեր կառուցելու հարցն եքննվում: Մի քանի կառավարություններ զբաղված են գրադարաններ ու դպրոցներ հիմնելով, իսկ բուլղարականը՝ յերազում ենոր մեծ բանտերի մասին:

*) Ներկայումս Քիշինեում քննվում ե այն 65 յերիտասարդների գործը, վորոնք մեղադրվում են կոմսոմոլին պատկանելու մեջ:

Յես նորից մի շաբք տեղեկություններ ստացա մահապատիժների, բանտարգելությունների, տաժանակիր աշխատանքների ու գալառներում կատարված նոր սպանությունների մասին:

Նահատակների ցուցակն որեցոր հարստանում ենոր անուններով: Կուզեյի պատմել այդ բոլորի մասին, բայց Փիզիքական հնարավորություն չկա *):

ՈՒՄ ՍԵՂԱԴՐԵՆՔ

Ամփոփենք: Վերջապես այս չարագործությունների պատասխանատվությունն ում վրա յե ընկնում: Բուլղարիայում և Ռումինիայում համառորեն այս հարցն եմ տվել այն բոլորին, ովքեր իրավունք ունեն պատասխանելու: Բոլորը, բացի պաշտոնատար անձերից, միաձայն պատասխանել են. «Միայն կառավարության, այդ բոլորի համար միայն նա յե պատասխանատու. նա չի կարող արդարանալ նույնիսկ ծառայողների կամայականությանը կառչելով»:

*) Այսուամենայնիվ առաջ եմ բերում 1926 թ. փետրվարի 10-ին բուլղարական «Մագիկալ» և «Նտրոդ» թերթերում տպած 54 լուսակողի (Որխանյի շրջան) զյուղացիների հեռազերը՝ նախարարական Լյապչին. «Փետրվարի 3-ից լույս 4-ի զիշերը անկողնում, կնոջ ու յերեխաների աչքի առաջ, հրացանազարկ ե արված մեր ազգական և համագյուղացի հյա Մոնեը: 1923 թ. հունիսի 9-ից սկսած մենք ահ ու սարսափով ենք բռնված: Դտեք մարդասպանին — պահպանեցեք մեր կյանքը: Հայրենիքի ազատության համար ինչմէ կռվեցինք, յեթե մեր գաղվան որն ապահով չե. 800 ընտանիք հուսահատ վիճակի մեջ ե: Ասացեք — ինչ անենք և ուր փախչենք, վոր չկոտորվենք»:

Յեկատերինա Պետկովան, վորի ամուսինն ու տղան սպանվեցին Եռֆիայում, իր վորդուն սպանող ագինտի ներկայությամբ դատարանին հայտարարեց. «Հիմա նույնիսկ Բուլղարիայի յերեխաները գիտեն, վոր իմ ամուսնուն սպանողը վոչ թե այս թշվառականն եր, վոր լոկ գործիք եր կառավարության ձեռքում, այլ Յանկովի կառավարությունը»։ Վոչ վոք չի հավատա, թե կառավարություններն անկարող են ծառայողներին իրենց յենթարկել։ Դրանց իրենք ևն փչացըրել։

Այս սարսափելի վողբերգության ամբողջ պատասխանատվությունն ընկնում և ուռմինական, բուլղարական, հարավ-սլավական և վենցիքարական կառավարությունների վրա։

Պարլամենտական հարցապնդումներին և խնդրագրերին Յանկով պատասխանում եր սպանուալիքներով ու մարդասպանությունները հատու և կատեգորիկ արդարացումով։ Նույն վիճակն ունեցավ քսան զյուղացիական պատգամավորների տված բողոքը՝ տաննեինդ պատգամավորների սպանության առթիվ։ Նմանը չունեցած սոցիալական թշվառությունների մի տմբողջ սերիայի սկիզբը դնող մարդն այնքան անողատկառ ե, վոր հանդես ե գալիս խաղաղություն և կարգ սահմանողի գերում։

Այս մարդը, վորի արյունոտ ձեռքը հրապարակական հանդեսների ժամանակ սեղմում են ուրիշ պետությունների ներկայացուցիչները, իցե թե քաղաքական խաղերի շնորհիվ ժամանակավորապես ըհմից հեռանաբայց դրանից հետո կփոխվի արդյոք նրա մարմնացրած ու փայփայած մասսայական սպանությունների սիստեմը։

Սովիա յեղածս ժամանակ ինձ ասացին, թե շուտով
Լյազչեն ու գեներալ Վոլկովը բուրժուական միացյալ
կուսակցություններից նոր կառավարություն են կազ-
մելու։ Հավանական ե և այն, վոր առաջիկա գարնանը
Ռումինիայում կարինեաի ճնշաժամ առաջ գա՝ մանա-
վանդ, յեթե գյուղացիական և ժողովրդական կուսակ-
ցությունների մեջ համաձայնություն կայանա։ Իհար-
կե ծանկովի և Բրատիանույի ժամանակից վատ չի
լինի, բայց չպետք և մեծ հույսեր ել կապել այս կամ
այն կառավարողի փոփոխության հետ։ Անհոգությունն
ու անդորր կյանքի սերը քաղքենի հասարակական կար-
ծիքի մեջ հաճախ լավատեսություն են առաջ բերում,
վոր վոչ մի կերպ չի կարելի արդարացնել։ Ցեվ այսու-
ամենայնիվ հալած յուղի տեղ չպիտի ընդունել պար-
լամենտական կոմիտիանացիաները, վորոնք անձեռնմխելի
յեն թողնում տիրող իրավակարգի հիմնական արատներն
ու արմատակալած սիստեմը։

VI. ԲՈԼՇԵՎԻԶՄԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՊԱՏՐՎԱԿՈՎ

Մեր որերում ընդունված չե իրերն իրենց անունով կոչելու, այլ հասարակական կարծիքին բոլորովին այլ «ձևով» են հրամցնում:

Նախարարներն ու գեներալները իրենց զբույցը միշտ սկսում են նրանից, թե իրենց յերկրներին ե վիճակվել թեվրոպայի արևելյան սահմանները պահպանելու պատմական միսսիան։ Ըստմինիայի և Բուլղարիայի ինքնակոչ նախարարները, վորոնք իրենց արյունոտ ձեռքերում են պահում այդ պետությունները, իրենց հայրենիքը ցուցադրում են վորպես պատնեշ ոռւսական բարբարոսության և ԱՌ ինտերնացիոնալի պրոպագանդի դեմ։

Նպատակ չունեմ այստեղ սոցիալական և քաղաքական բնույթի վեճեր հարուցել կամ հեղափոխական ու հակա-հեղափոխական սկզբունքներ իրար հակադրել։ Ուզում եմ միայն ընդգծել, վոր մեր որերում ազատագրական շարժումը մասսայական բնույթ ե ստացել։ Իրերի կուռ լոգիկայով կոմմունիստական ինտերնացիոնալը դեպ ինքն ե ձգում ամբողջ աշխարհի ճնշվածներին և անկարելի յե մթագնել այն վառ լույսը, վորով պատաճ ե յերեում նրանց աչքին Բանվորա-Գյուղացիական Հանրապետությունը։

Այս խնդիրները չեն մտնում մեր ծրագրի մեջ։ Յեթե մի բուռն բռնականների գործադրած արյունոտ միջոցներն իրոք իրենց արդարացումը գտնելին գալիք կոմմունիստական վտանգի մեջ, դեռ կարելի կլիներ ընդհանուր թեմաների մասին խոսելու Բայց այդ չի բանը։ Կոմմունիստական կուսակցության մասին արած այս բոլոր կանչերը սպիտակ տերը որի ներկայացուցիչների կողմից միայն գեմագոզիա և գիտակցական կեղծիք են։

Մենք տեսնում ենք, թե ինչպես Բալկաններում սխատեմատիկ կերպով և անխնա վոչնչացնում են այն մարդկանց, վորոնք վորեն դեր են խաղացել գյուղացիական և կոմմունիստական կուսակցություններում՝ նախ քան այդ կուսակցությունների որենքից գուրս հայտարարվելու։ Այդ բոլորի հետ միասին վոչնչացնում են «կասկածելիններին», նրանց, վորոնք վորոշ չափով համակրում են պլրոլետարիատի գործը, վերջապես նրանց, ովքեր աշխատում են բանվորական պլրոֆեսսիոնալ միություններ կազմակերպելու։ Այսորվա մի ժամկա խալիքաները սառը քաղաքական հաշիվներով են գործում, այլ վոչ թե նրա համար, վոր նրանց ստիպում են խստությունների դիմելու ինչպես համարձակվում են պնդելու նրանք նպատակ են դրել արյան մեջ խեղդելու լայն մասսաների ազատության մեծ գաղափարը՝ զգվելի պրովոկացիայի դիմելով և անվերջ դավադրություններ ու մահափորձեր հնարելով։ Այս հանգամանքը նրանց հնարավորություն ե տալիս անվերջ կոտորածներ սարքելու։

Նրանք սկզբում զանազան լեզենդաներ են հնարում, ապա հաշիվ են տեսնում իրենց բոլոր թշնամի-

ների հետ: Իր շիտակությամբ հայտնի արմատական պատղամավոր Կոստուրկովը, կոմմունիզմի սկզբունքային հակառակորդ, քաջություն ունեցավ բուլղարական ժողովում հայտարարելու:

— Վոչ մի կարգին մարդ կառավարության կողմնակից չեւ Խատությունները վոչ միայն անկեղալ այլ և լեզաւ կազմակերպությունների վրա յեն տեղում, այսինքն նրանց վրա, վորոնք կողմնակից չեն բացարձակ բեակցիային:

Այսուհետեւ Կոստուրկովը հայտարարեց.

— Մենք ցանկանում ենք, վոր բոլոր կուսակցությունները կարողանան աղատ ապրել և պայքարել իրար դեմ, գաղափարը գաղափարի դեմ: Սա յեւ ճշմարիտ գենոկրատիան, թեզեան դեմոկրատական Անտանտայի համար սա դեռ չի հանդիսանում ճշմարտություն:

Ամեն մի խելահաս, կարգին մարդ, փոքր ի շատե ծանոթ Բալկանների քաղաքական կյանքին, միայն Կոստուրկովի տես կարող ե մտածել: (Ափսոս միայն, վոր Կոստուրկովը Յանկովի կարինետի նկատմամբ այնքան ներողամիտ եր):

Ռումինիայի, Սերբիայի, Բուլղարիայի և Վենդրիայի սպիտակ կառավարությունները հաճույքով շփոթում են կոմմունիստներին գյուղացիական կուսակցության ու արհմիությունների անդամների, ահաբեկիչների, նույնիսկ հասարակ բանդիտների հետ: Տատարեսկուն, ոռումինական կառավարության՝ Յեվրոպայում գոյություն ունեցող կանոնների այս առաջադեմ մարտիկի (միջնադարի ժամանակաշրջանից) գահճային գոր-

ծունեյության մասին ինձ պատմելիս, միշտ գիտակցարար շփոթում եր մեկը մյուսի հետ:

«Ես անձամբ տեսա Ցանկովին և ուրիշ գործիչների, — զրում եր Բրյուսսելի վաստարան Պլինյեն: — Նրանք ինձ սրտաբաց ընդունեցին և ասացին. «Ճիշտ ե, առանց եքսցեսների բան չեղավ: Բայց կոմմունիստներին վոչնչացնելով, մեր զինվորները Զեղ ևս ազատում եյին մեծ վտանգից: Կարգը վերականգնելով, նրանք յեվրոպական դրամատերերին հնարավորություն տվին՝ իրենց կապիտալը մեր յերկրում տեղավորելու»:

Այս թե ինչն յեն իմպերիալիզմի և կապիտալի շահերի պաշտպաններն այնպես ծափահարում բուլղարական դիկտատորների յեռանդը:

Սուտ են այն հավաստիացումները, թե Ստամբուլյան կառավարությունը կոնտակտ ուներ կոմմունիստների հետ: Դրա վրա եյին հենվում բուլղարական իշխանությունները, վորոնք նախ գյուղացիական կուսակցությունը վոչնչացրին, ապա կոմմունիստներին: Այս հնարովի պատճառաբանությունը ի չիք ե դառնում այն հայտարարություններից հետո, վոր 1920 թ. Ստամբուլյակին արավ մի քանի յեվրոպական մայրաքաղաքներում: Հիշենք նաև նրա որենքների նախագծերը կոմմունիստների դեմ, և թե ինչ գաֆանությամբ ճնշեց յերկաթուղայինների գործադրությունը: 1921 թ. գյուղացիական ականավոր պատգամավորներից մեկը, Գեորգի Դամյանովը, ոռումբ նետեց կոմմունիստական ժողովարան և վոչ վոք նրան ձեռք չտվալ: Մի՛թե այս փաստն ինքնին ապացույց չե մեր ասածի: Այնուհետև հայտնի յե, վոր կոմմունիստական կուսակցությունը,

վոր Ստամբուլիյսկու անկման մոմենտին արաքան ուժեղ եր և լավ կազմակերպված, չմիջամտեց և չոգնեց նրան, նա ստեղծված դրությունն իր ազիտացիայի ոգտին ծառայեցնելու ամենափոքր փորձ անգամ չարավ։ Այս բոլորը միանգամայն անարժեք են դարձնում այդ զրույցները և թույլ չեն տալիս ծանկովին հայտարարելու, թե իր տարած քաղաքականությունը պատասխան և հակառակորդի պրովոկացիային և չարամտություններին։ Մի բան ճիշտ ե, վոր հեղաշրջումից հետո կառավարության նշանակած ընտրություններին կոմմունիստներն ու գյուղացիական կուսակցությունն ընդհանուր ցուցակ ունեին. բայց սա պիտի բացատրել նրանով, վոր այդ ժամանակ ոպպողիցիս կազմում եյին միայն այդ յերկու կուսակցությունները, մյուս՝ այսպես կոչված ոպպողիցիոն կուսակցություններն իրենց հաճոյակատարության և ստորաքարշության շնորհիվ իսպառ կորցրել եյին այդպես կոչվելու իրավունքը։

Սուտ ե նույնպես, թե տեական ու թանկագին պայքարով ձեռք բերած պրոֆեսսիոնալ նվաճումներից զրկված և առաջնորդներին կորցրած բանվորական կազմակերպությունները կոմմունիստական են (թեկուզ յեթե նրանց շարքերում կոմմունիստներ ել լինեյին, վոր միանգամայն բնական կլիներ)։

Նույնը պիտի ասել նաև ծանկովի պետական հեղաշրջմանը հաջորդած արյունությունների մասին։ 1923 թ. սոսկալի վրիժառու խժդությունները, բազմաթիվ ձերբակալություններն ու սպանությունները՝ բուլղարական գյուղերում ինչ-վոր մի փաստաթղթի պատճառով, վորն իբր թե III ինտերնացիոնալի կողմից եր։

Այս թուղթը, հասկանալի յե, վոչ վոք չտեսավ ու չստուգեց: 1925 թ. հունիսին տեղի ունեցած դատավարության ժամանակ հանդես չեկավ վոչ մի փաստաթուղթ, վոր հաստատեր սեպաեմբերյան խռովությունների կոմմունիստական ծագումը: Կոլարովը ձեականորեն ժխտում եր իր ստորագրությունը և 1923 թ. սեպաեմբերի կոչի իսկական լինելը:

Ամենապարզ ապացույցը, վոր տվյալ շարժումը կոմմունիստաների կազմածը չեր, այն ե, վոր նրանք հենց սկզբից չփորձեցին ոգտագործել այդ շարժումը: Վանդերվելգեն Փաշիստական կառավարությունների արձագանքն եր հանդիսանում, յերբ բելգիական թերթերից մեկում հայտարարում եր, թե 1923 թ. սեպատեմբերյան «խառնակությունը» կատարվել ե Մոսկվայի անմիջական հրամանով: Սակայն իր հոդվածի հետագա տողերում նա ինքն իրեն հերքում եր. թեպետ վհչ ինքը, վհչ ել մի ուրիշը չկարողացան գոնե փոքր ի շատե արժեքավոր ապացույցով հաստատել այդ առասպելը: «Անկասկած, — գրում ե նա, — յեթե շարժման գլուխը անցած լինելին կոմմունիստները, Ստամբոլիյսկու մահով գաղաղած գյուղացիները նրանց զորքի հիմնական մասսան կկազմելին: Բայց Սոֆիայում, ուր բոլշևիկները ուժեղ ելին, վոչ վոք տեղից չշարժվեց: Ընդհակառակը, ուր Ստամբոլիյսկուն հավատարիմ գյուղացիական կուսակցության անդամներ կային, կատաղի կոիմներ են տեղի ունեցել:

Այս խոսքերից ի՞նչ ե յերեսում. այն, վոր այս կամ այն տեղում պրովակացիան և սպանությունները կա-

ըող եյին կոմմունիստներին յելույթի մղել. սակայն պատասխանատուն նրանք չեն:

Բայց հարցը շատ պարզ է: Ընտրությունների ժամանակ կոմմունիստնիստական և գյուղացիական կուսակցությունների հաջողությունն ապահովված եր: Այդ ժամանակ սեպ. 17-ի հեղափոխական յելույթի փաստաթուղթը գտնան: Այս «գյուտը» կառավարության ձեռքին առիթ ծառայեց՝ գյուղացիական կուսակցության անդամներին և կոմմունիստներին ձերբակալելու:

Ձերբակալությունները գյուղերում, ուր գյուղացիական կուսակցությունը բավական արմատակալել եր, առաջ բերին ընդդիմություն և բռնկումներ:

Սա յել իր հերթին պատրվակ դարձավ՝ նոր խստությունների ու սպանությունների համար:

Սեպտեմբերյան հուզումները վոչ թե կազմակերպված, այլ տարերային շարժումներ եյին: Այդ յերեսում և նրանից, վոր ամբողջ հերկրում միաժամանակ չբռնկվեցին, այլ աստիճանաբար, վորպես պատասխան կառավարական բռնություններին: «Հյուսիսային Բուլղարիայի հուզումները միայն հարավային Բուլղարիայի տրյան բաղանիքներից հետո պայմանագիր թեթև իրոք ապստամբության պլան գոյություն ունենար, հեղափոխականները չեյին սխալվի և իրենց մեկիկ - մեկիկ չեյին կոտորել տա» (մի խումբ ինտելիգենտների նամակից «Մարդու իրավունքների լիգային»): Պաշտոնական խավերի պնդելով՝ Խորհրդային Միության և III խնտերնացիոնալի խնտրիգները յերկու խոշորագույն դեպքեր ել առաջ բերին՝ Թաթարբունարի գյուղացիական ապստամբությունը 1924 թ. (Ռումինիայում) և

Ս. Շաբաթի տաճարի պայթյունը Սոֆիայում 1925 թ.
ապրիլի 16 - ին:

Այս յերկու դեպքերի մանրազնին հետազոտությունն իրավունք և տալիս՝ համարձակորեն, վոչ մի հերքումից չքաշվելով, հայտարարելու, թե բավկանյան բռնականներն այստեղ ել չեն կարող իրենց վարմունքն արդարացնել:

Սոֆիայի Ս. Շաբաթի տաճարի պայթյունը, վոր 170 սպանված և մեծաքանակ վիրավորներ տվավ, անհատական տերրորի մի ակտ և, վոր կոմմունիստական կուսակցությունը սկզբունքով չի ընդունում. նա միայն մասսաների կողեկտիվ յերւյթ և կողեկտիվ կաղմակերպություն և ընդունում:

Ամբոխի մեջ ոռոմքի պայթյունը կարող եր միայն կառավարական տերրորը սաստկացնել: Առողջ մտածող մարդկանց մեջ այս առթիվ յերկու կարծիք լինել չեր կարող: Անհեթեթություն կլիներ մաածել, թե բուլղարական կոմկուսը կարող և այդպիսի հրեշտավոր վարկարեեկ քայլ անել, վոր համազոր և քաղաքական ինքնասպանության:

Այդ անմիտ ակտը լոկ անմիջական արձագանք եր Ցանկովի և Վոլկովի տերրորին, նա հետևանք եր կառավարության ձեռքով որը ցերեկով կաղմակերպած սարսափիների, սպանությունների և մի շարք մահափորձերի *):

*) Մեզ հաղորդեցին 1925 թ. ապրիլի 16-ից յերկու ամիս հետո մի քանի յերկորդ սատիճանի դպրոցներում անց կացրած անկետաների արդյունքը, Ծակերտության $70^{\circ}/\text{o}$ պայթյունին գեմ և արտահայտվել, $20^{\circ}/\text{o}$ հայտարարել և, թե «մտհափորձն արժանի պա-

Յես բուլղարական լիազոր նախարար և արտաքին գործոց նախարարության գլխավոր քարտուղար Կիսիմովին հարց տվի կոմմունիստների մասնակցության և դրա անմիջական հետևանքը կազմող ապացույցների մասին: Նա ինձ ընդունեց բացակայող արտաքին գործոց նախարարի առանձնասահնյակում: Հաշվի առնելով Սոֆիայում և Բուխարեստում մեր քննութան հանած աղմուկը, չեմ կասկածում, վոր Կիսիմովը և Տատարեսկուն ինձ վերջնական ապացույցներ կտային, յեթե միայն այդպիսիք գոյություն ունենային:

տասխան եր սպեկույյանատներին, վաշխառուներին, շահագործողներին և ժողովրդի դահճներին»: 10%/₀ պատասխանել ե, թե «մահափորձը վայրագություն ե, բայց նրան մասնակցողներն ազնիվ զգացմունքներով են առաջնորդվել»: Մեզ ուզում են հավատացնել, թե պայթյունին նախորդել եր հանգստություն և քաղաքական անդորրություն: Բնավ այդպիս չեր: Վերցնենք, որինակ, նախընթաց մարտ ամսվա հաշվեհարդարը:

Մարտի 12-ին ձերբակալվել են Բերկովեցում 40, Ֆերդինանդովում—20 հոգի, վորից 12 կին. 16-ին փորձեցին մակեեռնացի ֆեղերալիստ Աթանասովին սպանել, 18-ին Բերկովեցում սպանվեց լիցեյիստ Զերնեց: Մարտի 20-ին վոստիկանությունը ձերբակալեց՝ Շումլայում 300, Ստարա-Զագորում 150, Ռուսասում 60, Սելեսում 50, Ֆիլպպովում (Պլովդիվ)⁴ 40 մարդ, Սլիվենում 12 յերիտասարդ ուսանողներ, Սոֆիայում 30, Սամոկովում 60, Վարնայում 40 մարդ և այլն:

22-ին Յելինում սպանվել է մի կոմմունիստ. 23-ին սպանվել են—Խրաստովը՝ Սամոկովում և ուսուցիչ Դորոսևը՝ Սոֆիայում. 25-ին Սոֆիայում վոստիկանությունն սպանել ե ուսանող Սիմոնովին, 23-ին վոստիկանական գնդակներից ընկել են՝ Ռուսասում Գալչանովը և Պիսկովան. 29-ին մասսայական բանտարկություններ են տեղի ունեցել Սոֆիայում, սպանված են 2 կոմմունիստ: 30-ին ամբողջ Բուլղարիայում մասսայական ձերբակալություններ են տեղի ունեցել:

Բայց կիսիմովի հայտարարությունները շատ եյին անորոշ: Նա ինձ ներկայացրեց իր միակ, բավական թույլ ապացույցը. «Մի քանի մարդ սկզբում փող չունեյին, բայց հետո փողատեր դարձան. պարզ է, վոր Մոսկվայից ստացան»: Յես հաստատում եմ, վոր Բուլղարիայի արտաքին գործերի նախարարի ոգնականը կոմմունիստների հանցավորության մասին ուրիշ վոչինչ չի ասել ինձ: Յեթե, խիստ ասած, կարելի յե ընդունել ժամհար Զագորակու մեղսակցությունը պայթունին, գոնե դատապարտվածներից մյուս յերկուսը — Կոյկը՝ ամենայն հավանականությամբ, Ֆրիդմանը՝ հաստատապես հանցավոր չեն: Մարկո Ֆրիդմանի դեմ ամենաթույլ կառկածներ անգամ չկան: Նա չդադարեց իր անմեղությունը պնդել մինչև վերջին ըովեհն, յերբ դահիճ-գնչուն հիսուն հազար հանդիսատեսների աչքի առաջ ողակը նրա վիզն եր գցում, յերբ լուսանկարչական և կինոյի ապարատներն եյին ուղղված դեպի նա: Բայց և ամենքն ել լավ են հիշում, թե ինչ անորինակ վոստիկանական արյուն-հեղություն հաջորդեց ապրիլ 16-ի մահափորձին: Հենց մահափորձի որը շատ մարդիկ բանտ նետվեցին՝ վաղորոք պատրաստած ցուցակներով: Պայթյունից յերկու ժամ հետո՝ կենտրոնական վոստիկանական վարչության բանտարկյաները միջնապատի յետևից լսեցին տանջվողների աղաղակները, հետո յել կենտրոնական վառարաններից զգալի յեղավ մարդկային մարմնի ճենճերահոտ: Յես անձամբ խոսել եմ այդ բանտարկյաներից մեկի հետ և այնպիսի մանրամասնություններ իմացել վոր յերեակայել անգամ չի կարելի: Ապրիլի 16-ից հետո բանտերը լեփ - լեցուն եյին, ոգտագործվեցին

նաև գորանոցները, դպրոցները, նույն իսկ մասնավոր աները*):

Կառավարությունը տեղեկացրեց ապրիլի 15-ին սպասվող կոմմունիստական դատավարության մասին և այս անգամ զինվեց «փաստաթղթով»: Բայց այս «գաղտնի շրջաբերականը» ակներե կեղծիք է**):

*) Մոռ ժամանակներս Ստ. Կոստուրկովը, վորի հետ ծանոթացած Սոֆիայում և տուիթ ունեցած մի քանի անգամ զրուցելու, մի գեմք, վորի կարգին լինելու վերաբերմամբ վոչ վոք չի կարող կառկածել, բուլղարական արմատականների կոնգրեսում արտասանած իր ճառում հիշեցրեց այն աջակցության մասին, վոր արմատականները ապրիլի 16-ի սարսափնիքից հետո՝ ցույց տվին կառավարությանը, նա այնելացրեց. «Այս գեղքերն ինձ սարսափելի կերպով հուզում են, Անհամար մարդ կորավ անդաստ-անդատաստան: Ո՞ւր կորան այդ որերամ բանաբարկված հաղարավոր բուլղար քաղաքացիները: Չե՛ վոր նրանք իշխանությունների ձեռքումն ելին. ի մեծ ամսոթ մեր՝ բարբարոսությունը մեզանում քաղաքականության իրավունք ստացած, նախատինքով ծածկել ե Բուլղարիան. այդ գեղքերը պատմությունը չի մոռանաւ: Մարդկությունն այնքան ել հեշտ չի ների այն գոճիքները, վարոնց հեղինակը վոչ թե բուլղար ժողովուրդն ե, այլ նրա կառավարությունը»:

**) Մի ամբողջ զլուկա կարելի յե զրել կեղծ փաստաթղթերի ֆարբեկացիայի, թղթի բանդիտիզմի մասին, վոր կերպին տարիները յելքուղական խօսքը կենտրոններում, նույն իսկ Սոֆիայում, զարգացել ե և ուղղված ե հատկապես Ռուսաստանի դեմ: Հատուկ վոստիկանական և լրտեսական շրջաններում բազմաթիվ բաղդախնդիրներ են ծնունդ առել, վորոնք իրենց նվիրել են «սենատցիոն փաստաթղթերի» և այդ «փաստաթղթերը» վոսկու քաշով վաճառում են պետություններին, վորովես «ապացույցներ» Ռուսաստանի դեմ: Խնդը Զեմբերելինը 1924 թ. համայնքների պալատում ընդունեց, վոր կեղծ դիալոգատախական փաստաթղթերի բազմաթիվ ֆարբեկանաներ կան: Այդ անձինք աշքի յեն ընկնում մեծ տխմա-

Ինչ վերաբերում և Յորիս արքայի մահափորձին, դա կոմմունիստների համար միանդամայն անհասկանալի յեր։ Ըստ յերեւոյթին այդ ել պիտի ուշ'տրացանկիստներին կամ ուղղակի ցանկիստներին վերագրել։ Պիտի նկատի ունենալ, վոր տաճարի պայթյունից հետո՝ կոմմունիստներն իրենց շատ հանդիսա եյին պահում։ Նրանք վոչ միայն վորեւ միջոցի չղիմեցին՝ առաջացած իրարանցումն ուղտագործելու, այլ և պասսիվ մնացին նույն իսկ իրենց նկատմամբ ձեռք առած դաժանությունների ժամանակ։ Թույլ եմ տալիս այս կետի վրա ավելի մանրամասն կանգ առնել՝ ընավ նպատակ չունենալով նախորդ ստանձնած պարտականություններից շեղվելու վորեւ նկատառումով։ Յիս կամենում եմ աղնըվորեն և ոլարդ կերպով նկարագրել այն դրություն-

ըությամբ։ Վերջին հաշվով այդ փաստաթղթերի կեղծ լինելը հրապարակ և զալիս։ Սակայն վորոշ պայմաններում նրանք խիստ կարենու հետևանքներ են ունենում։ Իրերը մեկին ճիշտ ըմբռնելու անկարսող ամբոխի առաջին տպավորությունն այնքան մեծ և լինում, վոր լիովին համապատասխանում ե վերին խավերի նպատակին։ Հերքումը սովորաբար շատ և ուշանում Ճիշտ չեն ասում միթի «Սիվիլիայի սափրիչ» - ի Գոն - Բաղիլիսն, թե «զբարարությունից այնուամենայինիվ մի բան մնում է»։ Մանավանդ վոր՝ կառավարությունները զանազան նկատառությունով չեն խոստովանում, թե իրենք ավել կամ պակաս չափով խաբերայության զոհ են դարձել ։ Հիշենք 1918 թ. ամերիկյան լրագրերում տպած կեղծ փաստաթղթերի մեծագորդ պատմությունը, լենինն ու Տրոցկին այդ փաստաթղթերում, ներկայանում եյին վորպես գերմանական ազենտներ։ Այդ փաստաթղթերի կեղծ լինելը հասկացել եր կարմիր խաչի նախագահ գնդապետ Ռոբինսոնը, վորին առաջարկել եյին գնել ալդ թղթերից։ Վերջ ի վերջո նրանք ընկան վոմն պակաս բարեխիղճ եղարդ Սիսոնի ձեռքը, վորը այդ թղթերն ամուր բռնել ու հրա-

ները, վորոնց յես կողմնակից եմ: Նորից եմ ընդգծում —կոմմունիստական պրոպագանդը տարածվում ե վողջ աշխարհում: Նրա նպատակն ե — քաղաքի և գյուղի աշխատավորների գիտակցության մեջ արմատացնել հասարակության խոր վերանորոգման պլանը: Այդ վերանորոգումը հիմնված ե ընդհանուր հավասարության, բացառապես արտադրական աշխատանքի տիրապետության և հասարակության սահմանները մինչև ամբողջ աշխարհի ծայրերն ընդարձակելու վրա: Կոմմունիստները ձգտում են տարածել իրենց ուսմունքը ճնշվածների մեջ և կազմակերպել նրանց: Բայց, կրկնում եմ, այստեղ դիսկուսիայի տեղը չի: Կարելի յետեղ միայն, վոր այս դրություններն են կազմում կուսակցության «Ժրագիրը»: Թեորիապես նա ավելի ավերիչ չե մյուս կուսակցությունների ծրագրերից, վորոնք աշխատում են

տարակել եր: Այժմ նրանց ճշտությանը վոչ վոք չի հավասար, բայց յեղածն յեղագի Հիշենք «Ձինովկի» նամակը, վորի հրապարակումն ահագին ազդեցություն ունեցավ անգլիական ընտրությունների վրա և քիչ եր մնում իզեր քաղաքական հարաբերությունները Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի միջև:

Ա. Ռակովսկու մտացածին նամակը, վորը՝ գյուղացիական կուսակցությունը և Ռակովսկուն վարկարեկվելու նպատակով՝ Ռումինիայում հրատարակվեց, կազմել ե հոչակավոր միջազգային լրտես Ռոչչեկո-Բիզոնը, վոր փոթորկալից կարիերայից հետո մասնագիտացել ե նման «ապրանք» պատրաստելու մեջ և նույնիսկ հատուկ շտաբ ուներ: Բերլինի վոստիկանությունը գրավել ե կեղծիքներ պատրաստելու մեջ վոչ պակաս հայտնի Դրուժելովուց կեղծ բլանկների, կնիքների, գրոշմների մի ամբողջ ժողովածու, վորոնք պատրաստված են յեղել՝ Անգլիայում, Լեհաստանում, Ռուլղարիայում շրջանառություն ունեցող մեծաքանակ «գրականության» խորհրդագային ծագումը հաստատելու նպատակով: Նման լաբարատորիա-

կյանքի մեջ կիրառել իրենցը՝ մյուս ծրագրերին և դոյություն ունեցող որենքներին հակադիր։ Հեղափոխությունը միայն միջոց ե՝ իրագործելու այն իրավակարգը, վորը համապատասխանում ե մի վորոշ վարդապետության, բայց այդ վարդապետությունն ինքնին բռնության տանող կոչ չե։ Ընդհակառակը, նա իր կողմանակիցներին ավելի հաջորդական, հասարակության պահանջներին ու շարժիչ ուժերին ավելի համապտասխան ե թվում։ Գոյություն ունեցող պետական կարգի դեմ պայքարի սաղմը վորոշ չափով բոլոր կուսակցություններին և հատուկ, և կուսակցական ծրագիրն իրականացնելու համար միջոցների ոգտագործումը վոչ թե սկզբունքային, այլ լոկ տաքտիկական խնդիր ե։

Տարորինակ ե, վոր քաղաքացիական կովի շնորհիվ, այլ և շնորհիվ այն հանգամանքի, վոր զինվորներն ու

ներ հայտարերված են Վեննայում՝ Յակուբովիչի մոտ, Լոնդոնում՝ Սինգլետոնի մոտ, Զինաստանում՝ Կեդրովիվանսկու մոտ։ Իմ վերը հիշած փաստաթուղթը Յանկովը հայտարարեց ժողովարանում։ Նա պիտի արդարացներ կատարված բոլոր գաղանությունները և ստանար Անտանտայի համաձայնությունը՝ բոլղարական զորքն ավելացնելու։ Թա ռումինական, լեհական, չեխո-սլավակյան և բալկանյան կոմմունիստների միացյալ յելույթի նախագիծ ե։ Հեղինակը Դրուժելովսկին եր։ Այդ յերեսում և կնիքներից և խորհրդանշաններից,

Նույնպիսի վստահության և արժանի Սոֆիայում տպվող ֆրանսերեն «Բուլղարկա» և փարիզյան «Jurgal» լրագրերում տպված մի փաստաթղթի լուսանկարը, Նույնը պիտի ասել նաև այն կեղծ թղթի մասին, վորն իրեկ թե ընկել ե ռումինական պահնորդական բաժնի ձեռքը, յեթե ինարկե հավատանք կառավարական «Vittorius» թերթին։ Նրանից յերեսում ե, վոր իրը թե Ռումինիայում մզգող հակասեմիտական պրոպագանդը ԱՌ ինտերնացիոնալի ոգտին ե...

վոստիկանները նախաբարությունների մեջ են սպրդել, կյանք են առել այդ կառավարությունները, վորոնք ձգտում են ամենաղաժաման հակահեղափոխական միջոցներով գալիք հեղափոխությունը կասեցնել, կոմմունիստական թեորիան հայտարարել կորստարեր ու հակառինական և մեղադրել կոմմունիստական կուսակցությունը, վորն իր թե ձգտում և պերմանենա դավադրության նման մի բան ստեղծել: Ինչ ել լինի, դավադրությունների և վոճրագործությունների լեզենդայի այս Փարբիկացիան, վոր Փաշիստական կառավարություններին անհրաժեշտ ե՝ իրենց ամենից անընկելի քաղաքական հակառակորդին վարկարեկելու և հաղթելու համար, ամենանողկալի տպավորությունն ե թողնում: Ահոելի թիվ կազմող զոհերով սպանություններ են կատարվում, աճում և ֆանտաստիք գաղանությունների թիվը, ստի ու կեղծիքի միջոցով գյուղացիներին և բանվորներին զրկում են իրենց լավագույն պաշտպաններից, աճում են հեկատոմբները, բայց և ամրանում ե գաղափարը, ուռճանում ցասումը: Հայտնի յե, վոր հալածանքը հետևողների թիվն ե բազմացնում: Ովքեր յերեկ հեղափոխական չեյին, այսոր այդպիսին են: Ինձ դեպքեր են պատմել, յերբ քաղաքականությունից հեռու կանգնած մարդիկ առանց պատճառի բանտարկվել և բանտից դուրս են յեկել կոմմունիստ դարձած: Աքսորները բոլցեկզմով արդարացնող իշխանությունները միայն բոլցեկզմի զարգացմանն են նպաստում: Այլ կերպ լինել չի կարող: Հիշում եմ, թե կոստանդնուպոլսում մի բուլղար գաղթական ինչ վոգենորությամբ երխոսում ինձ հետ.

— Նրանք մեղ մինչև վերջին մարդը կոտորել չեն կարող. նշանակում են նրանք կորած են: Մի քանի մարդ միշտ կմնան, դրանք ել միյուսներին վոտքի կհանեն:

Կենդանի մնացածների այգորինակ հավաստը կոփ-ված եւ տառապանքով: Նա հարվածներից ել ուժեղ եւ Սոսկալի յե նրանց հույսը:

VII. ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԱԼ- ԿԱՆՆԵՐՈՒՄ

Բալկանյան թերակղղին հանդիսանում է մի վայր մշտական յերկպառակությունների, վորնց հիմքը աղ- դային փոքրամասնությունների խնդիրն և 1914 թ. պատերազմի հետևանք կազմող պայմանագրերը, վորոնք դանազան պետությունների սահմաններն ուղղությունների յենթարկեցին, ամբողջ գավառներ այլ կերպ ձևեցին՝ հոգուտ մեկի և ի մաս մյուսի, այդպիսով այդ գավառ- ները միմյանց հետ մրցող անվերջ պահանջների և բռնի «ապազգայնացման» որյեկտ դարձրին։ Այս անդամա- հատված գավառներից շատերը մի աշխարհագրական ամբողջություն և կուլտուրայով ու ավանդություններով միատեսակ միավորներ են ներկայացնում։

Մի կողմ թողնելով տարբեր պետությունների հա- կամարտությունն այս գավառների համար, մենք նշենք այդ անդամահատության շնորհիվ հենց այդ գավառ- ների ներսում առաջացած անկայուն վիճակը, ազատ- վելու խրոնիքական փորձերը և նոր իշխանությունների հետ ունեցած մշտական կոնֆլիկտները։ Տերրիտորյալ վորս ձեռք բերած բալկանյան հաղթող յերկրների կա- ռավարությունները այս ամենին հրով ու սրով են պատասխանում և աշխատում են ազգային ինքնաճա- նաչությունը թուլացնել որենսդրական բարելավում- ներով։

Նման ըեժիմը սովորաբար յերկար չի տևում: Համաշխարհային պատերազմի հաջող յելքը՝ Բուլղարիայի, Ավստրիայի և Տաճկաստանի ջախջախումից հետո՝ հազիվ 3.000.000 բնակչություն ունեցող Սերբիային դարձրեց մոտ 14.000.000 ժողովրդ ունեցող Հարավ-Սլավիա: Բացի Մակեդոնիայի կիսից, նրան միացրին նաև Խրոպտիան, Սլովենիան և Չեռնագորիան:

Այս գավառներից ամենահարուստը և ավելի զարգացածը Խրոպտիան եր («ընդհանուր կարծիքով, — գրում եր Նեմանովը, — այս գավառներն ուսումնասիրելու նպատակով արած շրջադայությունից հետո՝ 1923 թ. տպած իր հոդվածում, նախկին ավստրիական իշխանությունները բնակչության նկատմամբ համեմատաբար ավելի կորրեկտ եյին, քաղաքավարի և մատչելի: Նրանք ավելի որինավոր եյին վարվում: Փոխանակ այդ գավառների վերաբերմամբ խնայող ու խելացի լինելու, սերբերը նրանց հետ վարվեցին վորպես նվաճած յերկրների հետ և, վոչ մի բան հաշվի չառնելով, սկսեցին վոտնահարել նրանց տմենաթանկագին տրադիցիաները (սլովենները կաթոլիկ են, բոսնյակները՝ մահմեդական): Սերբական այսպես կոչված Վիդովդնյան սահմանադրությունը կառավարելու ձեփ մեջ արագ ու պարզ կենտրոնացում մտցրեց, վորի ամբողջ մեխանիզմը և իրագործելու միջոցները բերվեցին հին Սերբիայից և Բելգրադից: Անսեկլսիայից հետո գրալկանյան մեթոդներից կիրառումն սկսվեց, յերկրամասերում նենգամիտ, կոպիտ ու նեխված սատրապներ նշանակվեցին և մեկեն ի մեկ ըմբռատացրին իրենց գեմ տերերից ել ավելի խողաղասեր ու մարդավայել ազգություններին:

Խրոատ սլավինո-բռանիական ըլոկի առաջնորդ Ստեփան Բաղիչն այդ ժամանակ ասում էր.

— Մենք հասարակապետականներ ու ֆեղերալիստներ ենք, իսկ սերբերը՝ միապետականներ ու կենտրոնացման կողմանակիցներ։ Մենք աարբեր հոգեբանություն, տարրեր պատմություն և տարբեր սովորույթներ ունենք։ Մենք միշտ յեղիլ ենք Յեվրոպայի շարունակությունը զեղի Արևելք, յեվրոպական քաղաքակրթության ասածապահնը, իսկ այժմ մեղ ուզում են դարձնել Արևելքի շարունակությունը զեղի արևմուտք, բարկանյան հետամնացության վերջապահնը։ «Պայքար սերբական կենտրոնացման զեմք (հանձին Պաշիչի) պլատֆորմայի վրա կայացած ընտբությունները 310 ձայնից 108-ը տվին Պաշիչին։ Բոլոր նոր միացրած շրջաններում ֆեղերալիստները փայլուն հաղթանակ տարան, և Բաղիչին 114 ձայն վիճակվեց։

Բաղիչի անձի մեջ մարմնացած ձգտումների հիմքը Հարավ-Սլավիան ֆեղերատիվ սկզբանքներով վերակառւցելու զաղափարը և նրա բոլոր բաղկացուցիչ մասերին, ուրեմն նաև հին Սերբիային, ընդհանուր կառավարական ապարատում հավասար տեղ տալն եր։

«Մենք ցանկանում ենք, վոր Հարավ-Սլավիան պետությունը վոչ թե բանտ, այլ մեր տունը լինի», ասում եր Բաղիչը։ Բայց հետագայում հաշտվեց Պաշիչի հետև, սեփական համոզմունքներից հրաժարվելուն համազոր զիջումների գնով, մտավ կենտրոնական կառավարության մեջ։ Համաշխարհային պատերազմի շնորհիվ Ռումինիան կրկնապատկեց իր տերրիտորիան և բնակչությունը։ Նոր շրջանների մի ամբողջ շարք ե պատում

հին Ռումենիայի միջուկը. — Դոբրուջա, Բեսսարաբիա, Բուլգարիա, Տրանսիլվանիա, Բանատ: Ներկայումս Ռումինիայի բնակչության մեկ յերրորդը վոչ-ռումիններ են: Բացի այդ, նա փակ-տղատերազմական գրության մեջ և գլխավորապես Վենգրիայի և Ռուսաստանի հետ: Պատերազմի շնորհիվ ձեռք բերած հողամասերը նա աշխատում ե իրեն ամրացնել՝ զինվորական ոկլուպացիայի, ազգաբնակությունն աքսորելու, հուզումները դաժանորեն ճնշելու, դարավոր սովորություններն արմատախիլ անելու և դպրոցները փակելու միջոցով:

Կառավարության մշակած որինագիծը վոչ-ռումիններին արգելում և դպրոցներում մայրենի լեզվի դադարանդումը: Բուլգարիայում 160,000 յերեխաներ զրկված են սովորելու հնարավորությունից: Զերնովիցի համալսարան չեն ընդունում նույն իսկ րումիններն իմացողներին: Չորս պրոֆեսսիոնալ դպրոցներ փակվեցին միմիայն նրա համար, վոր հիմնողներն ուկրայինցիներ եյին: Հրամանի համաձայն՝ յերկաթուղիներում, դատարաններում և հիմնարկություններում կերպավողը միայն բումինընն ե, վոր բնակչության 68% չդիտել:

Լուծարքի յե ենթարկված տեղական ինքնավարության ազատությունը: Կենտրոնական կառավարության նշանակած պաշտոնյաները փոխարինել են քաղաքային ինքնավարություններին: Վերականգնած են կոռը, ինքնակամ բռնագրավումներն ու ռազմատուգանքները: Սահմանագլուխների մոտ ժանդարմները՝ կոնդրաբանդայի դեմ պայքարի պատրվակով կողովտում են առե-

տրականներին ու գյուղացիներին։ Ոկլուպացիայի որից մինչեւ այսոր պաշարողական դրությունը դեռ չի վերացված։ Բանվորների աշխատավարձը նախապատերազմյանի միայն 40 տոկոսն եւ Հետամնաց կարպատյան գյուղերում ֆիզիքական պատիժը դեռ գոյություն ունի։ Կարիքն ու վրհժի ծարավը խաղաղ բնակիչներին դեպի ավագակություն են մղում։

Նույն Բուկովինայում ագրարային բարեփոխումը վերածվեց գաղութացման և տեղական ազգաբնակության բռնի տեղահանության։ Այդ յերկիրը գրավելուց հետո բռնին տերերը, հակառակ 1919 թ. հանդիսավոր կերպով արտահայտված Բուկովինայի կամքի, իրենց պարտքը համարեցին ամբողջ շրջանից արմատախիլ անել վոչ միայն նրա լեզուն ու «վոգին», այլ և հալածանքի միջոցով մաքրել հարազատ բնակչությունից և դատարկված հողերն իրենց ագենտներին բաժանել։

Դորրուջայից, վոր մի ժամանակ Բուլղարիային եր պատկանում, 35,000 հոգի ստիպված յեղան հեռանալ։ Ինչպես յերկում ե՝ կենտրոնական իշխանությունը դիտմամբ փորձում ե դանդաղեցնել այս շրջանի տընտեսական և կուլտուրական զարգացումը։ Դարրոցական շենքերը գրավված են, բուլղարական գյուղական դըպրոցները փակված, տեղական լեզուն ամեն տեղից արտաքսված։ Զուլման այս միջոցներին ավելացել են նաև բնակչության կողոպտումը բռնին ծառայողների կողմից, կոռը ու դաժան յելութները, վորոնք գնալով կարծես դիտմամբ, բազմանում են, վորակեսզի բնակչությունը պրովոկացիայի յենթարկեն և լայնածավալ

խստություններն ու զինվորական բեժիքն արդարացնեն։ Դորբուջայի համար վերջերս մի համագումար կայացավ։ Տատարեսկույի նախագահությամբ, վոր Ռումինիայի ներքին գործոց փաստական նախարարն եւ Այդ համագումարը վորոշեց՝ սահմանապահ զորքն ու ժանդարմերիան ուժեղացնել, չետաների հարձակումների դեպքում փոխյերաշխավորում սահմանել։ Բացի այդ, վորոշված եւ կոմիտաժիների նկատմամբ ամենախիստ միջոցներ ձեռք առնել։ Հենց այս համագումարն ել մի քանի գաղտնի վորոշումներ եւ կայացրել։ Այդ վորոշումներն այնուամենայնիվ ցոլանում են այն հրամանի մեջ, վոր համագումարը փակելուց անմիջապես հետո տվավ Սիլիստրիայի պրեֆեկտ Տաշկու Պուչերեյան, 1924 թ. Ասֆակտեռի հինգ գյուղացիների սպանության հեղինակը։ Այդ հրամանում ասված եւ «Բանդիտ կամ կոմիտաժի սպանողը յուրաքանչյուր գլխի համար նվեր կտանա 10,000 լեյ»։

«Adeverge!» չափավոր թերթը հաղորդելով այս հրամանի մասին, բավական ճիշտ բնորոշում եւ «Ում ասես, իրավունք ի տրվում մարդ վորսալ, նրան բանդիտ անվանել, սպանել և դրա համար պարգև ստանալ։ Բավական եւ միայն մարդ վորսալու հաճույք ունեցողի բարեհայեցողությունը»։

Բալկանյան գործերը լավ հասկացող մարդիկ հաստատում են, վոր կոմիտաժիների վրա յեն ձգում ամենինչ, այլ և նրանց թիվը դիտավորյալ կերպով փքում են։

Ռումինական կառավարությունը փորձում է դրանով արդարացնել բռնի ձուլումը և գաղթեցնելու սիս-

տեմը, վոր աքսորի և տեղական բնակչությունը վո-
շընչացնելու վրա յե հիմնված։ Ով մնում է, նա ձրի
պիտի աշխատի յեկողների համար *):

Տ Ր Ա Ն Ս Ի Լ Վ Ա Ն Ի Ա

1925 թ. հունվարի 1-ին լրացավ 7 տարին այն
որից, յերբ վենգերական Տրանսիլվանիայի ռումինները
Ալբե Զուլիում վորոշեցին միանալ ռումինական թա-
գավորությանը։ Այս առթիվ տոնակատարություններ
տեղի ունեցան, քազմաթիվ ճառեր արտասանվեցին։
Տեսնենք՝ ինչ է թաքնված այդ ամենի մեջ։ Տրանսիլ-
վանիայում 1918 թվականին ժողովրդական հեղափո-
խական շարժում առաջ յեկավ, վոր ծագալվեց նաև
Վենգրիայի մասցած մասերում։ Տեղի ռումին մասր
բուրժուազիան յերկընտրանքի առաջ կանգնեց. — կամ
հաղթված վենգերների հետ միասին հեղափոխությանը
հարել, կամ յենթարկվել ռումինական զորքին, վոր
Անտանտայի Բալկանյան զորաբանակի ուժեղ պաշտ-
պանության տակ սկսել եր ներխուժել արևելքից։ Նը-
րանք նախապատվություն տվին ռումինական աննեկ-
սիային։ Տրանսիլվանիայի ռումինները միացան մի
շարք «դեմոկրատիկ» պայմաններով. բայց, ինչպես յե-
րևաց, այդ պայմանները հետզետե քիչ նկատի առ-
նըվեցին և ի վերջո մի կողմը թողնվեցին Ռումինիայի

*) 1926 թ. հունվարի 22-ին Կոնստանցայում լսվում եր 78 գյու-
ղացիների զործը։ Դրանց մեջ տաճիկներ ևս կային։ Նըրանց պա-
հեցին նախնական կալանքում 11 ամիս, հարկադրեցին վճարել բաղ-
մահատոր մեղադրական ակտի ծախսերը և այնպես ելին ծեծեր,
վոր մի քանիսի հագուստի ծվենները մտել ելին մսի մեջ։

կողմից, վորոն իր ոկկուպացիոն զորաբանակի վրա յեր հենվում: «Ազատագրված ոռոմին յեղբայրները» զըրկվեցին իրենց բոլոր ազատություններից:

Միացումը, ինչպես արտահայտել ե ոռոմինական նախակին պրեմյեր Վեյդա Վոյեվոդը, կատարվել ե յեղանների ողնությամբ: Տրանսիլվանյան ազգայնականներին այժմ մնում եր միայն «ճաշակել ոպպողիցիայի դառն պտուղը»:

Այն հայտարարությունից, վոր ի լուր ամենի արին Տրանսիլվանիայի ներկայացուցիչները պարլամենտում, յերեսում ե, վոր գյուղում աճում ե մահացությունը, վոր յերկրից հեռանում ե մասսայական եմիգրացիա: 530 հազար գյուղացիությունից ազրարական բարեփոխությունների շնորհիվ միայն 45 հազար հոգի հող ստացան: Տրանսիլվանիայի ուժեղ արդյունաբերությունն ընկնում ե. բանկերը բավական կրճատել են իրենց գործարքները (սպառման $10^0/0$), մինչդեռ ոռոմինական բանկերը խոշոր սուբսիդիա յեն ստանում: Այս հանգամանքը Բուխարեստի կապիտալիստներին հնարավորություն ե տալիս բոլոր գործերն իրենց ձեռքն առնել:

Ամեն տեղ գործազրկություն ե, գործ չկա: Մեժիցի հսկայական գործարանները, վորոնցում մոտ 8.000 մարդ եր աշխատում, 1200 հոգուց ավել չունեն: Գործազրկությունը կառուցողների թիվը $100^0/0$ ե, իսկ գործազրկությունը մետաղագործների տոկոսը 40-ից բարձրացել ե 50—60-ի: Ատաղձային արդյունագործության 40.000 բանվորներից 15.000 անգործ են: Ութժամյա աշխատանքային որ չկա: Ատաղձագործարաններում ժան-

դարմներն ստիպում են աշխատել որական 12 ժամ։ Փոխադարձ ոգնության հանձնաժողովը փոխադրված և Բուխարեստ։ Հանքագործների պարտքը (որավարձի հաշվին) բազմահազար եւ Ալկոհոլը և սովը ծաղկում, զարգանում են՝ ձեռք-ձեռքի տված։ Գինեաների թիվը Տրանսիլվանիայում, Բանատում և Բեսսարաբիայում 7 տարում աճել է 200 տոկոսով։ Դպրոցների $40 - 50\%$ փակված ե. Նրանց շենքերն, ինչպես նաև ժողովրդական տները, բռնագրավված են ու դինվորական պետքերին հատկացված։ Մոլեգնում է պաշարողական դրությունը՝ ձերբակալություններ, ընտրական տերրոր, ասպատակություններ...»

Տեղական ոռումին գյուղացիները դադիւականներից պակաս չեն առնելում, վորովհետև շարունակ գտնվում են վաշխառուների ճիրաններում։ Պատմում են, որինակ, վոր Սատումարսկի շրջանի գաղթականները, վորոնցով լիքն են զինվորական բարակները, մեծ մասամբ կոտորվում են համաճարակից, մնացածները՝ փախչում։

Վենգրիայում 150.000 տրանսիլվանյան գաղթական կա, վորոնք վենգրիայի զինվորական դիկտատուրան և տնտեսական ճգնաժաննը գերադասեցին ոռումինական տերրորից։ Ծառայողները, ուսուցիչները, պաշտոնյաները, դատավորները վենգրահպատակ դարձան և ապրում են վագոններում։

ԲԵՍՍԱՐԱԲԻԱՆ ԼԾԻ ՏԱԿ

Բեսսարաբիան, վոր առաջ ոռուսական պետության մի մասն եր, Անտանտան այժմ զիջել է Ռումինիային։ Ռուսական հողամասի այս միակողմանի աննեկսիան՝

առանց համաձայնության Ռուսաստանի, վորը Ռումինիայի հետ պատերազմական դրության մեջ չեր, ժամանակակից պատմության մեջ իր կամայականությամբ նմանը չունեցող մի ակտ եւ Ռումին քաղաքական գործիչներն ու հայրենասերները, ինչպես դոկտ. Լուպուն, պնդում եյին, թե Բեսսարաբիայի բնակչությունն ամբողջապես մոլդավո-ռումինական եւ Բայց և այնպես նրանք ել են գտնում, վոր դաշնակիցներն իրենց իրավունքներից վեր բան արին։ Ստեղծված դրությունը կարգավորելու համար՝ անվայման անհրաժեշտ եր Ռուսաստանի համաձայնությունը։ Խնչ ել լինի՝ «հակառակ սցումը» ամեն կերպ կիրառվում ե Բեսսարաբիայում։ Նրա հետ վարվում են, ինչպես մի խոռվարար գաղութի հետ։ Նրան արգելում են ոռւսերեն խոսել, պրովոկատորներն այնտեղ այսպես կոչված «ռուսական կոմիտեներ» են կազմում։ Սպանությունները մասսական բնույթ են կրում։ Տատարեսկուն խոստովանել ե Կոստա Ֆորուին, թե Բեսսարաբիայում, հիրավի, շատ արյուն ե թափել, բայց «այդպես ել պետք եր»։

Գյուղացիական որգան «Tsaranismul»-ի ասելով՝ ըումինական ոկկուպացիոն զորքերը Բեսսարաբիայում 1918—1925 թ. 18,833 մարդ են կոտորել (3000—1918 թվականին, 11,000 Խոտինի ապստամբության ժամանակ՝ 1919 թվին և 2000՝ Թաթարբունարում—1924 թ.)։ Բեսսարաբիայի ըումինացումն այնտեղ աննկարագրելի չքավորություն ե ստեղծել։ Ցեղեմնի այդ ծաղկած ու կենդանի հարթություններն այժմ անապատի յեն նման, վորոնք կարծես աշխարհի ստեղծագործության որից չեն մշակվել։ Վերջերս այդ տեղերով անցնող ճանա-

պարհորդների տված տեղեկությունների համաձայն՝
ամեն ինչ չափաղանց անմիտիքար տպավորություն և
թողնում։ Թուլության, անընդունակության, թե այլ
պատճառներով կենտրոնական իշխանությունը՝ Բեսսա-
րարիայի չքավորությունը մեղմելու համար՝ շատ քիչ
բան և անում։ Հետագայում կտանք Բեսսարարիայի
ներկա դրության առանձին վերլուծությունը։

ՄԱԿԵԴՈՆԱԿԱՆ ՀԱՐՑ

Սա մի կատարյալ վերք և Բալկանների սրախն։
Հնդարձակ Մակեդոնիան բազմաթիվ պատմական դա-
րերի ընթացքում մաս մաս և յեղել Այդ հանգամանքը
բղխել և շրջապատող ժողովուրդների տարած հաղթու-
թյուններից ու կրած սլարտություններից։

1913 թ. հունաց թագավոր Կոստանդինը, նպատակ
ունենալով ուժեղացնել հելլենական ազգեցությունը
հարավյախն Մակեդոնիայում, ուր հույները բնակչու-
թյան մեկ տասներորդից ավելի չեն, այրեց 161 բուլ-
ղարական գյուղ՝ 16,000 աներով և 70,000 բնակիչնե-
րով։ Խաղաղություն կնքելուց հետո բոլոր բուլղարա-
կան յեկեղեցիներն (378) ու 340 դպրոցները, ուր
19,000 յերեխա յեր սովորում, հունական իշխանու-
թյունները գրավեցին և 300 քահանա ու 750 ուսուցիչ
վտարեցին հայրենիքից։ Նույն վիճակին յենթարկվե-
ցին նաև բումինական տաճարներն ու դպրոցները։

Հերոսական եր այն կոփվը, վոր 1897 թ. մինչև
1912 թվականը մղում եր Մակեդոնական Հեղափոխա-
կան Կազմակերպությունը՝ Մակեդոնիան տաճկական
լծից աղատելու համար։ Բայց առաջին բալկանյան

պատերազմից հետո Բուլղարիան, Սերբիան և Հունաստանը խոշոր սխալ գործեցին՝ Մակեդոնիան իրենց մեջ բաժանելով։

Յերկրորդ բալկանյան պատերազմի հաշվեհարդարի ժամանակ պարտված Բուլղարիան համարյա հեռացվեց բաժանանը մասնակցելուց։ Համաշխարհային պատերազմից հետո, վորին Բուլղարիան մասնակցեց այն հուսով, թե Ռումինիայից Դորրուջան և Սերբիայից Մակեդոնիան հետ կխլի, ստիպված յեղավ վերջնականապես հրաժարվել իր հավակնություններից՝ հոգուտ Հունաստանի և Սերբիայի։ Հիշենք, վոր Նեյի պայմանագրով Մակեդոնիան յերեք անհավասար մասի յեր բաժանվել. մինն անցել եր Հարավ Սլավիային, համարյա նունչափ ել Հունաստանին, իսկ մնացածը՝ Պետրիչն իր շրջակայքով՝ Բուլղարիային։

Հստ որինի մեմ պիտի պատկաներ Մակեդոնիան։ Մենք հարցն այսպես դնելուց հրաժարվում ենք, վորովհետեւ այդ ձեռվ նա պնդուծելի յեւ Մակեդոնիայի բասին շատ ե խոսվել, այն ել տարբեր ձեռվ։ Ավելի ճիշտ՝ բուլղարական ազգային լեզու ունեցող այս յերկիրը մակեդոնական ե և առաջին հերթին նա աշխատում ե վերականգնել իր միասնականությունը։

Մանրացնելու, զինվորական դիկտատուրայի և խըստությունների միջոցով առաջ տարվող ձուլումը տրամարանորեն կյանքի կոչեց, ինչպես նաև տաճիկների որոք, Մակեդոնական Հեղափոխական կազմակերպությունը։ Տերրորի դեմ տերրոր—այս ե բռնի բաժանումների և կենտրոնացման հետևանքը։ Մակեդոնացիների դիմ սկսեցին կիրառել սերբական ռակտության

ապահովության» որենքը։ Հազարներով ապստամբներ ու միայն կասկածով բանտարկվածներ լցրին բանտերը։ Գյուղերը հարկադրված յեղան զորքը բնակարաններում տեղափորել ու ծախսերը կրել, ամեն տեղ սկըսեցին պատանդներ վերցնել։ Խսկական տրտաքսումն սկսվեց գյուղերից, ինչպես որինակ՝ Ստրումնոյից՝ 1924 թվականին։ Յերրեմն գյուղերի բնակչության կեսն եյին վոչնչացնում։ Մյուսները սարսափահար թողնում եյին սեփական հարկը։ Այս փաստերի մասին տեղեկություն տվող թերթերը փակվեցին. պետության ապահովությունը կարող եր վտանգվել։ «Ապազգայնացումն» այստեղ ել եր կիրառվում՝ բռնի կերպով մայրենի լեզուն վտարելու և գաղանաբարո խստությունների միջոցով։ Վորոշ գրակոնական պայմաններով ազգային դպրոցներ թույլ տվող դեկրետ հրապարակելով, հույները ծիծաղաշարժ այրուքին հնարեցին. այդ այրուքինը յես տեսել եմ. նա բուղարերենի ու հունարենի խառնուրդ ե՝ լատինական տարերով։

Ուսուցիչներին ստիպում են այդ այրուքենն ուժով մտցնել յերեխանների գլուխությունը։ Հանախ մակեդոնացիների աքսորը ապստամբությունների կամ հուղումների հետեւանք չեր հանդիսանում, այլ արդյունք եր Փոքր Ասիայից յեկող հույնների համար տեղ պատրաստելու սիստեմի։ Մակեդոնացիներն իրենց գյուղերում անտանելի պայմաններում լինելով, մասսայորեն գաղթում եյն Բուղարիա։ Վեցամյա պատերազմից ու յերեք պարտությունից աղքատացած և տարածությամբ ել անդամահատված Բուղարիան զգալի մեծ գաղթականություն ունի՝ Մակեդոնիայից և Թրակիայից յեկած։

Կոստուրկովի ասելով՝ դրանց թիվը 400,000 և, իսկ մակեղոնական կոմիտետի նախագահն ինձ հավասարցնում էր, թէ 500 000 և, Տնտեսական տակնուվրայությունը, վոր խոպառ քար ու քանդ յեղած մարդկանց մի տեղ կուտակվելու հետեանք և, լուրջ կերպով սպառնում և բուլղարիայի զարգացմանն ու ներքին հավասարակշռությանը. լրագրական տեղեկություններով 320,000 գաղթական կարուտ են ոգնության. գրանցից 70,000 (վորից 20,000 յերեխա) կատարյալ մուրացկաններ են. Բալկանյան ձմեռն իր 18-20 աստիճանի սառնամանիքներով սրանց և գտնում Սվելենդրադի փայտե տաղափարների բարակ սպատերից. Այստեղից ել սկսվում և այս տարագիրների առաջին տառապանքը:

Ուրիշ տեղերում, որինակ՝ Սև ծովի ափերին, 40,000 գաղթական չեն կարողանում իրենց համար անհրաժեշտ բանվորական գործիքներ գնել: Դրանցից 15,000-ը հյուղակներում են ապրում, իսկ 25,000-ը չունին. վոչ մի ապաստան: Նույնիսկ Վանդերվելդեն այս մասսայական եմիգրացիան «յեվրոպական խայտառակություն» անվանեց: Այս բառերը կրկնում են կյուսեն կրամերը կարմիր խաչի անդամը, վոր շրջել և ամբողջ Մակեդոնիան՝ իր ընկերության միստիայով:

Ցարիքրոգում, Բոսսիլեզրադում և բուլղարներից խըլած ուրիշ վայրերում նույն սարսափներն են տեղի ունենում, ինչ վոր սերբական Մակեդոնիայում: Ակրական կապիտան Ստանկովիչը հայտարարել և, թէ ինքը «սահմանները կփակի բուլղարների դիակներով»:

ՎԱՄԱՑԱՑԱԾ ԹՐԱԿԻԱՆ

Թրակիայում նույն և կտտարվում, ինչ վոր Մակեդոնիայում։ Զնայած, վոր նու մի ինքնուրույն աշխարհազրական միավոր և, այնուամենայնիվ համաշխարհային պատերազմից հետո հաղթող պետությունները նրան յերեք մասի բաժանեցին։ Արևմուտքը տվին Հունաստանին, արևելքը՝ Տաճկաստանին և սիայն մի փոքր մասը՝ Բուլղարիային։ Թրակիան, ինչպես նաև Մակեդոնիան, շատ խիտ բուլղար ազգաբնակություն ունի։ Յատեղ տարվող ձուլման քաղաքականությունը յերկիրն անապատ և դարձնում։

Հարավային Թրակիայում, ուր անհիշելի ժամանակներից ներխուժել են բուլղար հովիմները, և Ցեղեյան ծովի թրակիական նավահանգիստներում կյանքը մեռած և հենվելով «Կամավոր եմիզրացիայի դաշնագրություն» կոչված անհաջող պայմանագրի վրա, հույն իշխանությունները համարյա բոլոր բուլղարներին գուրս են քշել Թրակիայից։ 1922 թ. նրանք 2000 ընտանիք քշեցին ղեպի կղզիները, ուր 3000 հոգի մահացան։ Դաշնակից պետությունները հատուկ քննություն նշանակեցին՝ պարզելու հույն իշխանությունների արարքներն այստեղ։ Պարզվեց, վոր հույները կոտորում եյին միանգամայն անպարտ ու խաղաղ գյուղացիներին։ այդ մասսայական սպանությունները չեն պատճառաբանվել՝ վհչ բանդիտիզմով, վհչ ապստօմբություններով։ Բուրգասի շրջանում, ուր Թրակիայից 69 հազար գաղթական ներխուժեց, 21 հազարը մեռավ զրկանքներից։

ԶԵՐՆԱԳՈՐԻԱ

Պետությունների շարքից դուրս հանված Զերնազուրիան մինչև համաշխարհային պատերազմը անկախ պետություն եր, միջազգային իրավունքի սուբյեկտ: Ներկայումս նա լոկ Հարավ-Սլավիայի շրջաններից մեկն եւ ինչժամանակ Այս հափշտակությունն ավելի և տարրորինակ եւ թվում, քանի վոր Զերնագորիան պատերազմի հենց սկզբից գաշնակիցներին հարեց: Զերնագորյան բանակը մեծ զոհերի գնով եր վահանավորում 1916 թ. սերբական նահանջը:

Պուանկարեն, յեթե հիշողությունս ինձ չի դավաճանում, այսպես եր բնորոշում Զերնագորիան. «Մեր դաշնակիցներից փոքրագույնն ե, բայց ամենից արին»:

Զերնագորիան սկզբում մտցրին 1919 թ. խաղաղարար կոնֆերենցիային մասնակցողների ցանկը: Բայց հետո ցանկից հանեցին և, խղճուկ ու խայտառակ առուտուրից հետո, ավին Սերբիային: Սրա առաջին պատասխանատուն Ֆրանսիան ե, այնուհետև Իտալիան և Անգլիան: Ժողովրդական իրավունքի վերաբերմամբ կատարված բռնության այս ակտը մեր որերում այնքան հաճախակի տեղի ունեցող նման ակտերից ամենաղղվելին ե: Այդ ակտը բացատրվում ե չերնագորյան թագավորական տան անկումով, վորի բաղդը նենգորեն շփոթեցին այս ազատասեր հոգու տեր յերկրի բաղդի հետ:

Ինչպես յերեսում ե, այս բռնությունը հետևել եր ժողովրդական վորոշման ինսցենիրովկային: Վորոշողը այն ժողովն եր, վոր այդպիսի իրավունք չուներ և վորն

ընտրված եր սերբական զինվորական ոկլուտաց/այլ պայմաններում: Վորոշումն ընդունվել և սերբ զորքի ճշգման տակ, վոր գտնվում եր ֆրանսիական գեներալ Վենելի հրամանատարության տակ: Զերնագործիք դրան պատասխանեցին ապստամբությամբ, վոր պատճառ դարձավ մոլեգին վրեժինդրության — կողոպտվեց ու ավելվեց չերնագորական տնտեսությունների $95^{\circ}/\text{o}$ -ը, այրվեց 5000 տուն՝ միջի բոլոր բնակիչներով: Տղամարդիկ ու կանայք սարսափելի տանջանքների յինթարկվեցին: Կանանց վրա բաց եյին թողնում կատաղած կատուներ, յեղունգների տակ խրում եյին իշեր, կասկածելի համարվող սպաներին բռնոտում և այնքան եյին տանջում, վոր բժշկական դիազննությունը յերեվան եր բերում կոտրտած կողեր, ջարդած վողնաշարներ: Ճիշտում եյին հղի կանանց արգանդները և այլն... Ամրող յերկրում բազմաթիվ փոստ-քարտեր եյին տարածում վորս ներկայացնող նկարներով: — ազգային անկախության համար տառապողների շարաններ փոված եյին սերբ ջոկատների առաջ: Զերնագորիայի պահանջների նկատմամբ խուլ մնաց Ազգերի Լիգան, իր վարմունքը պատճառաբ մնելով, թե «վոչ վոքի իրավունք չի տրված այդ յերկրի ներկայացուցիչը լինելու» և թէ «անկարելի յե հաստատել՝ վորքան անկեղծ են չերնագորցիների արտահայտած կարծիքները» (Պոլ Մանտուի գեկուցումը):

1924 թվականի մայիսի 1-ին Ստեփան Բաղիչը և Բելգրադի պարլամենտի 70 խրոատական պատգամավորները չերնագորցիներին ուղղեցին մի կոչ, վորի մեջ ասված եր, «Մենք խրոատներս մեր գորականության

ամենագեղեցիկ եջերում Զերնագորիան կոչել ենք աղատության փառահեղ սեղան և տիյեղերքի ամենահրաշալի տաճար: Մենք ձեզ, չերնագորցիներիդ, համարել ենք վոչ միայն հերոսության իդեալ, այլ և շիտակության ու ազնվության անհասանելի որբինակ:

«Մենք՝ խրոատներս պարարում ենք գլխավորապես Բելզրադի կենտրոնացման և Պաշիչի քայլայող քաղաքականության դեմ, վորովհետեւ նրանք իրենց պիղծ ձեռքերով ավերեցին չերնագորյան աղատության տաճարը, դաժանորեն հետապնդում են ձեզ և սատանայարար տանջում: Յեթե նրանք մեզ վոչ մի չարիք պատճառած չինեյին և բավականանային նրանով, վոր վոտնակոխ արին Զերնագորիայի հպարտությունը, պատիմ ու աղատությունը և Սև Լեռները լցըին սարսափով, մենք խրոատներս յերբեք չեյինք հաշտվի այլորինակ աղաղակող վոճիրի հետ»:

Հաղթող մեծ պետություններից վոչ մեկը, բացի Միացյալ Պետություններից (Ամերիկա)՝ այն ել միայն նախագահ Վիլսոնի այդտեղով անցնելու ժամանակը — յերբեք իր վրա չվերցրեց Զերնագորիայի պաշտպանությունը: Միայն Խորհրդային Ռուսաստանը պաշտոնապես բողոքեց Զերնագորիայի ստրկացման դեմ՝ այս միջազգային կոնֆերենցիաներում, վորոնց նամասնակցեց: Տեղ-աեղ — Կանադայում, Նորվեգիայում, Հոլլանդիայում — հասարակական կարծիքը վրդովվում եր այս փոքրիկ յերկրին անիրավացի կերպով հասած դժբախտության համար: Նույնիսկ անգիտական ու խտալական մամուլում յերբեմն բողոքի ձայներ են լըսվում: Իսկ Ֆրանսիայում՝ վոչինչ: Ֆրանսիայի անտար-

բերությունը առանձնապես վիրավորում եր չերնադորցի հայրենասերներին, վորոնք սովորել եյին նայել նրան, վորապես վոտնահարված ազատության պաշտպանի: «Չերնագորակ» թերթում Բաստիլիան վերցնելու տարեդարձի առթիվ դառն խոներ ենք կարդում: Այս տարեդարձը կատարվում ե բենգալյան կրակների փայլի և ֆրանսիական ժողովրդի ճրճռան ֆրազների վորոտի տակ, այնինչ՝ ժողովուրդը կուրացած իր բուրժուազիայից և քաղաքական դործիչներից, վաղուց հ հրաժարվել «անցած ժամանակների մեծ իդհալներից» ու մեջքով դեպի ճնշվածներն ե դարձել:

Զմոռանանք նաև թեորիապես անկախ Ալրանիան, վրին Խտալիան հաճույքով աշխատում ե գաղութայնացնել և այդպիսով իրեն համար ապագայի «իրավունքներ» պատրաստել: Նույն հալվակնությունն ունի նաև Հարավ-Մլավիան: Աղաղակող կերպով ու գաղանաբար վոտնահարվում ե մարդկային ամենատարրական իրավունքը — յուր ուղածին պես տնօրինելու իր ազգային կյանքը և իր պատմական անցյալին ու կենցաղային պահանջներին համապատասխան կառուցելու իր սեփական կյանքը: Յուրաքանչյուր ժողովրդի ազգագրական առանձնահատկությունների վերաբերմամբ կատարվող չարամիո փորձն իր մեջ թաքցնում ե անարդարությունների և դժգոհությունների սպառնալիք: Հոգու և բանականության բնորոշ հատկությունները, վորոնց ստեղծողը ժամանակը, միջավայրն ու շրջապատող պայմաններն են, ինքնին չեն հակասում կոլլեկտիվ կերպով կառուցելու վսեմ սկզբունքներին: Յեթե մարդկային հասարակությունը կազմակերպված լիներ՝ ինչպես

հարկն ե, այդ առանձնահատկությունները վոչ թե կճշնշվելին, այլ կպահպանվելին, և ընդհանուր պետության շրջանակներում նրանց ազատ զարգացումն ապահովված կլիներ, Հարկ կամ ապացուցելու, վոր ցրիվ յեկած ազգությունների քաղաքական միացումը մի մեծ գաղափար ե, վոր նրանց շահերին համապատասխանելով՝ համապատասխանում ե նաև մարդկային պրոգրեսսին:

Բայց եականն այն ե, վոր այս անխուսափելի և անհրաժեշտ միությունն ու կենտրոնացումը պիտի կատարվի ամբողջովին հոգուտ բնակչության և վոչ թե բացառապես հոգուտ ուրիշի հաշվին անչափ ուռած ու փքված պետության։ Այս գերագույն սկզբունքը մի ժամանակ ամբողջ Խտալիան վոտքի հանեց արտոնյալ Հռոմի դեմ, յերբ Մարիի և Սուլլայի միջև բորբոքվեց սոցիալական պատերազմ։ Ժորեսն իրավացի յեր, յերբ ասում եր. «Ազգությունը մարդկային ցեղի և պլոգրեսսի մի գանձարան ե», բայց հակառակ բոլոր հին սովիետությունների, ազգությունը միայն այն ժամանակ ե իր իսկական եյությունը և բազմակողմանի զարգացման հնարավորություն ձեռք բերում, յերբ հրաժարվում ե իր ազգամոլությունից և ինքնակամ մտնում կողեկտիվի կազմի մեջ։ Ազգայնության ամենառութեղ արտահայտիչը լեզուն ե. Մարդիկ իրարից բաժանված են բազմաթիվ արհեստական խոչընդուներով, վոր կարելի յե վերացնել, յեթե հասարակությունը խելացի կերպով կազմակերպվի։ Միակ խոր և ուսալ արգելքը լեզուների տարբերությունն ե։ Բայց սա յել, ինչպես նաև ազատ լինելու որինական պահանջը, ընդհանուր քաղաքական կազմակերպությանը բնավ չի հակասում։ Մինչև որս

շատ քիչ բան և արված այսպիսի հասարակություն կազմակերպելու համար, վորի նպատակը լիներ իր անդամների փոխադարձ բարեքը և վոչ թե ամենից ուժեղի անհագ ախորժակը:

Կասկած չկա, վոր նման աշխատանքը տարերային կերպով կձգտեր լեզուները միացնելուն: Հասարակական կյանքը կազմակերպելու տեսակետից սա անչափ կարեռ եւ թերևս ապագան ըերի այդ պրոբլեմի լուծումն իր տրամաբանական ամբողջությամբ, յերբ մարդկությունը կմշակի յուրաքանչյուր մեծ կենտրոնի համար տեղական լեզու և ընդհանուր համամարդկային լեզու՝ հանրամարդկային հազորդակցությունների հրաշալի բանալին: Ժամանակակից Շվեյցարիայի որինակից մենք տեսնում ենք, վոր տարրեր լեզուները աշխարհագրուեն կարողանում են տեղափորկել մի պետության շրջանակներում, առանց հակասելու ազգային միությանը և կանտոնների քաղաքական համերաշխությանը:

Բայց մենք լավ գիտենք, վոր Բալկաններում նոր շրջանների ձուլումը բոլորովին այլ վոգով և տարվում: Այդտեղ նա վոչ այլ ինչ եւ, յեթե վոչ հապճեպ ու կոպիտ ձեռքով հողերի և ազգությունների կլանումն՝ յերիտասարդ հափշտակիչ պետությունների կողմից: Այդտեղ ույժ են տալիս տեղական լեզուն վոչնչացնելուն և բնակչությունն արմատախիլ անելուն: Այս զինվորական անդամահատությունները արագ թափով են կատարվում՝ վախենալով, հողային ավարը ձեռքից թողնելուց: Այսպիսի քաղաքականությունն անկայուն եւ, ժամանա ավոր և իր մեջ ունի կորստյան սաղմեր, վոր

ճնշվում ե ուժի միջոցով միայն, այն ել ժամանակավոր կերպով։ Նույն քաղաքականությունը մահվան ե դատապարտված։

Հ Ր Ե Ա Ն Ե Ր Ի Հ Ա Լ Ա Շ Ա Ն Ք Ը

Յես արգեն խոսել եմ Ռումինիայի հակասեմիտական կազմակերպությունների մասին։ Հակա-սեմիտ ուսանողները մոտ ժամանակներս արշավանք են գործել դեպի հրեական Պիտարա Նեամց գերեզմանատունը ու յերգելով Մուսսոլինի հիմնը, շուրջ տվել գերեզմանաքարերը, ջարգել ցանկապատ ճաղերը ու կեղտոտել գերեզմանները։ Անգելեսկուն ռումինական պարլամենտին մի որինագիծ ե ներկայացրել, վորով արգելում ե մեկ միլիոնից ավելի հրեա յերեխաների մուտքը դըպրոց։ Բուխարեստում լուծարքի յե յենթարկվել «հրեական կուլառուր-լիգան», այնտեղից ել առանց հետաքըն-նության բանուարկել են Մանկավարժական ֆեդերացիայի ամբողջ կոմիտետը, ինչպես նաև բանաստեղծ Մենջերոյին, վոր այլտեղ եր յեկել միայն զեկուցում տալու, և այն բոլորին, վորոնք վոստիկանական ագենտների ներխուժման ժամանակ ընթերցարանումն են յեղել։

Հալածանքը հրեաների դիմ, վորոնք ցըված են Բալկաններում, առանձնապես Բուլղարիայում, սարսափելի չափեր ե ընդունել։ Մակեդոնական կոմիտետը հրեաներից փողեր ե կորզում մահվան սպառնալիքով։

Փողոցներում «անհայտ մարդիկ» սպանում են հրեաներին ու նրանց յերեխաներին (ինչպես որինակ Աշկենազիին և նրա 13 տարեկան տղային), վորովհետև

նրանք հրաժարվել են հատուկ հարկ վճարել Մակեդոնական Կազմակերպության ոգտին։ Սովորայի «Հայրենիքի պաշտպանության» կոմիտետի ծրագրում ատելի ոտարազդիների դեմ մի շարք վճռական միջոցներ են նշված։ Այդ կոմիտետի ղլխավորը գեներալ Շկոյնովս եւ

Ապրիլի 16-ի պայթյունից հետո կոմիտեյին իրավունք տրվեց հաշիվ տեսնել քաղաքականապես անբարեհույս համարվող այլազգի բանվորների և ծառայողների հետ։ «Հայրենիքի պաշտպանությունը» և «Կուրբատ» լրագիրն ամեն որ հարձակվում են հրեաների վրա և պոգրոմների կոչ անում։ Զինվորական նախարար Վոլկովը ե վոստիկանության նախարար Թուսներ այս պրոպագանդային իրենց բարյացակամությունը ցույց տվին մամուլի եջերում։ սրան անշուշտ պիտի հաջորդեյին հարձակումներ ու սպանություններ*):

Խնչպես տեսանք, կարիքն ու բռնությունները բնակչությանը հարկադրել են փախչել հարեան յերկրները. բայց սրան զուգընթաց մի ավելի վատթար բան ե կտարվում. —սիստեմատիկ գաղթ դեպի Հարավային Ամե-

*) Կառավարությունից ճանաչված «ռումինական հրեաների Միությունը» 1928 թ. հունվարի 17-ին մի կոչ ուղղեց հասարակությանը, վորի մեջ ասված ե։ «Չորս տարի անընդհատ համալսարաններում, բարձրագույն, միջին և ստորին դպրոցներում, հասարակական վայրերում, թատրոններում, կոնցերտներում, բեսադրաններում, վագոններում, փողոցներում ու մասնավոր աներում հրեա քաղաքացիներին վիրավորում ու ծեծում են, ավերում են նրանց ստացվածքը։ Չորս տարի անընդհատ բազմաթիվ քաղաքներում ավերում են աներ, բազմամիլիոնն մնասներ են պատճառում, և հանցավորները վո՞չ պատժվել են, վո՞չ ել պատասխանագության կանչվել։

րիկա. վորոշ գավառներ բոլորովին ամայանում են: Հատուկ մարդիկ, այսպես կոչված «գաղթականական» ագենտներ», վորոնք տարագիրներ են ժողովում, սունկի պես բազմացել են, դրանով նրանք մեծ հարստություն են դիզում Բեսսարաբիայում, Դոբրուջայում և Տրանսիլվանիայում: Իսկ ամայացած գյուղերում բանվոր ձեռքեր չկան:

Կառավարությունը նպաստում է այս դրությանը, վորովհետեւ տեղական բնակչության հեռացումը զուգադիպում է նրա ծրագրերին: Գյուղացիները, վորոնց այդ ընկերությունները վաճառում են հարավ-ամերիկյան պլանտատորներին, իրենց համար սպանիչ ու ստրկական պայմանագրեր են ստորագրում: 1925 թվականին գաղթել են՝ Միացյալ Պետությունները 2961 հոգի, կանադա՝ 1909, Արգենտինա՝ 537, Բրազիլիա՝ 14,661 և Պաղեստին՝ 1826 մարդ:

VIII. ՄԵԾ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ուզում ես հարց տալ. —ի՞նչ են անում մեծ պետությունները:

Նրանք Բալկաններում խռովություններ են սերմանում և մասնակիցներ են հանդիսանում բալկանյան արյունոտ քառոսին: Այս քաղաքականությունը յեկավ փոխարինելու ռուսական և ավստրիական կայսրությունների հակամարտությանը և բալկանյան ժողովուրդներին պակաս թանկ չի նստում:

Ֆրանսիայում, Անգլիայում և Ամերիկայում հպարտանում են իրենց ազատամտությամբ ու խորաթափանցությամբ: Այս հավակնություններն, ըստ երեսութին, չափազանցրած են՝ ազատամտության նկատմամբ և չեն արդարանում՝ խորաթափանցության նկատմամբ: Պետք է կարողանալ իրերը տեսնել վոչ այնպես, ինչպես ուզում ես, այլ այնպես, ինչպես կան: Ասենք՝ վորքան այստեղ խոսքը վերաբերում է Յեվրոպայի դերին, այն բոլորն, ինչ ասվել և հարավ-արևելյան պետությունների մասին, վերաբերում և նաև մեր պետություններին: Զպետք է շփոթել ժողովուրդներն առանձին անհատների, նույն իսկ պետական իրավակարգի հետ, վոր փաստորեն կանոնավորում և ներքին ու արտաքին քաղաքականությունը: Մեծ պետությունների վրդովեցուցիչ անվերջ միջամտությունը Բալկան-

յան թերակղզու գործերին, վորն իրենք քանիցս չափեցին ու ձևեցին ըստ իրենց քմահաճույքի, կիրառվում և այստեղ վոչ թե հոգուտ ժողովուրդների, առավել ևս համաշխարային խաղաղության, այլ հոգուտինչ վոր նուրբ քաղաքական նորատակների։ Անգլիային, Ֆրանսիային և Իտալիային դեպի բալկանյան ինտերվենցիան տանող դրդապատճառները պիտի վորոնել տնտեսական և քաղաքական գաղութայնացման մեջ։ Նրանցից յուրաքանչյուրի համար կարևորն իր հպատակների շահերը պահպանելն է», այսինքն՝ այնտեղ հիմնավորվել։ Ճեռնարկություններ ստեղծել, գործեր կառավարել, յերկիրն ու նրա բնակչությունը առավելագույն չափով շահագործել, ազդեցություն և տերրիտորիալ ընդարձակման գոնաներ ստեղծել։ Կավելացնենք նաև — պատերազմական համաձայնությունների կոմբինացիաներ անել և ազգայնական-դասակարգային պրոպագանդ մղել։ Նոր ժամանակների ոլաշտոնական ավետարանը, վոր «իրավունք և քաղաքականություն» և կոչվում, երբեցից դոյություն ունեցող խարերայություններից ամենանողկալին եւ Իհարկե, այս մանրացրած և ուրիշների իշխանությանը յենթակա յերկը ընթանանք իրարից բաժանով հակառակությունները յեվրոպական մասշտաբով հետևանքներ չեյին ունենա, յեթե մեծ պետություններն այնքան շահագրկութած չինեյին նրանց գործերով և փոխադարձարար այնքան շաղկապված չինեյին իրենց ինտերիգներով ու բուռն տենչերով, յեթե բալկանյան յերկը չհամարվեյին այն դրույքը (ставка), վոր ուժեղի իրավունքով այս շախմատային ընդարձակ յեռանկյունի տախտակի վրա խաղի

յեն դնում Լոնգոնը, Փարիզը և Հռոմը՝ միանգամայն արհամարհելով ժողովուրդների ինքնորոշման իրավունքը:

Վորպեսզի բալկանյան և Դանուրի նոր յերկրներում, ինչ գնով ել լինի, պահպանվի Վերսալի, Տրիանոնի և Նեյի դաշնադրերով ստեղծված դրությունը, Անտանտան ստիպեց Զեխո-Լավիայի, Հարավ-Սլավիայի, և Ռումինիայի կառավարություններին՝ կազմել յերրյակ միություն, վոր կոչվում ե Փոքր Անտանտաւ Բայց այս Փոքր Անտանտայի անճարակությունն իսկույն հայտնի դարձավ: Նրա մեջ մտնող յերեք պետություններն ել նոր սեպարատ համաձայնություններ կնքեցին. — Հարավ-Սլավիան Խտալիայի, Զեխո-Սլավիան Թրանսիայի հետ: Բայց դրանից՝ գոյություն ունեն չեխո-սլովակյան-իտալական, ռումինա-լեհական և բուլղարա-տաճկական համաձայնություններ: Հորիզոնի վրա նոր կոմբինացիաներ են յերեւամ, վորոնք գալիս են արևմուտքից արևելք, Հունաստանի և Ռումինիայի մեջ. 2) Լեհաստանի մուտքը Փոքր Անտանտայի մեջ. 3) Դանուրի վրա գտնվող պետությունների ֆեդերացիան. կրկնում ենք՝ այս կոմբինացիաներից ամեն մեկը՝ հանձին յեղբուզական մեծ պետությունների՝ իր ներշնչողն ունի:

Առաջին միությունը հիմնված է մի շարք չափագանց բարդ քաղաքական հաշիմների և գործնական կոմբինացիաների վրա, վորոնք նրա կայունությունը միանգամայն անհուսալի յեն դարձնում: Լեհաստանը Փոքր Անտանտայի մեջ մտնելով, նրա չունեցած կշիռը չի ավելացնի: Դանուրի ֆեդերացիայի նախագծի հեղինակն Անգլիան է, վոր ներկայումս Բալկանների

իսկական տերն ե՝ շնորհիվ ֆրանսիայի ֆինանսական կրիզիսի, վորը զուրկ ե հետագա սպառազինում ները ֆինանսավորելու հնարավորությունից։ Մեծ Բրիտանիյաի շահը պահանջում ե, վոր այս ֆեդերացիան նպաստե Ավստրիայի և Վենգրիայի տնտեսական զարգացմանը։ Մենք դեռ չենք խոսում Միջերկրական Անտանտայի մասին, վորի մասին յերազողն իտալիան ե՝ բացառապես հոգուտ իր շահերի*):

Այս վողջ քաղաքականությունը շատ ե անբնական, հիմնված մասնավոր շահերի ու պատահական արկածների վրա, և միայն ընդունակ՝ ավելի ևս թուլացնելու բալկանյան յերկրները։

Բալկանյան թերակղզին մի վայր ե, ուր միանում են համաշխարհային հաղորդակցության կարևորագույն ճանապարհները։ Մեծ յերկրներն այստեղ, չընայած ճրճուան փուազներին և հանդիսավոր արարողություններին, անհրաժեշտ են համարում միմյանց անիվի տակ ալելի շատ փայտ գցել։ Ամեն անգամ, յերբ այս բանը նրանց հարկավոր և լինում, արևելյան հարց են հնարում ու նրա մասին խոսում։ Դրա համար ել մըշտապես լարված վիճակի մեջ են։ Նրանց շահը թելադրում ե, վոր այստեղ մշտական ազգային թշնամու-

*) Լոկարնոյի դաշնագրից հետո ֆրանսիան, ըստ Ժ. Պերի պատկերավոր արտահայտության, Արևմտյան և Արևելյան Յեղոպայի իր վասսարներ ց կտրվեց, նրա գերիշխանությունը տատանվեց։ Միջերկրական Անտանտայի կազմվելը մեծ ոգուտներ և խոստանում և նոր խմբավորումներ կարող ե առաջ բերել Փոքր Անտանտայում։ Ասպլիան, մանավանդ իտալիան, վորի ախորժակը շատ ե գրգռված, խիստ հետաքրքրվում են այդ հարցով։

թյան տիրեւ Նրանք առանց քաշվելու 1914 թ. պատերազմի վերջում մի քանի պետությունների վարձատրեցին ուրիշների հողերով ու դինվորական վարկերով և այնպիսի իրավունքներ տվին, վորոնք հատուկ չեյին այդ յերկրներին, Այդ հանգամանքը միմյանց դեմ հանեց Վենգրիան, Ռումինիան, Հարավ-Սլավիան, Բուլղարիան, Հունաստանն ու Տաճկաստանը: Նրանց հարաբերությունները միշտ լարված են, և բավական են միայն մի փոքրիկ միջադեպ, վոր նոր շփոթ ստեղծվի: Անցյալ տարի մենք հունա-տաճկական պատերազմի նախորյակ ապրեցինք, այնուհետև Բուլղարո-Հարավ-Սլավյան պատերազմի սպառնալիքը մեջ ընկավ: Շատ մոտիկ անցյալում քիչ եր մնում՝ Սալոնիկի պատճառով Հունաստանի և Հարավ-Սլավիայի հարաբերությունները վատանային: Վերջերս հույն-բուլղարական կոնֆլիկտը հրապարակ յեկավ:

ՐԵԱԿՑԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Բացի շահագործման նեղ նպատակներից, վորոնց հետապնդում և հալկաններում մեծ պետություններից ամեն մեկը, նրանք ընդհանուր նպատակներ ևս ունեն: Պայքար Ռուսաստանի դեմ և հականեղափոխություն, կամ, յեթե իրերն իրենց անունով կոչենք, միջազգային Փաշիզմի կազմակերպութմա:

Պիտի կույր ձեանալ կամ ուղղակի այդպիսին լինել՝ չտեսնելու համար, վոր կապիտալիզմն ու Փաշիզմն ամբողջ աշխարհում անքակտելիորեն կապված են իրար հետ: Ֆաշիզմը համաշխարհային սեռակցիան պաշտպանելու և քաջալերելու վհչ պաշտոնական մի գենք ե—նրա

յերկու ձեերով.—քաղաքական (բեակցիայի պետական դիկտատուրա) և սոցիալիստական (կապիտալի դիկտատուրա): «Պատերազմները, — գրում եր Եմիլ Կանը, — յերկու նպատակ ունեն՝ գրավումներ, վոր կատարվում են պետության ձեռքով և աշխատանքի շահագործումն»։ Ֆաշիզմը դասակարգային ժանդարմերիա յե, վորը կազմվում է դժգոհ միջին դասակարգերի շրջանում, այն հաստատում են ամեն տեղ—բաց բեմի վրա, թե կուլիսների յետեւմ, սպիտակ տերրորի յերկներում, ինչպես իտալիան և, թե վարդագույն տերրորի, ինչպես ֆրանսիան և:

Ֆաշիզմն ամենուրեք որդանապիս ձուլված է իմպերիալիզմի և կապիտալիստական բեակցիայի հետ ։ Խնայելով իր տարրեր դիմակներին, նա ամեն տեղ միատեսակ եւ:

Յեզ ամեն տեղ իշխանությունները նրան կամ ուղղակի պաշտպանում են, կամ բարյացակամ վերաբերմունք ցույց տալիս։ Միթե պիտի զարմանալ, վոր Միջերկրական արևելքում աճում է Մուսսոլինի — չըքնաղ իտալիայի այդ այժմյան տիրողի, Սպիտակ Յեզրոպայի վոստիկանության պետի հոչակն ու փառքը։ Մենք չենք զարմանա, յեթե դավերի, պատրաստությունների, կոմբինացիաների և փողհարության այս իրավունքը մի գեղեցիկ որ մեր զլիսին պատերազմ բերի։ Մենք բոլորի պատասխանատվությունը կեղծավորաբար մեկին չենք վերադրի։ Ատելությունը կապիտալիզմի սկզբունքն է, պատերազմը՝ նրա ներքին ու արտաքին արդարացումը։ Միթե զարմանալի չե այն բարյացակամ վերաբերմունքը, վոր արևմտյան յերկըր-

ների կառավարությունները տածում են դեպի ավագակ կառավարությունների բռնած դիրքը։ Մեր պաշտոնական շրջաններում ի՞նչ արձագանդ են զանում այն մղձավանջային վոճիրները, վոր վհչ կարելի յե հերքել, վհչ ել պաշտպանել։ Յես ֆրանսիական դեսպանատներում հաճախ եմ կովք լսել Բրատիանուի և Յանկով - Վոլկովի կառավարությունների հասցիյին։ Ֆրանսիական հանրապետությունների գործերի Բուխարեստի հավատարմատար Ժապին իրեն ավելի բոյալստ եր համարում, քան ինքը՝ ուումինական թագավորն եւ Այս ջենտլեմինը միանգամայն բնական ե համարում, վոր Ռումինիայում, ուր «զինվորին ծեծելն ընդունված ե», բանտարկյաներին թակում են։ Սոֆիայի ֆրանսիական փոխ - հյուպատոս Ժերարդին գտնում ե, վոր պետական սպանությունների մասին տարածված լուրերը չափազանցված են, բայց, — ավելացնում ե նա, — Ֆրանսիայի ներկայացուցիչների արած միջամտությունը հոգուտ դատապարտվածների կամ բանտարկյաների միշտ բարենպաստ արդյունք ե տվել։

Ֆրանսիական իշխանությունները կարող են մարդկային կյանքեր փրկել, — ահա այն խոսքերը, վոր անչափ ծանր կերպով հնչում են այն մայրաքաղաքներում, ուր ամեն որ սարսափիներ են կատարվել ու կատարվում են, և ուր ֆրանսիական դեսպանատան դրոշակն ե ծածանում։ «Ռումինական մամուլի բյուլետենը», վորի հրատարակողը ֆրանսիական արտաքին գործոց նախարարությունն ե, կատարյալ յեղվիտությամբ պաշտպանում ե ուումինական կառավարությունը։ Իրենց բարձրահանչյուն դեկլարացիաներովմ եր կառավարիչները

միայն կարգի ու խաղաղության մասին են պնդում։ Ցանկովն ու վոլկովն ել են նույնն ասում և հենց նույն արտահայտություններով։ Ցանկովն, այս պրոֆեսոր մսագործը, նույն իսկ չի ընդունում, թե իր կառավարությունը կարող ե բեակցոն համարվել։ Դա,—ասում ենա, —«Humanité»-ի և կոմմունիստական այլ լրագրերի տարածած լուրն ի։ Բայց իրականում, հավատացնում ենա, իր կառավարությունն ամենաազատամիտն ե։

Անտանտայի որդաններից մեկը, Ռեպարացիաների Միջադրային Հանձնաժողովը, նպաստեց վոր լուծարքի յենթարկվելուն Ստամբուլիսկու կտուավարության միքանի դեմոկրատիկ որենքներն ու ձեռնարկված միջոցները. որինակ—արտադրության և սպառման մեջ յեղած ճանապարհից շահագործողներին ու միջնորդներին հեռացնելու համար պետական կոնսորցիում կազմակերպելու որենքը, վորն ուղղված եր Բուլղարիան այս պատերազմի սպանդանոցը քաշողների և հետո ամոթալի կերպով նրա հաշվին հարստացողների դեմ. յերկրորդ որենքը սահմանագիծ եր քաշում արտադրողական կապիտալի և շահագործող կապիտալի մեջ—վորոնցից մեկը արդյունագործության և յերկրագործության զարգացման համար ե կիրառվում, իսկ մյուսը առևտրական բանկերն իրենց շրջանառության մեջ են դնում՝ մուրհակներ գեղջելու և փոխանակային գործարքների համար։ Սա յուրատեսակ մի հարկ ե՝ ընկած աշխատավորության վրա։ Բեպարացիաների Հանձնաժողովը, վոր յեվրոպական մեծ դեմոկրատիաներն եր ներկայացնում, միջամտեց ու առանց այլկայլության

վերացրեց ժողովրդականություն վայելող որենքները, Այնուհետև Անտանտան թույլ տվավ Բուլղարիային՝ իր զորքի թիվը 10,000-ով ավելացնել, վոր պետք եր նրան՝ վերջնականապես արմատախիլ անելու մարդկային արժանապատվության և ազատության վերջին մնացորդները *):

Վոչ վոքի համար գաղտնիք չե, վոր Բուլղարիան յեվրոպական մամուլի հանդեպ ամեն տեսակ բայլեր արավ՝ ձեռք բերելու նրա բազմաթիվ որգանների բարեհաճ չեղոքությունն ու համակրանքը: Ամերիկացի լրագրող Շարլ Մուը, քաղաքական համոզմունքներից հեռու (համենայն դեպս վոչ կոմմունիստ) մի մարդ այսպես և արտահայտվում յեվրոպական հասարակական կարծիքը դեկավարող մեծ մամուլի մասին: «Ռոտարյերկրյա մեծ մամուլը, մանավանդ Վիեննայի «La Nouvelle Presse Libre» -ը, Լոնդոնի «Times» -ը և Փարիզի «Temps» -ը թերթերն ամենախայտառակ կերպով պաշտպանում են գեներալ Վոլկովի քաղաքականությունը»: Իրեն դեմոկրատական և հակաֆաշիստական անվանող

*) Տրեանոնի պայմանագրի համաձայն՝ Վիեննայի 35,000-ից ավելի զորք պահելու իրավունք չունի, բայց վենգրիական «Սև Բանակը» — «Լեվանտ» կազմակերպության արամազրության ներքո՝ փաստուեն 400,000 մարդ ունի, վորոնք սպորտային ընկերության անվան տակ գաղտնի դինվում ու կազմակերպվում են: Մուսսոլինին ծովակալ Խորտիին մեծ քանակությամբ մթերք և մատակարարում: Մոտ ժամանակներս Գրացում յերկաթուղայինները հայտաբերեցին մի քանի գագոն պուլեմյուններ և ուղմամթերք՝ հասցեագրված Բուլղապեշտ: «Սև բանակը» մինչև որս զինվորական հագուստ չուներ: Մարտ ամսին Բուլղապեշտ հասավ 600,000 ձեռք մուգ-մոխրագույն դգեստ:

մի փարիզյան լրագիր պատասխանատվությունն իր վրա վերցնելով՝ հրատարակեց բուլղարական մամուլի հաղորդագրությունը՝ «Բուլղարիայում ֆաշիզմ չկա» վերնադրով։ Ի՞նչ կարծիք կարելի յե կազմել մի մամուլի մասին, վորս բուլղարական Մուսսոլինիների հլու-հնագանդ կամակատարն ե՝ ամենքին հայտնի փաստերի նկատմամբ։

Մի քանի բուռն բողոքներ յեղան, բայց ձայն բարձրացնելու համարձակություն ունեցող թերթերի թիվը «Humanité»-ից, «Populaire»-ից, «Quotidien»-ից, «Ere Nouvelle»-ից, «Rassemblement»-ից, «Peuple»-ից, «Kommunale»-ից և «Arbeiter Zeitung»-ից գենը չանցավ։

Ամեն անգամ, յերբ գիմում ես ֆրանսիական կամ մի այլ յերկրի խոշոր լրագրի և խնդրում բալկանյան խնդրի մասին նյութեր տպագրել, ճարպիկ կերպով խուսափում ու հարցը լուսնական են տալիս։ Յես յերբեք կբացատրեմ, թե դա վճրտեղից ե բղխում։

Ի՞ՆՉ ԱՆԵԼ

Մենք չպիտի բավականանք փաստեր արձանագրելով։ Ամեն դրությունից դուրս գալու յելք կա։ Յուրաքանչյուր կարգին մարդ ամենից առաջ վորոշ գիրք պիտի բռնի բալկանյան հարցի նկատմամբ, վոր մեզ հուզում ու տանջում եւ Ստի շեղջակուտից պիտի զտել, հանել ճշմարտությունը և մտածել ապագայի մասին։

Մենք հույս չպիտի գնենք պաշտոնական իշխանությունների վրա, ովքեր ել լինեն նրանք։ Դրանցից փրկություն ակնկալել չի լինի։ Աղաչանքով ու միջ-

նորդություններով մեր կառավարիչները վոչ մի փոփոխություն չեն մտցնի բոլոր գործերը պատցնող մեծ քաղաքական մեքենան կառավարելու գործի մեջ։ Կառավարություններն այժմ ավելի քիչ կարող են մարդկային խղճի կոչնակները դառնալ, քան յերբեմեն։

Ազգերի կիզմն. բայց նա իր եյությամբ մի այնպիսի ապարատ ե, վոր հազթող պետությունների կառավարություններն են կազմել։ Նա չի կարող հակամարտությունների և բաժանումների քաղաքականություն չվարել, վորովհետեւ նրան ստեղծող պետություններն ել պահում են նրան ու ղեկավարում։ Միայն բառախաղի տալով կարելի յե նրան ժողովուրդների լիգա անվանել։ Սա գրասենյակների կիզա յե, աշխարհի կառավարիչների միջազգային նախարարություն, ժողովուրդների լիգային հակադիր մի բան։

Իրոք նա չկարողացավ հարթել նոր կոնֆլիկտներից և վհչ մեկը։ Բուրժուական մամուլն այս անհաջողությունները թաքցնում ե։ Փաստորեն նա միշտ յեղել և մի գեկորացիա, վոր հետևյալ ծաղրական վերտառությունն ունի։ «Արբիտրաժ—ապահովություն—զինաթափություն» գոյություն ունեցող կարգերի բորեսայերների սրտին սիրելի վերտառություն։ Այս գեկորացիայի յետևում թաքնված ե արեմայան իմպերիալիստների գործերի և, միջազգային մասշտաբով, կապիտալիստական հասարակակարգը պահպանելու հոգսը։ Ազգերի կիզման ստեղծելու կամպանիայի ժամանակ գործնական ու ճշտապահ անվլուսաքսերը նրան դրվագում եյին վորպես «անտիպոտ» շահագործվող մասսաների կազմակերպության։ Ազգերի կիզան թագավորների

զենքն և ժողովուրդների դեմ, իսկ մնացած բոլոր խոսքերը լոկ քամի յեն:

Ուզում ես միայն ծիծաղել, յերբ լսում ես այնպիսի յերազողների, վորոնք հավատում են, թե ամպերից խաղաղություն կիջնի ժամանակակից հասարակարգի միջոցով, առանց վերջինիս մեջ փոփոխություն մտցնելու, մողական գավաղանի մի քանի հարվածներից հետո:

Բայց չի կարելի չվրդովվել, յերբ Ազգերի Լիգայի պարոնները հայտարարում են, թե նոր դարագլխի, նոր վոգու սկիզբն են բերում, վորովհետև նրանց վելիկողերժավը լուսավսակող այս բառերը շատ ազնիվ մարդկանց են մոլորեցնում:

Արդարության և հավասարության սպասել մեր հասարակության ներկայումս գոյություն ունեցող ձևից՝ նույն ե, թե փորձենք լուծել շրջանի քառակուսիացման խնդիրը՝ սոցիալական և քաղաքական հարաբերությունների մակարդակում: Իսկ մեր քաղաքագետներն ուրախանում են, յերբ կարողանում են մեզ խճճել անլուծելի խնդիրներով: Արժե այն ես ընդգծել, թե Ազգերի Լիգան անլեզալ կազմակերպություններից վոչ մի դիմում չի ընդունում: Յեվ ի՞նչ. Ռումինիան, Բուլղարիան, Հարավ-Սլավիան, Հո.նաստանը և Վենդիան անլեզալ են հրատարակել այն բոլոր կազմակերպությունները, վորոնք բողոքել կարող են: «Մարդու իրավունքների Լիգան»: — Նա համարձակվեց արդյոք՝ այսպես թե այնպես կատարել այն բոլորը, ինչ վոր կարող եր կամ պարտավոր եր կատարել*):

*) Կարմիր խաչի վարքագիծը Բալկաններում անտրատ Ա-

Մոպրն եր, վոր ամենից շատ աշխատեց, վորպեսզի լույս սփռի վոստիկանական պետությունների արածների և Բալկաններում որինակ դարձած մարդկային գոհաբերությունների վրա։ Այս կազմակերպությունն իրավունք ունի բոլոր ազնիվ մարդկանցից շնորհակալություն սպասելու։ Նա քաղաքականությունից հեռու յե կանգնած և հենվում ե բացառապես միջազգային պրոլետարիատի համերաշխության վրա։

Հասարակական կարծիքը վճռական կերպով հանդես պիտի գա ու մերկացնի Բալկաններում տիրող անարժան խաղերը։ Բավական են ճրուան ֆուազները, բավական են ծաղրածությունը, Ժենևի ու Լոկարնոյի կեղծավոր յերգերը։

Բալկաններից հոգեարքի ճիչ և լսվում, այնտեղ սարսափելի վողբերգություն ե կատարվում, ավար են բաժանում և կոնցեսայինների քաղաքական ու տնտեսական ազդեցությունների յետելոց են ընկած։ Պիտի կանչել ի լուր ամրող աշխարհի։ Պիտի հաստատակամություն հանդիս բերել, Զի կարելի թույլ տալ, վոր կուլտուրան ու քաղաքակրթությունը ծաղը ու ծանակի յենթարկվեն։ Ով կարող է ձայն հանել, բայց չի հանի, նա կվարկարեկի իրեն՝ պատմության առջեւ։

Ազնիվ և շիտակ մարդկանց բարձր ձայնը կարող ե իր վճռական ազդեցությունն ունենալ, իսկ մեր շուրջը այդպիսի մարդիկ դեռ շատ կան։ Զմոռանանք,

նելուց շատ հեռու յե, Գեներալ Բորնիեմը կատարյալ հիմք ուներ նրան մեղադրելու, թե չերնագորյան դեպքերի քննության ժամանակ նա միայն մի զենք եր դաշնակիցների քաղաքականության։

վոր մի քանի յեվրոպացի գործիչների յեռանդուն միջամտութունը Բակոշիին փրկեց աներկրայելի մահից։ Այդ կոչի ճնշման տակ վենդերական սոսկալի զինվորական դատարանը, վորի մահավճիռը կարող եր յերկուժամում ի կատար ածվել, հայտարարեց, թե այդ գործն իրեն յենթդատյա չի։ Այն բոլոր յերկրներում, ուր յեղել եմ, համոզվել եմ, վոր արևմուտքի հասարակական կարծիքն ահագին նշանակություն ունի։

ՊԱՇՏՈԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵՏՆԵՐԸ

Քաղաքական ոպպոզիցիան Բալկաններում լեզարձանապարհով վոչինչ չի կարող անել, վորովհետև այնտեղ այն ամենը, ինչ վոր ոպպոզիցիոն ընույթ ունի, անլեզալ ե հայտարարված։ Բայց հենց իրենք կառավարությունները չեցին կարող վոչինչ անել, նույն իսկ մեկ որ դիմանալ, յեթե միայն սահմանափակվելին լիզալ միջոցներով։ Կասկած չկա, վոր յեթե իսկական աղատ ընտրություններ լինելին, պետական ֆաշիզմն իսպառ կչնչվեր այս յերկրներից։ Բայց և այնպես, չնայելով այս բոլոր դժվարություններին, ոպպոզիցիան որ որի վրա աճում ե։ Վորպեսզի նա ավելի և աճի ու զարգանա, անհրաժեշտ ե, վոր Բալկանյան դեպքերի վրա լույս սփռվի. «Թող ամենքն իմանան, թե ինչ է կատարվում այստեղ».—այս ե Հարավ-Արևելքի տառապողների ցանկությունը։

Նրանցից մեկն ինձ մի նամակ ցույց տվավ, վոր հաջողեցրել եր ստանալ Բելգրադի մի բանտարկյալից։ «Հայտնիր Ֆրանսիայի ընկերներին, վոր մենք միայն մի բան ենք պահանջում. — թող գրեն մեր կրած տա-

ռապանքի մասին և բողոքեն Հարավ-Ալավյան ֆաշիստական կառավարության բարբարոսությունների դեմ:

Մենք կարողանում ենք քաղցած մնալ, մենք սովորեցինք առանց իրավաբանական ոգնության մնալ, մենք կարող ենք յոլա գնալ՝ առանց փողի, մանավանդ, վոր յերեք փող չենք ունենում, բայց թող մամուլը ձայն բարձրացնի, միայն նա կարող է փրկել մեզ։ Վորպիսզի բացառապես հանուն մարդկային ազատության ու հավասարության հանդես յեկող կարգին մարդկանց ձայնը, առանց կուսակցական խորության, լավի մամուլի եջերից, մենք Փարփղում, Լոնդոնում ու Վեննայում «Բալկանյան սպիտակ տերրորի զոհերի պաշտպանության կոմիտեներ» ենք կաղմակերպել։ Այս կոմիտեների նպատակն ե բողոքներ հրատարակել ու կազմակերպել և, վոր ամենից պլավորն ե, վորոշ հետեանքների հասնել։

Այս կոմիտեների առաջին գործն ե՝ ծանոթացնել հասարակաց կարծիքը իրերի խակական դրության հետ, վոր թաքնված և կեղծավոր պաշտոնական հաղորդագրությունների յետել և ճշտած ինֆորմացիայի միջոցով տալ պատճառների ստույգ փաստական պատկերը և որյեկտիվ լուսաբանությունը։ Վոչինչ այնքան համոզեցուցիչ չե, վորքան անաչառ կերպով պատմելը, առանց հավելութեան, նույն իսկ առանց կոմիտենտարիաների։ Պաշտպանության կոմիտեները կամպանիա պիտի տանեն՝ հոգուտ բոլոր քաղաքական բանտարկյալների և հմիգրանտների ներման։

Բալկաններում շատ անգամ են ներման խաղ սարքել, վոր միայն դահիճներին ու մարդասպաններին ե

աղատություն բերել: Պաշտպանության կոմիտեները պիտի զբաղվեն այն բանով, վոր կոմեդիա յե կառավարողների և տրագեդիա՝ ժողովուրդների համար: Նրանք միջոցներ պիտի նշեն՝ լուծարքի յենթարկելու անցյալի մնացորդները և առողջացնելու ապագան:

Յերկրորդ հերթը բացառապես Բուլղարիային ե վերաբերում: Մենք պիտի ձգտենք, վոր կենդանի մնացածներին և ընկածների ընտանիքներին ոգնելու իրավունք ձեռք բերենք: Արդեն ասել եմ, վոր այս ոգնությունը խստագույնս արգելված ե Բուլղարիայում, ուր սպանվածների մայրերն ու յերեխաները մեղսակիցներ են համարվում, ինչպես նաև նրանց սովոր փրկողները: Մենք կկազմակերպենք մի շարք նոր կոմիտետներ, նրանց մեջ միջազգային կապ կստեղծենք, վորպեսզի աշխատանքը համաձայնացնենք ու զարգացնենք: Մենք բյուլղատեն կհրատարակենք, վոր ուղիղ ինֆորմացիա կտա և բեակցիոն ու վաճառված մամուլի սուտը կմերկացնի:

Յեվ վերջապես մենք կձգտենք Բալկանյան արյունոտ քառսից դուրս գալու յելք գտնել: Մենք լայն պրոպագանդ կմղենք հոգուտ Բալկանյան ֆեդերացիայի իրականացման:

ԲԱԼԿԱՆՑԱՆ ՖԵԴԵՐԱՑԻԱ

Յեթե Բալկանյան տարրեր յերկրներն ու շրջանները, վորոնք այսոր աղքատացած, թուլացած ու մըշտական վեճերով խեղզված են, միանային ազգային ինքնորոշման սկզբունքով, կստեղծվիր ուժեղ և դեպի ինքը հարգանք ներշնչող մի պետություն: Այստեղ առավելագույն կարգ ու բարեկեցություն կստեղծվեր:

Աշխարհագրական փոքրամտությունների հարցը լուծելու այս միակ խելացի ձեզ և լայն դեմոկրատիզմի իրագործումը ազատ կամքով ստեղծված պետական միության յուրաքանչյուր բաղկացուցիչ մասի տնտեսական վերածնուղի սկիզբը կդնելին:

Բավական ե մի թուրցիկ ակնարկ գցել քարտեզին՝ համոզվելու, վոր Բալկանյան յերկրները ներկայումս իրար մեջ մտած և իրար այնքան սեղմող դժվարություններից յերբեք չեն դուրս զա, յեթե ցանկանան կառչած մնալ «յուրաքանչյուրն իր համար» սկզբունքին: Ծով դուրս գալու պահանջը դնում և նրանց իրար վերաբերմամբ կախյալ վիճակում: Այս հարցերը — դալմատական, ալբանական և մանավանդ սալոնիկյան — հանդիսատ չեն տալիս Հարավ-Սլավիային: Բուլղարիան, վոր միայն Սև ծովից Դարդանելով փակված մի փոքրիկ կտոր ունի, ոեալ պահանջ և զգում՝ Եգեյան ծովը դուրս գալու: Բայց չի կարելի ազգայնականության կամ իմպերիալիզմի լողունգների տակ բավարարել այս ինքնին որինական ձգտումները, առանց կողոպտելու Հունաստանին: Հետեաբար այս խնդիրներն ուղղակի անլուծելի յեն և Բալկանյան որդանիզի յերկու «նյարդային կետերը» (ըստ արտահայտության Ժիրումսկու) — Սալոնիկն ու Դեղեաղաջը իրերի այժմյան պայմաններում անբուժելի յեն: Բալկանների տնտեսական կյանքի վողջ զարգացումը տուժած և հման անոմալիաներից:

Մակայն Բալկանյան ֆեդերացիան իր իմաստն ու նշանակությունը կունենա միայն այն գելքում, յերբ նրա մեջ մտնեն. Բալկանյան բոլոր պետություններն

ու շրջանները՝ առանց բացառության։ Յուրաքանչյուր մասնակի բավարարումն կհակասեր բուն նպատակին, վորովհետու մի իմպերիալիզմը կղորանար մյուսների թուլանալու հաշվին։

Վերցնենք առաջին պատահած որինակը. սերբ բուլղարական դաշինքը (այստեղ ի հարկե խոսքը վերաբերում է որդանապես միանալուն), վոր բալկանյան ֆեդերացիայի ետապ լինելուց շատ հեռու յե, դա ֆեդերացիայի կատարյալ ժխտումը կլիներ. դա մի կոմբինացիա կլիներ, վոր Հունաստանի հաշվին պահանջափոր լինելու այդ յերկու պետությունների ձգտումներին կշիռ կտար և վերջին հաշվով կրավարարեր միայն Հարավ-Սլավիայի ախորժակը։

Վախենալու ե, վորպես թակարդից, այն վատ քողարկված ֆորմուլայից, վոր ֆեդերատիվ մակեդոնական կազմակերպությունը քարոզում եր «Մակեդոնական Գիտակցություն» թերթում այն պատրվակի տակ, թե ինքը կազմում ե միջանկյալ ետապ *):

*) Աչքաթող չպիտի անել, վոր մակեդոնական ֆեդերալիստները մակեդոնական հեղափոխական կազմակերպության նախկին ձախ թէն են, վոր 1908 թ. յերիտասարդ թուրքերի հեղափոխությունից և տաճկական հեղափոխության հոչակումից հետո վերափոխվելով, դարձան ֆեդերատիվ ժողովրդական կուսակցություն։ Այս լեզակ կուսակցության հիմնադիրներն եյին Սանդունսկի, Դանթարջե, Պանիցա, Վլախովյ, Յանկով, Զերնոպիկ և Դոբրի Գասկա-լով։ Բայց «Մակեդոնական Գիտակցություն» թերթի շուրջը համախըմբած ֆեդերալիստները նույն Պաշիչի կառավարության ազնեաներն են։ Նրանց և նախկին ֆեդերատիվ ժողովրդական կուսակցության մեջ ընդհանուր վոչինչ չկա։ Նրանց դեկավարները —

Յերբ Տողորովը, բուլղար-հարավ-սլավական պետության այս մեծ կողմնակիցը՝ այսպիսի գրավիչ պատրվակ և մատնացույց անում, թե «ինչու չպիտի Հարավ-Սլավիան Բալկանների Պյեմոնդը դառնա», այս դարձվածքից պարզ ժերեսում և Հարավ-Սլավիայի գաղափարի տիրապետությունը՝ թերակղզու վրա։ Բայց ավելի գժվար և նկատվում, թե այդ տիրապետությունը յերբեք հավասարավոր ֆեդերացիայի չի հասցնի։

Խաչված կամ, ինչպես Դանիել Ռենուն և ասում, դաշնակիցների ձեռքով չորս մասի բաժանված Մակեդոնիան այդպիսի սայմանագրերի շնորհիվ յերբեք չեր ազատվի։ Նա ավելի շատ նոր պատերազմների ասպարեզ կդառնար։ Պարզ ե, վոր նույն բնորոշումը պիտի տալ նաև ավտոնոմիաներին, վորոնք մակեդոնական հարցը «Մեծ Բուլղարիա» ստեղծելով են լուծում։ Ազատության համար Բալկանյան փոքրամասնությունների տարած պայքարը գործնականում այլ կերպ չպիտի հասկանալ, քան բոլոր ճնշված ժողովուրդների լայն դաշինք, այնպիսի դաշինք, վոր հենվեր աշխատավոր դասակարգերի վրա, վորոնք միատեսակ ճնշված են նույն դահճներից և իմպերալիզմի ու բալկանյան միջազգային բեակցիայի դեմ միասնական ֆրոնտ են կազմում։

Յես վորտեղ յեղել եմ, առաջ եմ քաշել Բալկանյան ֆեդերացիայի գաղափարը, վորի իրականացման համար

Տերցել և Մինդովը սերբ կառավարության կամքն են կատարում՝ ձուլելու մակեդոնական ժողովուրդը և հարավում սերբական իմպերիալիզմը տարածելու։

ամենից առաջ պիտի տառալալել կառավարող միապետությունը և իսկական գեմոկրատական իրավակարգ սահմանել: Յես համոզվել եմ, վոր այդ գաղափարն այնտեղ, ամենուրեք բազմաթիվ կողմնակիցներ ունի: Խստ ակներեւ կերպով և համապատասխանում նա ոտարյերկրացիների ձեռքով շահագործվող ժողովուրդների տարրեր ձգտումներին: Մեծ պետությունների անվերջ հակամարտությունն ավերում, ուժասպառ և անում այդ ժողովսւրդներին և մութ խաղերի որյեկտ դարձնում նրանց:

Բայց այս խելացի գաղափարի բոլոր կողմնակիցներն ավելացնում են. «Մեծ պետություններն այդ թույլ չեն տա: Մի մեծ, քաղաքականապես հաշտարար և տնտեսապես միասնական պետության գաղափարը դեմ ե նրանց ծրագրերին:»

Իհարկե՝ աչք չպիտի փակել այն դժվարությունների առաջ, վորոնց կհանդիպի «Բալկանյան Միացյալ Պետությունների» իրագործումը: Այդ դժվարությունները կհարուցեն նրանք, վորոնք իրենց իրավատեր են համարում ուրիշների վիճակը տնտերինելու խնդրում: Մեծ պետությունները շատ ամուր են կառչել այն անհեթեթ ու կորստաբեր հասարակակարգին, վոր ստեղծվել ե հաշտության դաշինքներով: Ազգերի միջև գոյություն ունեցող փոխհարաբերությունների խելացի վերակազմությունը համազոր ե այդ տեսակ հասարակակարգի խորտակման: Ահա թե ինչու կրկնակի կերպով — ներսից ու դրսից — այս հարստահարված ժողովուրդները այնպիսի յելքի պիտի կառչեն, վոր վերջին

հաշվով ավելի, քան մի ուրիշ ձև, ապահովեր իսկական խաղաղությունը Յեվրոպայում:

Վորեմ գաղափար իրականացնելու համար նրան պիտի ձեակերպել և տարածել: Հետազյում նա իր ճանապարհն ինքը կհարթի: Վաղ թե ուշ՝ մեծ վեճերից յերեան կդան լուծելու հիմունքները չարաբաստիկ ու անվերջ արեւյան հարցի, վոր մարդկությանն այնքան արհավիրքներ և պատճառել: Շահամոլ ու քինոտ վորոգայթները պետք ե խորտակվեն: Յես կոչ եմ անում բոլորին, ովքեր հետաքրքրվում են ժամանակակից մարդկության վիճակով ու նրա ապագայով, մտնել պաշտպանության կոմիտետների մեջ և ոգնել նրանց առողջ ու լոյալ ձեռնարկություններին: Յուրաքանչյուր վոք իր կարեցածի չափ կարող ե և պիտի պաշտպանի մեղ: Առանց այն ել հրեշտավոր չարագործություններին և մեր որերում իշխող բարբարոսական ժամանակաշրջանին վերջ գնելու համար՝ կտրուկ միջամտությունը շատ և ուշացել: Այդ հարցում մենք բոլորս բավական ծույլ ու անշարժ ենք մնացել:

* * *

Այս մասը գրված եր, յերբ Յանկովի հեռանալու տեղեկությունը հասալ մեղ: Վոչինչ չի արգելի մեզ մտածելու, թե Յանկովի գործադրած կառավարական բանդիտիզմի մեթոդները կմերժվեն նոր կարինետի կողմից, ուր նրա ստվեր գեներալ Վոլկովը զինվորական նախարարի պորտֆել ունի, ուր մտել են Զինվորական Լիգայի հիմնադիրներից ու առաջնորդներից Սլավեյկո-Վասիլես, յերկրորդ զինվորական դահիճ


Կիմոն Գեորգիկը, վորն արդարադատության նախարար է, Ժողովի եքս-նախագահ Կուլեր, վոր բոնվեց մտածված կերպով ձայները սխալ հաշվելում, յերբ պարլամենտում Ցանկովի գլխին կախված եր սպառնալիք: Ի՞նչ միջոցներ կարող ե ձեռք տոնել Լյապչեր Զինվորական Լիգայի, մակեդոնական «Ավտոնոմիստաների», վրանգելյանների և ֆաշիստների դեմ. Ի՞նչ դիրք կը ըռնի պետության և ամսիստիայի մասին յեղած հրեշավոր որենքի նկատմամբ: Ավագ, այդ բոլոր հարցերին մենք յերկար անտեղյակ չենք մնա:

Հասարակական կարծիքն, ուզում եմ այս բանը կրկնել վորպես յեղբակացություն, սիրում ե իրեն պարուրել լավատեսության մշուշով: Հարուստ թերթերը, վորոնց խմբագիրներն անաղարտ խղճի տեր մարդիկ են, այս կուրությունը հանգիստ կերպով մշակում ու զարգացնում են: Պետք եր Մատտեոստիի սպանությունը, —իսկ դա՝ նման հազարավոր գեղքերից միայն մեկն եր, —վոր այդ կարծիքը սիրու աներ իսկական աչքերով նայելու Մուսաովինի վրա: Հարկավոր եր պաշտոնակես մասնակցել կեղծ զրամների արտառոց գործին, վոր նա կարողանար իրեն հաշիվ տալ Խորտիի և նրա շրջապատողների իսկական դեմքի մասին: Պետք ե խոստովանել, վոր մի քանի առաջադեմ անկախ թերթեր գրում են այդ մասին, բայց դա ձայն բարբառո հանապատի յե: Ցեվ յեթե նույն իսկ մի քանի սենսացիոն մերկացումներ ել ցնցում, որորում են հասարակական կարծիքը, մի փոքրիկ պատրիակ բավական ե, վոր նա նորից ընկնի իր հաճելի քնի մեջ, վորովհատե նա ամենից առաջ հանգիստ ե ուզում: Բավական են

կառավարող մեքենայի վերին մասերում մի քանի գլխակոնձիներ ու հնչուն բեկլամներ, և նու (հասարակական կարծիքը) կհանգստանա: Պիտի զգուշանալ, վոր այդ բանը չպատահի Բուլղարիայում և, հավանորեն, Ռումինիայում կամ Վենգրիայում: Ցեղ այն որը, յերբ մի նոր խայտառակ դեպք Ազգերի Լիգային և նրա խմբերիալիստական նվաճողական զինվորական ծրագիրը վերջնականապես խորտակման դուռը կհասցնեն, ինչպես այդ պիտի սպասել, բավական և միայն, վոր նա իր անունը փոխի և նորից ընդհանուր վստահություն ձեռք կրերի, ժամանակակից հասարակությունը նորից հանգիստ կերպով կշարունակի գլորվել գեղի անդունդը:

II.

ՄԵԾԱԳՈՒՅՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊՐՈՑԵՍՈԸ



ՄԵԾԱԳՈՒՅՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊՐՈՑԵՍՍԸ ՅԵՎՐՈՊԱՅԻ ՅԵԶՐԻՆ

Թաղաքի վրայով դառնաշունչ ցուրտ ե անցնում։
Փողոցներում ագռավներն են ու տրոյկաներ։ Ագռավ-
ները յերամներով ու փոքրիկ խմբերով, ինչպես ուրիշ
տեղերում ճնճղուկներն ու հավերը, ձյունապատ ու
սառցապատ մեծ փողոցում դիակապատով են զբաղված։
Փողոցը ձգվում է յերկաթուղակայարանից և սկզբում
մի լայն ծառուղի յև ներկայացնում։ Խոկ տրոյկաներն
իրենց զանգահարող աղեղներով—այդ հին խարխուլ ու
մաշված կառքերն—անիմսների յուրաքանչյուր պտույ-
տից պատրաստ են խորտակվելու։ Առաջի մասում տեղ
և բռնել մի մոռայլ մարդ՝ մուշտակնիվ, թե խունացած
զիալունով, մահուղեմ, թե մորթե գդակով։

Ժամանակ առ ժամանակ աջ ու ձախ կողմերում
փայտե շենքեր ես նշմարում։ Սայլերի հետքից յերեսում
ե, վոր հենց այլտեղից ել սկսվում ե ճանապարհը։
Ռուսական վերտառություններ են յերեսում՝ տեղ-տեղ
կիսաջնջված ու ծածկված այլ վերտառություններով։
Այս պարզ ու սպիտակ գեկորացիայի մեջ, ուզ, ինչպես
թղթի վրա, մութ-կինամոնագույն թեթև տներով մի
ընդարձակ գաշտանկար ե գծագրված։ այս ցրտում, այս
փայլուն միջավայրում ու այս մարդկանց մեջ սկսում
ե թվալ, թե դու Ռուսաստանումն ես։

Բայց մենք Բեսսարաբիայի մայրաքաղաքումն ենք — Քիշինոյում, վոր մենք Քիշինե ենք կոչում:

Բուն, իսկական Ծուսաստանը հեռու չե. յերբ բարձրանում ես քաղաքը շրջապատող բարձունքները, ճիշտ այս տեղից, ուր գեներալ Շուղեանուն, ոռումինական ԱԱ ոկկուպացիոն կորպուսի հրամանատարը, Հռովմի պատվին պատմական գայլի արձանը կանգնեցրեց, յերեվում են Ծուսաստանի բլրաձև ուրվագծերը: Մենք չորս յերկու կառքով ենք գնում, վորովհետեւ քիշինոյան յուրահատուկ բոժոժավոր կառքերը յերկու հոգուց ավելի չեն կարողանում վերցնել: Կողքիս նստած ե մորթե զլխարկով մի մարդ, սպիտակ բեխերով, պատանեկան դեմքի գույնով և պարզ ու սիրալիք հայցքով: Դա կոստա Ֆորուն ե, ոռումինական «Մարդու իրավունքի լիգայի» քարտուղարը, վոր ուղեկցում և ոգնում ե արևմտյան «միսսիային»՝ հանձին Պառկե Լամի, Լեռն Վերնոշեյի և իմ:

Մենք բոլորս գնում ենք մերձկայարանյան ծառուղիով, վորն աստիճանաբար փողոցի յե փոխվում, իր լայնությունը բնավլ չկորցնելով: Տները հետզհետեւ բարձրանում են, հայ բարձրանում ու սղմվում Բանկի մեծ շինությանը. ահա և մի պալատ - սպայական ժողովարանի նման մի բան: Բավական յերկար գնում ենք մոխրագույն սառցապատ ճանապարհով: Աջ ու ձախ նորանոր տներ են յերեսում:

Քիշինե համարյա ուրիշ փողոցներ չունի, բայց այս փողոցը անծայր ե:

Վերջապես մենք աջ ենք թեքվում: Մահում ենք սառցակալած ճանապարհով: Մայլանիմսերի թողած

հետքն ամուր ե ռելսերի պես: Մենք ներս ենք մըտնում մերկացած, տխուր ու հատուկտոր տներով մի տեղ, թացասիկ ցուրաը կարմրություն ե տալիս մեր դեմքերին, յերեմն աչք ե կուրացնում: Մեկ ել առաջներս մի հսկա շենք ե ցցվում ու փակում մեր ճանապարհը: Դա մի ահագին ֆեռդալական ամրոց ե՝ փառահեղ ու մասսիվ: Նրա շուրջը ապաստան էն գտել մի քանի նոր տներ: Մենք կանգնած ենք դեպի միջնադարյան ամրոցը տանող ստորյերկրյա մուտքի մոտ: Այստեղ կանգնած են զինվորներ ու սպաներ՝ խակի զույնի նշանազգեատով, գլխներին կեպի, հրացանների ծայրերին՝ կարճ ու լայն սվիններ: Դարալասները բացվում են, և մենք Քիշինեաի բանտումն ենք: Բարձր պարսպի և ամրոցի հաղթ շենքի մեջ ընկած և բանտի բակը: Հանդիպում ենք մի խումբ մարդկանց՝ զինվորների հսկողության տակ, վորոնց սվիններն ամրացրած են հրացաններին: Սրանց դեմքերը հիվանդուտ են. հագներին ունեն գծավոր շորեր, վորոնք սգազգեստի յեն նման:

Մեր անցնելու ժամանակ պահակներն, ըստ յերեվույթին մեզ իշխանավորների տեղ ընդունելով, բանտարկյալներին հապճեպով ժողովում, շարք են կանգնեցնում և վողջունում ինչ վոր տարորինակ կանչով:

Մեր առաջ մի նեղ ու յերկար բարակ ե ձգվում: Ներս ենք մտնում, լիքը մարդիկ են: Խորքում յեկեղեցու բեմի նման մի սեղան ե յերեսում, վորի շուրջն իրենց նշանազգեստներում ձգված հինգ անշարժ սպաներ են նստած՝ լուրջ դեմքերով, ձեռքները սեղանին

դրած։ Մեջ տեղում նստածի առաջ փոքրիկ խաչելություն կա։ Զինվորական դատարանի այս հինգ սպաները սառել են, ինչպես իրենց առջելի խաչելությունը։ Լուսանկարիչը կարիք չեր ունենա խնդրելու, վոր ուղիղ ու հանգիստ նստեն։ Նրանք յերկար ու մանանեխի գույնի շինել ունեն։ Սեղանի մի ծայրում նստած ե մի գեր սպա, մյուսում—մի նիհար։ Հստ յերկույթին նրանցից վոչ մեկը քառասուն տարեկանից անց չի։ Հինգ դատավորների առաջ մի վառարան կա և հին հրացանների ու սրերի մի կույտ, զանազան զինվորական պիտանի ու անպետք իրեր, առաջն ել յերկու գնդացիր։ Հետին պատի յերկարությամբ ևս հրացաններ են շարած՝ ինչպես զորանոցում։ Դատական սեղանից աջ, նրան ուղղահայաց, մի ուրիշ սեղան կա, վորի շուրջը նստած են յերկու սպաներ։ Սրանք թագավորական դատախազներ են։ Զախ կողմում յերկրորդ սեղանն ե՝ զուգահեռական դատախազականին, այս սեղանն ել քաղաքացիական դգեստով ութ պաշտպաններ են շրջապատում։ Դատավորներից մի քանի քայլ հեռու դրած նստարանների շարքերը հասարակության համար են։ Առաջին շարքում յերեք բաղկաթոո կա՝ ինձ և ընկերներիս համար։ Հասարակությանը հատկացրած տեղում մի քանի յերիտասարգներ են նստոտել։ Դահլիճի ամբողջ յերկրորդ մասում խոնվել են մի քանի հարյուր հոգի. մեծ մասը կանգնած ե, մի քանիսը նըստած, մինը պառկած ե պատգարակում։ Մեղադրյաների լուր բազմությանը հսկում են սպառազեն զինվորներ։

Այս պատերի ներսում տեղի ունի «աշխարհի մեծագույն դատավարությունը», — այսպես հայտարարեց

մեզ զինվորական դատավորներից մեկը առանձին հպարտությամբ։

Բոլոր մեղադրվողները թվով մոտ 500 հոգի յեն, նրանցից հարյուրը բացակայում են—մեռել կամ փախել են։ Մեղադրանք ե ներկայացրած 283 մարդու։ Մենք յեկել ենք Փարիզից ոռոմինական այս ծայրամասը, հարավ-արևելյան Յեվրոպայի ամենահեռավոր անկյունը՝ գլխավորապվս այս դատին ներկա լինելու։

Բոլորը, առաջին հերթին նախարարները, վորոնք խոստացան ամեն տեսակ հնարավորություն տալ մեզ՝ լավ ծանոթանալու համար այս գործի հետ, դեռ Բուխարեստից այդ եյին խոսում։

Ահա թե ինչո՞ւ յենք հայտնվել այստեղ, ինչո՞ւ անցանք Բեսսարաբիայի ավերված դաշտերը, վորի վրայով կարծես թշվառության փոթորիկ ե անցել, և Ֆուրնյեյից ու Տոլրեսից հետո ներկա յենք այս դատական ու քաղաքական վողբերգությանը, վոր գերազանցեց մինչեւ որս յեղած համաշխարհային բոլոր դատերին։

Առավոտյան մենք գնացինք յերկրորդ զորաբանակ և տեսնվեցինք համանատարի—գեն։ Ռուտեանուի հետ, վորը նույնպես իրեն դրավ մեր տրամադրության տակ և վառ ու պաթեթիկ վոճով մեզ իր հայրենասիրությունը ցուցադրեց։ Նույն վառ զգացմունքներով լցված՝ նա պատասխանում եր կոստա- Ֆորուի անհանգիստ ու հուզված հարցերին՝ բեսսարաբիական գյուղացիների նկատմամբ բռնելիք դիրքի մասին։ Յերբեք չեմ մոռանա այդ տեսարանը. յես այժմ ել տեսնում եմ հարամանատարի հոետորական շարժումները։ Նա զույգ ձեռքերն առաջ մեկնելով՝ ասում եր, թի մի ժամանակ

հոռվմայեցի Մուկիոս Սկեոլան այրեց իր ձեռքը՝
վորպես նշան իր հայրենասիրության։ Այժմ ել ինքը
պատրաստ ե իր զույգ ձեռքերն այրելու։ Կոստա - Ֆո-
րուն հանգիստ, առանց շարժումների դիտում եր նրան
և դողդոջ ձայնով պաշտպանում մասսաների ապրե-
լու իրավունքն ու պահանջում, վոր նրանց արյունը
խնայիլ։

* * *

Մինչդեռ փաստաբան Կոլոգնումուն գունատ ու վըս-
տահություն չներշնչող դեմքով իր ճառն եր արտասա-
նում, վորի հիմնական կետերը ինձ համար թարգմա-
նում եր հարևաններից մեկը, յերկրորդ հարևանս կա-
րողացավ շշնջալ, թե մեր գալուց առաջ զինվորական
դատարանի եահլիճում վորոշ ձևափոխումն ե տեղի
ունեցել. նախ՝ այն բազկաթոռները, վորոնց վրա մենք
նստած ենք, միայն այսոր են դրվել՝ հատկապես մեզ
համար. մի որ առաջ դահլիճը խնամքով լվացվել ու
կարգի յե բերվել. Բացի այդ, հասարակությանը հատ-
կացրած տեղերում սովորաբար վոչ վոք չի լինում,
թեպետ սկզբունքով միշտ մուտքն ազատ ե յեղել (վոչ
վոք սիրտ չի արել մտնելու այդքան սվիններով պահ-
պանվող մոայլ բանտը և լոկ հետաքրքրության հա-
մար պահնորդականների ցուցակն ընկնել): Այժմ աչքի
յեն ընկնում յերիտասարդներ, լիցեյի ուսանողներ,
ինչպես ինձ հավատացնում եյին, կանչված հատկապես
այս դեպքի համար։

Վերջապես ավելի կարևոր մանրամասնություն —
այսոր առաջին անգամ ցուցադրել են բոլոր իրական

տպացույցները—զենքերը, վորոնք կիտված են դատավորների առաջ։ Անցյալում այս ամենը կարելի յերտիսնել արկղերում կամ ամրոցում։ Հայտնում են, վորայս զենքերը դեռ բոլորը չեն։

ԻՆՉՊԵ՞Ս ԵՆ ԲՈՆԱԳՐԱՎՈՒՄ ՈՒՐԻՇԻ ՅԵՐԿԻՐԸ

Այս հաշվետվության մեջ գրական-գեղարվեստական շեղում թույլ տալը յես սրբապղծություն կհամարեյի. բայց հարկադրված եմ կրկնել հին վիպագրողի խոսքերը, թե՝ «Իսկ այժմ մի փոքր հետ դառնանք»։

Վորպեսպի լավ հասկանանք այս պրոցեսսի պայմանները, պրոցեսս, վոր հետեանք և գյուղացիական ապատամբության թաթարբունարում, պրոցեսս, վոր միքանիս ամիս տևեց, վորի վերջին գործողությունները մեր աչքի առաջ տեղի ունեցան, պետք և ընդհանուր գծերով շոշափենք Բեսսարաբիայի պատմությունը, սկսելով ոռւսական փետրվարյան հեղափոխությունից և ոռոմինական աննելսիայից։

Բեսսարաբիան մի ընդարձակ յերկիր ե՝ ընկած Պրուտի և Դնեպրի միջև, վոր նրան բաժանում և Ուկրայինայից։ Պատերազմից առաջ նա մի ամբողջ գար շարունակ ոռւսական կայսրության կազմի մեջ եր։ Սա յերկրագործական յերկիր ե. Բեսսարաբիայի բերքը յերբեմն ամբողջ կայսրության բերքի մի տասներորդ մասն եր կազմում։ Նրա մակերեսույթը Շվեյցարիայի մակերեսույթից մեծ ե. 1915 թվին 2.686.000 քնակիչ ուներ—կեսը մոլդավաններ, $19^{\circ}/_0$ ուկրայինցիներ, $11^{\circ}/_0$ հրեաներ և $8^{\circ}/_0$ վելիկորուսներ։ Մնացածը բուլղարներ, գերմանացիք, լեհներ։ Բեսսարաբիան

ցարական լծի տակ շատ եր տանջվում, թեալետ վոչ վոք նրա յերկրսպործական զարգացումը չեր խանդարում: Ճնշումներն ու զեղծումները, վորոնք գոյություն ունեյին ցարի որերում, առաջ բերին 1917 թ. մոլդավական շարժումը, յերբ ցարական գահը յերերաց ու փուլ յեկավ: Ռուսական հեղաղափոխությունից հետո այստեղ ուռմինական ուժեղ ագիտացիա սկսվեց՝ հոգուտ Ռումինիային միանալու: Ռումինիան պահանջում եր Բեսսարբիան՝ հենվելով պատմական իրավունքի և յերկրի ազգագրական բնույթի վրա:

Ի՞նք Են ԱՍՈՒՄ ԳԱՂՏՆԻ ԴԻՎԱՆՆԵՐԸ

Մենք այժմ ամենաճիշտ տվյալներն ունենք այն ուռմինասիրական և հակառասական ագիտացիայի մասին, վոր տանում եյին գաղտնի ազենտները. գիտենք, վորովհետև խորհրդային իշխանությունը հրապարակեց իր նախարարների գաղտնի դիվանները: Այս դիվանների հրապարակումը մեծ լույս սփուց ժամանակակից պատմության գաղտնի կողմերի վրա: Խրիստիան Բակովսկին՝ խորհրդային իշխանության այժման Փարիզի դեսպանը, ծնունդով բալկաններից, վոր առանձնապես լով ծանոթ և բալկանների ներքին ու արտաքին քաղաքականությանը վերաբերող խնդիրներին, այդ ժամանակաշրջանում կատարվածների մասին իր ձեռքում անհերքելի ապացույցներ ուներ:

Ռուսական հեղափոխությունից հետո, յերբ Ռումինիան կարող եր հուսալ, թե գաշնակիցները կհաղթեն, սկսում ե Բեսսարբիայի փաստական աննեկտացիան պատրաստել:

Ռուսական ժամանակավոր կառավարությունը իր հետախուզող որդանների մնջոցով իրազեկ եր Ռումինիայի փորձերին՝ գերմանացիների հետ դաշն կապելու:

Այս նպատակով Բուխարեստի եվոկուացիայից հետո, գերմանասեր կուսակցության բոլոր առաջնորդները Բարտիանույի համաձայնությամբ մնացին Ռումինիայում: Ռումինիայից հատուկ աղքանտներ ուղարկվեցին Բեսսարաբիա՝ պլուզագանդայի:

Դեռ 1917 թ. Տերեշենկոն, Ժամանակավոր կառավարության արտաքին գործոց նախարարը, Յասսայի ոռւսաց դիմապանից ճիշտ տեղեկություններ և պահանջում՝ մի քանի անձնավորությունների մասին, վորոնք Ռումինիայից Բեսսարաբիա ելին գնացել՝ հակառակական տրամադրություն ստեղծելու:

Հենց այս ինտրիգաների հողի վրա յել հրապարակ ե գալիս բաղդախնդիր Կատարեուն, ոռումինական պրոպագանդայի կազմակերպիչը Բեսսարաբիայում, վոր հետագայում Քիշինեվի քաղաքական զորքի պետի պաշտոնն ստացավ: Ռումինական իշխանությունները Բեսսարաբիայում ունեցած իրենց մեքենայությունների հետքերը կորցնելու համար՝ հրացանազարկ կանելին այս պարոնին: Բայց Բրատիանուի գիվանում մենք գտնում ենք Կատարեուին վերաբերող մի շատ հետաքրքիր փաստաթուղթ:

Այդտեղից մենք ի միջի այլոց իմանում ենք, վոր Կատարեուն ոռւսական դասավիք ե, ոռումի-

նական պահնորդականի ագենտ և յեղել, վոր ռումին ական կառավարությունը մի անդամ արդեն ոգտագործել և նրան դեռ 1913 թվին՝ Վենգրիայում մի անիշխանական մահափորձ կազմակերպելու համար, և վոր նրա բազմաթիվ զոհերից մեկն ել Դեբրեչինակի յեղիսկոպոսն եւ:

Այս փաստաթղթերի լուսանկարներն արտատպած են Ռվայինական «Կարմիր գրքում», վոր լույս տեսավ Փրանսերեն լեզվով, «Խորհրդային Ռվայինա» անունով:

Մենք այդտեղ մի նամակ ել ենք գոնում, վոր ուղարկել և Փարիզից Լախովարին—այդ ժամանակ ռումինական ներկայացուցիչը։ Այդ նամակում նա մանրամասն հաղորդում է Բրատիանուին Փրանսիական իրավաբանների հետ ունիցած խորհրդակցության մասին։ Նամակը նպատակ ունի ոգնել Բրատիանուին՝ դուրս գալու դժվար կացությունից այն դեպքում, յեթե վենգրական ագենտները փորձեն ձերբակալել Կատարեսուին ռումինական հողի վրա (Բրատիանուն խոստացել եր Զերնինին, Բուխարեսուի ավատրո-վենգրական դեսպանին, չխոչընդոտել Կատարեսուի ձերբակալությունը վենգրիական պահնորդական բաժնի ագենտների միջոցով)։

Յես հարկավոր համարեցի մեջ ըերել այս կտորը, բոլորովին նպատակ չունենալով խոսել Ռումինիայի կամ Ռուսաստանի իրավունքների մասին Բեսսարաբիայի վերաբերմամբ, վորովհետեւ այդ խնդիրը գործի հետ վոչ մի կազ չունի։ Սակայն պրոցեսով պիտի

դիտել բաղմակողմանի կերպով և, վոր ամենից կարեվորն ե, խախտել շատերի յերանելի անտեղյակությունը, վորոնք պաշտօնական դեկլարացիաներին շարունակում են կուրորեն հավատալ և չեն ընդունում ու հասկանում այն միջոցները, վոր կառավարությունները գործ են դնում՝ արտաքին վայելուչ ձեզ պահպանելու և հրապարակական արարողությունների համար, ուր նրանք միայն խոսում են ժողովուրդների աղատության, արդարության և իրավունքի մասին:

ՍՖԱՏՈՒԼ-ՑԵՐԻՆ ՑԵՎ ԳԵՆԵՐԱԼՆԵՐԸ

Այն որերում, յերբ ՌԱԿՐԱՅԻՆԱՅԻ գերմանական ոկկուպացիան Ռուսաստանից բաժանեց Բեսսարաբիան, վերջինս փաստորեն ավտոնոմիա ստացավ: Կառավարում եր ազգային ժողովը — Սֆատուլ-Ցերին: Այս ժողովը, վոր տարբեր ազգեցությունների մի ասպարեզ եր, այնպիսի դիրք բռնեց, վոր անաշառ ու որյեկտիվ պատմաբանը բավական տարորինակ կհամարի և կընդունի, վոր անկասկած Սֆատուլ-Ցերին դավաճանեց Բեսսարաբիայի շահերին: Սկզբում նա «Մոլդավական հանրապետության» ավտոնոմիա հայտարարեց, վորի պետական ձևերը խորհրդային հանրապետության վորդով եյին հասկացվում: Հետո նույն Սֆատուլ-Ցերին քվե տվալ հոգուտ նույն Մոլդավական հանրապետության միացման Ռումինիային՝ վորոշ պայմաններով ու ավտոնոմիայի յերաշխիքով և վերջապես մի գեղեցիկ գիշեր ել, հանկարծ, ոումինական զինվորականության ճնշման տակ ձայն տվալ հոգուտ անպայման միացման

Ոռւմինիային և իրեն ել իսկույն արձակված հայտաբարեց:

Ոռւմինական զորքը Բեսսարաբիա մտավ: Ի՞նչ նպատակով: «Վորպեսպի յերկաթուղիները պահպանի»: Իսկ գեներալներն իրենց կոչերում, վորոնք միայն կեղծավորության որինակներ եյին, ազգաբնակությանը հավատացնում եյին, թե ոռւմինական զինվորները չեն յեկել յերկրի անկախությանը ձեռնամուխ լինելու:

«Մեզ այստեղ բերողը պարզ քրիստոնեական պարտքըն ե», ասում եր գեներալ Սկինան զյուղում ու քաղաքներում, և «ցավով» հաստատում, թե շատերը չեն հավատում այս մաքուր միասիային, վորի նպատակը «ազատություն, հավասարություն ու յեղբայրություն սահմանելն ե»: Նույն՝ գեներալ Սկինան՝ առանց վախենալու՝ ոգնության եր կանչում ոռւսական հեղափոխությունը. — «Հանուն մեր սուրբ ուղղափառ կրոնի, հանուն ազատության, հանուն ձեր դաժան հարատահարիչ միապետությունն արտաքսող հեղափոխության, կոչ եմ անում չլսել ձեզ դեպի կորուստ տանող վոճրագործներին»:

Զինվորական իշխանության հոգատար վերաբերմունքի շնորհիվ հետևյալ աֆիշները փակցըին պատերին.

«Մենք այստեղ ենք յեկել միայն մի նպատակով — մեր պահեստներն ու յերկաթուղիները պաշտպանելու. մենք բնավ չենք ցանկանում խառնըվել ձեր յերկրի ներքին գործերին»:

Սրան ավելացնում եր, թե Ֆրանսիան յերաշխավորում ե զորքի աստիճանաբար հեռացումը, հենց վորայս նպատակն իրագործվի:

Այս բառերն ու գրածները, վորոնց կոլեկցիան մնում և ապագա պատմագրի համար, ամենացինիկ կերպով հակասում են այն ամենին, վոր տեղի ունեցավ անմիջապես զորքի դալուց հետո։ Նրանք գրավեցին Սփատուլ-Ցերիյի շենքը։ Թիշինեի վրա աերոպլաններ եյին սավառնում։ 1918 թվի նոյեմբեր 25-ի առավոտյան ժամը 5-ին ժողովի նախագահ Խալիպսան 46 պատգամավորների (200-ից) առաջ կարդաց անսեկուիայի գեկրետը և մինչև վոր մեկն ու մեկը կբողոքեր, անսեկուիան միաձայն ընդունված հայտարարեց և հրաժարվեց վորեւ մեկին խոսք տալուց։ Գեներալ Վոյտոյանուն, վորին հեռախոսով կանչել եյին, յեկավ Սփատուլ-Ցերիյ և թագավորի անունից նրան արձակված հայտարարեց։ Այս փաստերը չի կարելի հերքել։ Նրանք առաջ են բերված այն բողոքի մեջ, վոր Սփատուլ-Ցերիյի անդամների մեծամասնությունն ընդունեց, հենց վոր ուշքի յեկավ և հասկացավ կատարվածը։

Առ այդ՝ Մարդկի ոմանը, վոր 1918 թ. պրեմյեր երյեղել, Բեսսարաբիայի բոնի գրավման հնդամյակի առթիվ պաշտոնապես հայտարարեց, թե ինքը հարկադըրված և յեղել ապառնալիքի ու բռնության դիմելու, վորպեսզի ստիպի Շփատուլ-Ցերիյի անդամներին՝ ընդունել Բեսսարաբիայի անսեկուիայի վորոշումը։ Այս անսեկուիայի պատմությունը վերջացնելու համար ավելացնենք, վոր Սփատուլ-Ցերին ընդհանրապես լիազորված չի յեղել այդ հարցը լուծելու, վորովհետև ընդհանուր ձայնատվությամբ չեր ընտրվել, այլ միայն մի ժամանակոր ժողով եր՝ կոչված պաշտպանելու Մոլդավական հանրապետության գոյությունը՝ մինչև հիմնադիր

ժողով հրավիրելը և սահմանադրություն մտցնելը: Նա հանդիսավոր կերպով հայտարարեց, թե ինքը լիազորված չե հանրապետության բաղդը վճռելու և պարզաբանեց, թե այդպիսի վճիռ կարող ե տեղի ունենալ միայն բեֆերենդումի միջոցով: Ստեղծված դրության համար դա միակ թույլատրելի ճանապարհն եր: Սակայն բնակչությանը վոչ վոք չհարցրեց. իսկ պահանջողնեն ել բանտարկվեցին ու սպանվեցին: Զնայելով այն հավաստիացումներին, վոր Սփատուլ-Ցերիյի գերի մասին արին ոռումինական ազգայնականները, Բեսսարաբիայում յերբեք բեֆերենդումի նման բան տեղի չի ունեցել:

Ռումինական զորքը գրավեց ոռուսական մարզը (օբլաս্ট): Աննեկսիան սրբագործվեց Անտանտայի կողմից, վոր հարցը լուծեց հոգուտ Ռումինիայի: Դա միջազգային որենքներին հակառակ կատարված մի բռնագրավումն եր, վորովհետև դաշնակիցներն այդ ժամանակ Ռուսաստանի հետ պատերազմական վիճակում չեյին և վերջինս վոչ մի պայմանագրով կամ համաձայնագրով առ այդ չեր տվել իր համաձայնությունը: Նա սանկցիա ստացավ Ֆրանսիայի և Անգլիայի կողմից միայն 1920 թվականին: Բայց Խոալիան և Յապոնիան մինչև որս ել հրաժարվում են վավերացնել իրենց ներկայացուցիչների ստորագրություններն այդ բռնագրավման դոկումենտի վրա: Ինչպես վերն ասացի, բազմաթիվ ոռումին քաղաքական գործիչներ, նույնիսկ Բեսսարաբիան, իբրև Ռումինիայի ազգագրական մի մասը նրան միացնելու կողմանակիցներից, ներկա դրությունն աննորմալ են համարում են, վոր

այնուամենայնիվ Ռուսաստանի հետ վորևե համաձայնության պիտի գալ, Միջազգային որենքի տեսակետից այդ հարցը կախված է ողի մեջ:

ՌՈՒՄԻՆՆԵՐԻ ՆԵՐԻՆՌԻԺՈՒՄՆ

Մի կողմ թողնելով իրավական ինդիրները, պիտի հաստատենք, վոր ռումինական ոկկուպացիան Բեսսարբիայի համար տառապանքի ու չքավորության դարագլուխ բացեց: Սկսենք խստություններից: Հունվարի 21-ին Քիշինևում բացվեց համարեսարարյան գյուղական համագումար: Հենց առաջին նիստում նա բողոքեց ռումինական ոկկուպացիայի դեմ: Գեներալ Բրոշտիանուն հրամայեց ձերբակալել և անմիջապես հրացանազարկ անել համագումարի նախագահ Ռուդնիկին: Հաջորդ որը ձերբակալվեցին ու հրացանազուրկ յեղան՝ Բեսսարբիայի հանրապետության յերկրագործության նախարար Չումաչենկոն, զինվորական նախարար Պրոխնեցկին և կառավարության ամդամներ՝ Պանցերն ու Կատարոսը: Սրանք բոլորն ել գյուղացիական համագումարի անդամներն եյին:

Ռումինական կառավարության որգան «Vittorio»-ը հաղորդելով այս փաստերի մասին, ավելացնում ե, թե ռումինական զորքերի մուտքի դեմ արած բողոքի համար գնդակահարվածներն արժանի պատիժը կրեցին:

Ռումինական զինվորական իշխանություններն իսկույն ստիպեցին «ազատ ու անկախ Մոլդավական հանրապետության» զորքին՝ յերդվել ռումինական թագավորին: Տասնյոթ ռումին զինվորներ, վորոնք հրաժարվեցին յերդումից, տեղն ու տեղը հրացանազարկ յեղան:

Բեսսարաբիան բռնագրվելով, սումբիններն սկսեցին վարվել նրա հետ, վօրպես զրաված յերկրի հետ, վորից անմիջապես պետք եր յեկամուտ կորդել: Զինվորական ոկկուլացցիայի հետևանք հանդիսացող աղքատացությունը ու քառոսը, դեպի Ողեսսաւ ու Ռուսաստան տանող դարավոր յելքի փակումը, անհետաձգելի ողնությունը պահանջող մի շարք յերաշտ տարիները և այլ բազմաթիվ հանգամանքներ, վորոնց մասին մենք ստորև գեռ կխոսենք, բնակչությանը սովոր ու չքավորության դուռը հասցըին: Բեսսարաբական պատրամավոր Յակուբսեկուն ուսմինական պարլամենտում մի զգայացունց ճառ արտասանեց, վորի մեջ թվեց հյուծվածությունից պուածացած մի շարք մահվան գեղքեր, ինչպես որինակ՝ իզմայիլի շրջանի (Թաթարբունարի մոտ) գյուղացիների մեջ:

Այժմ գժվար չե հաստատել, վոր յերբեմնի այս ծաղկած յերկիրը ներկայումս վողբալի վիճակ և աղբում: Դաշտերի 80% լքված են: Նրանց մոտով անցնելիս՝ տեսնում ես կատարյալ անապատ, տեղ-տեղ ել ավերակներ: Ամենուրեք նկատելի յեն հակառակորդի ներխուժման հետքեր: «Ապազգայնացումը, վոր գժբաղտաբար մտել ե մեր իրականության մեջ համաշխարհային քաղաքական խաղերի շնորհիվ, այստեղ սովորական բռնության ու տերրորի միջոցով ե կիրառվել:

Այս շրջանի վերադարձը «մայր - հայրենիքի» գիրկը կատարվել և ամեն տեսակ ավանդներն ու հենց յերկրի բնույթը կոպիտ կերպով արմատախիլ անելով: Վոչնչացված և ազգային լուսավորությունը, վորովհետեւ

պաշտոնական «Vittorul» -ի ասելով, ազգային դպրոցները «բոլշևիզմի և իրրիդենտիզմի ոջախներ են»:

Կենտրոնական կառավարությունը, վոր իրենից վանեց նույն իսկ խաղաղ բարքով աչքի ընկնող Դորուժայի թաթարներին, իր դեմ զինեց նաև զյուղերը ուսմինացնելու գործում այնքան ոգտակար մոլդավական հոգևորականությանը։ Վերջերս հայանաբերեցին և ցըսին մոլդավական հոգևորականության մի գաղտնի համագումար։

Քահանաների գեմ սկսված էն շատ դատեր։ Արտահանման մաքսերով ու բանվոր ձեռքն եժանացնելով ավերված զյուղացիությանը հարկերի միջոցով խեղդել ու կողոպատել են՝ ողուական վայրուտան ուսմինակականի վերածելիութիւն ունենոր զյուղացիներ ստիպված են յեղել առասպելականի չափ եժան գնով վաճառքի հանել իրենց սուրբ պատկերները (իկոնները), իրեղն ու հողերը։ Միջին գյուղացիությունը վաճառում եր իր անասուններն ու ինվենտարը։

Քիշինևից իմ ստացած վերջին տեղեկությունները միայն գործազրկության ու սնանկությունների մասին են խոսում, վորոնք հաճախ ինքնասպանությամբ են վերջանում։

ԶՈՐՔ ՅԵՎ ՎՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ցերկիրը վողողվեց վոստիկաններով ու ժանդարմներով, վորովհետև վերջնականապես պետք եր այդ յերկիրն ամրացնել Ռումինիային։

Կարելի յե ասել, վոր Բեսսարաբիայում 3 բնակչին մի պահորդականի ագենտ ե ընկնում։ Ռումին

ժանդարմների և վոստիկանների գործած չարիքները, բռնություններն ու ավազակություններն ամեն կողմից տեղացին առանց այն ել ծանր ու անհույս կարիքի մեջ ընկած բնակչության գլխին։ Ամեն գյուղում մի քանի ժանդարմ նստեցրին։ Վողորմելի ոռճիկը սրեց նրանց դաժանությունն ու ագահությունը։ Նրանք ամենուրեք ժողովրդին ստիպում եյին՝ վճարել իրենց։ Հաճախ, յերբ գյուղացիները ժանդարմներից պահանջում եյին վերցրած իրերի արժեքը վճարել, սպանվում եյին։

Ոկկոպացիայի առաջին ամիսներին, յերբ խոսքը վոչ թե խստությունների, այլ միայն խաղաղ աննեկսիայի մասին եր, զինվորական իշխանությունների գործած գաղանություններն իրենց նմանը չունեյին։ Այդ հրեշտավոր արարքների մասին այնքան ընդարձակ նյութ կա, վոր անհնարին և բոլորը թվել։ Կարելի յե միայն մի քանի որինակ բերել։

«Զունենք մեկը, վորին գանգատվենք», — հուսահատորն զրում ե բնակիչների մի խմբակ։ Զունենք մեկը, վորին գանգատվենք, բացի այդ, դա անոգուտ ել ե։ Մտրակածեծը ամիսորյա յերեսույթ ե դարձել։ ծեծում են հենց տեղն ու տեղը, առանց վորեւ դատ ու դատաստանի, 5 — 100 հարված են հասցնում — նայելով «հանցանքին»։ Ռումին սպային բարե չտվողին 25 հարված են հասցնում, Սորոկի քաղաքի պարետը բնակչությանն ստիպում եր 17—19 ժամ քաղաքի գլխավոր փողոցը զբասանքի դուրս գալ։

Անհնաղանդներին ձերբակալում ու պատժում եյին, կանայք ու դեռատի աղջիկները չեյին աղատվում

ամենադաժան պատիճներից. բայց սրանք ավելի մեծ փորձանքի եյին յինթակա: Մի անգամ, պաշտոնական զրոսանքի ժամանակ, մի ռումին դոնժուան մի ջահել հրեյուհու հավանեց. վերջինս անպատկառին պատասխանեց խիստ մերժումով: Անմիջապես հրաման տրվեց ձերբակալել ու ծեծել խեղճ աղջկան... Մի ծեր ու հարգելի հրեա գնաց պարետի մոտ, վոր բանտարկված վորդուն ազատելու համար միջնորդի: Այստեղ նա մի խումբ հարբած սպաների պատահեց: Պարետը հրամայեց մերկացնել ծերունուն և ստիպեց պարել մտրակի հարվածների տակ: Խրիստիան Ռակովսկու մոտ մի պաշտոնական փաստաթուղթ կար՝ վավերացրած իզմայիլի շրջանի պրեֆեկտ Դյումրաույի ստորագրությամբ, 1918 թ. հունիսի 16-ից: Այս հազվագյուտ պրեֆեկտն իր 3 եջանոց զեկուցման մեջ բհսսարաբական ներքին գործոց վերատեսչին բողոքում ե որը ցերեկով տեղի ունեցած այն կողոպուտի դեմ, վորին յինթարկվում են իզմայիլի շուկան կենսամթերք բերող գյուղացիք: Սպաներն ու զինվորները վերցնում են մթերքներն ու վոչինչ չեն վճարում: Բողոքել հանդգնողը սպանվում է տեղին ու տեղը: Զեկուցումը վերջանում ե հետեւյալ բնորոշ հայտարարությամբ. «Յեթե յես դեմ լինեյի թեսսարաբիան Ռումինիային կցելուն, միայն կուրախանայի՝ տեսնելով, թե ինչպես զինվորական իշխանություններն արմատի մեջ խեղդում են ձուլման դադափարը»:

Նույն 1918 թ. մի քանի ուսադիրավոր անձինք հոչակվեցին իրենց մի շարք վայրենի ու արյունոտ արարքներով, վորոնց մասին իր ժամանակին հայտնվեց

մամուլի եջերում։ Հիշենք Դիմիտրիուի և Իզվորանուի անունները։

Քանիցս առաջ են բերված Դիմիտրիուի անմիտ ու անճոռնի հրամանները, յերբ նա դեռ հյուսիսային Բեսսարաբիայի Եղինցեյի քաղաքապահ դորքի հրամանատարն եր։ Մի անգամ ևս պետք է առաջ բերել զինվորական մեծության մարմաջի այդ նմուշներից մեկը։

«Եղինցեյի բնակչությունը ուումինական սպաներին այս կարգով պիտի բարեկ։

1. Յյուրաքանչյուր անցորդ պիտի կանգ առնի, դեմքով դառնա դեպի պետը և ժաման դեմքով խոկույն գլխարկը հանի ու մինչեւ գետին խոր գլուխ տա։

2. Բնակչությունն այս հրամանը ճշտությամբ կատարելու մեջ վարժեցնելու համար՝ քաղաքի փողոցներով որվա զանազան ժամերին ման կածեն իմ գլխարկը, ամենքը պարտավոր են վողջունել՝ այս հրամանի առաջին կետի համաձայն։

Եղինցեյի քաղաքապահ զորքի պետ Դիմի որիու։

Վոստիկանության պետ Ելեսերեսկու։

Վարչության պիտի տեղակալ Վույլպիա։

Թարտուղարի տեղ (անընթեռնելի)։

ԻՇԽԱՆԱՎՈՐԻ ԶՎԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դիմիտրիուն միայն այսորինակ հրամաններով չեր բավականանում։ ուրիշների պես՝ սա յել եր սպանում։ Նա հատուկ որենք եր հրատարակել ու գործադրում եր, վորի ուժով կիրառվում եյին մահապատիճն ու խարադանը՝ նայած նրա յերեակայությանը և զառանցանքին։

Խարազանում ելին՝ 25, 50 կամ 60 անգամ, կամ «մինչև վորոշ թվով ուշաթափություն»։

Խնչ վերաբերում ե իդվորանույին, սպայի նշանագգեստով այս հրեշը հրամայեց հրացանազարկ անել և Դնեպրը գցել Քիշինեվի ու Բինդերի 500 քնակիչներին, բայց ի գժբախտություն նրա՝ այս խայտառակության մասին շատերն իմացան. հարկ յեղավ նրան պաշտոնից հեռացնել։

Յերեկի նրան լավ կոմպենսացիա ուղեցին տալ կամ պաշտոնը մեծացնել, վորովհետև ակնարկ անգամ չկա, թե բարձր խավերում նման ոկկուպանտների գաղանությունների գեմ վորեմ քայլ արած լինեն. Ռումինական զինվորական դատարանը, հենց այնպես, արդարացրեց գնդապետ Ստերբեյին, վորը 1918 թ. գեկտեմբերին. սպանեց Ռոշայլին, իսկ դրանից մի տարի առաջ սպանել եր Ողեսսայի յերեք առևտրականների և մի փոքր յերեխայի (վերջինին մյուսների հետքը կորցնելու համար); Այդ որից նա համոզված եր իր անպատիժ մնալում։ Նույն գնդապետը նորերս վորսից վերադառնալիս՝ սպանեց մի գյուղացու, վոր այնքան ել շտապ չեր դուրս յեկել ճանապարհից՝ ճանապարհ տալու նրա ավտոմոբիլին։

Վոչ վոք չի կարող պնդել, թե այս փաստերը բացառություններ են։ Դրանք որ որի վրա աճում ելին. ամենքը դրա մասին գիտեն։ Յեթե յես բոլորը չեմ թվում, այդ միայն նրա համար, վոր թուղթ շատ կգնա։

Այն ժանդարմները, վորոնց մասին արդեն խոսել եմ, քիչ ելին տարբերվում իրենց զործակից սպաներից։ Աղջայնական պատգամավոր Իորգանը, վոր այնքան

վախենում և ոտարյերկրացիների «քննությունից», ամբիոնից հայտարարեց, թե ժանդարմերիան թեսարարիայում նրա համար ե, վոր ընտրությունների ժամանակ ճնշում գործ դնի և պատժի վոչ կառավարական թեկնածուներին (Սփառուլ- ծերիյի նախկին նախագահ Խալիպպան վերջին ընտրություններին ապատակ կերավ ժանդարմական սպա Պապեսկուից). ժանդարմերիան հարկավոր ե, վորակեսզի թույլ չտա այդ թեկնածուներին ժողովներ կազմել և վորակեսզի իշխանություններին ոգնի՝ ընտրական ցուցակները կեղծելու և քվեարկության հաշիվը խարդախելու։ Այս ամենի համար վորակես վարձատրություն՝ ժանդարմները յերբեք չեն պատժվում, յերբ գյուղացիների հետ վարվում են վորակես անասունների հետ, յերբ ծեծում և սպանում են նրանց։

Այս դաժանություններն արդարացնելու, որինակացնելու համար, այս մոռայլ աւ վայրենսի սիստեմը, վորի ժամանակ սանձարձակ զինվորությանը թունավորում, բաց են թողնում բնակչության վրա՝ նրանցում ոռւմինական հայրենասիրությունը արմատացնելու նպատակով, միշտ մատնացույց են անում բոլցիզմից պաշտպանվելու անհրաժեշտությունը։ Այս ֆորմուլայով ամեն ինչ արդարացնում են։ Աննեկտայի հաջորդ որն այս լոգունքն առաջ քաշեց «Ardecalis» - ը։ Պատգամավոր Ստերեն նման հազարավոր զգվելի դեպքերից միայն մի քանիսը պատմեց ինձ. — Քիշինեվի մի պրոֆեսոր բանտարկվեց ու հրացանազարկ յեղավ. պարլամենտում արած հարցապնդմանը վորակես պատասխան նախարարն արդարացրեց այս սպանությունն ասելով, թե

«նա բոլշևիկ եր»։ Վալեդիվողից մի քանի յերիտասարդներ կասկածվում եյին բոլշևիկության մեջ. անմեղ ճանաչվեցին ու ազատ արձակվեցին, բայց և այնպես հրացանազարկ յեղան։ Զինվորական պահնորդն սպանեց 2 ժանդարմ, նրանց բոլշևիկների տեղ ընդունելով։ Չնչին սխալմունք, վոր վոչ մի հետևանք չունեցավ, վորովհետև այդ բանը կատարվել եր լավ նպատակներով։

Սա մի մոգական մեղադրանք ե, վոր հաճախ անձնական նպատակով ել ե կիրառվում։ Անձնական թըշ-նամուն կամ պարտատիրոջը բոլշևիկ են հայտարարում և այսքան բավական ե, վոր վերջինս բանտարկվի կամ անհայտ կորչի։ Բազալենուն, Ակքերմանի շրջանի կոռոպերատիմներից մեկի նախագահը, այս ձեռվ ազատվեց 7 գյուղացիներից, վորոնք նրանից պահանջում եյին կոռակերատիվից գողացած 35,000 լիյը։ Նա ուղղակի ասել եր. «գրանք բոլշևիկներ են»։ Նրանց անմիջապես բանտարկեցին, տարան և ճանապարհին սպանեցին։ Նրանցից մեկը, Ֆիլարովը, մեռած եր ձեացել, հետո փախել, բուխարեստ ընկել ու ամեն բան պատմել գյուղացիական կուսակցությանը։

Մամուլն այս պատմությունը բաց արավ, բայց ոռումինական կառավարությունը կատարյալ սառնա-սրտություն հանդես բերեց և հայտարարեց, թե Ֆիլարովը ապստամբություն եր ուզում առաջ բերել և հենց այդտեղ ել հրամայեցին ձերբակալել։ Նա ծանր վիրավորված եր, այնուամենայնիվ հետ ուղարկեցին Բեսսարաբիա, ուր նրա մասին այլ ևս վոչինչ չլսվեց։

Ռումին պաշտոնյաները շատ լավ են սարգվել սպաների, ժանդարմների ու սիգուրանցայի ագենտների

հետ և լայն կերպով ի չարն են գործ դնում այն բոլոր հնարավորությունները, վոր ընձեռում են նրանց պաշտողական դրությունը և ամենազոր զորքն ու վոստիկանությունը: Ռումին պաշտպանելության կաշառակերությունն ու վաճառվածությունը խոստովանում էն նույն իսկ ամենաչափավոր մարդիկ, դրանց թվում նաև այնպիսիները, վորոնք պաշտպանում են ներկա կառավարությանը: Շատ ե պատահում, յերբ հարկահավաքները պահնորդականի ագենտների ուղեկցությամբ միևնույն հարկը թեսսարարիայի գյուղացուց պահանջում են մի քանի անգամ, հայտարարելով, թե նեիկայացրած ստացականներն իսկական չեն: Պաշտոնյաները վերցնում են՝ վորքան կարող են և վորքան կամենում են: Գյուղերում հաճախ կպատահեք հարկահանի սայլակին՝ բեռնավորված կարասիներով, հեշտայեռներով, տան իրերով և առնասարակ ամեն տեսակ կողոպուտով:

Ցարական աիրավետության ժամանակ իշխանության և բնակչության մեջ պաշտոնյաների այսպիսի դիվային միջնորմ չկար: Յուրաքանչյուր գյուղ ինքնավար եր, իսկ հարկ հավաքողը ընտրովի տանուաերն եր: Ռումինական ոկուլավացիան այս գրությունը փոխեց: տեղական ինքնավարություններն աննեկտիայի հենց հաջորդ որը նշանակվեցին վերից:

Թեսսարարիական ականավոր պատգամավոր Ստերին, վորի մասին յես արդեն խոսել եմ, մի քանի որ առաջ ինձ ասաց. — Թեսսարարիայում կառավարությունը կամ նրա ներկայացուչիչներն ամեն բան կարող են անել և դրա համար բնավ պատասխանատու

չեն: Որինակ, պաշարողական դրությունը, վոր սովորաբար որենսդրական ճանապարհով և հայտարարվում, այստեղ մտցնում և հասարակ պրեֆեկտը: Բավական և միայն մատնանշել ազգային ապահովության շահերը: Նախարարական ուկազը ցանկացած որը կարող և փոխել յերկրի տնտեսական կյանքը: Քաղաքացիների պատիմն ու կյանքը պաշտպանված չեն:

Արդարանում են նրանով, թե ագիտացիան պիտի ճնշել: Ամբողջ գժբախտությունն ել հենց դրանումն է: Իշխանությունների կողմից ստեղծված անկարգությունները ժողովրդական հուղումներ են առաջ բերում, վորից այդ անկարգություններն ավելի յեն սաստիկանում:

Ի՞նչ անի բնակիչը: Ընտրություններն, ինչպես տեսանք, ընթանում են վոչ միայն պաշտօնական ճընշման տակ, այլ և բյուլետեններն ու ընտրական թերթիկները և դրանց հետեանքները կեղծելով: Լոնդոնի «Times»-ի խմբագիրներից մեկը, Գրեսխեմը, չնայելով իր համակիր վերաբերմունքին դեպի Ռումինիան, չկարողացավ չգրել այս մահացու նախադասությունը: «Ռումինիայում պատգամավորները նշանակված են կառավարությունից»:

Լախովարին, Փարիզի ռումինական նախկին դեսպանը, կամենում եր յեվրոպական մեծ մամուլը վկայության կանչել՝ հաստատելու, վոր Բեսսարաբիայում խաղաղություն և յերջանկություն են թագավորում: Մեծ մամուլը ընդհանրապես, թե մասնակի կերպով համաձայնեց տարածել այս սուտը Ռումինիայի մասին: Պարզ է, իրենց եյությամբ առևտրի և ֆի-

Նանսների ձեռքում զենք դարձած մեր մեծ թերթերի խոսքերին առանձնապես նշանակություն տվող ել չկա, այնուամենայնիվ այս դեպքում մի քանի հակառակ նոթեր ել լսվեցին. Հենց նույն Գրեսխեմը, «Times»-ի աշխատակիցը, վորի մասին արդեն խոսել եմ, և վորին չի կարելի կասկածել չար դիտավորությունների մեջ, այցելեց և ուսումնասիրեց Բեսսարարիան: Նա ուղարկվեց իր թերթի կողմից, վոր փառաբանի պաշտոնական Ռումինիան և նրա գովքի ընդհանուր խմբին մի ձայն ևս ավելացնի: Սակայն նրա խիզճը վրդովվեց: Նա նկարագրեց իր տեսածը. այսինքն «բոլոր ժողովրդական խավերում ընդհանուր վրդովմունք և հսկայական լարված վիճակ՝ հենց ոռոմին հասարակության մեջ»:

Տեղն ու տեղը ժողոված փաստերից նա յեղրակացրեց, վոր Շերբ Բեսսարարիան Ռուսաստանին եր պատկանում, կյանքն ավելի թեթև եր, քան այժմ. վոր Ռումինական կառավարությունն այս շրջանը կառավարելու անընդունակ ե, վոր այդտեղի վարչակազմը կոպիտ և անբարոյական ե, վոր անտեսական կյանքը բոլորովին կազմալուծված ե, և Ռումինիան ընդունակ չե նույն իսկ պատերազմից վնասված կամուրջները նորոգելու:

ՎՈՐՊԵՍ ԹԵ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐ

Հոչակավոր ագրարային բարենորոգումները, վորոնց շուրջն այնքան աղմուկ բարձրացավ, վոչ միայն չոգնեցին բեսսարաբյան գյուղացիության վողբալի դրությանը, այլ ընդհակառակն, ավելի վատթարաց-

րին՝ թույլ տալով կառավարությանը դեմոկրատական կոմիզիտ սարքել։ Ազրարային բարենորոգումների անվան տակ խոշոր կալվածատերերին վերադարձրին հեղափոխական շրջանում խլված հողերը, նրանց ֆասները, վորոնց չափն այդ կալվածատերերն եյին վորոշում, վորխատուցին դյուղացիների վրա դրած արտակարգ տուրքերով։ Խոշոր տնտեսությունների ավերված շենքերը վերականգնվեցին պարտադիր աշխատանքով, ուր գյուղացիներին քշողը ժանդարմական մտրակն եր։ Ազրարական բարենորոգումներ հայտարարելիս, խոշոր կալվածները յևնթակա եյին պետական բռնպարավման՝ հողազուրկ գյուղացիներին բաժանելու համար։ Բայց այս բաշխումը կատարելիս՝ ղեկավարվում եյին բացառապես քաղաքական նկատառությունը սպաներ, ժանդարմներ, պահորդականներ, հարկահաններ եյին։

Հրեշշավոր անարդարությունները կրկին նորոգեցին այն մարդկանց ցավերը, վորոնք ամենից շատ իրավունք ունենյին հողի վրա՝ իրրե այն մշակող։ Բեսսարայան պատգամավոր Յակոբեսկուն 1925 թ. մայսի 26-ին պարլամենտում իր արտասահմած ճառի մեջ մի քանի դեպքեր ցուցադրեց, թե ինչպես որինակ—միայն Ակքերմանի շրջանում 52 ոռոմին սպաներ հող ստացան։ Ցուցակ ընկած գյուղացիք հողի համար պիտի վճարելին խաղաղ ժամանակի արժեքից չորս անգամ ավելի։ Գյուղացիք յուրաքանչյուր հեկտարի համար կառավարությունից պահանջում են 2000 լեյ, իսկ նա վճարում է միայն 150։ Քառասուն տարվա պայմանաժամ ունեցող պարտքերը պահանջում եյին վճարել մի

քանի ամսում։ Կառավարությունը բոլոր անտառները բռնագրավեց։ Փայտ կտրելու թույլտվությունը կախված եր վճարի քանակից։ Այս կարգադրությունը նոր չարիքի ու կաշառքների աղբյուր եր դառնում։

Բեսսարայան գյուղացիների շարքերում մի արտօնված դաս կար, — այդ գերմանական գաղթականներն եյին։ Ռումինական կառավարությունը գեներալ Մակենզենի վոտահոգությանն արժանանալու համար՝ հողերը գրավելու որենքը նրանց նկատմամբ չկիրառեց, և նրանք իրենց կալվածների տերը մնացին։ Նրանք մնացին վորպես կենտրոնական կառավարության որինակելի ազինտներ և խստությունների ժամանակ միշտ բեսսարաբյան գյուղացիության դեմ եյին գնում։ Վերջին հաշվով Բեսսարաբիայում, ինչպես նաև Տրանսիլվանիայում, խոշոր կալվածատիրությունը վերականգնում եւ Գյուղացիական կուսակցությունն ստիպված եր ագրարյին բարենորոգությունները նորից մտցնել իր ծրագրի մեջ՝ վորպես դեռ չիրագործված։

* * *

Տարորինակ վոչինչ չկա, վոր իրերի այս դրությունը առաջ բերավ ժողովրդական խոռվություններ ու մասնակի բռնկումներ։ «Զարմանալի յե, վոր մեծաքանակ ապստամբություններ տեղի չունեցան», — ասում եր ինձ Ստերեն, նկարագրելով այն վայրերի զայրութը, վոր ծնունդ եր առնում «միշտ ազատ» գյուղացիական նոտարների հոգում, վորոնց ծեծում եյին կաշվե գոտիներով, վորոնք իրենց շուրջը միայն կախաղան ու խարազան եյին տեսնում և վորոնք կատարյալ աղքա-

տության դուռն եյին հասել: «Թես ավաղակախմբի պետ կդառնամ», — ասում եյին գյուղացիք Ստերեյին: 1919 թ. հունվարին, Խոտինոյի գրավումից 2 ամիս անց, յերբ այդ տեղերը սարսափելի չքավորության մեջ ընկան, և կենտրոնական կառավարությունը վոչինչ չարավ՝ գրությունը թեթևացնելու, շրջանում ապստամբություն ծագեց: Նա արյունհեղությամբ ճնշվեց:

Նեղորուցա գյուղի 600 տնից հիսունը հազիվ ազատվեց: Ռուշկինում 300 տուն այրվեց, ինչպես նաև Ատակի գյուղի յերեք քառորդը: Խոտինոյի պարետը ժողովի հրավիրեց ամրող բնակչությունը, բոլոր ներկա յեղողներին—թվով 500 մարդ—շրջապատեց զինվորներով ու բոլորին գնդացիրներով կոտորեց: Շեորլից գյուղում, վոր ընկած եր անտառում, 60 կին և յերեխա եյին թաքնվել անտառապահի խրճիթում: Սպաները կանանց բռնաբարելուց հետո, տունն այրեցին: Բոկշինո, Նեղորուցի, Սամզինա, Նոլինիանի, Կապլակա և ուրիշ գյուղեր ամրողջովիին կամ մասնակի կերպով ավերվեցին: Խոտինոյի շրջանի դեպքերի մասին յեղած պաշտոնական հաղորդագրությունն ասում է. «Շրջանում ապստամբությունը ճնշվեց. ավերված ե 7 գյուղ, 500 սպանված կա»: Նա հետեյալ բառերով եր վերջանում. «մեր զորամասերի վրիժառությունը շարունակվում ե»: Խոտինոյի ապստամբության հետ կապ ունեցող սպանված գյուղացիների թիվը 11,000-ից անց ե:

Մենք մի փաստաթուղթ ունենք, վոր մամուլը մի քանի անգամ առաջ ե բերել կամ մեջբերումներ ե արել: Այդ փաստաթղթում անհերքելի ճշտությամբ առաջ են

բերված Խոտինոյի ապստամբությանը զուգընթաց դեպքերը:

Դա անգլիական զինվորական միսսիայի անդամ ծովային լիցտենանտ Մակ Լարենի զեկուցումն է: Այդ զեկուցման մեջ խոսվում է միայն մի քանի գյուղի և առաջին հերթին Նեղոբուցի մասին, ուր մուտք գործեց Խոտինոյի ապստամբությամբ հետ մղված ռումինական զորամասը 1919 թ. հունվարի 10-ին:

Ամենից առաջ զինվորները գյուղի զանազան մասերում 8 տուն վառեցին: Գյուղացիներին արգելված եր հրդենը հանգցնել:

Հետո զինվորներն սկսեցին կողոպտել, խլել՝ փող, հակուստ և ամեն ինչ, վոր կարելի յեր: Տեղն ու տեղը հրացանազարկ արին 53 գյուղացու, վորոնց ցուցակն արձանագրության մեջ կա, այդ թվում 3 կին և 12 տ. մի տղա: Մի քանի գյուղացի և 2 կին վիրավորվեցին: Զինվորները գործադրեցին սառը զենքեր և հրազեններ:

Ստավչանի, Նոլինիանի և Շեորլից գյուղերում անթիվ սպանություններ ու հրդեններ տեղի ունեցան:

Արձանագրության մեջ նկարագրված են Նեղորուցայում կատարված վայրագությունների մի քանի առանձնակի դեպքեր: Բատամանյուկի ընտանիքում սպանվեցին՝ մայրը, 20 տարեկան, աղջիկը, 12 տարեկան տղան, վիրավորվեց 15 տարեկան աղջիկը: Այս ընտանիքի Նիկոլայ անունով տղային գլորելով քաշ տվին բակն ու հրացանազարկ արին: Իլիա Բատամանյուկը, վոր 50 ռուբլով ազատվել եր զինվորների ձեռքից, մյուս որը դուրս քաշվեց բակը և այնպես սրահողին յեղավ, վոր հարկ յեղավ դիակի մասերը ժողովել՝

թաղելու համար։ Տերենտիյ Ստարչուկը, 54 տարեկան, փորից գնդակով վիրավորվեց այն ըոպեյին, յերբ դուռը բաց եր անում զինվորների առաջ, վորոնք կրակում եյին նրա խրճիթի վրա։ Վասիլիյ Սոլֆրոնյակը, 56 տարեկան, սպանվեց զինվորների ձեռքով, վորոնք նրանից 40 ու եյին վերցրել։ Նիկիտա Զանկովսկուն դուրս քաշեցին փողոց և սվիններով սպանեցին՝ կնոջ ներկայությամբ, չնայելով վերջինիս աղաղակին ու յերեխաների լացին։

Վեննայում ապրող բեսսարաբցի ուսանողները Խոտինի շրջանի ապստամբության հետ կապված դեպքերի մասին մի մեմորանդում մշակեցին, վորից առաջ եմ բերում մի քանի հատված։

«1919 թ. հունվարի 21-ին 8-րդ ռումինական հետեւուկ գնդի 3-րդ ջոկատը Բրիչինի փոքրիկ քաղաքում պարերեկույթ եր սարքել։ Քաղաքապահ զորամասի պետ Կոնստանդինսկուն իմանալով, վոր բնակչությունը հրաժարվել ե յերեկույթին մասնակցելուց, հրամայում ե գիշերապահների միջոցով այստեղ բերել բոլոր կանանց ու աղջիկներին, վորոնց մտրակի ու ատրճանակի սպառնալիքով հրամայում ե պարել զինվորների ու վոստիկանական ազենտների հետ։ Աղջիկների ծնողները վազում և արտասվելով աղաջում են՝ իրենց յերեխաներին ազատ թողնել։ Բայց աղջիկներին տարել եյին արդեն կապիտան Դիմիտրեսկույի բնակարանը, ուր նրանց ըստաբարում են հարբած յենթասպաները։ 14 տարեկան Ռեյզենը մյուս որը հիվանդանոցում մեռնում ե ներքին արյունահոսությունից։ 18 տարեկան Աննա Կիրիլյուկը մի շաբաթից հետո ինքնասպան յեղավ,

վորովհետև վարակվել եր վեներական ախտով։ Բրի-
չանից Յ հոգի, վորպես պատգամավորներ, գնում են
Խոտին՝ բողոքելու ոռւմինական պարետին։ Ճանապար-
հին նրանց ձերբակալում և, վորպես պետության ապա-
հովության թշնամիների, դատի տալով, յերեք և հինգ
տարվա բանտարկության են յենթարկում։

Հունվարի 28-ին Խոտինի բնակիչները թմբկահա-
րությամբ ժողովվում են հասարակաց այգին, վորտեղ
նրանց առաջ հետեւյալ սոսկալի տեսարանն ե բացվում.
—կողկակար Վասիլիյ Ֆիլկոն կապած եր ծառից, մար-
մինն արյունլվա, հագուստը գզզզված, շրջապատված
սպաներով ու գեներալներով, վորոնց մեջ ոկկուպա-
ցիոն զորքի հրամանատար գեներալ Բրոխտիանուն
(նա, վոր պարծեցել եր, թե բեսսարարյան ապստամ-
բության սկզբին հրամայել ե 8000 բոլեկիկ խեղդել
Դնեպրում) և չորրորդ դիվիզիայի հրամանատար գենե-
րալ Պոպեսկուն։ Վերջինս կատաղաբար հարվածում եր
դժբախտ բանվորին, վոր սրտաճմլիկ կերպով աղաղա-
կում եր։ Մյուս սպաներն ոգնում եյին Պոպեսկույին։
Այս դաժանությունից վրդովված բնակիչներին բացա-
տրեցին, թե Ֆիլկոն մահվան ե դատապարտված բոլե-
վիկության համար և պիտի գլխատվի իրենց աչքերի
առաջ։

Բայց իրոք Ֆիլկոյի հանցանքը բոլորովին այլ եր։
Դրանից յերկու ժամ առաջ դժբախտը համարձակվել
եր զինվորներին ասելու, թե նրանք իրավունք չունեն
առանց վճարելու իրեր խլել։

Ցերբ սպաները նկատեցին, վոր Ֆիլկոն հարվածնե-
րի տակ մեռնում ե, կրակ բացին այս կենդանի նշանի

վրաւ Յուրաքանչյուր հաջող զարկ սպաների կողմից՝ քրքիջ ու կատակներ եր առաջ բերում: Միայն հինգերորդ գնդակը դիպավ ճակատին ու թշվառին անշընչացրեց: Կինն ու յերեխաները ներկա եյին այս սոսկալի մահապատժին: Նրա մարմինը յերեք որ շարունակ ծառին մնաց կապած, վորպեսզի ուրիշներին որինակ ծառայի:

ԱՊԱՏԱՄԲՈՒԹՅՈՒՆ ԹԱԹԱՐԲՈՒՆԱՐՈՒՄ

Այսուհետև հաջորդում ե Թաթարբուների գործը, վորի դատական նախերգանքն ե կատարվում այսոր, այս փայտե բարակում:

1924 թ. սեպտեմբերի 15-ին և 16-ին ապստամբեցին Ակքերմանի և Խզմայիլի շրջանների գյուղացիները: Ապստամբությունը ծավալվեց նաև Թաթարբունարում: Գյուղացիք դուրս յեկան կարմիր դրոշակներով: Ժանդարմների պահակը զինաթափ արվեց և կոտորվեց. սպանեցին նույնպես գյուղական տանուտերին: Թաթարբունարցիք Եխաչինո և Ներուշանի գյուղացիների հետ միասին ձերբակալեցին տեղական գործարանատիրոջ ավտոմիքիլն ու բեռնակիր ավտոմոբիլը: Իշխանությունները պնդում եյին, թէ նրանք 2 գնդացիր ել են գրավել: Ապստամբությունը տարածվեց Նիկոլակա, Տրուբակա, Վունկանինո և Շեկֆնի գյուղերում: Նա յերեք որ տևեց և վոչ մի տեղ ոռոմինական զորքերի գրոհին չդիմացավ: Հատուցումն իսկույն սկսվեց և դաժան յեղավ: Թաթարբունարում այրեցին 69 տուն, յիկեղեցու բակում սպանեցին 89, փողոցներում գնդակահարվեց 200 մարդ: Շրջանում սպանվեց 2000:

բանտարկվեց 1000 գյուղացի, իսպառ սըբվեցին տասնյակ գյուղեր։ «Lupta» թերթը 1924 թ. հոկտեմբերի 23-ին դրում եր.

«24 ժամում Թաթարբունար գյուղը հիմնահատակ ենդավէ Պետք ե որինակ ցույց տալ, — ահա ձեզ։

Մասսայական մահապատիժների ժամանակ կիրառվող մեթոդները նկարագրված են այն հարցապնդման մեջ, վոր արագ Բեսսարաբիայի գյուղացի պատգամավոր Սոֆոկլը սիզուրանցայի և վոստիկանության Բեսսարաբիայում գործած վոճիրների մասին։ Գյուղացիներին սղանում ու հոշոտում եյին խմբերով, ինչպես այդ արագ վրանգելյան յենթասպա Գուցուլյակը՝ Նեղանչա գյուղում։ Անհամար դիակներ ձգվեցին Դնեպրը, դիակները նորից ափ եյին նետվում, ուր նրանք նեխում եյին՝ ամենքի աչքի առաջ, «վորպես որինակ»։ Բեսսարաբիայի պատգամավոր Դումբրավալա քահանան 1925 թ. դիկտեմբերին խոսել ե ոռոմինական պալատում այն խատությունների մասին, վորոնք հաջորդեցին թաթարբունարյան ապստամբությանը։ Նրա մերկացումները մաս-մաս տպված են մի քանի լրագրերում — «Ասոգա»-ում և «Lupta»-ում։ Նա պատմում է Ժիմեա-Շուսա գյուղի 20 սպանությունների մասին, վորոնք «անձնական նկատառութների» արդյունք եյին, և թվում ե տանուտերի, հարկահավաքի ու ժանդարմական պահակի պետի անունները, վորոնք այդ վոճիրը գործել են՝ կարգը վերականգնելուց հետո։ Նա թվում ե բնակչության վրա դրած ահազին տուգանքները, վոր պիտի վճարեյին 24 ժամում։ Թաթարբունարի դատավարության ժամանակ մեղադրվողներից մեկը

պատկանում եր այն 20 հոգուց բաղկացած խմբակին, վոր մահվան եր դատապրտված: Մենք նրան կարողացանք տեսնել դատի որը, վորովհետև նա մահից հրաշքով եր ազատվել, վորովհետև մահապատիժն իրագործող ժանդարմին այդ որը կոտորելուց հոգնել եր: Թաթարրունարի մեղադրվողներից մեկ ուրիշը, Գվոզդկը, պատմում եր, թե հենց վոր ապստամբույթունն սկսվեց, նաև մի քանի գյուղացիներ թռել են սայլն ու գնացել դաշտը: Վալկովում նրանք դիմել են հանդիպող զորամասի պետին, վորը խոստացել ե նրաանց չդիպչել: Զինվորներն այս անզեններին ուրիշների հետ, թվով 100-ից ավելի, միասին շարք կանգնեցրին ու կրակեցին: Մի քանիսն ընկան ջուրը, շատերին սպանեցին գնդակով ու գլխներին հասցրած հրացանի կոթերի հարվածներով, 49 հոգի աղատվեցին: Այս 49-ից ել հետո բռնեցին ու սպանեցին կրկին 27 հոգու:

Հ Ր Ե Շ Ը

Կեյտենանտ Մորարեսկուի դատը, վոր լսվեց նորերս, շատ լույս սփոց այդ դաժանությունների վրա, վորոց ասպորեղ հանդիսացավ Բեսսարաբիան՝ մի քանի գյուղացիական ապստամբյություններից հետո: Այս ճիվաղը, վորի մասին արդեն հիշել եմ, մեղադրվում եր 33 հոգի սպանելու մեջ: Բայց այս թիվը դատարկ բան ե համեմատած նրա զոհերի ընդհանուր թվի հետ: Իրեն ի պաշտպանություն նա բավականանում եր ասելով. «Վարվել եմ համաձայն հրամանի»: Արդարացավ շնորհավորանքներով:

Այս մի քանի փաստից պարզ է, թե ինչպես ճընշվեց այս շարժումը, վոր մոտ 60 քառ. կիլոմ. տարածություն եր բռնել և տասնյակ զինվորների կյանք խլել։ Այս թիվը ինձ տվել ե ինքը գեներալ Բուդեանուն. գեներալը չի չափազանցնում արդյոք. մեղադրականը վոչ մի զինվորի սպանության մասին չի հիշում։

Այդ որից անընդհատ մի դատը հաջորդում ե մյուսին. Թիշիննում, ուր պաշարողական դրություն ե, որական 3—4 զինվորական դատ ե տեղի ունենում։

Թե այս դեպքերի շնորհիվ ինչ դրության մեջ ընկավ ամբողջ բնակչությունը, յերեսում ե Բուխարեստից «Լուրտա»-ին ուղարկած 1924 թ. դեկտ. 24 թվակիր թղթակցությունից, «Բեսսարաբիայի գյուղացիների բարոյական անկումը, գյուղերի խղճուկ վիճակը, անբարոյականությունն ու հարբեցությունը ծաղկում են» վերտառությամբ։ «Գավառից մենք ավելի ու ավելի հուզիչ տեղեկություններ ենք ստանում», — հայտնում ե թղթակցին բեսսարաբյան մի ականավոր գործիչ։ Մեր գյուղերը չափազանց սանձարձակվել ու բարոյակրման են յենթարկվել. բոլորը խմում են — ծեր ու ջահել, կին ու աղջիկ. մատղաշներն ու յերեխաները նրանց են հետևում։ Մի քանի գյուղերում տոն որերին վսչ մի զգաստ մարդ չես գտնի։ Գյուղացիք աշխատում ու իրենց ստացվածքը գինետներում են թողնում։ Սրա շնորհիվ ստեղծվել ե այսպես կոչված գյուղական լյումպենպրոլետարիատ, անհող ու առանց միջոցի։ Մի դասակարգ ե ստեղծվում, վոր հոգս ու դժվարություն կպատճառի ամեն մի կառավարության։ Իրքև յերկրի հասա-

ըակական կյանքի համար վտանգավոր տարր, այս դասակարգը միայն ընդհանուր դժգոհութայն ուժեղանալուն և նպաստում: Հողը կամաց կամաց անցնում և վաշխառումերին, վորոնք իրենց հոտառության շնորհիվ դյուլում դրության խսկական տերերն են դառնում: Ստրկության շնորհիվ առաջացած այս անկման հետ լրագիրը նկարագրում և նաև Քիշինեվի բանտի սոսկումները:

«Քիշինեվի մեր թղթակցի մի քանի որ սրանից առաջ արած մերկացումները, վորոնք վերաբերում են տեղական զինվորական բանտում կատարված ու կատարվող սոսկումներին, յերկյուղ ու խոր զայրույթ են առաջ բերում: Զայրույթ, վորովհետև ՀՀ դարի մարդու խիզճը չի կարող նման գաղանություններ թույլ տալ. յերկյուղ, վորապէս բռնությունը բռնություն կծնի. այն թշվառները, վորոնց այսոր այսպիս լկում են, վաղը մահացու թշնամիններ են դառնալու այն հասարակության համար, վորը կարողացել ե այդպիսի սարսափներ հանդուրժել:

Յերկու սպաներ տանջանքից խելագարվեցին: Մի բանտարկյալ, վոր սննդադուլ եր հայտարարել, արյուն-լվա լինելու չափ ծեծվեց: Մի կին, վորի հետ անհանդուրժելի կերպով վարվեցին, ծնեց անժամանակ»:

Դրա հետ միասին սոսկալի սով սկսվեց: Բեսսարաբիայի գյուղական տնտեսության դեֆիցիտը 1925 թ. 1 միլիարդ 250 միլիոն լեյից ավելի յեր: Կառավարությունը մոտ 100 միլիոն ոժանդակություն տվավ, սակայն այդ գումարներն ընկան ոումին պաշտոնյա-

Ների ձեռքը, վորոնք բաշխումը կատարեցին իրենց հայեցողությամբ։^{*}

Այժմյան սովը միայն յերաշտին չպիտի վերագրել, վորովհետև Սորոկիի, Խոտինի, Արդեյկոյի նման գավառներ են սովի մատնվել, վորտեղ յերաշտ չի յեղել։ Պատճառներն ինչ ել լինեն, հետևանքները սոսկալի յեն։ Քիշինսի գլխավոր բավկինը դիմեց հրեա բնակչությանը հետևյալ կոչով. «Սարսափելի սովը և նրա անբաժան ուղեկիցը ամայացնում են ամրող թեսսարաբիան... հիշեցիք, վոր կենդանի կմախքների հարյուրավոր կիսամար աչքեր ձեզ են նայում ու ձեր ոգնությանն սպասում»։

«Աւորա» լրագիրը դեպի Հարավային Ամերիկա սանկավաճառության վողբերական մանրամասներ ետալիս։ Կարիքը բազմաթիվ ընտանիքների մղում եղեպի այդ առևտուրը՝ թեսսարաբիայում, վորտեղից հուսահատության դուռը հասած բնակիչները փախչում են։ Կուլիֆսիում մի տղա ու մի աղջիկ վաճառեցին՝ յուրաքանչյուրը 1000 ֆրանկով։

^{*}) 1926 թ. փետրվարին «Adevergeul»-ը գրում եր. «Կառավարությունը պահ մի վրդովվեց, բայց ե այնպես դրությունը բարելավելու համար դեռ վոչինչ չի արել... Նա, զբաղված ոպպոզիցիայի դեմ տարվող կռվով, ժամանակ չունի թեսսարաբիայի սովով զբաղվելու նվելացնենք նաև, զոր նա դեմ չի լինի իր հաջորդին հանձնելու խառնաշխոթ վիճակ... Յեթե հին թագավորության ուրիշ մասերում այնպիսի թշվառություն տեղի ունենար, վորպիսին թեսսարաբիայում, համոզված ենք, վոր նա զրա դեմ ամեն միջոցով կպայքարեր և ամեն տեսակ զոհաբերություն հանձն կառներ։

ՈՐԵՆՔՆԵՐԸ ԹԱՐՍ ՀԱՍԿԱՑՎԱՇ

Այսպես քիշինեյան դատավորության նպատակն եր լուծաբարքի յենթարկել մի տարի առաջ տեղի ունեցած ապատամբությունը:

Այդ գործը մենք իրրե փաստաբաններ շենք ուսումնասիրել, և վորպես իրավաբաններ ել չենք հայտնվել այստեղ, ուր 5 սպաներ մեկն 283 մարդ են դատում:

Այնուամենայնիվ պիտի նշենք մի քանի մոմենտներ, վորոնք պրոցեսսի ընթացքում դրսեորվեցին և վորոնց մասին կրյուսեանու, Պարաշիվեսկու, Խոնտեսկու և Դիմիտրեսկո փաստաբանները ամենաճշգրիտ փաստերը տվին:

Առաջին հարցը վերաբերում է զինվորական դատարանի իրավասությանը:

Յերբ իրավաբան Կոլոգնոմուն իր ճառը վերջացրեց, ընդմիջում հայտաբարվեց: Ընդմիջումին զինվորական դատարանի նախագահ գնդապետ Մաքսիմը ներկայացավ ինձ ու խոսք բացեց դատավարության մասին: Դա մի մարդ ե՝ 40 տարեկան, կլոր դեմքով, մանր սև բեխերով, կատարելապես առողջ ու հանգիստ: Նրա առաջին խոսքը հենց այն եր, թե այս գործն ի՞նչ դատարանի յե յենթակա: «Ուզում եյին, —ասաց նա, —զինվորական դատարանից առնել այս գործը քննելու իրավունքը, սակայն մենք պնդեցինք ու հայտաբարեցինք, վոր դա մեզ և ընդդատյա»: Այդ ըոսկեյին նրա այդ հայտաբարությունը յես միայն ի տեղեկություն տուա, սակայն կասկածից դուրս եր, վոր զինվորական դատարանն իրեն իրավասու հայտաբարելով, անցել ե իր

իրավունքների սահմանները և դրանով խախտել վորոշ իրավական սկզբունքներ:

Իրոք, մեղադրվողներից վոմանք (նրանք համարյա բոլորն աշխարհիկ մարդիկ են — մեկ պրոֆեսոր, մի քանի ուսուցիչ, մասցածները՝ միջին գյուղացիներ. — գյուղի «ծաղիկներ») ապրում եյին այնպիսի տեղ, ուր 1924 թ. սեպտեմբերին, այսինքն ապստամբության մոմենտին պաշարողական դրություն չկար: Հետեաբար այս մեղադրյալները վոչ թե զինվորական, այլ աշխարհիկ դատարանի եյին ընդդատյա: Ըստ մեղադրական ակտի՝ տվյալ հանցանքում մեղադրվողներին միմյանց միացնող սերտ կապերն ել հարկադրել են միասին դատել նրանց: Որումինական իրավունքը, քրեյական և հետաքննական որենքը, վորոնք համարյա նման են մերինին, այս առթիվ բավական պարզ ասում են. — յեթե մի քանի մեղադրվող, վորպես միենույն հանցանքում գործակիցներ են դատվում և յեթե դրանցից մի քանիսն ընդհանուր, իսկ վոմանք բացառիկ դատարանի յեն յենթակա, այդ դեպքում առավելությունը տրվում է ընդհանուր դատարանին: Իմ հայրենակից Վիլյարը և Տորբեսը այդ առթիվ դիմումն արին Փարիզի ոռումինական դեսպանությանը: Ընդգծելով այս իրավախախտումը, շեշտենք մի այլ իրավաբանական անկանոնություն ևա: Անկարելի յե միասին 283 մարդ դատել, յերբ այդ մեղադրյալները խոսում են տարբեր լեզուներով—ռուսերեն, ռումիներեն, բուլղարերեն, ալբաներեն, և յերբ շատերի նկատմամբ թարգմանի պետք ե զգացվում:

Դեպքեր յեղան, յերբ դատախազը շփոթում եր մեղադրվողների անունները:

Վերջապես մի «զուգադիպում» ևս, վոր գեմ և առողջ դատողության, յեթե չասենք ավելին. — զինվորական դատարանի նախագահ գնդապետ Մաքսիմը ղեկավարել ե զինվորական խստությունները, այսինքն տվյալ դեպքում և կողմ և, և դատավոր: Նրա այս կրկնակի դերը ընդդիմախոսությունների ժամանակ մի քանի անգամ ընդգծեց փաստաբան Պարաշիվեսկուն, վորը դատավարության ժամանակ կարդաց Մաքսիմի՝ այդ ժամանակ պատժիչ դորախմբի հրամանատարի պաշտոնական հաղորդագրությունը: Այդ հաղորդագրությունը լույս ե տեսել ապստամբությունը ճնշելուց անմիջապես հետո: Այդտեղ ասված ե, թե ապստամբություն կոչվածը լոկ մի չնչին միջադեպ եր:

Սրան ավելացնենք նաև, վոր մեղադրվողներն իրենց պաշտպանության համար վոչ մի նորմալ յերաշխիք չեյին ստացել: Գործի հետ ծանոթանալու համար՝ միայն ծիծաղ հարուցող յերկորյա ժամանակ եր տրված պաշտպաններին: Նման շարլոնը միթե կարող եր համապատասխանել ռեալ իրականությանը: Պետական մեղադրողներից մեկը հարկադրված յեղավ ընդունել և հայտարարել, թե այդ վորոշումը հաշվի չեն առնում: Մեղադրյալների պաշտպանները վոչ թե հանցանքը մեղացնող հանգամանքների վրա յեն ծանրանում, այլ արդարացումն են պահանջում՝ հանցանքի ապացույցներ չլինելու պատճառով:

Պաշտպաններից մեկը, Կոլոգնոմուն, վորի մասին արդեն խոսել եմ, իրեն բավական յերկդիմի յե պահում:

Սրա և իր պաշտպանյալներից մեկի մեջ հենց դատարանում ընդհարում տեղի ունեցավ. վերջինս համբերությունից դուրս գալով՝ Կոլոգնոմուխն հայտնեց, թե ինքը թույլ չի տա նրան՝ պաշտպանելու իրեն։ Կասկածից դուրս եր, վոր Կոլոգնոմուխ ճառերում առաջ բերված փաստերն ըստ եյության համապատասխանում եյին դատախազի փաստերին։ Հավատացնում են, թե այս փաստարանը, վորի մասին վատ լուրեր եյին պատում, վոստիկանական շրջաններում հաճախ և լինում։

ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

Մենք մոտենում ենք դատավորության հիմնական խնդրին — Թաթարբունարի ապստամբության մեջ Խորհրդային Ռուսաստանի ունեցած մասնակցությանը։ Դրա մեջ և դատավարության ամբողջ արմատն ու նշանակությունը։ Այդ կետից վոչ միայն մեղադրյալների վիճակն և կախված, այլ և դրանում բացվում ե քիշնեյան գործի ամբողջ իրավարանական և սոցիալական աստառը։

Գնդապետ Մաքսիմն ինձ հետ ունեցած զրույցի ժամանակ այսպիս մոտեցավ այդ խնդրին։

— Գոյություն ունի յերկու դրություն — այն, վոր ընդգծում եր հենց նոր խոսող փաստաբան (Կոլոգնոմուն), ըստ վորի Թաթարբունարի ապստամբությունը կազմակերպել և Ռուսաստանը. յերկրորդ՝ այն, վոր մենք գործ ունենք գյուղացիների պատահական ապստամբության հետ։ Սրա հետ նա ցույց տալով մեր առաջ կիտված զենքերն, ասաց. «Նայեցեք իրական

ապացույցներին»։ Նա չզլացավ մատնանշել, վոր հին հրացանների ու սրերի կույտի առաջ յերկու գնդացիքներ ել կան։

Արդյոք մենք մեր առաջ սովորական ապստամբություն, թէ պետական գավաճանություն ունենք, զինված յելույթ՝ մի ոտար պետության հետ համաձանեցրած։ Պաշտոնական վերսիայով՝ այստեղ ոտար պետության հետ ունեցած համաձայնությունն ակներև ե։ Այդ առթիվ Տատարեսկուն ինձ մի մանրամասն զեկուցում կարդաց, վորը մի քանի անգամ բառացի կերպով կրկնել ե պարլամենտի ամբիոնից։ Նույն վորով եր խոսում նաև արտաքին գործոց նախարարը։

Մյուս նախարարներն ընդունելով, վոր կարող եյին տեղի ունենալ շատ ցավալի, բայց նման դեպքերում անխուսափելի եքսցեսներ, աշխատում եյին ընդգծել և անկյունագրար դարձնել բոլշևիկյան վտանգը։ Նրանց ասելով՝ Ռումինիան քաղաքակրթության առաջապահն ե ռուսական բարբարոսության դեմ։ Աշխարհագրական դիրքն ե նախորոշել նրա համար Յեվրոպայի սահմանները պաշտպանելու դերը։ Նա ուզում ե, յեթե պետք լինի, լրիվ կատարել այդ պարտականությունը։

Տատարեսկուն սիրալիր կերպով համաձայնեց, վոր կոմմունիզմի մասին կարելի յե թեորիապես վիճել, բայց հետո դիպլոմատորեն բնորոշեց՝ բոլշևիզմը վորպես ամբողջովին ձգտումն դեպի տերրոր ու ավազակություն, վոր գրգռում ու նյութապես պաշտպանում ե Խորհրդային Խշխանությունը։ Նրա ասելով՝ ոռու ահարեկիչները խմբերով սւ առանձնակի անվերջ անցնում են Դնեստրը, վորպեսզի ժանդարմներին կոտորեն,

ոռւմբեր նետեն և գյուղացիների մեջ կոմմունիստական ոչախներ ստեղծեն:

...Յես սկսեցի դիտել մեղադրյալների ամբոխը: Նրանց դեմքերը խաղաղ են ու բարեհամբյուր, պարզամիտ ու թշվառ: Նրանցից մեկն ակնօցներով ե, ըստ յերեսույթին ուսուցիչ եւ Մյուսները—հարուստ գյուղացիներ են, ըստ յերեսույթին վախեցած ու խելքից հանված: Նրանց դեմքերը բնավ դավադիրների դեմքեր չեն*): Յես Տատարեսկուին հարցը, թե ապացույցներ կմն, վոր Խորհրդային Խշանությունը Բեսսարաբիայում հեղափոխական մարմիններ ե կազմակերպել: Նա պատասխանեց, թե ունի անհերքելի փաստաթղթեր, վորոնք միշտ ել կարող են իմ տրամադրության տակ լինել: Յերկրորդ անգամ նրան տեսնելիս՝ յես հիշեցրի այդ փաստաթղթերի մասին. նա կրկին խոստացավ ցույց տալ: Բայց յես նրանից յերբեք և վոչ մի փաստաթուղթ չստացա: Այսպիսով պաշտոնական տեսակետը զուգադիպում ե դատախազության տեսակետին: Յեթե Տատարեսկուն այդ հավաստի փաստաթղթերը, վորոնց վրա նա իմ ուշադրությունն եր հրավիրում, ցույց չտվավ, դրա փոխարեն յես այդպիսիք գտա մեղադրականում, վոր ձեռքիս ունեյի և վորոնցից մի քանի տեղեր յերկար ժամանակ ֆրանսերենի եյլ թարգմանում:

*) Բարձր խավերում մեղ խոստացան մեղադրյալներից մի քանիսի հետ զրուցելու հնարավորություն տալ բայց այս թեսքետիկ խոստումը չկատարվեց, չնայելով վոր մեծ-մեծ խոստումներ եյին արել՝ ոգնելու իմ «քննությանը»:

Զինվորական դատարանին ներկայացած 283 բանագործական մեղադրվում են պետության արտաքին ապահովության գեմ դավադրական փորձ անելու մեջ։ Մեղադրական ակտը և մեղադրյալների հարց ու փորձը պարզ ասում են. «Խորհրդային Խշանությունը Բեսսարաբիան խզելու նպատակով ահարեկիչների ապստամբություններ և կազմակերպել, վորպեսզի ապստամբությունների պատրվակով արդարացնի Ռուսաստանի զինված միջամտությունը։ Մեղադրական ակտը, վորմի մեծ հատոր ե, ամենամանրամասն կերպով նկարագրում և այն մեթոդները, վորոնցով տերրորիստական հմիսսարները բեսսարաբյան գյուղերում հեղափոխական բջիջներ են յեղել կազմակերպելիս։ Նա մի քանի մարդ և հանդես քաշում, վորոնց մեջ առաջին տեղը բռնում ե Անդրեյ Կլուզնիկովը, Նենին կեղծ անունով, Մուկվայի գլխավոր ազենացը։ Նա, — ասում ե դատախազությունը, — անթիվ գյուղերում հեղափոխական կոմիտեներ եր կազմակերպում։ գյուղացիներին հավատացնում եր, թե ոռուսական զորքը պիտի գրավե Բեսսարաբիան, և թե յերկու բիլշեիկյան աերոպլաններ կավետեն կարմիր բանակի գալուստը և հեղափոխության ժամը։

Նա ասում եր գյուղացիներին, թե Գերմանիայում, Բուլղարիայում և ուրիշ տեղերում հեղափոխություն եւ:

Ռուսական ազենատները Դնեստրն անցնում և, ինչպես հավատացնում ե մեղադրականը, յերկիրը հեղեղում ելին գրքույկներով ու թերթիկներով, վորոնք կարդացվում ելին ժողովներում։ Նրանք 5 հոգուց բաղկացած կոմիտեների ղեկավարությամբ ույոններ ու

յենթառայոններ եյին կազմում։ Այդ կոմիտեների ֆունկցիաներն եյին — 1) ղինումն, 2) կապ, 3) լրտեսություն, հետախուզություն և ինֆորմացիա, կոմիտեները կենտրոնացված եյին, բայց այդ կենտրոնացումը գաղտնի յեր։ 1924 թ. ոռւս կառավարությունը Բեսսարաբիա ուղարկեց իր ագենտ Ոսիպ Պոլեսկովին՝ Պլատով կեղծ անվամբ, վորպես Հարավային Բեսսարաբիայի նահանգապետ։ Պլատովն ամեն գյուղում հարվածային խմբեր եր կազմակերպում, յուրաքանչյուրը 50 կարմիր զինվորից բաղկացած, վորոնց վերցնում եյին յերիտասարդությունից։

Նա ձեռք զարկեց գյուղացիներին զինելու գործին և մեծ քանակությամբ զենք եր կրում սայլերով ու նավակներով։

Այսպես որինակ միայն 3 յենթաշրջանի համար նա հրամայեց 300 ոռւմբ բերել։ Զենքի մի մասը, մինչեւ հեղափոխության որը, պիտի պահպեր ջրի տակ։ 1924 թ. մի որվա ընթացքում գյուղացիներին 1000-ից ավելի հրացան բաժանվեց՝ փամփուշտներով։ Այդ բանը կատարվեց դաշտում, գյուղի մոտ։

1924 թ. սեպտեմբերի 2-ին զիմակավորված մարդկանց մի բանդա կողոպտեց Նիկոլաևկ գյուղի շուկան, և վորպեսզի գրությունը փորձի և ոգնի ոռւմին դասավեճներին։ Մեղադրականում այդ դիմակավոր բանդիտների մասին ճիշտ ցուցումներ չկան, բայց դրա փոխարեն՝ կազմակերպության և պրոպագանդայի հըսկայական ու բարդ սիստեմը մերկացնող բազմաթիվ մանրամասնությունների շարքում պատմվում ե, թե սեպտ. 15-ին թաթարրունարյան ապստամբության

նախորյակին, «Նենինի ծրագրով հեսսարաբիայի բոլոր կետերում միաժամանակ հեղափոխություն պիտի ըռնկեր»:

ԶԱՓԱԶԱՆՑ ԼԱՎ ՆՅՈՒԹ ԿԻՆՈՅԻ ՀԱՄԱՐ

Այս բոլոր մերկացումները, վոր այնքան առատորեն ու մանրազնին կերպով մեջ են բերված մեղադրականում, բնավ չեն դիմանում փոքր ի շատե լուրջ քննադատության: Միանգամայն անհավանական ե, վոր հեղափոխությանը այդքան ակներե կերպով խորթ գյուղացիության մեջ և այն յերկրում, ուր վիստում են այնքան սպաներ, զինվորներ, վոստիկաններ, ժանդարմներ, լրտեսներ ու կառավարական ազենտներ, կարողանար այդպիսի բարդ կազմակերպություն գոյություն ունենալ, ու այդ բոլոր «խարդավանքները» հրապարակ չփային: Այսինչ բոլորն ել այնքան անոտեղյակ են յեղել հեղափոխական դավադրությանը, վոր դեռ ապստամբության նախորյակին Թաթարբունարից դուրս ե հանվել այդ տեղը պահպանող զինվորների ջոկատը: Յերկրորդ փաստ, վոր մեկեն կասկած ե հարստցանում. — խոսում են աղիտացիոն բնույթ կրող զրքույկների մասին, վորոնք առատությամբ բաժանվել ու ժողովներում կարդացվել են. այն ժողովներում, ուր ներկա յեն յեղել նաև գյուղական նոտարները: Այդ փաստաթղթերից վոչ մեկը չերևաց դատավարության ժամանակ, գործերի մեջ վոչ մի որինակ չկա: Հնարավմբ բան ե: Այն հսկայական դժվարությունները, վոր կապված են մեծքանակությամբ զենք և պայթուցիկ նյութեր տեղափոխելու հետ, ի չեք են դարձնում հրացաններ,

իմամփուշտներ, գնդացիրներ և ռումբեր բաժանելու մելո-
դրամատիկ նկարագրությունները։ Դրա հետ միասին
շատ լավ հայտնի յե, վոր ռուսաց զորքը Բեսսարա-
բիայում զենքի պահեստներ եր թողել։ Այդ զենքերը
տեղավորված են յեղել գերմանական և ռումինական
ոկկուպացիայից առաջ։ Ահա թե վհրտեղից են այն
ժամանակած ու ըստ մեծի մասին անպետք հրացանները,
վորոնք դատարանի գահին ևն բերվել՝ սկզբում փոքր,
հետո պատկառելի քանակությամբ։

Անրի Տորբեսը չի տեսել այն գնդացիրները, վոր
յես եմ տեսել։ Դրանք Քիշինև հասել իմ հասնելուց
հետո, նրա գալուց առաջ։

Սակայն մեղադրականում նրանց մասին կա հիշա-
տակություն։ Այս ել ասենք, վոր գործի մեջ զենքերի
պաշտոնական ցուցակ չկա։

Ով փորձ անի ճիշտ պատկերացնել այս դավադրու-
թյունը, վորի մասին ապագա պատմագիրները ճշգրիտ
տեղեկություններ կարող են գտնել միայն մեղադրա-
կանում, նա առանց դժվարության կհամոզվի, վոր վո-
րոշ տպավորություն ստեղծելու համար՝ «փաստերը»
նպատակով են ժողովել, և հեղափոխական կազմակեր-
պությունը, գոնե նրա մեծ մասը, լոկ Փիկցիա յեւ Բայց
յեթե նույնիսկ ինչ վոր բաղդախնդիրներ ել կարողա-
ցել են համոզել գյուղացոց, թե ռուսական զորքը պատ-
րաստ ե ոգնության թոշելու. յեթե նրանք՝ գյուղացոց
ահարեկելով՝ ստիպել են ապատամբել կամ վորոշ հունով
դեկավարել են այն, այս բոլորը դեռ հիմք չեն տալիս
խոսելու նախորոք մտածված հսկայական ծրագրի մա-
սին։ Սա հիմք չի տալիս հաստատելու, թե Խորհրդային

Ոռւսաստանը շարժում և կազմակերպել և համախոհ և այն հայտարարությունների հետ, վորոնց հեղինակները անորոշ դեմքի տեր մարդիկ են՝ վիճելի գոյությամբ, վորոնք այնուամենայնիվ անհետ չքացել են. Այս «եմիսսարները» կամ հասարակ ավազակներ կարող եյին լինել, կամ պրովոկատորներ. Դժբախտաբար Բալկանյան յերկրների ժամանակակից պատմությունը բազմաթիվ որինակներ ունի, յերբ զանազան դեպքերի սկզբնապատճառը յեղել ե ինքը վոստիկանությունը, վորն այդ դեպքերի կարիքն զգացել ե՝ իր խստություններն արդարացնելու և պետության քաղաքականությունը հիմնավորելու նպատակով*). Իրոք, սահմանի վրա ոռւսական զորք կենտրոնացած եր արդյոք, ապստամբությունն ամբողջ Բեսսարաբիայում մեկթեն պայթեց և լուրջ կերպով եր կազմակերպված. Վհչ:

Ճիշտ և, Նիկոլաևի և Թաթարբունարի գյուղացիներն իրենցում խորհրդային իշխանություն հայտարարեցին և կարմիր դրոշակ պարզեցին: Բայց յեթե բնսարաբցիների ապստամբությունն, ինչպես ամեն ինչ մտածել ե տալիս, հետևանք եր լքված, ճնշված, քաղցած ու կողոպտված բնակչության հուսահատ վիճակի, այդ դեպքում կարելի յե թույլ տալ մտածելու, վոր

*.) Մենք մանրամասն պատմեցինք բանտարկյալ Կանների պատմությունը, վորի վրա կախվել եր արդարադատության ձրոքը, վորովինետե պրովոկատոր Բուդան ստիպել եր նրան զինապահեստ գնալ՝ ոռւմբեր ստանալու: Այս դժբախտը հետագայում մեղադրվում եր զանազան մահափորձերի համար զենք ու պայթուցիկ նյութեր բաժանելու մեջ:

ապսամբները ձգտել են մոլդավական խորհրդային հանրապետություն ստեղծել՝ նման Խորհրդային Ռուսաստանին, Բանվորա-գյուղացիական, այսինքն՝ իրենց շահագործողների լծից աղատված աշխատավորների կառավարության հմայքը հարկավ պիտի ազգեր այս գժրախտների հոգերանության վրա. բայց այդ չե, վոր ապացույց ե դառնում՝ հոգուտ հարևան ազատ ժողովրդի մասնակցության, ի՞նչ հիմք, ի՞նչ փաստաթղթեր ունի դատախազությունը, յերբ խոսում ե Ռուսաստանի կամ նույն իսկ միջազգային կոմմունիստական կուսակցության և տվյալ ապստամբության միջև յեղած կապի մասին:

Ցես գիտեմ այդ փաստաթղթերը, նրանց մասին ինձ ասել ե Տատարեսկուն, Նրանք հաշված և անալիզի յին յենթարկված մեղադրական ակտի, մեջ. Նրանք հանդիս յեկան դատարանում:

Այդ փաստաթղթերով կառավարությունն ուզում է նախ՝ Թաթարբունարի դրամայից միջազգային մի մեծ դատավարություն ստեղծել և սրա ամբողջ պատասխանատվությունը գցել կոմմունիստների վրա. յերկրորդ՝ Բեսսարաբիայի ռումին իշխանությունների վրայից սրբել, վերացնել այն անորինակ ստորությունը, վորն ապացուցված ե մի շարք փաստերով:

ՄԵՐԿԱՑՆՈՂ ՓԱՍՏԱԹՂԵՐ

Դա Պլատովի նամակներն են՝ ուղղված Նենինին: Այդ նամակներ մատակարարողը վոստիկանությունն ե, վոր իրը թե մի սպանված ապստամբի մոտ ե գտել: Սպանվածի ով լինելն որինական ձևով պարզված չի. վոչ

մի արձանագրություն չի կազմվել։ Վոստիկանությունը պնդում ե, թե դա հոչակավոր նենինն ե, վորի ամբողջ կյանքը կատարյալ գաղտնիքի քողով և պարուրված։ Ավելացնենք, վոր նրա մոտ գտել են նաև 20 մեծ նամակներ և Ազախի անունով մի վկայական։ Բայց և այնպես դա նենինն ե, — պնդում ե վոստիկանությունը։

Բոլշևիկյան այս վողջ կինոնկարը, վոր դատախազությունն ստեղծել ե գյուղացիական ապստամբության առանձին հպիզոդներից, ամբողջապես վերցված ե սպանվածի գրապաններում գտնված գրադարանից, (բացի նամակներից նրա մոտ գտել են նաև կազմակերպման ու հարձակման պլաններ, հրահանգներ և այլն)։

Այս նամակները, վոր Քիշինեվի զինվորական դատարանն ստացել ե սիգուրանցայից, պիտի հաստատեն բեսսարարյան ապստամբների և Մոսկվայի կենտրոնի միջև յեղած կապը։ Արժե նրանցից մեկն ամբողջովին թարգմանել.

«Ընկեր Նենին։

Մեր պարտքն ե՝ գործել, ինչպես ասել ե Լենինը։ Պիտի հիշենք մեր ուսուցիչ Կարլ Մարքսի խոսքերը — «Բանվորը կորցնել կարող ե միայն շղթաները, իսկ շահել ամեն բան»։ Կեցցե՛ հեղափոխությունը, կեցցե՛ քաղաքացիական կոիվը, կեցցե՛ կոմմունիստական ինտերնացիոնալը, կեցցե՛ Սոցիալիստական Խորհրդային Մոլդավական Հանրապետությունը՝ միացած ՄԽՄ Հանրապետությանը։

Ընկերներ, պատրաստվեցե՛ք ազդանշանի՝ հաղթանակի դաշտ դուրս գալու։

Ստորագրություն. Հարավային Բեսսարաբիայի զինվորական կոմինդանտ Պլատով։

Հարկ կ կա միթե ապացուցելու այս պարզամիտ թղթի կտորի ամբողջ անհավանականությունը, վորի հեղինակն աշխատել ե հյուսել Լենինի ու Կարլ Մարքսի անունները և իր քաղաքական համախոհին թվել հանրածանոթ կոմմունիստական լոգունգները, Այս բոլորից վոստիկանական անշնորհք կեղծիքի հոտ ե փչում։ Ով ուղում ե չափազանց շատ բան ապացուցել, նա վոչինչ չի ապացուցում։ Մրիկաներն այնուամենայնիվ պիտի վախենան առողջ դատողությունից։ Մյուս կողմից՝ կարելի՞ յե միթե թույլ տալ, վոր մի այդպիսի զարմանալի ապստամբություն պատրաստող հասցեատեր այնքան հիմար լիներ,՝ վոր իր գրպանում այլ վարկարեկող թղթերի հետ միասին այդ փաստաթուղթն ևս պահեր։ Նենինի մահվան հանգամանքներն, ինչպես մեղադրականն ե ցուցագրում, թույլ են տալիս մի ավելորդ անգամ ևս նկատելու, վոր Նենինը, վորին ձերբակալելուց առաջ ել քայլ առ քայլ հետապնդում եյին, բավական ժամանակ ուներ՝ թաքցնելու գրպանի թղթերը, վորոնք կարող եյին նրան մատնել։

Նույն անմիտ ստորությունը (յեթե այդ բնորոշումը չափազանց մեղմ չե այն հանցանքի համար, վոր այնքան մահապատիժների ու սպանությունների պատճառ դարձավ) յերեռում ե նաև հետեյալ յերկրորդ կեղծիքից։

«Ընկեր Նենին։

Նորից եմ հիշեցնում, վոր դուք ինձ համար այն տեղերի ցուցակի պատճենը հանեք, ուր հեղափոխական

կաղմակերպություններն են գտնվում, վորապեսզի կարողանամ զինվորական գործողությունների ծրագիրը կաղմել»։ Այս հրամանն, ինչպես մեղադրականն ետքում, գրված ե սեպտեմբերին, 2—3 որ առաջ այն որից, յերբ պիտի տեղի ունենար ապատամբությունը վողջ Բեսսարաբիայում։

ՍՔԱՆՁԵԼԻ ԿՈԼԼԵԳԻԱ

Կարդանք հանցանքը մերկացնող հետագա փաստամթղթերը։ Անցնենք այն պարզամիտ առաջարկներին, վոր Պլատովը հարկավոր է համարում անել. Նենինին «Պետք ե, վոր բեսսարաբյան Խորհուրդները հարձակում պատրաստեն իշխանությունների վրա»։ Կամ թե՝ «յեկեք ինձ մոտ, և յեթե կարող եք, հետներդ տեղեկությունները բերեք»։ Մի այլ նամակում խոսվում ե այն դեպքերին վերաբերող տաքտիկայի մասին, վորոնք ապատամբությունից շատ առաջ են տեղի ունեցել։ Հարց է ծագում՝ միթե Նենինն իր մոտ մերկացնող փաստամթղթեր պահելու այնպիսի ցավ ուներ, վոր այդ նամակը նա դիտմամբ չեր հանձնել համապատասխան կաղմակերպության։

Մի այլ թղթում Պլատովն առաջարկում է գյուղական գլխավորներին՝ հաշվառքի յենթարկել «զինվորական մթերքը՝ հրետանավորների և հեծելազնդի համար»։ Ինքնին հասկանալի յե, վոր յեթե այս մարմինները գոյություն ունենային վհչ միայն թղթի վրա ու ինչ վոր մեկի յերևակայության մեջ, նրանք չեյին կարող հրետանավորների կամ հեծյալների պիտույքներ ունենալ։ Այստեղ մենք գործ ունենք միայն սովորական

զինվորական գեկույցի հետ՝ կազմված վորեւ զինվորական գրադրի կողմից, վորն ավելի շանկություն և ունեցել, քան հասկացողություն։ Սա շատ ծիծաղելի յէ։

Իսկ ի՞նչ անուն տանք այն փքուն տիտղոսին, վոր Պլատովը զնում ե իր ստորագրության կողքին—«Զինվորական Կոմինդանատ Հարավային Բհսսարաբիսայի»։

Այս տիտղոսը մտնում է ոռումինական զինվորական տերմինոլոգիայի մեջ, բայց վոչ յերբեք Խորհրդային Ռուսաստանի։ Այսպես կոչված Պլատովի դեմքը նույնքան պարզ չե, ինչպես և նինինի անձնավորությունը։ Ավելի մեծ հիմք ունենք յենթադրելու, թե մենք գործ ունենք մի հասարակ անգրագետ ձկնորսի հետ, վորին փայլուն դեր և մոայլ ու բարդ պլաններ են վերագրել։ Այդ թշվառը, վոր բաղդակից ե դարձել շատ հազարների, դատարանում ներկա չեր, վոր այս մեքենայությունները հերքեր։

Ուրիշ նամակներից յերեսում ե, վոր «զլիսավոր հրամանատարն» ինքն ե ճահիճների միջով զենք տեղափոխում՝ սայլերին բարցած և նույնիսկ կոնծարանում ել ե (նա խոստովանվել ե, վոր մի անգամ, խմած ժամանակ, քիչ ե մնացել գաղտնիքը բերնից թոցնի)։ Յեկ Մոսկվայի այս ագենտը, վոր դրամով ոժանդակում ե Բեսսարաբիայի ապստամբությանը ու իր թե մի ամրող գավառ յետ խլելու համար կազմակերպությունների ամբողջ ցանց ե ստեղծել, հանկարծ այնքան ե ընկնում, վոր գյուղացիներին առաջարկում ե զողությամբ ու գնդակով փող ճարել իր համար։

Ի՞նչ կարելի յե ասել այսպիսի դատաքննության մասին։ Ընդունենք, թե Բեսսարաբիայում, ինչպես և ամեն տեղ, հեղափոխական ցնորդները ու հոսանքներ գոյություն ունեցել են կամ ունեն, և ճնշված ժողովրդի մեջ ազատվելու ձգտում ե առաջ յեկել։ Ընդունենք, թե բեսսարաբյան գյուղացիների հայացքները դեպի Արևելք են դարձած, վորտեղ դեռ յերեկ կոփվում եր իրենց տնտեսական կյանքը, վորի ժողովուրդները փշրեցին իրենց շղթաները։

Բայց Խորհրդային Ռուսաստանն այստեղ մեղք չունի։ Յեթե ոռւսական սահմանից հարյուր կիլոմետր դենք կային կոռապերատիվ և այլ, նույն իսկ կրոնական ընկերություններ ել, այնտեղ հեղափոխական բջիջներ ու սրանց ճյուղավորություններ չկային, ինչպես ուղում են զոռով հավատացնել մեզ, ապացույց բերելով բուման-ֆելյետոնից, զիտմամբ շփոթելով հեղափոխական կոմմունիստներին բանդիտների և մաքսանենգների հետ, վորոնք անց ու դարձ են անում Դնեստրով։ Մեղադրվով գյուղացիք չգիտեն՝ ի՞նչ ե կոմմունիզմը, ոռւսական վարչաձևը, հեղափոխական կազմակերպությունը։

Յեթե առաջնորդներ ել յեղել են, վորոնք կրքերը բորբոքել են և բոլորովին այլ պատճառներից առաջացած շարժումն ոգտագործել, դա ապստամբության հետեանքն ե, բայց վհչ պատճառը։

ՃԵՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԶԱՅՆԵՐԸ

Մեղադրական ակտը, վոր արձագանքն ե ոռւմինական իշխանությունների, ապստամբության իսկական

պատճառը տքնում ե տեսնել ամենուրեք գոյություն ունեցող ատամներով դանակ բռնած մարդու միջ, բըռնակալ կառավարության տրամադրության տակ դնելով այդ գեմագոդիկ ապացույցները և այդպիսով պատասխանատվությունից խոսափելու հնարավորություն տալով նրան։ Իսկական պատճառն արտահայտում են չորս թե հինգ գյուղացիներ, վորոնք համարձակություն ունեցան զինվորական համազգեստ կրող դատավորներին յերեսն ի վեր ասել. «Այլ ևս դիմանալ չկարողացանք ու ապստամբեցինք»։ Մնացածը կողոպտիչների և պրովոկատորների գործն ե։ Այս պատճառն արտահայտեց նաև մի ուրիշ մեղադրվող, վոր սկզբում չեր համարձակում խոսել բայց հետո մեկեն գուրս յեկավ համրի վիճակից ու ասաց. «Այս մարդիկ յերբեք չեն արել այն, ինչի մեջ վոր մեղադրում են։ Մենք խեղճ գյուղացիներ ենք, մեզ համբերությունից հանեցին»։

Նույնը նման պայմաններում վաղուց ասել ե մի մարդ, վորին բոլոր ռումինները հարգում եյին։ Դա պատգամավոր Ալեքսանդրին եր։ Սա մի քանի տարի առաջ խոտինյան դործի առթիվ Քիշինևում մի շանթալից ճառ ասաց, վոր այսպես վերջացրեց.

«Մի վոտքս գերեզման, մմ՝ յես ինձ վրա յեմ վերցնում. Զեղ ճշմարտությունն ասելու պատասխանատվությունը. Պիտի հիշենք, թե ինչպես մի ցարական ժանդարմ կարողանում եր ահաբեկված պահել մի ամբողջ գավառակ, վորպեսզի հասկանալի դառնա, թե ինչ են անում յուրաքանչյուր գյուղում բույն դրած հինգ-վեց ժանդարմներ։ Յեթե դրան ավելացնենք և այն, վոր Բես-

սարարիայում առանց որինական պատճառերի 50,000 զինվոր և ապրում, վորոնք կողոպտում են ձեռք ընկածն ու ասպատակում խաղաղ բնակչության ցանքերը, այդ գեղքում հասկանալի կլինի մեզնում տարածված առածը, թե «ռումինը ազգություն չի, այլ զբաղմունք»։ Ռումինական ոկկուպացիայի 18 ամսվա ընթացքում Բեսսարաբիան ավելի ռուսացավ, քան ռուսական ոկկուպացիայի հարյուր տարվա ընթացքում։

Նախկին պրեմյեր Վայդա Վոյվոդը պարլամենտում հայտարարեց. «Ճարական մտրակը վատ եր, բայց համեմատած ռումինականի հետ, վոր ներկայումս ավերածություն և գործում Բեսսարաբիայում, խաղալիք եր։ Այժմ ազգային խնդիրը Բեսսարաբիայում լուծվում և անմեղներին գնդակահարելով և հրանոթների պայթյունով։ Թեպետ բոլշևիկներին մեզ թշնամի եյինք համարում, բայց նրանց քաղաքականությունը վոչինչ և՝ համեմատած ռումինական պետական քաղաքականության հետ՝ Բեսսարաբիայում։»

Ծերունի Վասիլիյ Ստրոեսկուն, բեսսարաբյան ազգային շարժման առաջալը, մինչև նրան ձայնից զըրկելը, կարողացավ ռումինական պատգամավորներին յերեսն ի վեր գոռալ.

«Բեսսարաբյան իշխանությունները բնաչկությանը ճնշում են գագանաբար։ Այստեղ դատը կարճ վրիժառություն և (расправа). հենց իրենք նախարարներն ել անորինությանը նպասում են։ Քաղաքական ազտությունները բոլորովին զինվորական րեժիմին են փոխարինում։ Ցավելով ես հաստատում, վոր նախկին

ոռւսական իշխանության ժամանակ դրությունն ավելի լավ եր»:

Վասիլիյ Ստրոեսկույի յելույթը այնպիսի աղմուկ հանեց, վոր սահպված յեղավ թողնել դահլիճը: Նրա ճառը յերբեք չհայտարարվեց՝ նույնիսկ պաշառնական հաշվետվության մեջ: Բայց մնացին նրա բառերը. «Ահարեկված ու ճնշված հեսսարարիայի վերքերը միշտ թարախակալում են ու միշտ ցավում («Aurora»): Դրության այս բնորոշումը, վոր չի փոխվում, այլ վատանում ե, խոստովանում են բոլոր ազնիվ մարդիկ՝ առանց կուսակցության խտրության:

Ի նախատինս մեր սերնդի՝ նման ձայներ քիչ են հնչում, բայց նրանցում արտահայտած մեղադրանքներն այլ ևս չեն հարկադրում մեզ՝ կինո-դավագրությունների մեջ վորոնել հուսահատված գյուղացիների արարքների բացատրությունը:

Իսկ նման իրավացի ճառեր, պակաս հանդուզն ու բացահայտ, սակայն վոչպակաս պարզ, լսվել են ուրիշ տեղերում ևս, զգույշ նկատողությունների մեջ, վոր չեյին կարող չանել բոլոր ուղղության լրագրերը: «Adeverul»-ը բնավ չհրաժարվելով իր հակակոմմունիստական հայացքներից, ստիպված եր հաստատել բնակչության անբավականությունը, վորի պատճառն իր անելիքների բարձրության վրա չկանդնած կառավարությունն եւ:

«Ուրիշ բան ե պաշտպանել հեսսարարիան կոմմունիստների հարձակումներից ու խարդախություններից և ուրիշ՝ խաղաղացնել գավառներն ազնիվ վարչությունների ոգնությամբ», — գրում ե «Adeverul»-ը և ավելաց-

նում. «Մայր յերկիրը չկարողացավ արդարության, ազատության և զեմոկրատիայի բեժիմով ձեռք բերել ընակչության համակրանքը»։ Կոնստանտին Միլեն, աչքի ընկնող լրագրող և նախագահ ոռոմինական մամուլի ասսոցիացիայի, գրում ե.

«Չփառեմ՝ Թաթարունարի դատավարությունից պ. Բարրյուսալ ի՞նչ ապավորություն կստանա: Կարող եմ միայն հայտնել իմ խորին համոզմունքը, թե ապստամբությունը ճնշելիս՝ իշխանությունները մոռացան, վորքադաքակիրթ պետությունների մեթոդներ պիտի կիրառեյին: Յեթե այս բանը նրանք չմոռանային, Տորոսի և Բարբյուսախ այցերը չեյին լինի, վորովհետև աղջանց կրակի ծուխ չի բարձրանում: Մենք ել պաշտպանվելու կարիք չեյինք զգա՝ մեջ բերելով, ինչպես այդ կառավարությունն ե անում, մեղմացուցիչ հանդամանքներ»։

«Մեզ պիտի զարմացնի, — ասաց ինձ պատկամավոր Ստերեն, ինքը բեսսարացի ու վոչ անջատողական և, ինչպես առիթ եմ ունեցել ասելու, Բեսսարարիայում մեծ ժողովրդականություն վայելող մարդ, — վոր միայն մի քանի գյուղ ապստամբեց»։

Յեվ այսպես՝ մնում ե դեռ ապացուցել ոռուսական դավերը, իսկ մինչ այդ, ապստամբության իսկական պատճառները կատարելապես ապացուցված են:

Լ Լ Կ Ո Ւ Մ Ն Ե Ր Ո Վ

Դավադրությունն ապացուցելու համար չեր կարելի սահմանափակվել միայն պահնորդականի վերին կամ ստորին ագենտների ցուցմունքներով: Մեղադրվողների

իսոստովանություն ու վկաների ցուցմունքներ ևս պետք եյին: Այստեղ մեր հետազոտման մի նոր և վոչ պակաս կարենոր գլուխ ե բացվում: Մենք խղճի կատարյալ հանգստությամբ և սեփական պատասխանատվության գիտակցությամբ կարող եյինք այդ գլուխը վերնագրել՝ «Լկումներով կորզած խոստովանություններ և ցուցմունքներ»: Բավարար պատասխան ստանալու համար՝ մեղադրյալներին և վկաներին հարցաքննում եյին միջնադարյան մեթոդներով: Դա կատարվում եր յեռահարկ հարցաքննության ժամանակ: Քննում եր նախ ժանդարմը, հետո վոստիկանական կոմիսարը և, վերջապես, դատական քննիչը: Այս յեռաստիճան հարցաքննություններից յուրաքանչյուրի ժամանակ մեղադրյականը, այսինքն արտասահմանի հետ դավադրությունը և համաձայնությունը հիմնավորելու համար՝ ամենախայտառակ միջոցներն եյին կիրառվում: Այստեղ խոսքը վոչ թե այս կամ այն մոլեռանդ ազենտի մասնակի փորձերի մասին ե, այլ մի ամբողջ մտածված մեթոդի: Հանգիստ խղճով չեր, վոր իմացանք նախնական քննության ստոր ու ամոթաբեր պատկերը մերկացնող մի քան փաստեր: Բանտում տեղի ունեցող դավադրությունն սկզբում հրապարակական չեր: Վոչ մի կողմանակի մարդ ներկա չեր լինում: Բայց հենց վոր դռները մի փոքր բացվեցին, ճշմարտությունն ել իսկույն դուրս սողաց: Կոտորածից ճողովրածներն սկզբում ճիպոտի հարվածների տակ սերտած դասն եյին արտասանում: Յերբ մեղադրյալներն ու վկաները սկսում եյին գանգատվել, նախագահը խոսքից զրկում եր նրանց:

- Ի՞նչու յես դողում, — դարձավ նախագահն իրեն մոտ բերածներից մեկին:
- Յես չեմ դողում:
- Բայց դու ամբողջ մարմնով դողում ես:
- Վախենում եմ՝ ինձ ծեծեն:
- Այստեղ չեն ծեծում:
- Կարծեցի՝ այստեղ ել են ծեծում:

Հարկ յեղավ թույլ տալ նրանց, վոր վոչ միայն խոսեն, այլ և ցույց տան սպիները և հարվածների ու վերքերի հետքերը, վորոնցով խեղճերին ստիպել եյին ասել, ինչ վոր իրենցից պահանջվում եր:

Յես այդ բոլոր ցուցմունքները կարդացել եմ: Պետք է մի ամբողջ շարք առաջ բերեմ, վորպեսզի հասարակական կարծիքը վերջնականապես գնահատե մեծադղորդ թիշխնելի դատաստանական դրամայի ճշգրիտ ընույթը:

Գյուղական տանուառերը վերադառնալով նախնական քննության ժամանակ տված իր ցուցմունքին, ասում են. «Յես խոստովանեցի, վորովհետև վախեցած եյի. առաջս սպանված մարդ եր ընկած»:

Մեղադրյալ Պավել Կիրիլենկոն պատմում ե.

«Փոս փորեցին, ինձ դրին մեջը, մինչև գոտկատեղս թաղեցին, սպանացին կենդանի թաղել, յեթե ճշմարտությունը չասեմ, այսինքն յեթե չխոստովանեմ, թե դենք եմ կրել և մասնակցել ոռմինական զորքի դեմ կազմված դավադրությանը»:

Այս հայտարարությունը կորզել եր նրանից նախկին ցարական սպա Գուսատենկոն, այժմ պահնորդականի պաշտոնյա:

Միրոն Կաչենկոյին պահնորդական բաժինը ձերբակալեց, ժանդարմաները զազանաբար ծեծեցին ու նկուղում պահեցին ամբողջ յերկու շաբաթ. յերբեմն այստեղից դուրս եյին բերում ու կուրծքը մուրճերով ծեծում. Հետո ուրիշ գյուղ տեղափոխեցին, ուր նորից ծեծեցին՝ մինչև ուշաթափություն։ Յերբ դատական քննիչի մոտ բերին, նա չեր ուզում իր նախկին ցուցմունքները հաստատել։ Քննիչ Տյուրոր Մարինը թքեց յերևսին։ Վերջ ի վերջո ծեծված ու սարսափահար մեղադրյալն ստորագրեց, ինչ վոր պահանջում եյին։ Մեղադրվող Մատվեյ Տանգեն այնպես ծեծվեց, վոր քթից ու կոկորդից արյուն հոսեց։ Նրան հիվանդանոց փոխադրեցին։ Այստեղ ել մոտը յերկու սպաներ յեկան. բայց վորովհետև նա խօսել չեր կարողանում, սպաները բավականացան միայն նրա ստորագրությամբ. նրան հարկադրեցին ստորագրել առանց թույլ տալու, վոր թուղթը կարդա։

Վասիլիյ Կարտելիանույին ծեծեցին մինչև ուշաթափություն, վորպեսզի խոստովանե, թե իրենք Դոլիկիլի գյուղում հեղափոխական շարժում են կազմակերպել։ Վերջացավ նրանով, վոր սրանք կեղծ ցուցմունք տվին։ Քննության ժամանակ Տյուրոր Մարինը խաչելությունը նետեց դեպի Կարտելիանուն, վորը մտածում եր՝ ստորագրել արձանագրությունը, թե՞ վոչ։ Նրանք բոլորն ել ստորագրեցին՝ առանց ծանոթանալու իրենց ցուցմունքի հետ։

Ալեքսեյ Բագաևակին թշնամական հարաբերության մեջ եր իրենց գյուղի տանուտերի հետ և դատվեց նրա հետ միասին։ Թաթարբունարի ապստամբությունից

հետո աանուտերը հայտնել եր, թե նա հեղափոխական է: Տանջանքի ու չարչարանքի սպառնալիքի տակ նա ստորագրեց, ինչ վոր հրամայեցին՝ հոչակավոր կազմակերպության մասին: Վուլկանեշտցի Ստեփան Ռետան պատմեց այն զզվելի պրովոկացիայի մասին, վորի չնորհիվ իրեն ել եյին խառնել հեղափոխության գործի մեջ: Նրա ասածները հաստատում են բազմաթիվ վկաները:

Նիկոլայ Ռիսկով քահանայի վկայությունից յերեվում ե, վոր նրան գնդակահարության դուռն են հասցըել, վորապեսզի ցույց տա, թե իրենց գյուղում պատերազմ ե տեղի ունեցել և այդպիսով ապստամբությանը մասնակցելու մեջ մեղադրե իր գյուղի բնակիչ Սպիրիդոն Խչենկոյին: Մեղադրյալ Ալեքսեյ Յեֆիմենկոն հայտնեց, թե հետաքննության ժամանակ իրեն կարդացել են մի արձանագրություն և հրամայել սառագրել մի թերթիկ, վորի վրա գրամեքենայով տպագրված են յեղել մի քանի հարցեր:

Մի քանի հայտարարություններ գրված են յեղել գրամեքենայով, հետևաբար պատրաստված՝ նախ քան մեղադրյալների ստորագրելը: Ռումինական վոստիկանությունն այս մեթոդը հաճախ եր գործադրում: Նման դեպքերի մասին ինձ անձամբ պատմել են տաժանակիրների բանտապետի նմանորինակ արարքների գոհերը: Ուրիշները մերկացնում եյին հոչակավոր քննիչ Տյուղոր Մարինի գործադրած միջոցները: Նա սարսափելի սպառնալիքներով եր գործում, որինակ՝ հաճախ մեղադրյալներին ասում եր.

— Յերդվում եմ խաչով ու ավետարանով, վոր դու կփոխ բանտում:

Այս քննիչը, վոր տարրական դպրոցի չորս դասարանից բացի ուրիշ կրթություն չուներ, մեղագրյալներից և վկաններից պահանջում եր անուններ տալ և ապա հրամայում ձերբակալել այդ բոլորին:

Աֆանասիյ Կուրտենը տեղեկություններ եր տվել իրենց գյուղի գաղտնի հեղափոխական կազմակերպության մասին: Նա հնարել եր այդ, վոր խոստովանվել ե հետագայում: — Ժանդարմներից մեկը նստելով նրա գլխին, մյուսը վոտներին, ծեծել են, կապուտել են թռկերով, ձեռքերը կապել են վոտներին և ուզեցել են նորից ծեծել: Հենց վոր խեղճը խոր ուշագնացությունից ուշքի յե յեկել, ստիպել են մի թուղթ ստորագրել և յետ են ուղարկել մյուս բանտարկյալների հետ, վորոնք սարսափել են, տեսնելով նրա այլանդակված դեմքը ու հարվածներից սեացած մարմինը: Ամեն անգամ հարվածելիս ասում եյին: «Ասա ճշմարտությունը»:

Ժիբրիան գյուղի (ուր տեղի յեն ունեցել այդ դեպքերը) ժանդարմների պետը հետաքննության ժամանակ մահակը ձեռքին՝ ասում եր: «Յեթե ճշմարտությունը ինձ չասես, մահակին կասես»: Ուսուցիչ Զոն Բիրուրանսը հայտարարեց: «Ինչ վոր ասել եմ, սուտ ե: Հարվածներով ինձ ստիպեցին ասել, թե յես Դնեստրից մարդիկ եյի անց կացնում: Բայց դա անկարելի յե, վորովհատե իմ գյուղը գետից 30 կիլոմետր հեռու յե: Ինձ հետ միասին քննվողներին բոլորին ել ծեծել են»:

Նիկոլայ Խիսիբարու. «Յես Ֆոնտենում չեմ յեղել, բայց ստիպել են ասել: Վոր յեղել եմ, զինվորական դատից վախեցած՝ ցույց եմ տվել այն ամենը, ինչ վոր այդ մարդիկ ինձնից պահանջել են»:

Ֆեռդոր Բականովը մեղագրյալների գեմ իր բոլոր ասածը ժխտեց. և հայտարարեց, թէ հետաքննության արձանագրության խոսքերն իրենը չեն: «Հեղափոխական կազմակերպությունների մասին ինձ վոչ վոք վոչինչ չի ասել. Ինձ ծեծել են, յես ել ասել եմ»:

Ստեղան Բայրախտար. «Ինչ վոր հետաքննության ժամանակ ասել եմ, սուստ ե. ծեծով ու սպառնալիքով են հարկադրել»:

Դատախազը կարդաց նրան իր հետեյալ ցուցմունքը. «1922 թ. Նիկոլայ Մորգանը կանչեց ինձ ֆոնտենա դյուլը և հանձնարարեց հինգ հոգուց բաղկացած կոմիտետ կազմակերպել՝ ոռոմիններին Բեսսարաբիայից դուրս քշելու»:

Վկան պատասխանեց.

«Ասել եմ, վորովհետեւ պահանջում եյին ինձանից և դաժան կերպով ծեծում: Բեխերս պոկտում, աչքերս փայտ եյին կոխում»:

Վերջացնենք զգվելի փաստերի այս նողկալի շարանը:

Մեկն ել բավական ե՝ ցուցյա տալու համար որենքի բացակայությունը: Կարելի յեր յերկու կամ տասն անգամ ավելի փաստեր թվել: Շեշտենք միայն, վոր մարդկանց ստիպել են հաճախ անհեթեթ բաներ ասել: Մեղադրյալներից խոստովանություն են կորզել, վոր իրը թէ հեղափոխական մանիֆեստներ են կարդացել. սակայն այդ մանիֆեստներից վհչ մեկի հետքը չեն դտել. մի բան, վոր անհավանական ե, յեթե այդպիսիք իրականում դոյցություն ունենային: Վոնն Նիկոլայ Գուցունի ստիպել են ասել, թե Ռուսաստանից Խզմայիլ մի շոգենավ ե յեկել՝ լի զենքերով և ոռոմբերով: Մա կատարյալ

արսուրդ և Դատախազության 145 վկաները հրաժարվեցին իրենց նախնական ցուցմունքներից։ Վերջին հաշվով հակառակմինական դավադրության մասին վոչ մի վկագրական վոչինչ չասաց։

Մեղադրանքից ի՞նչ մնաց։ Կասկած առաջացնող փաստերի կույտը փուլ յեկավ, ինչպես թղթե տնակ։ Մնաց միայն մի կեղծավոր սիստեմ, վորի նպատակն եր զանազան քաղաքական դավադրություններին հայրենասիրական արարքների, «կարգապահության» պաշտպանության և հեղափոխության տեսք տալ, վորպեսզի հաճոյանան միծ իմպերիալիստական պետություններին, վորոնց վասսալն են հանդիսանում։ Այս ձեերը վաղուց են կիրառվում՝ խեղդելու անկախության և ազատության վերջին կայծերը։ 1914 թ. հունվարին, հիշում եմ, «Ardearpul» լրագիրը հարձակման հետևյալ նենդ լոգունգը բաց թողեց. «մոլդավացիք բոլցեիկների հետ միասին են գործում»։

* * *

Ի՞նչ կարող ե մտածել զինվորական դատարանը այս անսասան փաստերի մասին, վորոնք այս սենսացիոն դատավարության ընթացքում ավելի ու ավելի պարզվեցին։

Բայց ընդհանրապես մտածելու իրավունք ունի նա...

Գնդապետ Մաքսիմին հենց նոր ասացի.

«Իրավունք չունեմ ձեր պարտքը՝ ձեզ հուշելու. միայն կասեմ, վոր ներկայումս ամբողջ աշխարհի ուշադրությունը ձեզ վրա յե դարձած և ձեր վճռին ե սպասում։

Մ Ե Ծ Մ Ա Ր Դ Ը

Հաջորդ օրը իր պաշտպանողական ճառով հանդես յեկալ Կոստա-Ֆորուն։ Նա մի քանի տարի առաջ թողել և փաստաբանական ասպարեզը, բայց այս անգամ վճռեց մասնակցել այս մեծ պրոցեսսին։ Նա խոսում եր շատ պարզ, առանց շարժումների, առանց միմիկայի։ բայց մի առանձին հափշտակիչ հուզումով։ Նա խոսում եր լլկանքով ձեռք բերած խոստովանությունների ու ցուցմունքների մասին և թախանձում դատավորներին՝ ժխտել այդ ճանապարհով կառուցած մեղադրանքը։ Զինվորական դատարանի նախագահը նրան ընդհատեց.

—Քաղաքացի Կոստա-Ֆորու, այդ խոսքերի պատճառ-խանատվությունը վերցնում եք ձեղ վրա։ Այդ զրապար-տությունը ձեզ պատասխանատվության կանչելու հիմք կարող ե ծառայել։

Այս խոսքերը Կոստա-Ֆորույի վրա չազդեցին։ Նա միայն ձայնը մի փոքր բարձրացնելով հայտնեց, վոր իր խոսքերի ամբողջ պատասխանատվությունը վերց-նում ե իր վրա։ Բոլորն իրենց աչքերը հառեցին այս ծերունուն, վորի առաքինի վարմունքի մեջ մեծ պար-զություն ու զսպվածություն կար։ Փաստաբանները, դատախազներն ու դատավորները նրան եյին նայում գործերով ծանրաբեռնված սեղանների յետևից։

Այս մարդը, վոր իր յերկրին մեծ ծառայություն-ներ և մատուցել և մի կողմի հիացմունքին ու հար-դանքին, մյուսի յել ատելությանն արժանացել, փայ-լուն կերպով մերկացնում ե Ռումինիայի վոստիկանա-կան կամերաններում ու տանջարաններում կատարված

գազանությունները և դատապարտում «հաղթող» անարդարությունը: Միաժամանակ նա, շնորհիվ իր անվեհերության ու անբասիր ազնվության, պատրաստ ճշմարտության համար միայնակ մարտնչելու բոլորի դեմ, հանդիսանում ե ժամանակակից մեծ յեվրոպացիներից մեկը: Մոլեռանդ ազգայնամոլները նրան վատ ուսումին են համարում, վորն արատավորում ե իր յերկիրը: Խղճուկ ուղեղները, վորոնք բերել են այս մեղադրանքը, պիտի հասկանային, վոր անձնավորությունը չի կարող վարկարեկել յերկիրը: Կոստա-Ֆորույի նման մարդիկ բարձրացնում են իրենց ժամանակաշրջանը, դրանով ել իրենց յերկիրը: Այդպիսիներին վիրավորողները միայն նոռանց հմայքն են հաստատում:

Եթեկ նա մի ստոր սպառնական նամակ ստացավ՝ ինձ հետ մոտ լինելու պատճառով՝ Ռումինիայում յեղածս ժամանակ: Իմ մեկնելուց մի քանի որ հետո ֆաշիստները կլուժի կայարանում հարձակվել են վրան ու գլխին խփել, վորովհետև այդ գլուխը չցանկացավ խոնարհվել ժամանակակից զազիր իրավակարգի առաջ:

* * *

Մրանք են այն տպավորությունները, վոր յես ժողվել եմ՝ Քիշինևի դատավարությունը տեղում ուսումնասիրելիս: Այս գործը սերտ կապված է սպիտակ տերրորի ամբողջ վողբերգական պրոբլեմի հետ: Դրա մեջ նա յերևում ե իր ամբողջությամբ՝ նրա տեսնենցները, միջոցներն ու գենքերը: Խոսքը ոլիգարխիական կառավարությունների մասին ե, վորոնք պահվում են ուժով և հենվում են ամեն բանի ընդունակ վատթարների:

զանազան խավերի ու բոյարների, գեներալների և բաղդախնդիրների շահերի քաղաքականության վրա:

Մենք խոսում ենք ռեակցիայի և իմպերիալիզմի պլանների մասին, ժողովուրդների աղատության դեմ բոլոր միջոցներով ու պատրվակով կազմակերպվող պատերազմի մասին:

Յերբ արել մայր մտնելու ժամանակ դուքս ենք գալիս խիստ սառնամանիքի մեջ, զինվորները մեղադրյալներին ժողովում և առաջ են քշում պատի ուղղությամբ, իսկ հետո յել դեպի ներքին շենքի բաց ճեղքը: Վանդակի ուղղությամբ խոնված ամբոխ և յերեւում, բայց մեկ-մեկ, վորովհետև գերեզմանը թողնելուց առաջ՝ դեռ խուզարկում են: Մինչդեռ նրանք անցնում են իրենց ցուրտ խցերը, մենք սնցնում ենք Բեսսարաբիայի մայրաքաղաքի ամրոցի փառահեղ կամարակապ սրահով և պարտավոր ենք անմիջապես տեղ տալ նոր յեկող մարդկանց շարքերին: Մթության մեջ մենք հարցնում ենք նրանց ով լինելը: Նրանցից մեկը, վորին զինվորը հրում և, կարողանում և պատասխանել: «Մենք Գալացից ենք»: Այն, Գալացում հենց նոր են դաշտադրություն բացել, և նորից մասսայական ձերբակալություններ են կատարվում:

Բայց այս անգամ ձերբակալվածների մեջ հանդիպում են վոչ միայն դաշտերի խեղճ վաստակավորներ, վորոնք հուստհատության հասած՝ պատրաստ են կռվի ասպարեզ նետվել, վորովհետև այդ վիճակից ավելի վատթարն ստեղծվել չի կարող: Նրանց մեջ, նոր հասկացողության մարդիկ կան — ինտելիգենտներ, վորոնք յեղայրացել են ֆիզիքական աշխատանքի ներկայա-

ցուցիչների հետ և նրանց հետ կողք կողքի կռվում են ստրկական իրավակարգի դեմ, ժողովրդին սովորեցնում են, թե ինչպես պիտի իրավունք ձեռք բերել: Բալկաններում նրանց ամեն տեղ վոստիկանությունը հսկում, հետևում և իր թակարդն ե զցում: Բանտում նրանց թիմն այսոր հիսուն հ: Նրանց աղաղակը յերբեմն բանտի պատերի միջով մեզ և հասնում: Նրանցից վոչ վոք դեռ իր փաստաբանի հետ չի տեսնվել: Նրանց տառապանքի և նրանց հետ վարչելու մասին յես պատհաբար իմացա: Բայց չեմ կարող այստեղ ասել, թե վհրտեղից իմացա և ինչ գիտեմ:

Ցեվ այսպես, Թաթարբունարի գործով — հայածանքի և սպանությունների յերկար շրջանի այս աչքի ընկնող մի դրուագով — ամեն ինչ դեռ չի վերջանում: Նոր գործեր են սկսվում և դեռ շատերը կհարուցվեն՝ քանի դեռ Ռումինիայում գոյություն ունեցող իրավակարգի որով կմնա թեկուզ մի սիրտ՝ ընդունակ բարախելու ազատության և սոցիալական արդարության համար: Ցեթե պատհաբար ինձ մեղադրեն, թե յես Ռումինիայում հայտնվել եմ կանխակալ կարծիքով, կպատասխանեմ — յեթե հեղափոխական չլինեյի, այտնտեղից դուրս գալով՝ հեղափոխական կդառնայի*):

*) Քիշինեվի դատավարության արդյունքը. — 283 մեղադրյալներից դատապարտված են՝ 85:

Ցուտին Տատիշչյը դատապարտված և առավելագույն պատժից ցմահ տաժանակիր աշխատանքի, վորովինեակ Ռումինիայում իրավաբանորեն մահապատճի գոյություն չունի: Ցերեք հոգի՝ 10 տարվա տաժանակիր աշխատանքի, 1-ը՝ 8 տ., 1-ը՝ 6 տ., 10-ը՝ 5 տ., 2-ը՝ 5 տարվա բերդարգելության, 3-ը՝ 3 տ., 1-ը՝ 4 տ., 4-ը՝ 3 տ., 1-ը՝ 2 տ. 10 ամսվա, 2-ը՝ 2 տ., մնացած 40-ը, վորոնք դատապարտված ելին 1 տ. 2 ամիս բերդարգելության, ներված են: Մեղադրող վկաներից — Թաթարբունարի քաղաքագույի Դարրանեգուն, նրա ոչնական Սերեբը, Ատմանյուկի քաղաքագույի Շեշնիկոն, քահանա Սանդուկեսկուն, սենտառոր Յակով Բելմոսովը զինվորական դատի յեն արված՝ վորպես ապստամբության յամակցողներ:

III

ԲԱԼԿԱՆՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԻՆԵՐԻՆ

ԲԱԼԿԱՆՅԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻՆ

Յես յեղա ձեր շրջանում, սեղմեցի ձեռքը բանվորների ու գյուղացիների, տղամարդկանց ու կանանց, ծերերի ու ջահելների, այցելեցի այն տներն ու տեղերը, ուր ձեղ հալածել ու տանջել են: Ձեզ պատահեցի Բուխարեստում, Սոֆիայում, Բելգրադում, Բուդապեշտում և Վենեայում, ձեզնից շատերին ել արտասահմանում տեսա, հեռու հայրենիքից, վորից փախել եյիք, վորպես ժանտախտից:

Վառ պատկերացնելով ձեր տառապանքը և լսելով ետքը ձեր սրտերի, կարող եմ միայն մի բան ասել ձեղ, չնայած անհատ ազնիվ մարդկանց պաշտպանության, ձեր հույսը միայն ձեղ վրա դրեք: Վերից վոշինչ չպտի սպասել, բացի ստից ու հարվածներից: Նախկին բոլոր ճակատայիններն ափսոսում են, վորլոել են իշխանություններին: Դուք ել մի կողմը նետեցեք մասսաների մեջ դեռ պահպող հարգանքի վերջին մնացորդը դեպի կառավարություններն ու կառավարողները: Դուք նրանց պետք եք միայն իրենց հանցավոր մտքերն իրականացնելու համար:

Ձեր կառավարությունները ձեր թշնամիներն են:

Յեվրոպայում հսկա բեմի վրա նախարարական սլմազարդ դերասանները հանդիսավոր կերպով ճառում են ժողովուրդների իրավունքի ու խաղաղության մասին:

Յես՝ Փրանսիացիս գիտեմ, թե հետ-պատերազմյան Յեվրոպայում ինչ մոռայլ դեր ե կատարում Փրանսիական կառավարությունը:

Յես պարծենում եմ, վոր ձայնս մի քանի անգամ եմ ազատ կերպով միացրել այն ոտարյերկրացիների ձայնին, վորոնք անարգանքի եյին գամում Փրանսիական կառավարության սխալներն ու մեղքերը:

Մի վայրկյան անգամ չեմ շփոթել Ֆրանսիան այն անձանց հետ, վորոնք նախարարական պալատներում հաջորդում են իրար:

Նրանք ճնշելով առաջին գերմանական հեղափոխությունը և խեղդելով պրոլետարական հեղափոխությունը Վենգրիայում, սանձարձակ զինվորականություն հաստատեցին: Ֆրանսիական կառավարությունն ոգնեց Լեհաստանին, բալտիական պետություններին և Խոպանիային՝ ստրկացնելու իրենց ժողովուրդներին: Նա արավ, ինչ վոր իրենից եր կախված՝ Ռուսաստանում ճորտությունը վերականգնելու համար:

Բրատիանուի, Վոլկովի, Պաշիչի, Պանջալոսի և Խորտիի ամենահուսալի հենարանը «հեղափոխական» Ֆրանսիայի և «ազատ» Անգլիայի ներկայացուցիչների ոգնությունն ե յեղել:

Այս մարդիկ սիրալիր կերպով պաշտպանում են իրար. դրա համար ել նմամ են իրար: Մեկը մյուսի արյունոտ պատճենն ե: Ամենուրեք նրանք նույն սիստեմն են կիրառում—պատերազմը քաղաքների և գյուղերի բնակչության դեմ, ամեն տեղ նրանք նույն բանն են զլուխ բերում—ինչ գնով ուզում ե լինի՝ խանգարել աշխատավորության միացումը, վոչնչացնել

նրանց ղեկավարներին, վոչնչացնել ամեն կենդանի բան, հաստատել հնագանդություն։

Զեր թշնամին ձեր կառավարողներն են, միջազգային կապիտալիզմի այդ ծառաները։ Միջազգային ֆաշիզմը—դա սպիտակ տերը ուն և աշխատավորության շահագործումը։ Բայց դուք ուրիշ թշնամիներ ևս ունեք։ Դրանք այն մարդիկն են, վորոնք դեմոկրատությամբ են քողարկվում, ինչպես շատերը՝ հայրենասիրությամբ։ Նրանք աշխատում են ձեզ դեպի խայտառակ, սարկական հնագանդությունը տանել։

Զեր յերկիրն—այդ դուք ինքներդ եք։ ԶԵ վոր յերկիր ասելով՝ պիտի հասկանալ պրոլետարիատ ու հող։

Ժամանակակից սոցիալական քառու ձեզ մի բան պիտի սովորեցնի—պրոլետարիատի համերաշխությունը։ Պրոլետարիատ են բանվորները, ոյուղացիք, շահագործման յենթակա ծառայողներն ու ինտելիգենտները և ուսանող յերիտասարդությունը, վորի մեջ վառ ե աշխատավոր ժողովրդի ինքնագիտակցությունը։

Կզա մի որ, յերը հետեւելով համերաշխության զգացմունքին, դուք սարկորեն հնագանդվելուց կհրաժարվեք։ Փողոցներում ու դաշտերում ոյուղացիներին ու բանվորներին մասսայորեն կոտորելու, բանտերն ու գերեզմանատները լցնելու և տներն ավերի վերածելու համար զորաբանակներ են հարկավոր։ Զորաբանակներ կազմելու համար ձեր համաձայնությունն ե հարկավոր։ Դուք տուժում եք բուլղար և ոռումին զինվորների ալբարքներից, ինչպես նաև ֆրանսիական զինվորներից, բայց չԵ վոր զինվորները դժւք եք։

Կգա մի որ, յերբ դուք, հետևելով համերաշխության զգացումին, խելացի ու ընական հիմունքների վրա նոր իրավակարգ կստեղծեք:

Բուրժուական դեմոկրատիայի գաղափարները, վորոնցով կեղծավորաբար քողարկվում են ձեր կառավարությունները, խավար կթվան նոր իրավակարգի համեմատությամբ: Յեվ դուք, վերջապես, կտնորինեք ձեր բաղդը:

Բայց ներկա մոմենտում, հազիվ սկսված մեծ պայքարում, դուք, ոռումիններ, բուլղարներ, հարավ-սլավոններ, մակեդոնացիներ, հույներ, սարսափելի տանջանքի յեք յենթարկվում: Բայց դեռ միայն առաջապահներն են, վոր սեղմ շարքերով յելել են մասնակցելու մեծ ազատագրական կովին, իսկ բարբարոսությունն ու ավազակությունը իսպառ վոչնչացնելու համար՝ դեռ ցեղային կոփմների հին դաշտերում դժգան կոփմներ են սպասվում:

Մենք այդ ապագայի գալուստը նախազգում ենք: Առայժմ ձեր արյունն ե կոհակներ տալիս. և ցավով լսելով դասակարգերի մեծ պայքարում ձեր նոր զոհերի մասին, մենք միայն զայրույթի ու վշտի ձայն կարող ենք բարձրացնել:

Բայց յեթե դուք դեռ թույլ եք, յեթե անհավասար կովում ժամանակավորպես հաղթված եք, այնուամենայնիվ այդ ամենը իզուք չե:

Դա գեղեցիկ որինակ ե մեզ համար:

Ձեր ունեցած նահատակի անսպառ համառությունն ստիպում ե մեզ հավատալ հաղթանակին և աշխատել:

Զեր կոիվը խոսում ե ուժեղ կերպով կազմակերպվելու, միության և արիության անհրաժեշտության մասին։ Նա սոցիալական հավասարակշռության իրավակարգ և պատրաստում, վորը միաժամանակ նաև արդարության իրավակարգ կլինի։ Նա արագացնում ե հանգույցի պատմական լուծումը։

Մենք ձեզ մոտ յեկանք՝ դամբարանը դիտելու և ընկածներին հաշվելու. բայց ձեզ հետ շփվելով, մեր պարագի գիտակցությունը մեջերնիս ավելի զորացավ։ Յերբ ձեր մասին պատմում եյի Ֆրանսիայի և կենտրոնական Յեվրոպայի պրոետարիատին, յերբ ձեր հանձնարարությամբ յես խոսում եյի բարեկամական զգացմունքի ու վստահության մասին, նկարագրում եյի ձեր տառապանքը, զգում եյի, թե ինչպես ժողովուրդը ձեր ծանր փորձի ազդեցության տակ ավելի պարզ պատկերացումն ե ձեռք բերում սեփական ույժի, արդարության և մարդանց յեղբայրության մասին, վորոնք միացած են իրենց տառապանքով, դորշ շինելով և թափած արյունով։

for the first time in my life. I am now
at home in the country, where we have
no neighbors, and I am here alone. I
have a good deal to do, and I am
not very well. I am very ill at
present, but I hope to get better
soon. I am writing this letter
from my room, which is very
quiet and comfortable. I am
thinking of you often, and I hope
you are well. Please write to me
again soon. I will send you a
postcard when I get home.
Yours ever,

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՅԵՎՐՈՊԱՅԻ ԴԺՈԽՔՈՒՄ

	Եջ
I. Մեր «միսախան»	9
II. Սպանությունների մասին բարձր պիտի աղաղակել	23
Բալկանյան ժողովուրդները	24
Պարագիտ կառավարություններ	30
Անարդար որենք	40
III. Վոչնչացման կտզմակերպություններ	43
Զինվորական միությունները և զոստիկանությունը	44
Մակեդոնական կոմիտետ	45
Ֆաշիստներն ու կողակները	49
Ժողովուրդը պաշտպանվել չի կարող	54
Ժողովուրդները լուռ են	56
IV. Խաչված ժաղովուրդներ	58
Նրանք շատ շատ են	58
Սարսափի յերկերը	62
«Արդարադատություն»	69
Մասսայական սպանություններ	74
Բանտարկյալների տառապանքը	77
«Փախչել փորձելիս»	85
«Անհետ կորածներ»	87
Հաղարների պատասխանատվությունը	88

V.	Կառավարությունները ժողովուրդների դեմ	89
	Կանանց և յերեխաների դեմ	90
	Կոկվ յերիտասարդության հետ	92
	Ուսուցիչների և ինտելլիգենցիայի դեմ	94
	Մամուլի ազատություն	95
	Այս բոլորը կրկնվում ե	97
	Ում մեղադրենք	99
VI.	Բոլենվիզմի դեմ պայմանագրի պատրվակով	102
VII.	Ազգային փոքրամասնությունները Բալկան-ներում	118
	Տրանսիլվանիա	124
	Բեսսարաբիան լծի տակ	126
	Մակեդոնական հարց	128
	Ամայացած Թրակիան	132
	Չերնոգորիա	133
	Հրեաների հալածանքը	139
VIII.	Մեծ պետությունների խաղաֆականությունը	142
	Բեակցիայի քաղաքականությունը	146
	Ի՞նչ անել	151
	Պաշտպանության կոմիտեները	155
	Բալկանյան ֆեդերացիա	157
II. ՄԵԾԱԳՈՒՅՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊՐՈՑԵՍՍԸ		
	Մեծագույն քաղաքական պրոցեսը Յեվրոպայի յեղբին	167
	Խչպիս են բռնագրավում ուրիշի յերկիրը	173
	Ի՞նչ են ասում գաղտնի դիվանները	174
	Սֆատուլ-Ցերին և գեներալները	177


Ռումինների ներխուժութումն	181
Զորք և վոստիկանություն	183
Իշխանավորի զվարճությունները	186
Վորպես թե բարենորոգութիւններ	192
Ապստամբություն Թաթարքունարում	199
Հրեշը	201
Որենքնները թարս հասկացված	205
Հիմնական խնդիրը	208
Զափազանց լավ նյութ կինոյի համար	213
Մերկացնող փաստաթղթեր	216
Դքանչելի կուլեկցիա	219
Ճշմարտության ձայնները	221
Լկումներով	225
Մեծ մարդու	233

III. ԲԱԼԿԱՆՅԱՆ ԺՈՂՈՎՐԴՆԵՐԻՆ

Բալկանյան ժողովուրդներին	239
--------------------------	-----

ՎՐԻՊԱԿՆԵՐ

Ծեր.	Տ Ա Կ.	Տպված հ.	Թիեզ և լինի.
49	Ման. վերկեց	3-ըդ	հողատակները
84	"	11- "	խորագանով
117	ներքեց	3- "	հավատը
138	"	1-ին	ժամանակոր
189	"	2-ըդ	յերեխաներին
160	վերկեց	8- "	հավասարակոր
172	"	13- "	եահլիճում
194	"	8- "	վստահոգությանն
197	"	1-ին	թաղելու
"	ներքեց	13-ըդ	բնակչությունը
215	"	5- "	հայտարարեցին և
"	Ման. վերկեց	2- "	ձեռքը
218	"	14- "	գրպանում





ԳԱԱ Հրանտարար Գիտ. Գրադ.



FL0006209

A 21456